

## Հայկական գիտահետազոտական հանգույց Armenian Research & Academic Repository



Սույն աշխատանքն արտոնագրված է «Ստեղծագործական համայնքներ  
ոչ առևտրային իրավասություն 3.0» արտոնագրով

**This work is licensed under a Creative Commons Attribution-NonCommercial  
3.0 Unported (CC BY-NC 3.0) license.**

Դու կարող ես.

պատճենել և տարածել նյութը ցանկացած ձևաչափով կամ կրիչով  
ձևափոխել կամ օգտագործել առկա նյութը ստեղծելու համար նորը

You are free to:


**Share** — copy and redistribute the material in any medium or format

**Adapt** — remix, transform, and build upon the material

891.99.092 4p Spinaletti

11-37







891.99.092 ԱրՏրուՅի

-6 NOV 2011  
413

L-38

ՀԵՕ


# ԳՐԻԳՈՐ ԱՐԾՐՈՒՆԻ

ՀԱՏՈՐ ԱՌԱՋԻՆ



Հրատարակութիւն

ԳՆՍԳՆԲ ՏԵՐ ՄԱՐԿԱՐԵԱՆՑԻ



Թ Ի Ֆ Լ Ի Ս

Արագատիւ ԱՆ. Մարտիրոսեանցի  
Միքայէլեան փողոց, № 81  
1902

20 MAY 2013

69.137

Дозволено цензурою. Тифлисъ,  
25 Сентября 1902 г.



3932-86

გაბრიელ უდორიძე



გაბრიელ უდორიძე

თბილისი

1902



65.115

№ 2



ԱՆԳՐԷԱՍ ԵՆ ԳՐԻԳՈՐ ԱՐՈՐՈՒՆԻ  
(1869, Հէյդէրաբ)







ՔԲ  
21740

### ԳՐԻԳՈՐ ԱՐՅՐՈՒՆՈՒ

ԱՆՄԱՀ ՅԻՇՍԱՏԱԿԻՆ

Անհուսանալի ուսուցիչ.

Այն րօպէից, երբ իմ մէջ միտք ծագեց գրել քո կենսագրութիւնը, քո գրական գործունէութեան ամբողջ պատմութիւնը, ինձ վրա ծանրացած է այն գիտակցութիւնը թէ որքան դժուար, պատասխանատու գործի եմ ձեռնամուխ լինում: Քո գործունէութիւնը... բայց դա մեր կեանքի պատմութիւնն է 25 տարիների ընթացքում: Եղել է դէպք, երեւոյթ, որի մէջ կամ որի առիթով լավամ չը լինի քո հզօր ձայնը: Եւ արդեօք կարող կը լինեմ ես արձանագրել այդ բոլորը այնպէս, որ գործս արժանի լինի քո միշտ զեղեցիկ, միշտ սիրելի անուան:

Զգում եմ իմ պակասութիւնները: Ես մէկն եմ քո երախտապարտ աշակերտներից, մէկը այն մարդկանցից, որոնք քո ուժեղ ձեռքով դուրս բերվեցին գրական հրապարակը: Լինել քո վերաբերմամբ կողմնակի, սառնասիրտ դիտող ես չեմ կարող, քանի որ քո վարած հսկայական, անընդհատ կռիւը քո աշակերտների համար մի սքանչելի հերոսութիւն է, որի առջև կարելի է միայն խոնարհվել, ծունր դնել: Եւ երբ այսպէս է, կարող եմ ես լինել քո կեանքի



պատմաբանը: Արդեօք միակողմանի չեմ լինի ես, արդեօք մարդիկ, կարդալով աշխատութիւնս, չեն ասի թէ դա պատմութիւն չէ, դա ներքող է հիացած աշակերտի կողմից՝ իր մեծ ուսուցչին նուիրված:

Բայց ես չեմ վախում այսպիսի դատաստանից:

Դու, սիրելի ուսուցիչ, աւանդեցիր մեզ գործ, դրօշակ, դրա հետ եւ այդ աւանդին ծառայելու պարտաւորութիւններ. աղնութիւն, շիտակութիւն, անկեղծութիւն: Ահա ինչն է ինձ թեւ տալիս, վստահութիւն տալիս իմ այս ծանր գործի մէջ: Կրքերը, աղմուկը, չարախօսութիւնը կորչում են. փաստերն են միայն մնում: Իմ սրբազան պարտքը կը լինի միայն փաստերով ղեկավարվել: Ես կը լսեմ ոչ միայն քեզ, այլ եւ քո անթիւ թշնամիներիդ: Պատկերացնելով քո մղած պատերազմը, ես նկատի կունենամ պատերազմի ամբողջ դաշտը, կռուողների բռնած դիրքերը, կռուողների ղէնքերը:

Գրողի հայեացքները, համոզմունքները անձեռնմխելի են, անբռնարարելի են: Մնում է խօսքը, կարծիքը ամրապնդել փաստերով, մնում է անդադար իրողութիւնները լուսաբանել եւ ոչ լակ բռներով օրհնել կամ անհիծել...

Ահա ինձ ղեկավարող սկզբունքը: Վստահ լինելով նրա վրա, ես սկսում եմ գործս եւ նրան իմ սրտի խորին հիացմունքի հետ նուիրում եմ քո, սիրելի ուսուցիչ, անմահ յիշատակին այսօր, երբ բռնրվում է քո ողբալի մահվան առաջին տասնամեակը:

Դեկտեմբեր 19,  
1902 թ.

Լ. Է. Օ

# ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

ԳԼՈՂԻՍ ԱՌԱՋԻՆ

ԱՐԾԻՐՈՒՆԻՆԵՐԻ ՏՈՅՄԸ

## I

Գէորգ-աղա Արծրունի:—Թիֆլիս գաղթելու պատճառները:—Վանի իրականութիւնից:—Տոհմազրույթիւն:—Գէորգ-աղա և Ներսէս Աշտարակեցի:—Ճանապարհորդութիւն Եւրօպայում:—Ամստերդամի տպաւանը:—Յակոբ Չահան-Ջրպետ:—Ներսէսի սրտքը, Արծրունու դործունէութիւնը:—Չինութիւններ Թիֆլիսում:—Գէորգ-աղայի բնուրութիւնը:—Գրասիրութիւն:—Մահ. . . . .

## II

Երեմիա Արծրունի:—Հայրական կտակ, մայրական ժառանգութիւն:—Յուցակ ծառայութեան:—Մօսկվայում բնակութիւն հաստատելը:—Ընտանիք:—Գրիգորի ծնունդը:—Կալուածական գործեր. կարաւանաբայի հրդեհը:—Վերադարձ Թիֆլիս:—Չինարարական մեծ ձեռնարկութիւններ. գալլէրէա:—Գոտաստանական գործեր:—Հասարակական գործունէութիւն. Ներսիսեան դպրոց, Թիֆլիսի քաղաքազուլիս:—Երկաթուղի մինչև Հնդկաստան:—Երեմիայի բը-



նաւորութիւնը:—Ընտանեկան կեանք:—Երեխա-  
ների կրթութիւնը:—Գրիգոր և Անդրէաս Արծ-  
րունիները:—Նրանց ուսումը Թիֆլիսում . . . 55— 96

ԳԼՈՂԻՍ ԵՐԿՐՈՐԳ

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐ

(1864—1871)

I

Ժամանակը:—Հայ ուսանողութիւնը Մօսկ-  
վայում և Պետերբուրգում:—Գրիգոր Արծրու-  
նու առաջին յօդուածները:—Տեսակցութիւն  
Միքայէլ Նալբանդեանցի հետ:—Հիւանդութիւն  
և ուղևորութիւն արտասահման:—Նիցցոյ, շվէյ-  
ցարական համալսարաններ:—Ինքնաճանաչու-  
թիւն:—Եմ խոստովանութիւնը:—Մի ուրիշ  
խոստովանութիւն. կորած սէր, շեղեցիկներ:—  
Ինչպէս էր Գրիգորը հասկանում հայ ուսանողի  
պարտաւորութիւնները . . . . . 96—138

II

Ս. Նազարեանցի նամակից:—Գեղեցիկ սկըս-  
ուած, լոկ առաջարան:—Չարունակողը:—Հայ  
մամուլը Գովհասում. «Մեղու»:—Երկու անսակ  
կրթութիւն. համալսարանական և Միլիթար-  
եանները:—Մուրադեան վարժարան:—Մարկոս  
Ազարէկեան և նրա «Կուսակը»:—Ազգայնամոլ  
ուղղութիւն:—Ներսիսեան դպրոց:—Վերանո-  
րողական «Մեղու»:—Նոր խմբագրութեան ան-  
կարողութիւնը:—Նմուշներ:—Տեսողիմականի  
պատկերը, նկարված «Մեղուի» ձեռքով:—Ս.

Ստեփանէ և ճայկական Աշխարհ:—Ջանքեր  
և հետևանքներ:—Գուանալքներ, արժանաւո-  
րութիւններ, պակասութիւններ:—Րէֆօրմ ուղ-  
ղագրութեան մէջ:—Այդ ըէֆօրմի անցեալը:—  
«Վաճառական» լրագիր և «Գարուն» ամսա-  
զիր . . . . . 138—223

III

Գրիգոր Արծրունու աշխատակցութիւնը  
«Մեղուին» և ճայկական Աշխարհին:—Հաս-  
տատ ուղղութիւն, ոճ, գրութեան ձև:—Հայե-  
րէն լեզու:—Անդրանիկ յօդուած. դաստիարա-  
կութիւն, կանանց հարց:—Ստեփանէի վերաբեր-  
մունքը իր նոր աշխատակցին:—«Երգաստանի  
սղագրութիւն և համալսարան»:—«Բացված  
մարդ» հասկացողութիւնը:—Ի՞նչ է զարգացու-  
մը:—Խառն ուսումնարանների հարց:—Ազատու-  
թիւնը զարգացման հիմք:—Գրական-հասարա-  
կական ցուներ:—«Երկուսից սրն է լուր»:—Գե-  
ղալուեստի նշանակութիւնը:—«Գրականութիւն  
չը կայ»:—Օգուտ, ժողովրդի դատը, մտածող  
ըէալիստ:—Մի հակաճառութիւն:—Արծրունի և  
Պլսարեպի:—Հասարակական կարծիքի որոնումն.  
«Չարունակներ թէ ոչ»:—Տեսեսական հարցեր  
և կրթական ընկերութիւն . . . . . 223—341

IV

Համակրական ցոյցեր:—Համալսարանական  
երիտասարդները ընթերթ Թիֆլիսում:—«Գեց-  
ցեն Արծրունի եղբայրները»:—Գրական հակա-  
ռակորդների հարցը:—Բարոյականութիւնը սււմ  
արտօնութիւնն է:—Օր. Չուշանիկի նամակը:—



Ինչնու շը կայ հայկական թատրօն:—Անհատնե-  
րի դերը:—Հէյդլբերգը—Աթէնք:—Փիլիսոփայ-  
ութեան դօկտօրը:—Արծրունին Պարիզում և  
Վիեննայում:—Հայերէնի դասեր:—Վիեննայի  
Միլիթարեան վանքը:—Փրանսիացու բնաւորու-  
թիւնը:—Հին և նոր սերունդ:—Վենեցիայում:  
—Ս. Ղազար:—Ծերացած ազգ:—Հ. Ալիշան:—  
Գարելի է սիրել հայ ժողովուրդը:—«Մտքեր  
յայտնելու իրաւունք»:—Մեր երկրի հարստու-  
թիւնները:—Հասարակական կրթութեան զը-  
խաօր գործօնը:—Մամուլի պակասութիւննե-  
րը:—Քրիստոնէութիւն և մասնեղականութիւն:  
—«Պուր լա բօն բուշ» . . . . . 341—422

V

Արծրունին Թիֆլիսում:—Տպաւորութիւններ:  
—Գործունէութիւն:—Յօդուածներ «Հայկական  
Աշխարհում»:—Արծրունու զերմոնասիրութիւ-  
նը:—Նապօլէօնի Փրանսիան և հանրապետա-  
կան Փրանսիան:—«Աշխարհաբարի նորաձեւու-  
թիւնների հասարակական նշանակութիւն»:—  
Սառնութիւն Ստեփանէի և Արծրունու մէջ:—  
Արծրունին «Մեղուի» աշխատակից:—Հինդ յօդ-  
ուած:—«Փրանսիական անխաղաղանութիւն»:—  
«Ընթերցողը և զըողը»—միմեանց շը մեղա-  
դրենք:—Սունդուկեանցի «Պէպօն»:—Հայի յատ-  
կանիչները:—Առաջին թշնամութիւն Արծրու-  
նու դէմ:—Եզրակացութիւններ Արծրունու գրա-  
կան գործունէութեան առաջին շրջանի մասին. 422—477

ԳԼՈՒԽ ԱՌԱՋԻՆ

ԱՐԾՐՈՒՆ ԵՆԵՐԻ ՏՈՂՄԸ

I

Դեորգ-աղա Արծրունի:—Թիֆլիս գաղթելու պատճառ-  
ները:—Վանի իտականօրփիւնից:—Տոնմագրօրփիւն:—  
Դեորգ-աղա եւ ներսու Աշարակեցի:—Ճանապարհոր-  
դօրփիւն եւրօպայում:—Ամսերդամի սպարսեր:—Յակոբ  
Չահան-Ջրպետ:—Ներսուի ասորը, Արծրունու գործու-  
նեւօրփիւնը:—Չիւնօրփիւնեւ Թիֆլիսում:—Դեորգ-ա-  
ղայի բնաւորօրփիւնը:—Գրասիրօրփիւն:—Ման:



1813 թւականին Վան քաղաքից Թիֆլիս  
եկաւ մի հարուստ հայ վաճառական: Նա աշ-  
խարհ տեսած, շատ ճանապարհորդած մի  
մարդ էր, առեւտրական գործերով եղել էր  
Թիւրքիայի զանազան կողմերում, Պարսկաս-  
տանում, Կ. Պօլսից անցել էր հարաւային  
Եւրօպա: Բոլոր այդ տեղերում նա առեւտրա-  
կան էր, որ կարգադրում է իր գործերը ու  
յետոյ հեռանում: Իսկ Թիֆլիս եկել էր մի  
այլ դիտաւորութեամբ: Սովորական կրթիւ-



եկողներէց մէկը չէր նա, այլ մի նշանաւոր անձնաւորութիւն. ներկայացաւ Վրաստանի կառավարչապետ գեներալ Բախչեւիլին և յայտնեց որ կամենում է ընտանիքով բնակութիւն հաստատել Թիֆլիսում, ընդունել ուսաց հպատակութիւն: Կառավարչապետ Բախչեւիլը, տեղեկանալով հանդամանքներին, խոստացաւ իր հովանաւորութիւնն ու աջակցութիւնը և նոյն տարվանից Թիֆլիսի բնակիչ դարձաւ այդ՝ ծագումով և հարստութեամբ նշանաւոր օտարականը:

Դա Գէորգ-աղա Երան-Արծրունին էր:

Երան-Արծրունիների տոհմը շատ հին էր Վանում և իրան համարում էր Վասպուրականի հին տէրերի, Արծրունի իշխանների, շառաւիղ: Մահմեդական իշխանութեան տակ հայերը, կորցրին ազնուականութեան իրաւունքները: Որքան յայտնի է, Արծրունիները վերջին ժամանակներում վաճառականներ էին: Այդպէս էր և Գէորգը հայր Երեմիան: Ինքը Գէորգը ծնվել էր Վանում 1771 թւականին: Ամուսնացած էր Եղիսաբէթ անուհով ազնկայ հետ, որ, ինչպէս երևում է, նոյն Արծրունիների տոհմից էր, բայց այլ ճիւղից: Այդ ճիւղը կոչվում էր Պաշավեան-Արծրունի\*):

\*) Այս անունը մինք հանում ենք գեներալ Արծրու-

և նոյնպէս նշանաւոր էր իր հարստութիւններով: Գէորգը ունեցաւ միայն երկու որդի. Մարիամ, ծնված 1793 թւին \*) և Երեմիա— 1804 թւին:

Նոր դադթականը Վրաստանի մայրաքաղաքում հռչակվեց իբրև մի մարդ, որ անհուն հարստութիւն էր բերել իր հետ: Դա մասամբ ճշմարիտ էր: Միայն վաճառակութիւնը չէր, որ հարստացրել էր Գէորգ Արծրունուն: Նրա տոհմը Վանում ունէր կալուածներ և վայելում էր «հիսար-եօղաչի» արտօնութիւնը: «Հիսար-եօղաչի» նշանակում է բերդի եկամուտների ընկեր. Երան-Արծրունիները որդուց որդի ստանում էին Վանի բերդի եկամուտների մի մասը: Գալով անշարժ կալուածներին, Երան-Արծրունիները հողային սեփականութիւնների վրա աւելացան Պաշավեան-Արծրունիների սեփականութիւնները, երբ Գէորգը ամուսնացաւ Եղիսաբէթի հետ: Վերջինիս հայրն էր Մահտեսի-Յակոբ Ամիրան, որ ունէր մի եղբայր՝ Մահտեսի-Աւետ Ամիրա անուհով:

Նու ձեռքով զրված մի ուսերէն թղթից: Տարաբախտաբար, մեզ շաղովեց իմանալ ճիշտ հայերէնը:

\*) Մարիամը ամուսնացաւ երևանցի Սարգիս Սանասարեանցի հետ. նրա որդին էր Սանասարեան դպրոցի հիմնադիր Մկրտիչ Սանասարեանցը:



Այդ երկու տոհմերի կալուածները, որոնք Գէորգ Արծրունու և նրա ժառանգների սեփականութիւնն էին կազմում, հետեւեալներն էին. 1) հողային մեծ տարածութիւններ Մոկս և Շատախ գաւառների լեռներում, ուր կային հարուստ հանքեր, որոնց մէջ յայտնի էր մանաւանդ «ղոնեխը» \*). 2) Վանի լճի վրա, Մարմետ գիւղի ձկնորսարանը. ինչպէս յայտնի է, Վանի հռչակաւոր տառեխը մեծ մասամբ այդ գիւղի մօտ է որսւում. 3) Վանի Արարք թաղը, ուր Պաշտականները ունէին տուն և այգիներ. 4) Տներ և խանութներ Վան քաղաքում:

Ի՞նչը հարկադրեց Գէորգ աղային թողնել

\*) Գենեքալ երեմիա Արծրունին Կ. Պօլսի ռուսաց դեսպանութեան միջոցով դատ սկսեց պօլսեցի սեղանաւոր Ալահվերդի-Օղլուի դէմ, պահանջելով նրանից մօտ 2½ միլիօն ըուբլի: Ալահվերդի-Օղլուն Պաշտական-Արծրունիների գործակատարն էր և վաճառել էր Մոկսի և Չատախի հանքերից նրան ուղարկված զոնեխը նա խոստովանեց այդ հանդամանքը թիւրքաց կառավարութեան և ռուսաց դեսպանի առաջ, յանձն առաւ վերջացնել հաշիւը երեմիա Արծրունու հետ, պայման դնելով որ վերջինս գնայ Կ. Պօլս և անձամբ վերահասու լինի իր պահանջին: Արծրունին, զնաց Կ. Պօլս 1844-ին, բայց երկար չը կարողացաւ մնալ այնտեղ, այնուհետև նա պահանջում էր որ Ալահվերդի-Օղլուն հաւատարմատար ուղարկէ Քիֆլիս, բայց այդ պահանջը չը կատարվեց:

իր հայրենիքը, այդքան հարստութիւնները և տեղափոխվել Ռուսաստան:

Բուն պատճառը մեզ յայտնի չէ: Բայց կարող ենք առանց տատանվելու ասել որ թիւրքիայից հեռացող բոլոր մարդկանց համար դարերից ի վեր մի ընդհանուր պատճառ է գոյութիւն ունեցել և դա—թիւրքական իրականութիւնն է: Այդ իրականութիւնն այնպէս էր, որ նոյն իսկ յայտնի, նշանաւոր մարդիկ էլ ոչ մի կերպով պաշտպանված չէին հարստահարութիւններից, բռնութիւններից: Արծրունիների տոհմային թղթերի մէջ\*) մենք հանդիպեցինք մի համառօտ տեղեկութեան, որ հաստատում է մեր ասածը: Բանից դուրս է գալիս որ Պաշտական չորս եղբայրները սպանվել էին և նրանց կալուածները, Գէորգ Արծրունու Ռուսաստան տեղափոխվելուց յետոյ, յարքունիս գրավեցան: Այս դէպքը մասամբ պարզում է թէ ինչը հարկադրեց Գէորգին մի նոր հայրենիք որոնել:

Ասում ենք մասամբ է պարզում, որովհետև ինքը Գէորգը, «Դարաստան խրատուց»

\*) Այդ թղթերի մի շատ աննշան մասն է մնացել. Գէորգ-աղայի թղթերը այսօր ևս 1855-ին նրա կարանսարայի հրդեհի ժամանակ:



անունով իր գրքի մէջ, որ ապօրինի թիֆլիսու-  
սում 1830 թուականին, ասում է թէ դեռ  
քսան երկու տարեկան հասակից էր հասկա-  
ցել որ սյրազդիները մէջ ապրելու ճար չը  
կայ և բնակութեան տեղ էր որոնում: Այդ  
փոքրիկ ստանաւոր յիշատակարանի մէջ  
Գէորգ աղան միայն համառօտ ակնարկու-  
թիւններ է անում: Հայրենիքում շատ փոր-  
ձանքներ, նեղութիւններ է տեսել, այնտեղ  
անցքեր են անցել նրա գլխով:

Ինչպէս տեսնում էք, նոր հայրենիք նա  
որոնեց ամբողջ քսան տարի, մինչև որ դտաւ  
Թիֆլիսը: Ի հարկէ, չէ կարելի սսել թէ նա  
իր ճանապարհորդութիւնների միակ նպա-  
տակը տեղ որոնելն էր դարձրել: Դեռ երի-  
տասարդութեան օրերից զգալով թիւրքական  
տիրապետութեան ամբողջ ծանրութիւնը,  
նա մէկն էր բերաւոր դժգոհներից: Առե-  
տրական ճանապարհորդութիւնները միայն  
սաստկացնում էին նրա դժգոհութիւնը, մա-  
նաւանդ երբ Պարսկաստանից ու թիւրքիայից  
յետոյ նա տեսնում էր հարօսական աշխար-  
հը, տեսնում էր թէ ինչ է խաղաղ զարգա-  
ցումը, լուսաւորութիւնը: Չքնաղ, բայց խա-  
ւար ու դժբախտ Վասպուրականից միան-  
գամից հեռանալը հեշտ չէր նրա համար.  
հայրենիքի հետ կապում էին նրան ոչ միայն

նախնիքների գերեզմանները, այլ և խոշոր  
անտեսական շահեր: Եւ դժգոհութիւնը քսան  
տարիների ընթացքում այնքան կուտակեց նրա  
մէջ, որ նա վերջ ի վերջոյ հեռացաւ Վանից:

Ոչ ոքի համար չէ կարող անխորհուրդ  
համարվել այն հանգամանքը, որ Գրիգոր  
Արծրունին, «Մշակ»-ի խմբագիրը, Վանում  
ծնված մի հայի որդին էր: Գրիգոր Արծրու-  
նու ամենախոշոր ծառայութիւններից մէկն  
էլ այն էր, որ նա մօտեցրեց ուստահայերին  
և թիւրքահայերին և իր հզօր գրչով երկար  
ժամանակ արծարծում էր թիւրքահայերի  
գատը: Այստեղ նա երևան է գալիս իբրև  
վանեցու նոր սերունդ, իբրև այն ժողովրդի  
զաւակ, որ դարերով կրել է իր ուսերի վրա  
թիւրքական բէժիմը: Նրա մէջ խօսում էին  
նրա պապերն ու նախահայրերը: Եւ այդ  
պատճառով կարևոր է այստեղ գտնէ թոռ-  
ցիկ կերպով ներկայացնել Վանի իրականու-  
թիւնը այն ժամանակ, երբ նրա պապը, մի  
չափահաս զժգոհ, և հայրը, ինն տարեկան  
երեխայ, հեռանում էին այնտեղից մի լա-  
ւագոյն հայրենիքի յոյսով: Պէտք է իմանալ  
թէ ինչ ժառանգութիւն կարող էր աւանդել  
Վանի հին սերունդը նոր սերնդին:  
Վան քաղաքը և նրա շրջակայ գոււառնե-  
րը պատկանում էին քրդերին, Վանում նըս-



տում էր քուրդ փաշա, իսկ շրջակայքում իշխում էին քուրդ բէյեր, որոնք հպատակվում էին այդ փաշային\*)։ Վասպուրականն էլ ուրեմն մի կտոր էր քրդական այն ընդարձակ թագաւորութիւնից, որ շատ տեղերի հետ տարածվում էր և Բաղէշի ու Մուշի վրա և որ շարունակ քարուքանդ էր անում այդ երկիրները։ Քրդական թագաւորութիւն — դա պաշտօնական անունն էր այն ժամանակներում. պաշտօնական անուններն էին Վանի փաշայութիւն, Բաղէշի խանութիւն, որոնք Օսմանեան պետութեան մի մասն էին կազմում։ Բայց դա թագաւորութիւն էր, այն էլ քրդական, իբրև իրականութիւն։ Իսկ թէ ինչպէս էին թագաւորում քրդերը, կարելի է իմանալ հէնց նրանից, որ Բաղէշի 25000 տուն ժողովրդից մի կարճ միջոցում մնացին 5000 աներ։ Եւ այստեղ շատ էլ դարմանալու բան չը կայ. այդ դժբախտ երկրում ապրած Յովհաննէս Կոլոտ պատրիարքը գրում է թէ քրդերը «ծծում էին մեր արիւնը, զիշատում էին մեզ, փախցնում էին ծըմակները ու ժայռերի ձերպերը և այդտեղ մաշում էին մեր կեանքը»\*\*)։

\*) Ինճիճեան—«Մշխարհագրութիւն», հատոր Ա., Վեներիկ, 1806, եր. 136։

\*\*) Տ. Իմ «Հայկական Տպագրութիւն», հատոր II, 144.

Վանի մէջ ապրում էին 15 հազար տուն մարդիկ. դրանցից միայն 2000 տունն էր հայ։ Թիւրք ժողովուրդը համարեա ամբողջովին զինուորական դասակարգ էր կազմում և կոչվում էր Ղուլ։ Այդ Ղուլերի ապրուստի համար սահմանված էր առանձին հարկ, որ տալիս էին բացառապէս թէ Վանի և թէ շրջակաների հայերը, այսինքն ազգաբնակչութեան այն մասը, որ ղէնքի հետ գործ չունէր և զրա փոխարէն վարող ու հերկող էր, արհեստաւոր էր։ Այդ փոքրիկ, իրաւագուրկ մասը այդպիսով հարկատու էր մեծ մասին։ Մի երկրում, ուր օրէնքի, կարգի, իշխանութեան ներկայացուցիչները վայրենի թըրդերն էին, յայտնի է թէ ինչ կը լինէին տիրող զինուորականների յարաբերութիւնները ղէպի իրանց հարկատուները։

Բայց Վանի իրականութիւնը այդ չէր միայն. բացի այլ և այլ հարկերից, փաշան անում էր իր համար առանձին տեսակի հարկեր, որոնք կոչվում էին իմ դագի է և այլը գ։ Ահա դրանց տակ էր ծուլում ժողովրդի վիզը։ Փաշան անում էր երբ և ինչպէս կամենում էր. ստանում էր ամբողջ տարվանը մի անդամից, մի երկու ամսից յետոյ յետագայ տարվանը, դարձեալ մի քանի ամսից յետոյ միւս տարվանը, և այսպէս շատ



բունակ: Հարկահանութիւնների ժամանակ  
 գործադրվող բանութիւնները նկարագրելու  
 կարիք չը կայ. ժողովուրդը և գլխաւորապէս,  
 ի հարկէ, քրիստոնեայ ժողովուրդը անխնայ  
 կեղեքվում էր. սահմանված կարգը, նոյն  
 իսկ Թիւրքիայի պէս մի երկրում սահման-  
 ված կարգը, ոսնակիսի էր անվում, մեծամեծ  
 տառապանքներ պատճառելով ժողովրդին:

Կային զրանից դուրս և այլ տանջանք-  
 ներ: Թիւրք ազգաբնակութիւնը, այսինքն  
 զինուորները, զուլերը, վանում և վանից  
 դուրս տիրող քուրդ իշխանաւորները մշտա-  
 կան կոխենքի, արիւնահեղ ընդհանրումների  
 զիւրաժառ նիւթեր էին ներկայացնում և այդ  
 տեղերում տիրում էր մշտական պատերազ-  
 մական զրութիւն: Ուժեղը յաղթահարում  
 էր թոյլին, քրիստոնեայ ժողովուրդը չը զի-  
 աէր թէ իշխանութեան, տիրապետութեան  
 համար կուտղներից որին պէտք է հնազանդ-  
 վել: Այդ զրութիւնը բաւական պարզ պատ-  
 կերացնում է այն համառօտ տարեգրութիւ-  
 նը, որ տպված է Սրուանձտեանի «Մանա-  
 նայ» գրքի մէջ<sup>\*)</sup>: Դա վան քաղաքի մարտի-  
 բոսազրութիւնն է, որի հասարակ, անա-  
 բուեատ ոճը իրականութեան հարազատ

\*) Եր. 340—398:

պատկերացման ամենալաւ նշանը պէտք է  
 համարել: Պատմութիւնը մանրամասնաբար  
 արձանագրում է մի ամբողջ դարի անցքերը,  
 XVII դարի վերջից մինչև XVIII-ի վերջը:  
 Նրա մէջ բազմաթիւ էջեր նկարագրում են  
 հարստահարութիւններ, կեղեքումներ, աւե-  
 րանք և կոտորած, կանանց և աղջիկների  
 առեւանգում: Դրանք դաւառական պատմու-  
 թեան արիւնոտ էջեր են և սովորաբար չեն  
 մտնում ընդհանուր պատմութեան մէջ, ո-  
 րովհետև շատ են մասնաւոր, շատ են առօր-  
 եայ, սովորական: Բաց անենք այդ էջերից  
 մէկը պատահաբար: Ահա վանի նշանաւոր  
 կառավարիչներից մէկը, Թամուր փաշան:

Ի ՌձՁԲ (1733) զնաց ի վերայ Սալմաստու  
 Մայիս ամսոյն, եւ կողոպտեաց զնա,—ասում է  
 տարեգրութիւնը.—էստ զԱխթակ, 3—400 մարդ  
 սուր քաշեց եւ դարձեալ եկն ի Վան. ի մ գ ա դ ի  
 ս ա ֆ ա թ ի ա (իրան յատկացրած հարկ) ժողովեաց  
 քան զՆ. (60) քիսայ աւելի, ի Մայիսի Ի. ել եւ  
 զնաց ի վերայ Թաւրիզոյ եւ էստ:

Ի սոյն թիւ եկն ազգ մի Թամար, որ մարդա-  
 կեր էին, զնացին ի Թավրիզ առ Թամուր փաշայն  
 եւ փաշայն ի զնջիլ եղած զուղսաղներաց (քանտար-  
 կեայներ) օր 15 մարդ Թային տար նոցա, որք մոր-  
 թէին եւ ուտէին: Ի սոյն ամի դարձաւ Թամուր  
 փաշայն ի Թավրիզոյ եւ եկն ի Սալմաստ. իսկ  
 Վանայ ղուլն... եւ այլ մեծամեծ աղայք խորհուրդ



արարին թէ փաշայն ոչ թողումք որ ի քաղաքս մը-տանէ. եւ Վանայ Մուսախիմ-Ալի աղայն իմացաւ, մարդ յղեաց առ փաշայն ի Սալմաստ. եւ նա մէկ օր Սալմաստու եկն ի Խօշաբ իսկ Վանայ Հայք եւ Տամիկը ի յահէն գողային. եւ դիմեալ ի քաղաքն՝ նորա շինած դարաղաջներ ու չանգալներ ջարդեցին. փաշան երեք օր նստաւ ի Խօշաբ թէ գան ի դէմն, սակայն ոչ վնացին, այլ դարդահներ գործեցին եւ թուանքչիք ի բաղան լցին. փաշայն իմացաւ որ կռուել կամին, ի Խօշաբայ եկն ի Ղուռաբաշ դիւղն, եւ դուրս եղած ամէն քրիստոնեայ ռայէն գնացին ի մօտն. երկնչէին թէ թալանէ ղինքեանս. եւ նա յուսադրեաց զնոսա ասելով թէ՝ Մի երկնչիք, եր-թայք, նստարուք միամիտ ի ձեր տեղին:

**Փաշան առանց սլատերագլմի մտնում է բերդը, կախել է տալիս ննիչարնների զլխա-ւօրին, բայց ինքն էլ կանչվում է կարս, ուր Առնաւուռ փաշան կտրել է տալիս նրա գը-լուխը:**

Թիւ ՌՄԳ (1754). Ղարսցի կոյր Ուսուճ փա-շէն հետ զուլին կռուան, մտուցին սարայն, էլան Մաչիթ, բռնեցին թուանքի յառաջ. յղեաց Խօշաբայ մարդ բեր, էլան դէմ չթողին, զիշերով գաղտ զըռ-նէն ելեալ փախաւ:

Թիւ ՌՄԳ (1755) Մարտի Ա. եկն... Նըս-րավանց զիւղ նստաւ, քաղաք գալ չթողին. իսա ա-ղէն ասքար էառ գնաց դէմ, շատ մարդիկ մեռան, զիւղացիք ամեն փախեան, ցանքեր կերցուցին, յե-տոյ Նէնգիչար աղասին եէնգիչարեօք, Ղազեօք ա-

ոին իսա աղէն տարին մօտ փաշայն. Մարմետ զիւղ ետ աղային, ինքն մանգուլ եղեւ, գնաց:  
Թիւ ՌՄԺԸ (1769) Գեկտեմ. ամսոյն, յետ մեռանելոյ Խալիլ աղային՝ Թամուր աղայն կամէր լինել սօլ աղասի (ղուլերի զվսաւոր), ոչ ետուն. վա-սըն որոյ մեծ խռովութիւն եղեւ ի մէջ նոցա... Յաւուր միոջ վստահացեալ հարին փշտօյով զկոր (կոյր) մուճթին, որ Գասըմ աֆանդի ասէին, եւ սպանին. մեծ ում էր. ապա սկսան կռուել ռամա-զանն (ամիս) մինչ ի զլուխ. շուկայք դատարկեցին եւ բոլոր փակեցին ի յահէ թալանելոյ. եւ մարդ ոչ կարէր ելանել ի տանէ յահէ զուլուլայիցն (զըն-դակ), որ այնչափ հարկանէին միմեանց, եւս ա-ռաւել զիշերն. յետ Մազըբին, քանիցս անգամ ելիշ արարին (յարծակվեցան) ի վերայ միմեանց, եւ որջ ռամազանին մինչ ի բայրամն կռիւ արա-րին, մինչեւ խաբար առին թէ Գամաթ Հուսէն փա-շան զալոց է տեղս:

**Այդ փաշան գալիս է, կռուով ու թնդա-նօթներով վերջ է տալիս Վանի խռովու-թիւններին:**

ՌՄԻԸ (1779) Գեկտեմբեր. Այս Թամուր փա-շայս՝ Մխիթարենց Բաբանիկն Աբով, որ զիշեր կոր Գազկէ աղջկայ տուն բռնեցին եօթն անուանի կնիկ ետ զնել ի նաւ բշէլ, որ են այսոքիկ. կոր Գազկէ աղջիկ, բուլխանչու Եղիսէն, Խանձուման, Քաչալ աղջիկ, Օտաբաշու կնիկ, Ղազանչու կնիկ, Նորշին-ցու կնիկ, պղծեալք:

**Ահա այսպիսի աշխարհի ծնունդ էր Գէ-**



որդ Արծրունին, այսպիսի իրականութիւնն էր, որ հարկադրեց նրան հեռանալ Վանից։

Հարուստ, ազնուական վաճառականի համար ամենից շատ զբաւիչ պիտի լինէր Թիֆլիսը մի քանի պատճառներով։ Նախ Ռուսաստանի համբաւը, հայերի այն ընդհանուր յոյսը թէ Անդրկովկաս մտնելուց յետոյ ուսները պիտի ազատեն Հայաստանը մահամեղական լուծից։ Գէորդ Արծրունին այնպիսի հայ չէր, որի համար նշանակութիւն չունենար ազգութիւնը. ինչպէս կը տեսնենք, դա դէպի իր ազգը բարի ցանկութիւններով լցված մի մարդ էր։ Այդպիսի մարդու համար զբաւիչ պիտի լինէր հայ ժողովրդի մէջ ապրելը։ Թիֆլիսը հայութեան կենտրոնն էր, որ վայելում էր ուսև կառավարութեան բարի ուշադրութիւնը։ Գէորդ Արծրունին, իբրև վաճառական, չէր կարող չը նկատել, որ Թիֆլիսում հայերը շատ ազդեցիկ դիրք ունենև և ամբողջ առևտուրը նրանց ձեռքին է։ Ռուսաց կառավարութիւնն էլ ընդունում էր որ այդպէս է և աշխատում էր ամեն կերպ խրախուսել այդ վաճառականներին։ Ահա ինչ էր զրում Ալեքսանդր I կայսրը իշխան Յիցիանովին.

«Հայերը, իբրև մի արդիւնագործ ժողովուրդ, որ իր ձեռքերում ունի Ասիայի այս

մասի ամբողջ առևտուրը, արժանի են ձեր առանձին ուշադրութեան և պաշտպանութեան, որովհետև, նկատի առնելով որ նրանց նեղում են Պարսկաստանում, կասկած չէ



Գէորդ-աղա Արծրունի

կարող լինել որ այդ ժողովրդի բազմութիւնը կը հաստատովի վրաստանում, հէնց որ նրանք իրանց ապահովված կը համարեն կա-



առավարութեան բաւականաչափ բարեկարգութեամբ \*):

Այս հանդամանքին մեծ կարեւորութիւն էին տալիս ուսմանը Անդրկովկասում նոր հաստատուելու ժամանակը: Երկիրը շէնացնելու համար հարկաւոր էին արդիւնադործութեան, աւետրի մարդիկ: Եւ այդ պատճառով ուսմանը ոչ միայն հովանաւորում էին տեղացի հայերին, այլ և աշխատում էին դրսից էլ, Պարսկաստանից ու Թիւրքիայից, գրաւել հարուստ, վաճառական հայերին: Այդ է պատճառը որ կառավարչապետ Բախչէեւ այնքան լաւ ընդունելութիւն ցոյց տուեց Գէորգ Արծրունուն: Այդպիսի մի հարուստ հայը մի կատարեալ գիւտ էր Թիֆլիսի համար, որ անկերպարան դրութեան մէջ էր, չունէր լաւ շինութիւններ, աչքի ընկնող առևտուր:

Թիֆլիսում հաստատուելուց յետոյ Գէորգ աղայի առաջին գործը եղաւ իր ազնուական ծագումը վաւերացնել տալը: 1814 թւականին նա ներկայացրեց իր ձեռքով կազմած տոհմագրութիւնը գեներալ Բախչէեւին: Այդտեղ գրված էր Երան-Արծրունիների ճիւղագրութիւնը, որ սկսվում է 1530 թւից: Երան-Արծրունիները, նայած այդ թղթին, ծա-

\*) Акты Кав. Археогр. Ком., т. II.

դում են Արծրունի թագաւորների տոհմից: Տոհմագրութիւնը, սակայն, չէր վաւերացրած հին դոկումենտներով: Նրա ճշտութեան միակ վկաները Վանի պատուաւոր հայերն էին, նոյնպէս և Էջմիածնի Եփրեմ կաթողիկոսը և մի քանի եպիսկոպոսները: Հասկանալի է որ այդ վկաները կարող էին կրկնել միայն այն, ինչ տեղական աւանդութիւններն էին ասում, իսկ աւանդութիւնները դեռ բաւական չէին մի այդպիսի նշանաւոր ծագումը անկասկածելի դարձնելու համար:

Այդպէս էլ նայեց գործին ուսուց կառավարութիւնը: Նա չը տուեց Գէորգ Արծրունուն իշխանական տիտղոս, հիմնվելով այն հանգամանքի վրա, որ իշխանական ծագումը կարելի է ապացուցանել միայն թագակիր անձերի տուած վկայականներով: Էջմիածնի վկայութիւններն էլ մի առանձին նշանակութիւն չունեցան և չէին կարող ունենալ, քանի որ կառավարութիւնը նկատել էր որ այդ տեսակ վկայութիւններ տրվում են ամեն մէկին, որ ուզում էր իր ազնուական ծագումը ապացուցանել, այնպէս որ վերջ ի վերջոյ հրամանագրվեց չընդունել հայոց հոգեւոր կառավարութեան վկայականները այդպիսի գործերում, իսկ Թիֆլիսի առաջնորդ Ներսէս եպիսկոպոս Աշտարակեցին մի խիստ նա-





մակ գրեց էջմիածին, պահանջելով դադարեցնել այդ տեսակ անհիմն վկայականներ տալը:

Չը նայած իր խնդրագրի մերժման, Գէորգ Արծրունին շարունակում էր իրան իշխան անուանել. 1818 թվականին գրված մի կալուածագրի մէջ նա անուանված է «Վանից գաղթած հայոց իշխան»: Երբ գեներալ Բախչինովի տեղ Վրաստանի կառավարչապետ նշանակվեց յայտնի գեներալ Երմոլովը, Արծրունին նորից սկսեց խնդրել որ ճանաչվի իր ազնուականութիւնը: Թիֆլիսի բարեկարգութեան համար այնքան ջանքեր արած Երմոլովը անտես չարաւ հարուստ հայի խնդիրքը. ցնահատելով Արծրունու գործունէութիւնը, նա փորձեց զրական լուծում տալ այն հարցին, որ մի անգամ արդէն մերժվել էր նրա նախորդի օրով: Ալեքսանդր կայսրին ուղարկած իր զեկուցման մէջ Երմոլովը նոր պատճառարանութիւններ էր բերում ապացուցանելու համար որ Արծրունուն կարելի է ընդունել ազնուականների շարքում: Նա ասում էր թէ Արծրունիների իշխանական ծագումը ապացուցանող գոկումենտներ չէին էլ կարող մնալ, քանի որ, ինչպէս յայտնի է, Հայաստանը ենթարկվել է բազմաթիւ յեղափոխումների և աւերանքների:

«Օսմանեան պետութեան մէջ—գրում էր Երմոլովը—ամենին չը կայ սովորութիւն շնորհել ում և իցէ ազնուականութեան դրուագներ, և հրովարտակներ: Սակայն կասկած չը կայ թէ Հայաստանում, որ այժմ թիւրքաց տիրապետութեան տակ է գտնվում, կարող են լինել տիրող և ուրիշ՝ հնումը երևելի եղած ցեղերի պայազատներ, որոնց հաշուում հաւանական է կարծել և Արծրունուն: Սա աւելի ևս հաստատվում է նրանով, որ նա թողել է հայրենիքում իր սեփական գիւղերը և եկամուտները, Վանի բերդի մի մասով հանդերձ, որ շնորհել է օսմանեան կառավարութիւնը նրա ցեղին ժառանգաբար, երևի, որպէս հաւանական է ենթադրել, այն պատճառով, որ նրա նախնիքներն են եղել բերդի շինողներն ու տէրերը»:

Գէորգ Արծրունին Երմոլովին տուած իր խնդրագրի մէջ ասել էր թէ «զոհելով հայրենի աշխարհը և իր բոլոր անշարժ կալուածները և յուսալով խաղաղ կեանք վայելել նորին կայսերական մեծութեան արդարադատ օրէնքների տակ, նա մնում է այժմ անարգված, որովհետև հաւասարեցրված է ստորին դասի մարդկանց հետ»: Համաձայն լինելով որ այս այսպէս է, Երմոլովը խնդրում էր նրկատի առնել Գէորգ Արծրունու արած ծա-



ույուլիսից սկսած Թիֆլիսի բարեգարգութեան համար և չնորհել նրա տոհմին ազնուակա- նութիւն: Երմօլօյը շեշտում էր մանաւանդ այն, որ Գէորգ Արծրունուն պատուելն ու խրախուսելը կը դառնայ Թիւրքիայում և այլ տեղերում ապրող նրա հարուստ հայրենա- կիցներին դէպի Կովկաս գրաւելու մի լաւ միջոց: Եւ նա բերում էր այսպիսի մի դէպք. «1818 թւականին, երբ ես բաղակայ էի Վը- րաստանից, եկան այստեղ Կ. Պօլսից երկու անձինք, որպէս երեսօխոսաններ այնտեղի մի քանի ամենահարուստ հայ ընտանիքների, որպէսզի տեղեկանան թէ կարելի է արգիօք գաղթել Վրաստան և ինչ օգուտ կարող են ունենալ գաղթելով այստեղ: Սակայն տես- նելով իրանց հայրենակցի, նոյն այս Արծրու- նու, օրինակը և յայտնի չը լինելը թէ ինչ ար- տօնութիւններ կարող են ունենալ նրանք այստեղ, փոխեցին իրանց մտադրութիւնը և յետ գնացին, ոչինչ առաջարկութիւն անգամ չանելով մեր կառավարութեան» \*):

Այս թուղթը Երմօլօյը գրեց 1820 թւա-

\*) Ա. Երկեան—Երիզոր Արծրունու և նրա 25 տարվայ գրական գործունէութեան առիթով, Թիֆլիս, 1890, էր. 16—18: Այս գրքոյից մենք շատ քաղուածք- ներ ենք անում այստեղ:

կանին: Պատճառաբանութիւնները հիմնաւոր էին և Ալէքսանդրը նոյն տարվայ սեպտեմ- բերի 8-ին Վարչավայից հրամանագրեց Կա- ոավարիչ Սենատին ընդունել Գէորգ Արծ- րունուն ժառանգական ազնուականութեան մէջ և տալ այս մասին հրովարտակ:

Անկարող լինելով ստուգել և ասել թէ որքան ճիշտ էր որ Երան-Արծրունիները հին հայոց իշխանական տոհմից էին սերված, մենք միայն այն պիտի ասենք, որ Գէորգ Արծրու- նին Թիֆլիս մտնելու օրից ապրում էր իբրև արևելեան մի բէկ կամ աղա: Փողոցում նրա ետեից միշտ գնում էին երկու վանեցի ծառա- ներ, իսկ երբ ձի հեծած էր փողոց դուրս գա- լիս, այդ ծառաներից մէկը ձիու աջ կողմից էր գնում, միւսը ձախ կողմից. մի երրորդ ծա- ռայ էլ առջևից էր գնում՝ բռնած ձիու զը- լուխը, որ զարգարված էր թանգագին պա- ճուճանքներով: Փողոցով անցնելիս՝ ամենքը ոտքի էին կանգնում և ձեռքները դիւին դը- րած դուխ էին տալիս. իսկ Գէորգ աղան պատասխանում էր ձեռքը ճակատին դնելով և թիւրքական կերպով «սալամ» տալով: Մի- ենոյն ժամանակ դա մի սակաւախօս, բայց խոր մտածող, հասկացող մարդ էր: Կախար- դող աղբեցութիւն էր անում թիֆլիսեցիներին վրա մանաւանդ նրա հարստութեան համ-



բաւը: Համադմունք էր կազմվել որ Գէորգ ազան անհուն քանակութեամբ ոսկիներ է բերել Թիւրքիայից: Իսկ թէ որքան մեծ նշանակութիւն ունէր այդպիսի հարստութիւնը մանաւանդ այն ժամանակվայ Թիֆլիսում, երևում է այն ընդունելութիւնից, որ գտաւ Արծրունին Րաիչչեյի և Երմօլոյի մօտ: Ռուսաց կառավարութեան այդ երկու բարձր ներկայացուցիչները Անդրկովկասում՝ հաւատացած էին որ Գէորգ ազայի հարստութիւնը մեծ օգուտներ պիտի տայ Թիֆլիսին և այդ պատճառով էլ յայտնում էին բարձրագոյն կառավարութեան թէ նա ծառայութիւններ է մատուցել և պիտի մատուցանէ, ուստի արժանի է խրախոյաների:

Եւ իրաւ, Գէորգ Արծրունին մատուցել էր իր ազգին և նոր հայրենիքին աչքի ընկնող ծառայութիւններ:

Հետեւելով ժամանակագրական կարգին, մենք ամենից սուաջ պիտի յիշատակենք նրա ճանապարհորդութիւնը Եւրօպայում 1817 թւականին: Տեղափոխվելով Թիֆլիս, Արծրունին մտերմացաւ հայոց առաջնորդ Ներսէս Աշտարակեցու հետ: Յայտնի է թէ այդ ժամանակ ինչ մեծ մտքերի վրա էր հայրենասէր Ներսէսը: Նրա տենչանքներից ամենազլխաւորն էր բաց անել Թիֆլիսում մի

մեծ բարեկարգ գարոց հայ երեխաների համար: Այդ գարոցի հետ նա կապում էր լայն ու գեղեցիկ ծրագիրներ, ուզում էր իր զբաղրոցի շուրջը կենտրոնացնել գրական գործունէութիւն, ուզում էր ազգը լուսաւորել գրքերը հրատարակելով: Սակայն նրա վառ ոգևորութիւնը, անսպառ եռանդը զարնվում էին հայ ազգի վրա ընկած և նրան անողորմ կերպով ճնշող բարձր ու հին ժայռերին—ազլխաւորութեան, անհասկացողութեան, նախապաշարմունքներին: Ներսէսը կարօտ էր նիւթական միջոցների, իսկ Թիֆլիսի հայերը սկզբում մի սառն անտարբերութեամբ, նոյն իսկ թշնամութեամբ էին վերաբերվում նրան:

Այդպէս չէր Արծրունին: Ներսէսի մէջ նա գտաւ իր սրտին ու հոգուն շատ մօտիկ յատկութիւններ: Նա ինքն էլ մի շատ գրասէր մարդ էր. երիտասարդ հասակում, դեռ չամուսնացած, նա երազում էր վանի ծովակի Աղթամար կղզին դարձնել ս. Ղազարի կղզու նման մի բան, այսինքն բաց անել այնտեղ տպարան, հիմնել մի ուսումնական միաբանութիւն: Հօր առեւտրական գործերը թոյլ չը տուին իրագործել այդ միտքը: Այժմ, տեսնելով Ներսէսին նուիրված այդ տեսակ կրթական և գրական գաղափարների, նա անկեղծ սիրով և համակրութեամբ կապվեց



նրա հետ և մինչև իր կեանքի վերջը ներսէսի կողմնակից և աջակից մնաց:

Քաղաքակրթված երկրներում կատարած ճանապարհորդութիւնը մի անգամ էլ ցոյց տուեց Գէորգ Արծրունուն լուսաւորութեան և տգիտութեան մէջ եղած ահագին տարբերութիւնը: Նորից նա զգաց, ինչպէս ինքն է ասում, «մեր ազգի աղէտը, թէ որքան աղքատ ենք ուսման մէջ, միմեանց ատում ենք չար նախանձով, ուրիշներին հարազատ ենք, մերը ատող»: Պարիզում Գէորգը ծանօթացաւ եղեսացի Յակոբ Շահան-Ջրպետի հետ, որ այդ ժամանակ բաւական յայտնի անուն ունէր իր հայազիտական աշխատութիւններով և իբրև հայերէնի ուսուցիչ Պարիզի արևելեան կենդանի լեզուների դպրոցի մէջ: Շահան-Ջրպետը մի առանձին գիտնական հմտութիւն չսւնէր, բայց գոնէ այն արդիւնքը ցոյց տուեց, որ հայերէն լեզուի դաստաստութիւնը մտցրեց Թրանսիայի մայրաքաղաքում և ունեցաւ մի քանի հաս աշակերտներ, որոնցից մէկը նշանաւոր հանդիսացաւ իբրև հայագէտ: Այդ գիտնական հայի հետ Գէորգ Արծրունին բարեկամացաւ և վերջը պատճառ դարձաւ որ ներսէսը բերել տայ նրան Թիֆլիս՝ ներսիսեան դպրոցի համար:

Շահան-Ջրպետից նա իմացաւ որ Ամբու-

տերգամ քաղաքում դոյութիւն ունի մի հին հայերէն տպարան, որ փակված է: Նա յիշեց իր երիտասարդական տարիները մտադրութիւնը, յիշեց որ իր բարեկամ ներսէսը շատ է ուզում տպարան բաց անել Թիֆլիսում և վճուեց գնել Ամստերդամի տպարանը, նուրբել ներսէսի դպրոցին:

Դա մի նշանաւոր նուէր էր, եթէ ի նկատի ունենանք այն ժամանակվայ հանգամանքները: Տպարան ձեռք բերելը այժմ է հեշտացել, իսկ մի 80—100 տարի առաջ դա մի կատարեալ մեծագործութիւն էր: Հայերէն տպագրութեան պատմութիւնը ցոյց է տալիս թէ ինչ մեծամեծ տանջանքներ են կրել այն հայերը, որոնք Եւրօպայի զանազան կողմերում մամուլ էին կանգնեցնում՝ հայերէն գրքեր տպագրելու համար: Ամենամեծ դժուարութիւնը, որ շատ անգամ վհատեցնում էր հայկական տպագրութեան հերոսներին, այն էր, որ օտար աշխարհներում հեշտ չէր կարելի գտնել այնպիսի վարպետներ, որոնք կարողանային հայերէն ճաշակաւ գեղեցիկ տառեր ձեռք բերելը մի կատարեալ գիւտ էր այն ժամանակներում: Այդպիսի մի գիւտ էր և այն հայերէն տպարանը, որ



գտնվում էր Ամասերգամում և որը գնել էր ուղում Գէորգ Արծրունին:

Ամասերգամը, Վենետիկից յետոյ, հայկական սուլթանութեան առաջին ամենահարուստ հայրենիքն էր: Այդտեղ էր որ հռչակաւոր Ռսկան վարդապետ Երեանցին բաց արաւ սպարան. այդտեղ էր որ Թոմա եպիսկոպոս Վանանդեցին հիմնեց իր ոչ-սպիտակ հռչակաւոր սպարանը: Սովորութիւն է դարձել կրկնել թէ Գէորգ Արծրունու գնածը հէնց այդ Ռսկանի և Վանանդեցու սպարանն էր\*): Բայց դա կատարելապէս սխալ է: Ռսկանի սպարանը վաղուց էր տարվել Լիւօրնո, Մարսէյլ, Կ. Պօլիս, և Ամասերգամում նրանից ոչինչ չէր մնացել. իսկ Վանանդեցու սպարանը գնել էր Մխիթար Աբբան և փոխադրել էր Ս. Ղազարի կղզին: Գէորգ Արծրունու գնած սպարանը ունէր իր առանձին պատմութիւնը:

1755 թւի դեկտեմբերի 16-ին Առաքել Պօղոսեան անունով մի հայ Ամասերգամում պայման կապեց Միքայէլ Ֆլէյշման անունով յայտնի փորագրիչի հետ այն մասին, որ վերջինս յանձն է առնում պատրաստել հայկ-

\*) Երեցեան՝ ներսիսեան դպրոցի պատմութեան և «Գրիգոր Արծրունի» բրօշուրի մէջ:

րէն տառերի 500 հայեր և մայրեր, իւրաքանչիւրը երեք Փլօրինով: Ֆլէյշման աչխատում էր էնչեղէ նշանաւոր ձուլարանական և սպարանական ֆիրմայի արհեստանոցում\*): Նա 1756—1757 թւականների ընթացքում պատրաստեց չորս տեսակ հայերէն տառեր և յանձնեց Առաքելին: Տառերը շատ զեղեցիկ էին այն ժամանակվայ համար: Ռսկանի և Վանանդեցու տառերը միևնոյն տեսակի էին, իսկ Ֆլէյշմանի պատրաստածները արդէն նոր ձև էին ներկայացնում:

Առաքել Պօղոսեանը, որքան յայտնի է, զբերը չը սպագրեց, նրա պատրաստել տուած տառերը մնացին առանց գործադրութեան: Երբ Միմէօն կաթողիկոսը վճռեց սպարան հաստատել Էջմիածնում, նա զբեց Ամասերգամի հայոց եկեղեցու տեսուչ Յովհաննէս վարդապետին որ Առաքելի տառերը ուղարկվին Էջմիածին: Բայց Առաքելը չը տուեց տա-

\*) Մեր ձեռքում գտնվում են էնչեղէի ձուլարանի նմուշները, որոնք սպագրված են 1768 թւականին: Այդտեղ կան Առաքելի հայերէն տառերի նմուշներն էլ (Տ. «Պատմութիւն Հայկական Տպագրութեան», Վենետիկ, 1895, էր. 179) և մենք տեսնում ենք որ դրանք հէնց այն տառերն են, որ գնել է Արծրունին: Մինչև օրս էլ Արծրունիների տնային կաթիլ մէջ գտնվում է Ֆլէյշմանի ձեռքով փորագրած հայերի մի մասը:



ները և Սիմէօն կաթողիկոսը ստիպված եղաւ  
ուրիշ կերպով տառեր ձեռք բերել իր սպա-  
րանի համար: Թէ ինչ եղաւ այնուհետև  
Առաքելը, չը գիտենք: Գիտենք միայն որ նրա  
տառերից կազմելոց Սալգարեանի սպարանը  
Պետերբուրգում, որ յետոյ Յովսէփ արք-  
եպիսկոպոս Արղութեանի ձեռքով փոխադր-  
վեց Նոր-Նախիջևան և Աստրախան:

Ահա այդ Առաքելի սպարանն էր, որ դը-  
անվում էր Ամասերգամում և կնքված էր  
Նապօլէօն Բօնապարտի հրամանով, ինչպէս  
վկայում է Ներսիսեան զպրոցի սպարանում  
տարված Չամչեանի «Քերականութեան» յիշա-  
տակարանը: Գէորգ Արծրունին գնեց այդ  
սպարանը թէ պատրաստի տառերով, թէ  
մայրերով և ձուլարանական պարազաներով  
և ուղարկեց Թիֆլիս, ուր սպարանը կազմ  
ու պատրաստ էր 1819 թւականին: Դա մի  
մեծ նորութիւն էր Թիֆլիսի համար, ուր չը  
կար փոքր ի շատէ հարուստ սպարան: Կով-  
կասեան մայրաքաղաքում դործում էր միայն  
զինուորական շտաբի փոքրիկ մամուլը, այն  
էլ միայն պաշտօնական թղթեր սպելու հա-  
մար: Գէորգ Արծրունու բերած այդ նորու-  
թիւնը այնքան աչքի ընկնող էր, այնքան  
նկատելի, որ Երմօլօվը Ալէքսանդր I-ին  
գրած իր այն թղթի մէջ, որով խնդրում էր

ազնուականութիւն տալ Արծրունուն, յիշա-  
տակում էր, իբրև նրա մատուցած առանձին  
ծառայութիւն, «Հօլլանդիայում նշանաւոր  
գումարով առած ամենապատուական հայե-  
րէն սպարանը, որ այժմ ընծայեց այստեղ  
կառուցվող հայոց ուսումնարանին»:

Տպարանի գլխաւոր հարստութիւնը տա-  
ներն էին: Ներսէսը գնեց մեծ մամուլ, աւե-  
լացրեց ուսերէն և ֆրանսերէն տառերի  
մայրեր, բայց սպարանը միշտ մնաց Գէորգ  
Արծրունու անունով: Մինչև 1860-ական  
թւականները Ներսիսեան զպրոցի սպարանը  
շատ նշանաւոր դեր կատարեց Թիֆլիսում.  
Դա միակ հարուստ հայերէն սպարանն էր,  
ուր տպվում էին համարեա բացառապէս բո-  
ւոր հայերէն զրքերն ու պարբերական հրա-  
տարակոթիւնները: Բոլոր սպագրութիւննե-  
րի վրա նշանակվում էր. «Ի Տպարանի Ու-  
սումնարանի Հայոց ընծայեցելոյ յԱզնուա-  
կան Գէորգայ Երեմեան Արծրունուց»: Ներ-  
սէսը իր զպրոցի չափ սիրում և խնամում էր  
այս հիմնարկութիւնն էլ Հեռատես առաջնոր-  
դը սխալված չէր, նրա ակնկալութիւնները  
սկսեցին իրագործվել, սպարանը բացվելուց  
յետոյ Թիֆլիսն էլ իր անունը մտցրեց մեր  
զրականութեան պատմութեան մէջ, կարծես  
Ներսէսը զգում էր որ Կովկասի մայրաքաղա-



քը պիտի դառնայ ուսանայիցի գրական գործունէութեան ամենազլխաւոր կենտրոնը:

1824 թւականին բացվեց Ներսիսեան դպրոցը: Հիմնադիրը երկար աշխատել էր անդադար, շինութիւններ էր կառուցել իր այդ կրթական հաստատութիւնը նիւթապէս ապահովելու համար: Բայց դրանով ամեն ինչ չէր վերջացել. նոր բացված դպրոցը պահանջում էր մեծամեծ ջանքեր՝ մի կանոնաւոր, բարեկարգ, իր կոչման բարձրութեան վրա կանգնած հիմնարկութիւն դառնալու համար: Ներսէսը կրկնապատկում է իր եռանդը. ուսուցիչներ է հրաւիրում, գասազբբերի, ներքին կարգ ու կանոնի մասին է հոգ տանում: Նրա օգնականները, նրա բազուկները զըլխաւորապէս երկուսն են—գպրոցի տեսուչ Յարութիւն քահանայ Ալամդարեանը և Գէորգ աղա Արծրունին:

Արծրունու խորհրդով էր, որ ինչպէս ասացինք, Ներսէսը Պարիզից հրաւիրեց Շահան-Ջրպետին Թիֆլիս: Պարիզից վերադառնալուց յետոյ Գէորգ աղան մեծ գովասանքներով էր խօսում այդ մարդու մասին, նկարագրելով նրան որպէս մի յայտնի գիտնականի: Ներսէսը հաւատաց. նամակագրութիւն սկսվեց նրա և Ջրպետի մէջ: Ներսիսեան դպրոցի բացվելուց յետոյ, երբ պատրաստված, գի-

տուն ուսուցիչների այնքան մեծ պակասութիւն էր զգացվում, Ջրպետի Թիֆլիս գալը և գպրոցի գասատու դառնալը ինքն ըստ ինքեան մի վճույսով հարց պիտի լինէր: Ո՞վ պիտի աւելի յարմար ղեկավար դառնար զըլրոցում քան այդ մարդը, որ գիտնականի համբաւ էր վայելում Պարիզի պէս մի քաղաքում: Նա մի կատարեալ գիււտ պիտի լինէր գպրոցի համար: Ներսէսը ծախսեր չէ խնայում, հրաւիրում է Ջրպետին. միայն ճանապարհածախս, Պարիզից Թիֆլիս գալու համար, Ներսէսը վճարեց 10,400 ֆրանկ: Ջրպետը, մի 60 ամեայ ծերունի, Թիֆլիսում գեղեցիկ ընդունելութիւն գտաւ: Բայց շուտով յայտնի դարձաւ որ զանգակի ձայնը հեռուից է լաւ գալիս և այդ գիտնականը այն չէր, ինչ կարծում էին:

Ներսէսը չը կարողացաւ Թիֆլիսում աւանատես լինել իր հրաւիրած գիտնականի գործերին: 1827 թւականին, երբ Ջրպետը դեռ հիւանդ պառկած էր, սկսվեց ուսուցարսկական պատերազմը: Յայտնի է թէ Ներսէսը ինչ մեծ դեր է կատարել նախընթաց պատերազմներում, ուսուցիչները գործը հեշտացնելու համար: Այս անգամ պատերազմական բեմը Արարատեան երկիրն էր, ուր ամենայն հայոց Մայր Աթոռը դեռ հեծում էր պարս-



կական իշխանութեան տակ: Ներսէսը, հայ կամաւորների գունդ կազմելով, ճանապարհովեց պատերազմի դաշտը, դպրոցի կառավարութիւնը յանձնելով իր մտերիմներին—Ալամդարեանին, Արծրունուն և Յարութիւն Շերմազանեանին: Սրանք ամենայն եռանդով շարունակեցին հոգատարութիւնը, այնպէս որ դպրոցը համարեա լիաս չէր կրում իր հիմնադրի բացակայութիւնից: Կարգադրողը, ցուցմունքներ տուողը, իհարկէ, էլի Ներսէսն էր. պատերազմի դաշտումն էլ նա բաւական ժամանակ էր գտնում իր դպրոցին նուիրվելու համար: Ալամդարեանը և Արծրունին շարունակ նամակներ էին գրում նրան, տեղեկութիւններ էին տալիս և հրահանգներ խընդրում: Արծրունու հոգածութեան գլխաւոր առարկան հիւանդ Ջրպետն էր: Նա էր տալիս նրա ծախսերը, ամսական ոսճիկը: Ներսէսը դեռ որոշ ոսճիկ չէր նշանակել, բայց ստանալով Արծրունու հաշիւներն ու տեղեկութիւնները, յանձնարարում էր նրան ծախս չը խնայել հիւանդ ծերունուն խնամելու համար: Սակայն Արծրունին շուտ համոզվեց որ այդքան խնամքի և ուշադրութեան արժանացած մարդը միայն ստանալ գիտէ, արդիւնք չէ ցոյց տալիս և շիտակ մարդ էլ չէ: Պարսկական պատերազմը շուտ վերջա-

ցաւ. մի քանի ամսվայ ընթացքում ոչ միայն ամբողջ Արարատեան երկիրը անցաւ ռուսների ձեռքը, այլ և Թաւրիզը վերցրվեց: Բայց Ներսէսը այդ պատերազմում ցոյց տուած իր մեծ ծառայութիւնների փոխարէն հալածանքի ենթարկվեց Պասկևիչի կողմից:

Պատերազմի սկզբում գեներալ Պասկևիչը Կովկաս էր ուղարկված՝ Երմօլովի հետ միասին գործելու: Բայց փառասէր, նախանձոտ Պասկևիչը տեղ հասնելուն պէս սկսեց ինտրիգներ լարել Երմօլովի դէմ և կարողացաւ տապալել նրան: Այնուհետեւ պատերազմական յաղթութիւնները հերոսացրին նրան, փառքի հասցրին, բայց նա չը մոռացաւ իր քինախնդրութիւնը, և հալածանքները ուղղեց Երմօլովի բարեկամների դէմ, որոնց մի մի հեռացրեց Կովկասից: Իրանց թուումն էր և Ներսէսը: Պատերազմը վերջացաւ, Ներսէսը այլևս հարկաւոր չէր Պասկևիչին և սա յայտնեց Պետերբուրգի կառավարութեան թէ Ներսէսը վստահելի անձնաւորութիւն չէ, թէ նրան Կովկասում պահելը աւելորդ է, վտանգաւոր: Հերոսի այս ցանկութիւնն էլ անտես չարվեց Պետերբուրգում: Երմօլովի պէս մի մարդուն Պասկևիչի քմահաճութեանը զոհ բերելուց յետոյ առանձին մի դժուարութիւն չէր Ներսէսին զոհելը, թէև դա հայ հոգև-



բականութեան ամենանշանաւոր, ազգեցիկ ներկայացուցիչն էր: Եւ ահա ներսէսը հրաման ստացաւ անմիջապէս գնալ Քիչինսկ և ստանձնել Բեսարաբիայի առաջնորդի պաշտօնը: Դա մի պատուաւոր աքսոր էր: Ներսէսի դէմ դժգոհութիւն ունեցողները—իսկ զրանց թիւը փոքր չէր—գլուխ բարձրացրին, տօնում էին իրանց յաղթանակը:

1828 թւականի ամառը ներսէսը Թիֆլիսումն էր. այդտեղ միայն երկու ամիս կարողացաւ մնալ: Նա դեռ չը գիտէր թէ պէտք է պաշտօնով մնայ Քիչինսկում, կարծում էր թէ շուտով դարձեալ պիտի վերադառնայ Թիֆլիս. ուստի բերանացի կարգադրութիւններ արաւ թեմական գործերի և իր գալրոցի մասին: Վերջինիս անտեսական կառավարութիւնը նա յանձնեց էլի Գէորգ Արծրունուն և Շերմազանեանին. իսկ Զրպետին նշանակեց տեսուչ և սրովհեան սա շարունակ գանդատում էր թէ Արծրունին չէ տալիս իր ամսական ոտձիկը, ներսէսը ինդրեց Արծրունուն այնպէս փարվել Զրպետի հետ, որ սա գանգատներ չանէ: Ուսումնարանի հոգսը ամենազլխաւորն էր. պէտք էր նրան պահպանել ներսէսի բացակայութեան ժամանակ: Իսկ թէ որքան եռանդով էր Արծրունին կըպած այդ գործին, ցոյց է տալիս նրա հե-

տեալ գրութիւնը, որ ուղղված էր ներսէսին.

Որովհետեւ Սրբազնութիւն Ձեր յետ միջոց ժամանակի հեռանալոց էք բաղաբէս, դիտումն ծառայիդ յայտնեմ վասն վարժարանի եւ տպարանին: Սրբազնութիւն Ձեր թող որպէս եւ կամի օրինադրել, կանոնաւորէ զգործս եւ զկացութիւնս վարժապետաց եւ որոշէ զամենայն իրս կարեւորս, զի որպէս կախեալ կայ ի կամաց սրբոյ Տէրութեանդ: Յետ ամենայնի՝ արժան համարիմ բացայայտել եթէ կարելի եւ օգտակար համարես, ընտրեան զերկուս կամ զերիս անձինս հայրենասէրս՝ որք լինիցին վէրել, այսինքն վերատեսուչ ամենայն գործոց վարժարանի եւ տպարանի՝ թէ եկամտից եւ թէ ծախսից եւ յայլ ամենայն իրս, զորս լինի օգտակար եւ պայծառացուցիչ վարժարանի եւ ազգի:

Ներսէսը, սակայն, բաւականացաւ իր բերանացի կարգադրութիւններով և շտապեց ճանապարհ ընկնել դէպի Ռուսաստան: Բաւական էր նրա հեռանալը, և Թիֆլիսում սկսեցին զանազան տեսակ լուրեր պտտել: Ներսէսը աքսորված է, շուտով կաքսորվեն և նրա բարեկամներն ու կողմնակիցները, որոնց անունները գաղտնի արձանագրված են ստիկանութեան մէջ: Ահա ինչ էին խօսում Թիֆլիսում. և սարսափը գնալով սաստկանում էր: Դպրոցի ուսուցիչները երկիւղից հրաժարվեցին իրանց պաշտօններից. Արծ-



րունին և Շերմազանեանը ստիպված էին մի առ ժամանակ հեռանալ դպրոցից, որովհետև լուրեր էին տարածվել թէ նրանց էլ շուտով պիտի սև կառքի մէջ նստեցնեն և սքսորեն: Դպրոցը փակվեց, 400-ի չափ աշակերտները արձակվեցան և ցրվեցին:

Քայքայվում էր Ներսէսի ձեռակերտը: Բարեբախտաբար, շուտով յայտնի դարձաւ որ սարսափահար լուրերը սուտ են: Ներսէսի սովորաթիւ բարեկամները նորից շունչ են քաշում և նրանց առաջին գործն է լինում վերակենդանացնել սուտ լուրերի պատճառով փակված հիմնարկութիւնները—դպրոցը և տպարանը: Նրանք դիմում են Գէորգ Արծրունու և վերջինս մի ժողով է կազմում Ջրպետի մօտ: Այդտեղ Արծրունին յանձն է առնում գործերի ղեկավարը դառնալ և առաջարկում է միաբան գործունէութեամբ խնամել երեսի վրա ընկած գործերը: Երեք հանդամանք կային, որոնք, ինչպէս գրում էր Արծրունին Ներսէսին, հարկադրեցին նրան առաջ անցնել և աշխատանք չը խնայել. առաջինը Ներսէսի պայծառ անունն էր, երկրորդը՝ աշակերտների ցրվելն էր և դպրոցի ու տպարանի փակվելը. իսկ երրորդն այն էր, որ նա ինքն էլ երախտիք ունէր դպրոցի վրա: «Այս պատճառով, ասում է նա, ես շարժ-

վեցայ բարի նախանձից և դէպի իմ հայրենիքն ունեցած ջերմեռանդութիւնից, որ չէ թոյլ տալիս ինձ բարի, ազգօգուտ գործերի վերաբերմամբ անհուպացող լինել, որքան կենդանի եմ»:

Եւ իբրև, Գէորգ Արծրունու եռանդուն գործունէութեան շնորհիւ Ներսիսեան դպրոցը նորից կենդանանում է: Արծրունին իր վրա է վերցնում դպրոցի և տպարանի տընտեսական կառավարութիւնը և համաձայնվում է ամեն օր մի ժամ գնալ դպրոցը և վերահասու լինել գործերին: Ալամդարեանը նորից ստանձնում է ուսումնական մասի կառավարութիւնը: Եւ այսպիսով դպրոցը, մօտ 20 օր փակ մնալուց յետոյ, վերաբացվում է օգոստոսի 27-ին: Արծրունու գործունէութեան մասին Ալամդարեանը այսպիսի վկայութիւն էր տալիս Ներսէսին դրած իր նամակում. «Աղա Գէորգ Արծրունին, այդ ազնուական մարդը, մի չը տեսնված ջերմեռանդութեամբ աշխատում է բարեկարգել ուսումնարանի ներքին և արտաքին կառավարութիւնը»:

Գոհ և բաւական էին ուսումնարանին և տպարանին նուիրված այդ մի բուն մարդիկ: Բաց խաղաղ ու համերաշխ գործունէութիւնը երկար չը տևեց. Ներսէսի թշնամիները քնած չէին: Չը բաւականանալով որ



այդ անձնուէր գործիչը հեռացրված է Թիֆլիսից և Կովկասից, թշնամիները, որոնք բաղկացած էին, ի հարկէ, թէ աշխարհական և հոգևորական հայերից, ոչինչ ջանք չէին խընայում որ վնասեն Ներսէսի բարեկամներին և դրանով ոչնչացնեն Ներսէսի անուան այնքան պատիւ բերող հիմնարկութիւնները:

Սև նախանձը, չարակամութիւնը, հայի դժբախտութեան այս չար հրեշտակները, զբրդեցին այդ թշնամիներին շահագործել Պասկևիչի ունեցած ատելութիւնը Ներսէսի դէմ: Նրանք շարունակ գրգռում էին դուռը և ամբարիշտ Պասկևիչին այն երեք-չորս անձինքների դէմ, որոնք Ներսէսի գործերի և գաղափարների արթուն պահապաններն էին: Եւ այդ բանը աջողկեց նրանց: Ալամդարեանի, Գէորգ Արծրունու և սրանց երկու ընկերակիցների դէմ խիստ հալածանքներ սկսվեցան: Ալամդարեանն ու Արծրունին ոստիկանական հսկողութեան ենթարկվեցին: Եուտով Ներսէսի թշնամիները մի նոր դաշնակից էլ դտան: Եւ դա ուրիշ ոչ ոք չէր, եթէ ոչ Յակոբ Շահան-Ջրպետը, այն մարդը, որ այնքան բարերարութիւններ էր տեսել Ներսէսից...

Ներսիսեան դպրոցին Ջրպետը կպել էր պարագիտի պէս: Ստանալով, չը նայած զբաղրոցի դրամական նեղ դրութեան, բաւական

մեծ ոռճիկ, վայելելով Թիֆլիսում մեծամեծ պատիւներ, այդ «գիտնականը» համարեա ոչինչ արդիւնք չէր ցոյց տալիս. նրա գործըն էր շարունակ զանդատվել թէ քիչ է ըստանում կամ ժամանակին չէ ստանում ոռճիկը: Գէորգ Արծրունին, Ներսէսի աքսորից յետոյ դառնալով դպրոցի գլխաւոր ղեկավար, շատ դէպքերում էր զգալ տալիս Ջրպետին որ նա իր ստացածի և համբաւի չափ արդիւնք չէ ցոյց տալիս: Այդ արդէն բաւական էր որ եզեսացի հայը գլորվէր Ներսէսի թշնամիների զերկը: Եւ նա, շարունակելով ապրել դպրոցի շինութեան մէջ, ստանալ ոռճիկ, դառնում է Պասկևիչի և նրա հովանուտակ աշխատող թշնամիների գործիք: Սակայն Արծրունին այնքան թոյլ ու խեղճ մարդ չէր, որ անտարբեր ու լուռ մնար այդպիսի ստոր արարքի դիմաց. նա խոշոր ընդհարում ունեցաւ Ջրպետի հետ, որին շուտով արձակեցին դպրոցի տեսչութիւնից:

Կռիւր սաստկացաւ. Ջրպետը ցոյց տուեց իր հոգու ամբողջ տգեղութիւնը. նա շարունակում էր ապրել դպրոցի շինութեան մէջ, ոռճիկ ստանալ: Եւ այդպէս, Ներսէսի մտերիմները, ազգեցիկ և հարուստ Գէորգ-աղայի ղեկավարութեամբ, ստիպված էին մի կողմից պաշտպանվել հակառակորդների զղուե-



լի մասնութիւններէից, միւս կողմից պատ-  
ժել Զրպետի նման մարդկանց: Բայց երկու  
մրցակից կողմերի ոյժերը խիստ անհաւասար  
էին: Պասկեվիչի մարզիկ իրանց կողմն ու-  
նէին իշխանութիւնը, մինչդեռ Ներսէսի մար-  
զիկ ոչ մի պաշտպան չունէին և պաշարված  
էին սաստիկ երկիւղից:

«Գիշերները—կարգում ենք Ներսիսեան  
դպրոցի պատմութեան մէջ—Վանքի պարըս-  
պի շուրջը ծպտեալ ոստիկաններ էին պտը-  
տում և դիտում թէ ով է գալիս գնում Ա-  
ւաջնորդարան, ուր բնակվում էին Սիմէօն  
արքեպիսկոպոսը և Ալամդարեանը: Սոցա  
գրած կամ յանուն սոցա եղած նամակները  
փոստայում բռնվում էին»<sup>\*)</sup>: Գէորգ Արծրու-  
նին և Շերմաղանեանը վախում էին տանից  
դուրս գալ, բայց շարունակում էին գործել  
օգուտ դպրոցի: Արծրունին նամակներ էր  
գրում Ներսէսին, տեղեկութիւններ էր հա-  
ղորդում նրան:

Օգտվելով այդ սարսափահար դրութիւ-  
նից, Զրպետը կամեցաւ մի անգամ էլ հարըս-  
տահարել այն դպրոցը, որ դժբախտութիւն  
էր ունեցել նրան Պարիզից հրաւիրելու այն  
յուսով, թէ օգուտ պիտի տեսնէ նրանից:

<sup>\*)</sup> Երկցիան—«Պատմ. ներսիսեան դպրոցի», կր.175.

Դպրոցը տուել էր նրա ճանապարհածախսը  
Պարիզից Թիֆլիս, այժմ Զրպետը կարծում  
էր որ դարձեալ դպրոցը պիտի տայ ճանա-  
պարհի ծախսը՝ Թիֆլիսից Պարիզ գնալու  
համար: Պասկեվիչի միջոցով նա այդպիսի  
պահանջ արեց դպրոցից: Ահա ինչ էր գրում  
Գէորգ Արծրունին Ներսէսին.

«Յայտնեմ վերջին յուսահատութեամբ, զի պա-  
տուելի Զրպետն, ըստ յորդորից Բաստամովին եւ  
այլ քանի մի իւր նման բարի անձանց, Աւագ ե-  
րեքշաբթի, այսինքն Զարչարանաց շաբաթի, համե-  
մատեալ իւր նախորդին<sup>\*)</sup>, խնդիր է մատուցեալ  
գրաֆին Երեւանայ<sup>\*\*)</sup> զանգատանս ի վերայ սըր-  
բազնութեանդ, Սիմէօն արքեպիսկոպոսին, եւս ա-  
ռաւել ի վերայ Յարութիւն վարդապետին<sup>\*\*\*)</sup> եւ  
ժողովոյ: Բացի ամենայն զանգատից, նա պահանջէ  
զիւր ուժնիկ ըստ կամաց իւրոց... եւ ի Գաղղիոյ բեր-  
եալ գրեանք եւ այլ ինչ վասն վարժարանին—զինն  
նոցա, պահանջէ՝ նաեւ զալստեան եւ զնալոյ ճանա-  
պարհի ծախսն եւ ասէ թէ յետ երեք տարի ժամա-  
նակաւ եկեալ եմ եւ պարտիմ զնալ ժամանակին  
իմոյ ժողովութեանս ի ֆարիժ եւ թէ հաշիւ տեսա-  
նելոց եմք»:

Ի դուր դպրոցի վարչութիւնը ապացու-

<sup>\*)</sup> Ալինարկում է Յուզային:

<sup>\*\*)</sup> Պասկեվիչ:

<sup>\*\*\*)</sup> Ներսէսը Ալամդարեանին վարդապետական կո-  
չում էր տուել:



ցանուժ էր որ Ջրպետը ստանալիք չունի, որ նա նոյն իսկ աւելի է ստացել քան հարկաւոր էր: Թիֆլիսի նահանգապետը հարկադրեց տալ ճանապարհածախս, և դպրոցը 1250 ռ. տուեց, բայց դրա փոխարէն զոնէ այն օդու-տը ունեցաւ, որ սրահանջեց Ջրպետից հե-ռանալ իր շինութիւնից: Այդպէս էլ եղաւ. Ջրպետը մոռացաւ Պարիզ գնալը, մնաց Թիֆ-լիսում և երկար ժամանակ կատարում էր իր գերը Պասկեօվիչի մօտ: Թիֆլիսում էլ մե-ռաւ նա:

Ահա այս տեսակ ծանր հանդամանքների մէջ էին ներսէսի չորս մտերիմները սրահպա-նում ներսիսեան դպրոցի գոյութիւնը: Հա-լածանքները, մատնութիւնները չէին վա-խեցնում դրանց: 1829 թւականի յուլիսին Գէորգ Արծրունին յայտնում էր ներսէսին որ դպրոցի համար նոր կալուած են առել: Իր հրճուանքը այդ առիթով նա յայտնում էր այսպիսի խօսքերով. «Սրբազան Տէր, այնքան ուրախ եմ, համարիմ իբրև սեպհա-կան կալուած իմ»: Գործողների այսպիսի անկեղծ ոգևորութիւնն էր պատճառը, որ ներսէսի ուսումնարանը, նոյն իսկ այդ տե-սակ հանդամանքների մէջ, բարեկարգվեց, սկսեց կանոնաւոր կեանք վարել: Եւ այսպէս շարունակվեց մինչև 1830-ի ամառը, երբ խօ-

ւերան վերջ դրեց Արծրունու կեանքին, իսկ Ալամդարեանին Պասկեօվիչը հեռացնել տուեց Թիֆլիսից: Դպրոցը առ ժամանակ փակվեց:

Պէտք է ասել որ վերջերում Արծրունու և Ալամդարեանի մէջ էլ գծաութիւններ ծա-գեցին: Եթէ Արծրունին յամառ, իր ասածի մարդ էր, Ալամդարեանն էլ պակաս չէր նրանից իր բնաւորութեան պակասաւոր կող-մերով: Բայց կայ այն հանդամանքը, որ այդ գծաութիւններից չը վնասվեց դպրոցը, ընդ-հակառակն, Արծրունին, ինչպէս երևում է մահից երեք-չորս ամիս առաջ եփրեմ կա-թողիկոսին գրած իր մի նամակից, խոս-տովանում էր Ալամդարեանի արժանաւոր-ութիւնները, խնդրում էր վարձատրել նրան և թոյլ չը տալ որ նա հեռանայ գործերից, որովհետև, ասում էր նա, չը կայ այնպիսի անձն, «որ կառայարէ դամնայն, և ուրեմն մնայ մեզ հայրենասիրացս ապարդիւն այս-քան վաստակաբեկութիւն՝ մանաւանդ յայս ոսկեղար ժամանակիս... և մեք լինիմք անպի-տան և ծաղր ի մէջ ամենայն աղբաց»:

Մեր պատմածներից արդէն շատ պարզ երևաց թէ որքան վառ էր հայրենասիրու-թիւնը Գէորգ Արծրունու մէջ և որքան շատ էր նա լցված բարի ցանկութիւններով դէպի իր ազգը: Աւելացնենք մի երկու փաստ էլ:



1824 թվականին Թիֆլիսում էր գտնվում վանեցի վաճառական Մահուեսի Գասպար Չարուխչևանցը. նա ամուսնացած էր և լաւ կարողութիւն ունէր: Արժրունին, տեսնելով որ իր հայրենակիցը յափշտակված է Ներսէսի գործերով, համոզում է նրան բարեգործական կտակ կազմել: Չարուխչևանցը համաձայնվում է և իր կտակի մէջ, ի միջի այլոց, 4600 ռուբլի է յատկացնում Ներսիսեան դպրոցին, որպէսզի այդ գումարով դրքեր տպագրվեն նրա տպարանում: Կտակակատարներն շանակիկեցան Ներսէսը, Արժրունին, Շերմազանեանը: 1826 թվին կտակակատարները տպագրեցին այդ փողով Չամչեանի մեծ քերականութիւնը: Վերջապէս յիշենք և այն, որ Արժրունին, Ներսէսի միւս բարեկամների հետ, 10,000 ռուբլի հաւաքեց և ուղարկեց Էջմիածին՝ վանքի պարտքերը տալու համար:

Եւ այսպէս, Վանի դժբախտ իրականութիւնից դուրս եկած այդ փոճառական մարդը, որ մի առանձին գիտութիւն էր ստացել և իր մասին ասում էր թէ չունի «գրականական գիտութիւն», բնատուր խելքով այնքան լաւ ըմբռնում է ժամանակի պահանջները, ժողովրդի կարիքները, որ քաջութեամբ կանգնում է իր ժամանակի փոք-

րաթիւ առաջաւոր մարդկանց շարքում և մի զարմանալի սիրով կապվելով Ներսէսի նման փայլուն գործիչի հետ, նրա գրօշակի տակ կռիւ էր մղում խաւար ոյժերի դէմ յանուն իր ազգի առաջադիմութեան:

Այժմ տեսնենք թէ ուրիշ ինչ բաներով անուն հանեց Արժրունին և որոնք են նրա մասուցած ծառայութիւնները, որոնց մասին ակնարկում էր Երմօլովը իր թղթերի մէջ:

Թիֆլիս գալուց յետոյ Գէորգ աղան ըսկսում է կալուածներ առնել: Ամենից առաջ, այն է՝ 1818-ին նա գնում է իշխան Օրբէլեանօյեների այգու մի մասը 1700 ռուբլով: Դա այն կալուածն է, ուր ապագայում շինվեց Արժրունու յայտնի գալլէրէան: Գէորգը այդտեղի վրա մեծ ուշադրութիւն չը դարձրեց: Նրա միտքն էր կառուցանել մի մեծ առևտրական կարաւանսարայ: Թիֆլիսի առևտուրը այն ժամանակներում կենտրոնացած էր Սիօնի եկեղեցու մօտերքում: Այդտեղ, Կուրի ափին, ոռւսաց եկեղեցական վարչութիւնը ունէր մի հին, աւերակ կարաւանսարայ. Վրաստանի էկղարիքը ձեռնտու համարեց ծախել այդ կալուածը. աճուրդ նշանակվեց 1821 թվականին և ամենաբարձր գինը—20,000 ռուբլի, առաջարկեց Գէորգ



Արծրունին: Անմիջապէս նա սկսեց կառուցանել այդ ընդարձակ հողի վրա մի մեծ, հոյակապ կարաւանսարայ, որ հռչակեց նրա սնունը և զարձաւ Թիֆլիսի ամենանշանաւոր զարդերից մէկը: Գններալ Երմօլօլը առանձին հոգս էր տանում աւերակ և աղքատ Թիֆլիսը շէնացնելու, զարդարելու մասին. Արծրունու պէս կարող, ունեւոր մարդուն նա ամեն կերպ խրախուսեց այդ ձեռնարկութիւնը առաջ տանելու համար և, ինչպէս տեսանք, հէնց այդ նպատակով էլ նա միջնորդեց որ Արծրունուն ազնուական կոչում տրվի, ի նկատի առնելով այն, որ նա քաղաքին օգուտներ է տալիս:

Կարաւանսարայի շինութիւնը ցոյց է տալիս թէ ինչպէս կազմվեց Գէորգ-աղայի ժոժովրդական հռչակը. Թիֆլիսում, միևնոյն ժամանակ դուրս է բերում նրա բնաւորութեան մի քանի տիպիական գծերը: Ուստի աւելորդ չը պիտի լինի մի քանի մանրամասնութիւններ առաջ բերելը:

Ահազին շինութիւնը Արծրունին սկսեց առանց ճարտարապետի, իր ծրագրած մակարդակով: Պատմում են որ Կուրը երկու անգամ տարել է ջրի կողմից բարձրացրած պատը. բայց Արծրունին, իր գործը լաւ հասկացող մարդու հաստատակամութեամբ, չը

թողեց իր ծրագիրը և երրորդ անգամ սկսեց գետից բուրգեր բարձրացնել: Այդ աշխատութիւններին Թիֆլիսը նայում էր զարմանքով. մի կողմից նա համոզվում էր որ Գէորգ-աղան իր ասածի մարդ է, արդելքների առաջ կանգ չէ առնում. միւս կողմից առասպելներ էր յօրինում նրա հարստութեան մասին: «Գէւուրք աղի օսկիքը գիժ Գոին էլ խելօքացրին», ասում էր ժողովուրդը: Լուր տարածվեց, որ եթէ գետը այլևս չէ կարողանում քանդել պատերը, դրա պատճառն այն է, որ բուրգերի մէջ ոսկով լի պարկեր է դարսել Գէորգ-աղան: Գտնվեցան նոյն խակ այդ ոսկու պարկերին տիրանալ ցանկացողներ. գետի միւս ափից նաւակներով մօտեցան նոր շինութեան պատերին, սկսեցին ծակծակել պատերը, բայց շուտ թողեցին, համոզվելով որ ոսկու պարկերը պահող պատերը շատ են ամուր:

Պատմում են և հետեւեալ բնորոշ դէպքը: Արծրունին շատ հաւանում էր որմնաղիր Կիլիօլին, որ շատ լաւ հասկանում էր շինութեան գործը և հէնց այս պատճառով էլ նոր շինվող կարաւանսարայի վրա հսկում էր իրրև Արծրունու օգնական: Մի օր, ասում են, հըմուտ վարպետը և կալուածատէրը իրար հետ վէճի բռնվեցին, կուկեցին. Կիլիօլին դտնում էր



որ Գէորգ-աղան սխալ է հասկանում և շինութիւնը պէտք է շարունակել այնպէս, ինչպէս ինքն է ասում: «Քանի որ ասածս չես հաւանում, արա քո իմացածը, տեսնենք ինչ դուրս կը գայ», ասաց Արծրունին, խռովեց, տուն դնաց և բարկութիւնից հիւանդացաւ: Կիկօլին շարունակեց ինչպէս ինքը գիտէր: Անցաւ երկու ամիս. Արծրունին չէր գնում տեսնելու շինութիւնը, բայց տալիս էր բոլոր ծախսերը: Վերջապէս, երբ Կիկօլին արել պրծել էր իր իմացածը, Գէորգ-աղան դնաց տեսաւ նրա դործը, շատ հաւանեց, համբուրեց հմուտ արհեստաւորին, մինչև իսկ ընծայ տուեց նրան: Բայց միւս օրը հրամայեց քանդել Կիկօլիի շինածը և սկսել այնպէս, ինչպէս ինքն էր ասում: «Ես տեսայ քո շինածը և հաւանեցի, հիմա կուզեմ որ դու տեսնես իմ շինածը», ասաց նա վարպետին: Ուժեղ կամքի տէր Արծրունին, որ հաւատում էր իրան, զգում էր որ ինքն էլ լաւ գիտէ, հասկանում է, սչինչ համարեց մեծ ծախսերը, որպէսզի ցոյց տայ որմնադիր Կիկօլին թէ ինքը ի դուր չէ իր ասածի մարդ:

Այս յատկութիւնը, ինչպէս կը տեսնենք մեր այս դործի ընթացքում, ժառանգական էր Արծրունիներին տոհմի մէջ: Գէորգ-աղան

այնպիսի մարդկանցից չէր, որոնք մի բան գնում են մտքում և չեն կատարում. դա մի տոկոսն մարդ էր, որ հետևում էր իր հաստատ կամքին և անպատճառ հասնում էր իր նպատակին: Շիտակ բնաւորութիւն ունէր, ատում էր սուտը, չէր սիրում ընկերութիւններին և խնճոյքներին մէջ ժամանակ անցկացնել, պարսպ մարդկանց հետ զուարճախօսութիւն անելու սովորութիւնը չունէր: Ներսէսի դործերում նրա կատարած դերը արդէն մի շատ լաւ ապացոյց է թէ որքան նա հաստատ, անդրդուելի էր իր համոզմունքներին մէջ: Ում մի անգամից չէր սիրում, նրան երբէք իր մօտ չէր թողնում և երբէք չէր ներում նրա արած սխալը: Առատաձեռն մարդ էր, սիրում էր օգնել կարօտներին, բայց գիտէր հաշիւ պահանջել իր տղւած օգնութեան մասին և սաստիկ բարկանում էր, երբ իրան խարված էր տեսնում: Սաստիկ ինքնահաւանութիւնը խիզախութիւն էր տալիս նրան. նա չէր սիրում հակաճառութիւն, կամենում էր որ իր ասածը կատարվի:

Վանեցի վաճառականի այս ինքնուրոյն, ամբողջացրած բնաւորութիւնը հանեց նրան սովորական, առօրեայ մարդկանց շրջանից և կատարել տուեց նրան բաւական նշանաւոր հասարակական դեր, որքան այդ հնարաւոր



էր այն ժամանակներում մի վաճառականի համար: Մնում է աւելացնել այդ նշանաւոր մարդու յատկութիւնների վրա և նրա սաստիկ գրասիրութիւնը:

Տեսանք որ դեռ Վանում, երիտասարդութեան օրերում, նա կամենում էր նուիրվել գրականութեան: Տեսանք նոյնպէս որ այդ գրասիրութեան արգիւնքն էր Ներսիսեան դպրոցի համար Ամատերգամի տպարանի դրնելը: Բայց Գէորգ Արծրունին միայն ուրիշներին չէր խրախուսում գրականութեամբ պարապելու. նա ինքն էլ ունէր գրելու, հեղինակելու չնորհք: Մահվան տարին, 1830-ին, Ներսիսեան դպրոցի տպարանից լոյս տեսաւ նրա մի աշխատութիւնը հետեւեալ վերնագրով. «Ռարաստան Խրատուց, քաղեալ ի գրոց իմաստասիրաց ջանիւք Ազնուական Գէորգայ Արծրունույ ի վայելս Մանկանց Հայաստանի»:

Առաջաբանի մէջ Գէորգ-աղան խոստովանում է որ չունի այնքան զբաղւածութիւն որ կարողանայ իրանից մի գիրք հեղինակել, ուստի հաւաքեց հին փլիսոփաների գրուածքներից դանաղան օգտակար խրատներ և ահա նուիրում է դրանց ժողովրդի ընթերցողներին: Հետաքրքրական է որ Արծրունին իր այդ աշխատութիւնը հրատա-

րակել է ոչ թէ, իհարկէ, գիտնականների համար, այլ «նորուսումն մանուկների և ուրիշ շատ թերաւարժ հայրենակիցների համար»: Արդէն այդ ժողովածուն ցոյց է տալիս թէ Գէորգ-աղան որքան շատ կարգացած մարդ էր և ինչպէս կարողանում էր լաւ ընտրութիւն անել իր կարգացածներից: «Ռարաստան Խրատուց»-ը խօսում է մարդկային սլարտաւորութիւնների մասին, բերում է օրինակներ հին մեծ մարդկանց կեանքից: Արծրունին այդ կտորները մեծ մասամբ արտագրել է զանազան գրքերից (օրինակ, Թեսալոնսի «Իմաստասիրութիւնից»), այնպէս որ մեզ չը պիտի զարմացնէ նրա ժողովածուի ողորկ, վարժ գրաբարբ, մինչդեռ Արծրունին, ինչպէս երևում է նրա նամակներից, քաջ հայկարան լինելուց շատ հետո էր:

Վերջաբանութեան մէջ Գէորգ-աղան ասում է որ իրան պէտք է անուանել ոչ թէ գրագէտ, այլ գրասէր: Եթէ, ասում է նա, մի բոլորովին անուս մարդ, որ բացի դրանից տարիքով էլ է, յանձն է առնում հրատարակել մի այդպիսի իմաստասիրական գիրք, դրա սլատճառն այն է, որ նա կամենում է բարի նախանձ գրգռել, օրինակ հանդիսանալ աւելի կարող մարդկանց համար:



Գանդատվում է որ հայերի մէջ արհամարհ-  
ված է ուսումը և «մեր ազգի մէջ ուսանող-  
ների թիւը շատ նօսր է»։ Ճնողները, կուր-  
օրէն խաբովելով մասնաւոր շահերից, որ ձեռք  
են բերում նրանց որդիները անարգ աշխա-  
տանքով, զրկում են նրանց ուսման բարիքից։

«Դարաստան Սրատուց»-ը այն միակ գիր-  
քը չէր, որ պատրաստել էր Գէորգ Արծրու-  
նին։ Նա ունէր և երեք հատորից բաղկացած  
մի սրատմութիւն, որի մէջ կար Հայաստանի  
և Վասուլուրականի, ինչպէս նաև Ասորիստա-  
նի անծանօթ գաւառների քարտէսը. բացի  
զրանից, այդ հեղինակութեան մէջ մտնում  
էին և Արծրունու ճանապարհորդութիւնները  
և նա խոստանում էր այդտեղ տալ իր տե-  
սած տեղերի և բնակիչների նկարագրութիւ-  
նը։ Այս հեղինակութիւնը, որ անշուշտ հե-  
տաքրքրական սլիտի լինէր, Արծրունին չը  
կարողացաւ տպագրել տալ. պատճառը Ալամ-  
դարեանի հետ ունեցած գժտութիւններն էին։  
Ինքը Ալամդարեանը, Ներսէսին տուած իր  
մի զեկուցագրի մէջ ասում է, որ Արծրու-  
նին կամենում էր «Դարաստանից» յետոյ  
տպագրել իր կեանքի պատմութիւնը և իր  
ճանապարհորդութիւնը, բայց այդ բանը չը  
թույլատրվեց նրան։ Երևի հէնց այդ արդելքն  
էր այնքան բարկացրել Արծրունուն, որ նա

յետ վերցրեց իր տպարանի մայրերի մի  
փոքրիկ մասը, որ և մնաց նրա տանը։

1830 թւականի ամառը Թիֆլիսում տա-  
րածվեց խօլերա հիւանդութիւնը, որ մեծ  
կոտորածներ արաւ։ Քաղաքը դատարկվեց,  
բնակիչները փախան շրջակայ լեռնային զիւ-  
ղերը։ Ալամդարեանը փակեց Ներսիսեան  
դպրոցը և Հաղբատի վրայով ճանապարհովեց  
էջմիածին։ Գէորգ Արծրունին չուղեց հեռա-  
նալ Թիֆլիսից. ապահովութեան համար նա  
բնակվեց իր կարաւանսարայի ներքին յար-  
կի մի սենեակում, որի պատուհանները բաց-  
վում էին Կուր գետի վրա։ Բայց այստեղ էլ  
վրա հասաւ խօլերան։ Օգոստոսի 6-ին Արծ-  
րունին հիւանդացաւ և մի քանի ժամից յե-  
տոյ մեռաւ խօլերայից։ Թիֆլիսում այդ ժա-  
մանակ միայն նրա կիներն էր գտնվում։ Նրա  
միակ որդի Երեմիան, որ զինուորական ծա-  
ռայութեան մէջ էր, այդ միջոցում ուսաց  
դեսպան իշխան Դուրբուրեկովի հետ զնացել  
էր Թէհրան, որտեղից նա վերադարձաւ նոյն  
տարվայ վերջերում միայն։

Գէորգ Արծրունու մահը զգալի կորուստ  
էր հայերի համար։ Ներսէսը իր թղթերի մէջ  
անուանում էր նրան «հարազատն հայրենի  
ազգի և մեր», «հայրենասէր» և այլն։ Երեա-  
նի նահանգապետ իշխան Վասիլ Բեհբուլ-



եանը, որ Ներսէսի, հետեարար և Արծրունու հակառակորդն էր, 1830 թւականի հոկտեմբերին Պասկեպիչին գրած իր մի թղթի մէջ, յիշատակելով այն խնդրագիրը, որ ուղարկել էին Թիֆլիսի հայերը Եփրեմ կաթողիկոսին՝ Ալամգարեանին կախկոպոս ձեռնադրելու մասին, ստում է հեղնական ձեռքով. «Այդ գրութեան մէջ վճռաբար յայտնում են, որ Թիֆլիսում հայոց ազգի զարգը միայն երկու մարդ են եղել—Գէորդ Արծրունին և Ալամգարեան վարդապետը: Առաջինի (Արծրունու) մահովը քանդվեցին Թիֆլիսի հայոց ապագայ բարօրութեան յոյսերը և նրանք տրամութեան մէջ ընկզմվեցան»:

Որքան էլ թշնամական հեղնութիւնը խրտացրած լինի այս թղթի մէջ Արծրունուն յատկացրած նշանակութիւնը, անհերքելի պիտի մնայ, որ Թիֆլիսի հայ հասարակութիւնը, իրաւ, անկեղծ յաւ զգաց, զրկվելով Գէորդ Արծրունու պէս մի սրտացաւ, բարեացակամ և զործունեայ անդամից:

## II

Երեմիա Արծրունի:—Հայրական կսակ, մայրական ժառանգութիւն:—Ցուցակ ծառայութեան:—Մովսիսայում բնակութիւն հաստատելը:—Ընտանիք:—Գրագորի ծնունդը:—Կալուածական գործեր. կարաւստարայի հրդեհը:—Վերադարձ Թիֆլիս:—Չկարարական մեծ ձեռնարկութիւններ. գալիտեա:—Բասաստական գործեր:—Հասարակական գործունեութիւն. ներսիստան դարոց, Թիֆլիսի ֆաղսագրութիւն:—Երկարուղի միջեւ Հնդկաստան: Երեմիայի բնաւորութիւնը:—Ընտանեկան կեանք:—Երեմիաների կրթութիւնը:—Գրագոր և Անդրեաս Արծրունիներ:—Նրանց ուսումը Թիֆլիսում:



Երեմիա Արծրունին, ինչպէս տեսանք, ինն տարեկան էր, երբ հօր հետ տեղափոխվեց Թիֆլիս: Գէորդ աղան, իհարկէ, հոգ տարաւ իր միակ արու զաւակի և ժառանգի կրթութեան մասին: Երեմիան լաւ դիտէր հայերէնը. հայրը տուեց նրան Թիֆլիսի աղնուականների դպրոցը, ապա ուղարկեց Պետերբուրգ, ուր նա, ինչպէս վայել էր հարուստ և ազնուական մի երիտասարդի, մը-



տաւ զինուորական գոյրոյ: Այստեղից նա անցաւ Գլարգիայի հեծեղազօրքը և 1826-ին ստացաւ օֆիցերական առաջին աստիճանը, որից յետոյ տեղափոխուեց Կովկաս:

Ռուս-պարսկական պատերազմի ժամանակ կորնէտ Արծրունին մասնակցութիւն ունեցաւ Սարգարաբատի, Արասարատի և Երևանի կռիւների մէջ: 1828 թւին նա կըռւում էր ռուս զօրքերի շարքում իր նախկին հայրենիքի, Օսմանեան պետութեան դէմ, բայց այս անգամ ոչ թէ Կովկասում, այլ Դունայի բանակում: 1829-ին իշխան Դուլգորուկով Պարսկաստան դեսպան ուղարկուեց խաղաղութեան դաշնագիր կնքելու համար: Նրա սլիտայի մէջ էր Երևմիս Արծրունին, որ ներկայ էր Թիւրքմէնշայի դաշնագրութեան, ապա ներկայացաւ պարսից Շահին Համադանում: Երբ նա վերադարձաւ Պարսկաստանից, Գէորգ-աղան, ինչպէս զիտենք, արդէն վախճանված էր:

Դառնալով հարուստ կալուածատէր, Երևմիս Արծրունին չը թողցց զինուորական ծառայութիւնը, որ չէր արգելում նրան անձնատուր լինել անային գործերին: Իր հօր պէս նա էլ ունէր շինարարական տաղանդ, բայց գերազանցեց նրան խոշոր ու բարդ ծրագիրներ կազմելու և նրանցով երկար


զրազվելու տարօրինակ հակումներով, որոնք ապագայում այնքան քայքայեցին նրա գործերը:

Գէորգ Արծրունին թողել էր կտակ, որի մէջ իր հեռատեսութիւնն ու գործնական խելքն էր ցոյց տուել: Նա ունէր երկու կալուած, որոնցից մէկը քաղաքի հին մասում, միւսը նոր մասում: Դրանք հաւասար արժողութիւն չունէին և կարող էին ժառանգների համար անհամաձայնութիւնների պատճառ դառնալ: Ուստի Գէորգը կտակում էր իր ժառանգներին երբէք չը ծախել այդ կալուածները, չը բաժանել: Կարաւանսարան և փոխարքայի տան մօտ գտնվող տունը միշտ պիտի անուանվէին Գէորգ Արծրունու կալուածներ, իսկ նրանցից ստացվող եկամուտները միայն կարելի էր բաժանել ժառանգների մէջ: Առանձնապէս Գէորգ Արծրունին պարտաւորեցնում էր իր ժառանգներին մընալ հայ-լուսաւորչական \*):

Հայրական կալուածների վրա աւելացաւ և մայրական ժառանգութիւնը, թէև այս վերջինից Արծրունիները երբէք օգուտ չը ստացան: 1833-ին Երևմիսան պաշտօնապէս վա-

\*) Այս տեղեկութիւնները մենք հանում ենք Երևմիս Արծրունու կտակից, որ գրված է 1868 թւին:





Գեներալ Երեմիա Արծրունի

Լերացրած թղթով ստացաւ իր մօրից նրա բոլոր իրաւունքները վասպուրականում մընացած Պաշափեան-Արծրունիների կալուածների վրա: Դրանց մասին մենք տեղեկութիւններ տուինք վերևում: Եւ կթէ յիշատակում ենք այստեղ նորից, պատճառն այն է, որ Երեմիան այդ հեռաւոր մեծ կալուածների համար էլ սկսեց դատ, մէկը այն երկարատե, մեծ և ապարդիւն դատերից, որոնք նրա ամբողջ ուշադրութիւնն էին գրաւում և միայն մեծամեծ ծախսեր էին պատճառում:

Համարձակ, ձեռնարկող ոգու տէր էր Երեմիան: Հօր ժառանգութիւնը ստանալուց յետոյ նա իր մտածմունքների առարկայ է դարձնում այդ կալուածները մեծացնելը: 1832 թւին նա կարաւանսարայի վրա չորրորդ յարկը աւելացրեց և մի քանի այլ շինութիւններ: Եւ միևնոյն ժամանակ նա մասնակցում էր լեռնարնակների դէմ սկսված մի պատերազմական արշաւանքին: Առանձին սէր ունենալով դէպի Ֆինանսական և առևտրական հարցերը, Երեմիան, շարունակելով մնալ ղինուորական ծառայութեան մէջ, 1836-ին փոխ-գնդապետի աստիճանով փոխվեց Ֆինանսների մինիստրութիւնը: Պարսկաստանում եղած ժամանակ նա լաւ ուսումնասիրել էր այդ երկրի զինքը և տնտե-



սական հանգամանքները, ուստի ստացաւ ֆինանսների մինիստրից յանձնարարութիւն հետադատել Կովկասի առևտուրը Պարսկաստանի հետ: Մի առ ժամանակ նրան յանձնուցեց Անդրկովկասի բոլոր մաքսատների գլխաւոր կառավարութիւնը:

Պետական ծառայութիւնը չէր խանդարում նրան կազմել մեծամեծ ծրագիրներ: Այսպէս, 1838-ին նա մի քանի թիֆլիսեցի վաճառականների հետ կազմում է մի մեծ առևտրական ընկերութիւն, որի նպատակն էր տարածել ուսուսաց սպորանքները Պարսկաստանի հիւսիսային կողմերում և փոխարէնը դուրս բերել այդ տեղերից հում մըթերքներ և մշակել նրանց ընկերութեան սեփական գործարաններում, որոնք պիտի շինվէին Կասպից ծովի ափերին: Այս պատճառով ընկերութիւնը խնդրում էր ուսուսաց կառավարութիւնից տալ իրան կասպիական ափերում հազար գետնատին հող: Ընկերութեան գրամագլուխը պիտի լինէր Երկու միլիոն ռուբլի թղթադրամ: Բացի պարսկական առևտրից, ընկերութիւնը նպատակ ունէր շահագործելու Բագուի և Շիրվանի նաւթահանքերն ու աղի լճերը, ուստի և խնդրում էր որ կառավարութիւնը կապալուով իրան տայ այդ բնական հարստութիւնները: Ընկե-

թեան ծրագրած գործունէութիւնը շատ կարևոր և ցանկալի երևաց կառավարութեան. կանոնադրութիւնը հաստատուեց Նիկոլայ կայսրի կողմից, եղան սկզբնական ծախսեր, բայց ընկերութիւնը վերջ ի վերջոյ չը կայացաւ:

Հէնց այդ ժամանակներում էլ, երեսնական թւականների վերջին, Երեմիա Արծրունին ստացաւ գնդապետի աստիճան և նշանակուց Կովկասեան բանակի գլխաւոր ինտենդանտ: Այդ կարևոր պաշտօնի մէջ Արծրունին ցոյց տուեց մի հազուադիւրտ ազնւութիւն և անշահասիրութիւն: Պետական անագին գումարներ ծախսող այս հիմնարկութեան մէջ նա խիստ կարգ ու կանոն մըտցրեց, զսպեց ծառայողներին, հանդիսանալով դանձարանի շահերի անկաշառ պահապան. և այդպէս նա կառավարեց մի քանի տարի, մինչև պաշտօնից հեռանալը:

Երևի նոյն երեսնական թւականներին էր, որ Երեմիա Արծրունին ամուսնացաւ իշխան Դաւիթ Նազարեանի աղջկայ հետ, որի անունն էր Ագրիպպինա: Նազարեան իշխանական տոհմի մասին հաստատ տեղեկութիւններ չը կան. ենթադրվում է որ նա Անդրկովկասից Ռուսաստան գաղթած հայ ընտանիքներից մէկն էր: Կարևոր է նկատի



ունենալ, որ թէև Դաւիթ Նազարեանը Ռուսաստանից Թիֆլիս եկաւ և այդտեղ ընակութիւն հաստատեց, բայց նրա տոհմը արդէն համարեա բոլորովին օտարացել էր: Նրա երկու որդիները Մօսկվայում ամուսնացել էին ուս աղջիկների հետ և բոլորովին ուսացան, ստանալով իշխան Նազարով ազգանունը: Այդ ամուսնութիւնից Երեմիան ունեցաւ, որքան յայտնի է, չորս տղայ և չորս աղջիկ: Տղաներից անդրանիկն էր Գէորգը, որ մտաւ դինուորական ծառայութեան մէջ և մեռաւ երիտասարդ հասակում:

Քառասնական թւականների առաջին կէտում գնդապետ Արծրունին հրաժարվեց ծառայութիւնից և հեռանալով Թիֆլիսից, բընակութիւն հաստատեց Մօսկվայում, երեկ կնոջ պատճառով, որի եղբայրներն ու ուրիշ ազգականները այնտեղ էին ապրում: Այդտեղ Արծրունու ընտանիքը մնաց երկար, մինչև յիսնական թւականների համարեա վերջը: Հաստատվելով Ռուսաստանի մայրաքաղաքում, Արծրունին ստանում էր Թիֆլիսի իր կալուածների արդիւնքները և նրա ընտանիքը վարում էր արխատօիրատ դասակարգին յատուկ ճոխ կեանք, թէև ինքը, Արծրունին, սիրում էր առանձնակեցութիւնը և ապրում էր, ինչպէս զրում էր իր նամակ-

ներից մէկում, ճգնաւորի պէս: Անշուշտ, Արծրունու տան արխատօիրատիական շուք տուողը տիկին Սգրիպպինան էր, ծնեալ իշխանուհի Նազարեան:



Ազգիպպինա Արծրունի

Ահա այդտեղ, Մօսկվայում, այդ արխատօիրատ ընտանիքի մէջ, 1845 թւի փետրվարի 27-ին ծնվում է Գրիգորը, իսկ 1847-ին



նրա եղբայր Անդրէասը: Գրիգորը Երեմիա Արծրունու երրորդ արու դաւակն էր. նրանից առաջ ծնուել էին վերոյիշեալ Գէորգը, ապա Սարգիսը, որ նոյնպէս վախճանվեց պատանի հասակում:

Յայտնի է թէ ինչպէս պիտի վնէր երեսաների դաստիարակութիւնը մի այգալիսի ընտանիքում: Ծնված օտար երկնքի տակ, մի այգալիսի շրջանում, որ համարեա ոչինչ կապ չուներ հայութեան հետ, երեսաները մեծանում են օտար դաստիարակչուհիների ձեռքին, շրջապատված օտարազգի անային ուսուցիչներով: Բուն Հայաստանից դուրս եկած, հայերէնը, մանաւանդ զրաբարը, շատ լաւ իմացող Երեմիայի առաջին սերունդը արդէն միանգամայն օտարացած է: Ընտանիքի լեզուն ֆրանսերէնն է. Գրիգոր Արծրունու առաջին նամակները (11—12 տարեկան հասակում) ֆրանսերէն են գրված: Ինքը, Երեմիան, իր որդի Գէորգի հետ նամակագրութիւն ունէր ուսերէն լեզուով և այդ նամակների մէջ մենք մի հատ հայերէն բառի չենք հանդիպում: Ո՞վ կարող էր կարծել թէ հէնց այգալիսի մի ընտանիքից պիտի դուրս գար այն մարդը, որ 27 տարի շարունակ պաշտպանեց արհամարհված մայրենի լեզուի դատը...

Mon cher George!

Que je serais content de Te voir à  
Moscou pour les fêtes.

Je crois que Papa viendra ce mois,  
car Il écrit dans la dernière lettre,  
qu'il pense quitter Tiflis.

Nous sommes tous en bonne santé.

Au revoir,

Ton frère Grégoire

Moscou

le 8 Decembre



Երեխաների դաստիարակութեան պատ-  
 կերը աւելի պարզելու համար ասենք և այն,  
 որ Երեմիա Արծրունին վաղ զրկվեց իր ա-  
 մուսնուց. Գրիգորը ութ-ինն տարեկան և-  
 րեխայ էր, երբ վախճանվեց նրա մայր Ագ-  
 րիպպիկնան: Երեմիան նորից չամուսնացաւ.  
 նա աշխատում էր փոխարինել երեխաների  
 մօրը և այդ պատճառով միանգամայն նուիր-  
 վեց իր ընտանիքին: 1854 թւին, երբ սկսվեց  
 Ղրիմի պատերազմը, Արծրունին Մօսկվայում  
 ստացաւ զինուորական մինիստրից հեռագիր  
 թէ նա, Նիկողայ կայսրի հաճութեամբ, նշա-  
 նակվում է Ղրիմում գործող բանակի ընդ-  
 հանուր ինտենդանտ: Որքան էլ պատուարեր  
 լինէր այդ բարձր ուշադրութիւնը, Երեմիան  
 չը կարողացաւ ընդունել այդ կարեոր պաշ-  
 տօնը: Նա շատուցեց Պետերբուրգ և անձամբ  
 ազաչեց զինուորական մինիստրին ազատել  
 իրան այդ պաշտօնից: Գլխաւոր պատճառը,  
 որ բերում էր նա, այն էր, որ նա ութ երե-  
 խայ ունի, որոնց չէ կարող թողնել առանց  
 խնամատարի: Նրա խնդիրքը յարգվեց և նա  
 նորից վերադարձաւ իր ընտանիքի ծոցը:

Բայց Գէորգ Արծրունու որդուն չէին  
 տուած մի գթառատ, քնքշասիրտ մօր յատ-  
 կութիւնները: Իբրև հայր էլ՝ նա աւելի նը-  
 ման էր իր պարտաւորութիւնները վերին



ստտիճանի բարեխղճութեամբ կատարող մի ղինուորի: Նա սլատարստ էր իր ընտանիքի համար ամեն տեսակ զոհողութիւններ անելու նա անսպասականի կեանք էր վարում, չէր լինում հասարակութեան մէջ, նրա աշխարհը միայն իր տունն էր, ուր նա կարգադրում էր, ղեկավարում էր, հսկում էր: Բայց դա մի սպարտացի հայր էր, իր երեխաների համար աւելի մի բարեկամ, քան հայր: Բընորոշ են մի քանի տողերը, որ նա գրում էր իր որդի Գէորդին, երբ սա գտնվում էր Լեհաստանում գործող զօրքերի հետ: Հարուստ ընտանիքի զուտակ, համալսարանական կրթութիւն ստացած Գէորդը, բնականաբար, մի քիչ էլ խտացրած գոյներով էր նկարագրում այն զրկանքները, որոնք անսպաս են ղինուորականի կեանքում, մանաւանդ արչաւանքների ժամանակ: Նրա ընկերները, որոնք նոյնպիսի նամակներ էին ստանում նրանից, ափսոսանք էին յայտնում այդ զըրկանքների, չարչարանքների սլատճառով: Բայց ահա ինչ էր գրում նրան հայրը. «Տղամարդը պիտի ամբապնդվի աշխատանքների, զրկանքների և հողսերի մէջ: Քնքաջացած տղամարդը իմ աչքում կնոջից էլ վատ է»:

Եւ ինքը, հայրը, համարեա ոչ մի առիթ չէր տալիս որդուն կարծելու թէ հայրական

սիրտը կարող է երբ և իցէ մոռացնել տալ այդպիսի համողմունք ունեցող մի դաստիարակի սլարտաւորութիւնները: Մեր ձեռքում գտնվում են նրա բազմաթիւ նամակները, բոլորն էլ ուղղած Գէորդին: Այդ կոյտի մէջ չէ կարելի գտնել մի տող անգամ, որի մէջ ծնողական սիրտը խօսէր ջերմ զգացմունքի, ջերմ սիրոյ լեզուով: Դրանք կիսասպաշտօնական գրութիւնների ձև ունեն: Կարճ ու կտրուկ են, խօսում են միայն գործի մասին. ոչ մի ղեղմունք, ոչ մի քնքշութիւն: Հայրը ցոյց է տալիս որդուն թէ ինչպէս պէտք է ծառայել, ինչպէս պէտք է վերաբերվել զըրխաւորներին, լիող է ուղարկում նրան, թիւրքական ծխախոտ, վերմակներ, թաշկինակներ է ուղարկում, հօմէապատիական ղեղատոմսեր է գրում լիորացաւի դէմ, յատկապէս որդու համար Պետերբուրգ է գնում, որ նրա մասին գնդի վարչութիւնից գրված թղթերին ընթացք տալու մասին միջնորդէ: Բայց մենք նրա նամակների մէջ չենք տեսնում նոյն իսկ այնքան սովորական «սիրելի» բառն անգամ: Նամակները անփոփոխ սկսվում են «Իմ բարեկամ Գէորդ» և վերջանում են «Ե. Արծրունի» խօսքերով:

Այսպիսի հայր էր Երեմիա Արծրունին և այսպէս էր նա վերաբերվում իր որդիներին:



Հօր և որդիների մէջ չը կար սերտ մտերմութիւն, սրտաբացութիւն: Գէորդի ուսւ ծանօթներից մէկը իր նամակում պատմում էր



Գրիգոր և Անղրէաս Արծրունիներ

նրան մի այսպիսի բան: Երբ այդ ծանօթը յայտնում է Երեմիային թէ Գէորդից ստա-

ցել է երկու թերթի վրա գրած մանրամասն նամակ, Երեմիան չէ թագնում որ նախանձում է այդ ծանօթին, որ երկար նամակ է ստացել Գէորդից: Բայց արդեօք մեղաւորը Գէորդն էր, որ պատասխանում էր հօր կիսապաշտօնական գրութիւններին նոյնպիսի նամակներով:

1855 թւի ամսօր Գէորդ-աղայի կարաւանսարան սարսափելի հրդեհի ճարակ դարձաւ: Կրակը սկսվեց գօրեցի վաճառական Տէր-Ստեփանեանի փակ խանութից և արագ տարածվեց, ոչնչացնելով ամեն ինչ: Անկարելի եղաւ մի բան ազատել այն բաղմաթիւ խանութներից, որոնք տեղաւորված էին այդ հսկայ շինութեան մէջ: Վաճառականների վնասը հասնում էր 5 միլիօնի, ինչպէս գրում է Երեմիան: Ստանալով աղէտի լուրը, Արծրունին Մօսկվայից թռչում է Պետերբուրգ, որպէսզի խնդրէ բարձր կառավարութիւնից որ ամենախիստ քննութիւն նշանակվի՝ հրդեհի պատճառները պարզելու համար: Կասկածներ կային որ չարամտութեան գործ է այդպէս էին վկայում Արծրունու ստացած նամակները, որոնք ասում էին թէ հրդեհը, երեւի, հարկաւոր է եղել մէկին՝ իրան սընանկ յայտարարելու համար: Այդ մէկն էլ մասամբ յայտնի էր Արծրունուն. դա նոյն



Տէր-Ստեփանեանն էր, որի խանութից սկըս-  
վել էր կրակը: Դեռ Պետերբուրգում Արծ-  
րունին գրում էր թէ նա «մաքուր մարդ է»:

Պետերբուրգից Երևմիա Արծրունին գա-  
լիս է Թիֆլիս, մնում է այտեղ մի քանի  
ամիս: Վնասները մեծ էին, բայց ոչ անդար-  
մանելի: «Գէորգ-աղայի հեռաստեղծեան շը-  
նորհիւ, — գրում էր նա — կարաւանսարան  
քաջարար զիմադրել է կրակին, որի մէջ հալ-  
վել էին նոյն իսկ սղղինձն ու արծաթը»: Ա-  
մենայն եռանդով Երևմիան ձեռք զարկաւ  
կարաւանսարայի վերաշինութեան գործին և  
կարողացաւ 4 — 5 ամսվայ մէջ հասցնել նրան  
նախկին գրութեան: Բայց ծախսերը այնքան  
շատ էին, որ Երևմիան սկսեց պարտք անել:  
Այդ ժամանակից են սկսվում նրա խոշոր  
պարտքերը: Միննոյն ժամանակ նա քրէա-  
կան դործ սկսեց: Տէր-Ստեփանեանի դէմ,  
որին մեղադրում էր կարաւանսարան զիտ-  
մամբ հրդեհելու յանցանքի մէջ: Նա յոյս ու-  
նէր որ Տէր-Ստեփանեանից կը ստանայ իր  
վնասները և կը վճարէ պարտքերը. իսկ վը-  
նաս նա պահանջում էր մօտ 400 հազար  
րուբլի: Սակայն այս դատը տասնեակ տա-  
րիներ ձգձգվեց, երկու կողմերին էլ ահազին  
ծախսեր պատճառելով. վերջը մեղադրվողը  
արդար ճանաչվեց:

Բայց մենակ կարաւանսարան չէր Երև-  
միայի հողածութեան առարկան: Դեռ 1854-ին,  
գործերի պատճառով Թիֆլիսում եղած ժա-  
մանակ, նա տեսաւ որ բազմաթիւ մեծամեծ  
շինութիւններ են կառուցվում: Իշխան Վօ-  
րօնցովի ժամանակներն էին: Այդ անխոնջ և  
հեռատես փոխարքան ամեն կերպ խրախու-  
սում էր քաղաքացիներին որ գեղեցիկ ու  
մեծ շինութիւններով զարգարեն քաղաքը:  
Երևմիան տեսաւ այդ շինարարական տենդը  
և ինքն էլ վարակվեց: Նա սկսեց խանութ-  
ներ շինել տալ փոխարքայի պալատի մօտ  
գտնվող կալուածի վրա: Կարաւանսարայի  
հրդեհից յետոյ նրա համար պարզվեց որ կա-  
րելի է կալուածը շատ արդիւնաւոր դարձ-  
նել, եթէ այնտեղ մեծ շինութիւններ կա-  
ռուցվեն: Եւ նա վճռում է շինել մի առե-  
տրական դալէրէա կամ ինչպէս ինքն էր  
թարգմանում «դալէրէա» բառը, — վաճա-  
ւած և մեղիք: Դա մի մեծ ծրագիր էր, որ  
կարող էր զլուխ գալ երկար ժամանակի ըն-  
թացքում և պահանջում էր Արծրունու ներ-  
կայութիւնը Թիֆլիսում: Եւ Արծրունին վը-  
ռում է տեղափոխվել Թիֆլիս:

Բայց նախ քան տեղափոխվելը, 1857  
թւականին, Արծրունին տանում է իր աղջը-  
կան Պարիզ՝ բժշկելու համար, իսկ մնացած



երեխաներին Գէորգի հետ ուղարկում է Գերմանիայի Կրէյցնախ քաղաքը, որի հանրային ջրերը շատ օգտակար էին գեղձախտով հիւանդ երեխաներին<sup>\*)</sup>: Ինքը, Երեմիան, ըստիպված եղաւ շուտով վերադառնալ արտասահմանից, բայց նրա ընտանիքը Կրէյցնախում մնաց մօտ մի տարի և այդտեղ Գրիգորը սկսեց լատիներէնի և գերմաներէնի դասեր առնել: Առհասարակ իր որդիներին կրթութեան համար Երեմիան ոչինչ չէր խընայում: Եւ երբ 1858 թւականին երեխաները եկան Թիֆլիս, նա ուսուցիչներ վարձեց՝ որ Գրիգորին և Անդրէասին պատրաստեն գիմնադիւս մանկու: Այդ ժամանակ չը մոռացվեց և հայերէնը: Երկու եղբայրները հայերէնի դասեր էին առնում նախ Գրիգոր քահանայ Տէր-Բարսեղեանից, ապա և «Մեղու Հայաստանի» լրագրի խմբագրի Պետրոս Սիմէօնեանից:

Ինքը, Երեմիան, օր ու գիշեր զբաղված էր իր «վաճառաճեմելիքի» շինութեամբ: Դէ-

\*) Երեմիա Սրժբունու նամակներից երևում է որ երեխաները անգլիական հիւանդութիւն ունէին: Ինչպէս վկայում է բժշկապետ Յ. Գասպարեանցը («Մշակ», 1892, № 147), «գեռ երեխայ ժամանակ անգլիական ոսկրացաւից Գրիգորի կմաղքը ենթարկվել էր սաստիկ կերպարանափոխութեան»:

պի խոշոր ձեռնարկութիւններն ունեցած սէրը նրան այստեղ այնքան յափշտակեց, որ նա մոռացաւ ամեն զգուշութիւն և մի շատ մեծ գործ սկսեց: Գէորգ-աղայի պէս նա էլ ճարտարապետներին չը դիմեց, այլ ինքը ծրագրեց շինութիւնը, ինքը ղեկավարում էր վարպետներին: Գէորգ-աղայի գնած հողը բաւականութիւն չէր տալիս. Երեմիան երկու անգամ գիմում է փոխաբքային, գնում է նրա այգուց մօտ 400 սափէն տարածութիւն 12 հազար բուբլով. գնում է հող նաև իր միւս հարեանից, ղինուորական Շտաբից և այսպիսով ընդարձակելով կալուածը, կարողանում է ազատութիւն տալ իր գիտաւորութիւններին և նախագծերին: Մեծ գործի համար մեծ միջոցներ են հարկաւոր: Այստեղ էլ կանգ չէ առնում Երեմիան. զբաղնելով կարաւանսարան և գալէրէան Անդրկովկասեան Պրիկաղում, 200 հազար բուբլուց աւել պարտք է վերցնում և տարիների ընթացքում գլուխ է բերում շինութիւնը այնպէս, ինչպէս ինքն էր ցանկանում:

Շինութիւնը, իսկ որ, փառասոր էր: Մի ահապին վաճառանոց էր դա, քաղաքի առաջնակարգ փողոցի վրա, բաղկացած էր բազմաթիւ խանութներից և սենեակներից: Նա այսօր էլ կայ և զարմացնում է տեսողին:



«Հայկական Աշխարհը» 1867 թվին գրում էր. «Ժեներալ Արծրունու նոր քարվանսարան հիանալի եւրոպական շինութիւն, քաղաքիս զարդ է դառնում. Պետերբուրգի պատաժը դուցէ սորա անհաւասար հակառակորդ լինի»: Ահա ինչ էր սնում այդ զինուորականի կամքը, յամառ բնաւորութիւնը:

Սակայն շինարարական տաղանդի հետ Երեմիա Արծրունին ցոյց տուեց և այն, որ վատ կալուածատէր է: Գեղեցիկ շինութիւնը պատրաստ կանգնած էր, բայց խանութները նրկար ժամանակ դատարկ էին, որովհետեւ տէրը պահանջում էր այնպիսի վարձ, առաջարկում էր այնպիսի պայմաններ, որ վաճառականները չէին կարողանում վարձել: Կալուածը այդպիսով քիչ արդիւնք էր բերում, իսկ ահագին պարտքի տոկոսները կուտվում էին իրար վրա: Եւ այդ հանդամանքը ոչինչ էր Երեմիայի համար. նա յամառ, իր ասածի մարդ էր աւելի մեծ չափերով, քան իր հայր Գէորդը: Զիջել չը գիտէր նա:

Գալէրէյայի շինութեան ժամանակ, 1860-ին, Երեմիան նորից մտաւ զինուորական ծառայութիւն, բայց առանձին պաշտօն չը ստացաւ: 1861-ին նա ստացաւ զեներալ-մայօրի աստիճան:

Բացի շինութիւններից, Արծրունուն ա-

հազին ծախսեր էին պատճառում այն բաղմաթիւ, մանր ու խոշոր դատաստանական գործերը, որոնք այնքան մեծ տեղ են բռնում նրա կեանքի մէջ և որոնցով նա զբաղվում էր իրան յատուկ յամառութեամբ: Մենք արդէն տեսանք, որ նա Կ. Պօլսում Ալլանվերդի-օղլուց պահանջում էր 2½ միլիօնի մի գումար, ինչպէս նաև այն, որ թիւրքաց կառավարութիւնից պահանջում էր որ իր հայրական և մայրական կալուածները վասսուլբականում իրան վերադարձնվեն: Թիֆլիսում, ինչպէս ասացինք, նա տասնեակ տարիներով գործ էր վարում Տէր-Ստեփանեանի դէմ: Բացի այդ ամենից նա պահանջում էր ռուսաց զինուորական մինիստրութիւնից 160 հազար ռուբլի իր մի կալուածի համար: Դատարանում կար և մի գործ, որով Արծրունին պահանջում էր մի քանի ռուս վաճառականներից 15 հազար ռուբլի: Աննչան պահանջները, որոնք մեծ թիւ են կազմում, զանց ենք առնում: Պահանջները մեծ մասամբ անվիճելի փաստերի վրա չէին հիմնված և որքան էլ Երեմիան համոզված էր թէ իրաւունքը իր կողմն է, որքան էլ աշխատում էր եռանդով, բայց համարեա ոչ մի աչքի ընկնող գործ չը տարաւ, այդ մեծ գումարներից ոչ մէկն էլ չը ստացաւ: 60-ական



Թւականներին նա ստիպւած եղաւ դարձեալ խոշոր պարտքեր վերցնել Պրիկազից, շարունակելով միևնոյն ժամանակ իր խիստ պայմաններով հեռու փախցնել խանութները վարձել կամեցողներին...

Բայց այդքան մասնաւոր զբաղմունքները միանգամայն չը հեռացրին Երեմիային հասարակութիւնից եւ նրա գործերից: Նա ունի մի քանի գործեր, որոնք ցոյց են տալիս որ նա կարող էր հասարակական ասպարէզում օգտակար ոյժ դառնալ, եթէ այդ տեսակ գործունէութեան էլ այնպէս վերաբերվէր, ինչպէս վերաբերվում էր իր մասնաւոր ընտանեկան գործերին:

1860 թւականին Թիֆլիս եկաւ Վարադի վանքի վանահայր Խրիմեան վարդապետը (այժմ ամենայն հայց կաթողիկոս), որպէսզի ուսանայերից նուէրներ հաւաքէ իր բացած ուսումնարանի և տղարանի համար: Երեմիան այդ գործի գլուխ անցաւ, ինքը ստորագրեց մի խոշոր գումար և աջակցեց նուիրատուութեան: Զանազան արգելքներ առաջ եկան այդ ժողովարարութեան դէմ, Խրիմեանը ստիպւած եղաւ շուտով հեռանալ Ռուսաստանից, բայց և այդպէս, Արծրունու Զանգերով կարելի եղաւ մի գումար ուղարկել Վասպուրականի կրթական պէտքերի համար:

Նշանաւոր է, որ դա առաջին հաւաքական օժանդակութիւնն էր, որ ուսանայերը տալիս էին իրանց թիւրքահայտակ եղբայրակիցներին. նոյն այդ գործում առաջին անգամ ամենամեծ նուիրատուութիւն հաւաքողը Երեմիայի որդի Գրիգոր Արծրունին էր:

Նոյն 1860 թւին Թիֆլիսում միտք ծագեց հիմնել հայերէն զբեքերի մի հասարակական զբաղարան: Այդ գործին առաջին համակողը Արծրունին էր, որ ամենից առաջ էլ հիմնադիր անդամ գրվեց: Գրադարանը, սակայն, չը բացվեց: Բայց աւելի նշանաւոր է այն դերը, որ Երեմիա Արծրունին կատարեց Ներսիսեան գպրոցի պատմութեան մէջ:

Ներսէս կաթողիկոսը իր գպրոցի կառավարութիւնը յանձնել էր երեք հոգաբարձուներին, որոնց ինքն էր նշանակել իբրև իր փոխանորդ և ներկայացուցիչ: Այդ հոգաբարձութիւնը անփոփոխ կառավարեց գպրոցը տասը տարի (1851—1861), բարեկարգեց նրան, նիւթապէս հարստացրեց: Ներսէսի մահից յետոյ գպրոցում տեղի ունեցան անկարգութիւններ. աշակերտների և հասարակութեան տառնձին համակրանքը վայելող տեսուչ Շանչեանը արձակվեց պաշտօնից. թէ առաջնորդը և թէ հոգաբարձութիւնը ոչինչ ուշադրութիւն չը դարձրին ժողովրդի պա-



հանջների վրա: Հողաբարձութիւնը մերժեց հասարակութեան հաշիւ տալ, ասելով թէ ճանաչում է միայն ամենայն հայոց կաթողիկոսին և հաշիւ կը տայ միայն նրան:

Հողաբարձութեան մէջ ամենաազդեցիկ մարդը աստիճանաւոր Ալէքսանդր Թայիրեանցն էր: Յայտնի է թիֆլիսեցիներին որ այս մարդը չէր բաւականանում հողաբարձուի պաշտօնով, այլ աշխատում էր վճռող դեր կատարել մեր եկեղեցական գործերի մէջ: Կաթողիկոսական ընտրութիւնների ժամանակ նա, միացած Թիֆլիսի առաջնորդ Սարգիս եպիսկոպոս Զարլեանցի հետ, այնպիսի դեր կատարեց, որ Թիֆլիսի հասարակութեան առաջաւոր մասի ղայրոյթը գրգռեց: Թայիրեանցն էլ ունէր իր կուսակցութիւնը: Կաթողիկոսական ընտրութիւնից յետոյ այդ կուսակցութեան դէմ մաքառումը շարունակվեց և կենտրոնացած էր գլխաւորապէս Ներսիսեան ղայրոցի շուրջը: Թէ ինչ հայեանքների տէր էր Թայիրեանցը, երևում է նրանից, որ Արովեսանցին, Նաղարեանցին, Շանչեանին և առհասարակ բոլոր համալսարանական երիտասարդներին, մանաւանդ գօրպատեցիներին, նա համարում էր հերետիկոս, բողոքական, ազգի տունը քանդող և այլն:

Ահա այդ խաւարապաշտ ոյժի դէմ մաքա-

ռում էր նոր երիտասարդութիւնը, աշխատելով ոչ միայն հեռացնել Թայիրեանցին ղայրոցից, այլ և առհասարակ մշակել մի այնպիսի ղայրոցական սահմանադրութիւն, որի մէջ լաւ պաշտպանված լինէին ժողովրդի իրաւունքները: Այս հակաթայիրեան կուսակցութեան պարագլուխը հանդիսացաւ գեներալ Արծրունին: Սա իրան յատուկ եռանդով առաջ էր տանում պայքարը և ժողովների մէջ իր խելօք ճառերով պարզում էր թէ ինչ կազմակերպութիւն պիտի ստանայ ղայրոցի կառավարութիւնը: Թայիրեանը ի հարկէ քնած չէր. նրա կուսակցութիւնն էլ իր ծրագիրն ունէր: Հակառակ կուսակցութիւնը աւելի կտրուկ միջոցների դիմեց: Նա հրաւիրեց ժողովրդի ներկայացուցիչներին և մշակելով ղայրոցական կառավարութեան գլխաւոր հիմքերը, վճռեց ներկայացնել այդ հիմքերը Մատթէոս կաթողիկոսին մի յատուկ պատգամաւորութեան ձեռքով: Այդ պատգամաւորներից մէկը, յայտնի գործիչ Միքայէլ Միանսարեանցը գրում էր «Հիւսիսափայլի» մէջ \*). «Հիմքերը կամ թէ ինդիրը որ առաջադրուած են ծայրագոյն Պատրիարքին և Կաթողիկոսին, հաստատե-

\*) 1861, № 9.



լու նրանց, և բոլոր խնդրագիրը գրած ու առաջադրուած են Երեմիա Գէորգեան Արծրունու ձեռքով և առանց ընդդիմախօսութեան ընդունված են բոլոր ազգային երեսփոխաններից, բացի երկուքից, որ արել էին ընդդիմախօսութիւնք»:

Ահա Երեմիա Արծրունու խմբագրած հինգ զլիտաւոր հիմունքները.

1. Ներսիսեան դպրոցի այն արդիւնքները, որոնք ստացվում են դրամադուխներէջ, ընծայարեութիւններէջ, կտակներէջ և այլ աղբիւրներից, պիտի մշտապէս մնան անձեռնմխելի և դործադրվեն հայ երեխաների կրթութեան համար:

2. Դպրոցում սովորող աշակերտների և աւանդվող առարկաների շրջանը պէտք է ընդարձակվի համաձայն եկամուտների չափի ընդարձակման:

3. Բոլոր հայ երեխաները, որոնք մտնում են Ներսիսեան դպրոցը, ուսում պիտի ստանան ձրիարար, իսկ անտէրունջ սրբերը, առաւելապէս եկեղեցականներից, պէտք է դրա հետ մտնող էլ ստանան դպրոցում. այդ որբերից նրանք, որոնք աւարտում են ուսումը լաւ վարքով և դերագանց ընդունակութիւններով և կամենում են շարունակել ուսումը բարձրագոյն դպրոցներում, ստանում են

դպրոցի գումարներից օժանդակութիւն որքան կարելի է:

4. Դպրոցի աշակերտներից միայն նրանք են հոգեւոր կոչման մէջ մտնում, որոնք իրանց ընաւորութեամբ և ներքին կոչումով կարող են արժանաւոր սպասաւոր լինել եկեղեցու մէջ և որոնք յօժար կամքով ցանկութիւն կը յայտնեն, առանց որ և է ստիպման:

5. Դպրոցը լիակատար կախում ունի ամենայն հայոց կաթողիկոսից: Թիֆլիսի առաջնորդը դպրոցի կառավարութեան խորհրդարանի առաջին հոգատարն ու նախագահն է, իսկ այդ խորհրդարանի միւս անդամները պէտք է ընտրվեն քաղաքի հասարակութիւնից, առանց զանազանելու հոգեւորականներին և աշխարհականներին:

Ստոթէոս կաթողիկոսը ընդունեց այդ հիմնական սկզբունքները և 1861 թւականի յունիսի 9-ի իր կոնդակով առաջարկեց Թիֆլիսի հասարակութեան կազմել դրանց համեմատ ընդարձակ կանոնադրութիւն և ներկայացնել իրան: Միքայէլ Միանսարեանցը «Հիւսիսավայլ»-ի վերոյիշեալ համարում արպագրած իր գեղեցիկ յօդուածի մէջ\*) աւսում է.

\*) Կրում է «Ազգային կրթութիւն և դպրոց» վեր-



Այժմ, երբոր այս սահմանադրութիւնը գրեթէ պատրաստ է արդէն, մեր սուրբ պարտականութիւն ենք համարում հայ մարդու համար, հրատարակելու է գեներալ մայիօր Երեմիա Գէորգեան Արծրունու իմացականութեանը, շատ սրտցաւական գործակցութեանը, փորձառութեանը եւ բանագիտութեանը շնորհապարտ ենք այն մասին, որ այս գործը ստացել է այդպիսի բարեյաջող եւ բազաւոր ուղղութիւն: Յայտնի ու ծածուկ թշնամիք շատ կային, որ անփոյթ չեղան գործ դնել ամենայն տեսակ շատ ու շատ նախատելի հնարներ խափանելու այս գործը եւ վնասելու այն մարդերին, որոնց մի հատիկ մտքը այն էր, որ ցանկացող էին իւրեանց հայրենակիցներին օգտին եւ բարութեանը. բայց Աստուած անտես չարեց մեզ:

Այս մաքառումը յանուն հայրենակիցների օգտի և բարօրութեան, այս սուկուն գործունէութիւնը պարզում է Արծրունիների տոհմին յատուկ մի նշանաւոր հանգամանք, որը չը պէտք է մոռանալ: Երեմիա Արծրունին, ուրեմն, բոլորովին նման էր իր հօրը: Ոչ մեծ հարստութիւնը, ոչ աղայական-արիստօկրատիական հակումները, ոչ ինքնահաւանութիւնն ու յամառութիւնը չարգելեցին նրան հետեւել ժամանակի լուսամիտ առաջաւոր հոսանքներին, գործել ժողովրդի ա-

նագիրը և նուիրված է շէններալ-մայիօր Երեմիա Գէորգեան Արծրունուն:

նունով և ժողովրդի համար: Ներսիսեան դըպրոցը ստանում էր լայն նպատակի ծառայող կրթական հաստատութեան կերպարանք՝ սահմանադրական կառավարութեամբ: Դա մեր դպրոցական ինքնավարութեան սկիզբն էր. միանման կառավարչական ձև ստացան և մեր միւս դպրոցները: Յայտնի է որ Ներսիսեան դպրոցի այդ կանոնադրութիւնը գոյութիւն է պահպանում մինչև մեր օրերը. բայց ահա շատ տարիներ են, ինչ նա անինայ ծուռտովում է խաւարասէր տարրերի ձեռքով իբրև չափազանց աղատամիտ, չափազանց ժողովրդական մի օրէնք: Եւ ներկայի այս հանգամանքը մեծ պատիւ է բերում Երեմիա Արծրունու և նրա հետ գործող կուսակցութեան հասկացողութիւններին ու ձգտումներին: Մենք տեսանք որ նոյն պատուաբեր կերպարանքն ունէր և Գէորգաղայի հասարակական գործունէութիւնը: Հայր ու սրբի իրաւունք են տալիս մեզ ասելու որ Արծրունիների տոհմը հայ մեծատունների մէջ մի զարմանալի բացառութիւն էր կազմում. նրա արեան մէջ—եթէ կարելի է այսպէս ասել—կար ժողովրդասիրութիւնը, կար ժամանակի ոգու առաջաւոր ըմբռնումը: Եկաւ ժամանակը, և այդ տոհմը առաջ բերեց իր այդ յատկութիւնների ամե-



նանշանաւոր մի ներկայացուցիչ: Երեմիայի որդի Գրիգորը տոհմային հարստութիւնների միջից դուրս եկաւ տողորված ռամկական գաղափարներով, թշնամի դասակարգային խըտութիւններին: Շատ հազուադիւտ են այսպիսի դարմանալի տոհմերը...

Ներսիսեան դպրոցի նոր կանօնադրութիւնը գործադրութեան մէջ մտաւ, նշանակվեցին հոգաբարձական ընտրութիւններ, բայց Երեմիա Արծրունին չը կամեցաւ շարունակել իր գործունէութիւնը և հրաժարվեց հոգաբարձու ընտրվելուց: Տունը, կալուածները ամբողջապէս կլանում էին նրա ուշադրութիւնը և 1864 թւին նա վերջնականապէս հրաժարվեց զինուորական ծառայութիւնից:

Նոյնպէս կարճատև էր Երեմիայի գործունէութիւնը և քաղաքային ինքնաւարութեան մէջ: 1866 թւին Թիֆլիսում մտքովեց քաղաքային կառավարութեան նոր կանօնադրութիւնը. առաջին քաղաքապետ ընտրվեց Արծրունին և այդ ընտրութիւնը գոհութիւն պատճառեց քաղաքացիներին, որոնք նախընթաց տարիներից արդէն լաւ ճանաչել էին նրան իբրև շիտակ, կամքի տէր մարդու: «Թիֆլիսի ժողովուրդը—գրում էր «Հայկական Աշխարհը»—գիտէ որ պ. Արծրունին է մի գործունէաց և ազնիւ մարդ, և այս արդէն

բաւական է. պ. Արծրունու ընտրութեան օրից ազնիւ ծանօթները միմեանց պատահելով շնորհաւորում էին, որ պ. Արծրունին ընտրվել է քաղաքապետին»<sup>\*)</sup>: Սակայն այսպիսի համակրանքի արժանացած քաղաքապետը մի կարճ միջոցից յետոյ, 1868-ին, հեռացաւ պաշտօնից. և ապագայում երկար ժամանակ բաւականանում էր ձայնաւորի պաշտօնով:

Երեմիա Արծրունին էլ ունի մի գրաւոր վաստակ: 1872 թւականի ապրիլին նա Տելսիական Ընկերութեան մի նիստում կարգաց մի ղեկուցում, որի մէջ յայտնում էր զայ մի ղեկուցում, որի մէջ յայտնում էր Սնդրկովկասից երկաթուղի տանել մինչև Հնդկաստան: Այդ ղեկուցումն հայերէն թարգմանութիւնը նա հրատարակեց նոյն 1872-ին մի առանձին րոտարակեց նոյն 1872-ին մի առանձին րոտարակից, որի վերնագիրն էր «Խնդիր երկաթէ ճանապարհի վերայ դէպի Հնդկաստան»: Գրքքոյի մէջ երևում է Երեմիայի գործնական խելքը, նրա մօտիկ ծանօթութիւնը Թիւրքիայի և Պարսկաստանի գրութեան հետ: Արծրունին հետամուտ էր եղել և Հնդկաստանի գրութեան և կարծում էր որ անգլիացիների ձեռքից հնդկական առևտրի մեծ մասը

\*) 1866, № 8—9:



խել կարելի է, անցկացնելով երկաթուղի Պարսկաստանի վրայով դէպի Հնդկաստան: Նրա ծրագրով երկաթուղին պիտի սկսվէր Բագուից, անցնէր հիւսիսային Պարսկաստանով դէպի Մէշէդ, Հէրաթ և Քարու: Այդ ուղղութիւնը ցոյց էր առած հայերէն քարտէզի վրա, որ կցած էր բրօշիւրին:

Յայտնի է թէ մանսուանդ մեր ժամանակներում որքան ահագին քաղաքական և տընտեսական նշանակութիւն ունեն երկաթուղային այդպիսի ձեռնարկութիւնները: Հընդկաստանին մօտենալու միտքը շատ վաղուց գոյութիւն ունէր Ռուսաստանում և զենեքալ Արծրունին մի նոր բան չէր ասում: Հետաքրքրական է նիւթի մշակութիւնը և այդտեղ Արծրունու գրուածքը ունէր որոշ չափով ինքնուրոյնութիւն, քանի որ նա անձամբ ճանաչում էր Պարսկաստանը և առանձնապէս ուսումնասիրել էր նրա տնտեսական և առևտրական հանգամանքները: Իր հօր պէս Երեմիան գրաբար էր գրում, բայց այս բրօշիւրի մէջ ստիպված է եղել դիմել աշխարհաբարին: Դա մի շատ խամ լեզու է, խառն գրաբարի հետ, հետաքրքրական իր առանձին, ինքնուրոյն դարձուածքներով ու ձևերով:

Մինչև այստեղ մենք բերինք շատ փաստեր, որոնց մէջ երևան է գալիս զենեքալ

Արծրունու բնագորութիւնը: Մենք տեսանք թէ ինչպիսի հայր էր նա, ինչ կանօններով էր ղեկավարվում իր յարաբերութիւնների մէջ: Աւելացնենք այստեղ և մի քանի ուրիշ գծեր:

Գիտենք արդէն որ Երեմիա Արծրունին սիրում էր առանձնութիւն և դեռ Մօսկվայում անուանում էր իրան ճգնաւոր, անապատական: Թիֆլիսում էլ նա մեծ մասամբ նոյնպիսի կեանք էր վարում, հասարակութիւնից հեռու, մենաւոր, իր սակաւաթիւ մօտիկ բարեկամների հետ միայն տեսնուելով: Ընտանիքից դուրս նա հրապոյր, զուարճութիւն չէր գտնում: Եւ պէտք է ասել որ նրա տան նման մի զեղեցիկ անկիւն հաղիւ թէ շատ լինէր Թիֆլիսում: Երեմիան ապրում էր գալէրէայի ետևում գտնվող այգու մէջ շինված տանը: Այդ այգին իր հարուստ բուսականութեամբ մի կատարեալ գրախտ էր ներկայացնում: Նրա մէջ շինված էր հովանոց, որ ծածկված էր դալար բոյսերով: Ահա այդտեղ էր օրեր անցկացնում Երեմիան: Հովանոցի աջ կողմում երևում էին երկու գերեզման. մէկի մէջ թաղված էր Գէորգ-աղան, իսկ միւսի մէջ Երեմիայի մի աղջիկը, որ մեռել էր ծաղիկ հասակում:

Պարզ էր Արծրունու կեանքը, վեր էր կե-



նում վաղ առաւօտեան, դրադվում էր ծաղիկներով ու բոյսերով, ապա նստում էր հովանոցում. այդտեղ էր նա սարհապում իր գործերով, ընդունում էր մարդկանց, ճաշում էր: Իրրե վանեցի, նա չէր մոռանում մածուներ և նրանից շինած բրդուշք նրա ամենօրեայ կերակուրն էր: Արեւելեան շուքով ապրող այդ մեծատունը և բարձրաստիճան գինեւորականը յայտնի էր ամենքին իր խիստ ու խրոխտ բնավորութեամբ. նա պահանջող էր, քննախնդիր, բարկացկոտ. սիրում էր որ ամեն բանի մէջ իր կամքը կատարվի, յամառ էր ու կրքոտ: Բայց միևնոյն ժամանակ դա մի շիտակ ու ազնիւ մարդ էր, մեծահոյի, բարի ձգտումներ ունէր և ճշմարտասէր էր: Ահա մի դէպք, որ բնորոշում է թէ ինչ հասկացողութիւններ ունէր Արծրունին: Նրա որդի Գէորդի ընկերները ասել էին, որ եթէ Երեմիան դիմէ այս-ինչ հրամանատար զիներալին, վերջինս կը հրամանատարէ այն գնդի հրամանատարին, ուր ծառայում էր Գէորդը, առաջարկելով նրան որ ներկայացնէ Գէորդին՝ օֆիցերական աստիճան ստանալու: Գէորդը այս մասին գրում է հօրը: Մի ուրիշ հայր կը գնար, կը խնդրէր: Բայց Երեմիան այդպիսի հայր չէր: Նա շուղեց որ իր որդին աստիճան ստանայ բարձրից եկած հը-

րամանով, խաթրի համար. և պատասխանեց Գէորդին թէ չի անի այդ քայլը, որովհետև ունի իր հասկացողութիւնները պատուի մասին և խորհուրդ է տալիս այնպէս ծառայել, որ գնդի հրամանատարը ինքնաբերաբար գրէ նրա մասին բարձր իշխանութեան թէ արժանի է աստիճանի:

Ահա մի այսպիսի խիստ, միշտ տանը նըստած հօր աչքերի առաջ էին մեծանում և դաստիարակվում Գրիգորն ու Անդրէասը: Ինչ խօսք որ հայրը սիրում էր իր որդիներին. բայց մենք տեսանք թէ ինչպէս էր նա այդ սիրոյ արտայայտութեան մէջ: Երեխաները փակված կեանք էին վարում. միայն յայտնի ժամերին նրանց թոյլատրվում էր զբօսնել այդու մէջ. մնացած ժամանակը նըրանք ծանրաբեռնված էին իրանց դասերով, որոնք աւանդվում էին հէնց այդտեղ, տանը: Գրիգորի և Անդրէասի ընկերներն էլ շատ չէին. մի քանի հատ հասակակիցներ ունէին, որոնք մի-մի հիւր էին գալիս և որոնց հետ նրանք զբօսնում էին իրանց այգում: Թէև հայրն ու որդիները փակված էին միևնոյն անձուկ աշխարհում, բայց այդ կեցութիւնը միևնոյն յարկի տակ չը մօտեցրեց նրանց: Ընդհակառակն, հօր և որդիների մէջ հաստատվեց մի տեսակ պաշտօնական յարաբերու-



թիւն. որոշակի նշանակված էին և այն ժամերը, երբ երկու եղբայրները կարող էին լինել իրանց հօր մօտ: Եւ այսպէս, Գրիգորի և Անդրէասի որբութիւնը բաւական անմխիթար էր: Չը կար, ի հարկէ, որ և է պակասութիւն խնամքի, հոգատարութեան կողմից, բայց պակասում էր ծնողական կրակոտ սէրը. չը կար մայր, իսկ հայրը չէր սիրում քնքշութիւններ և նրա ընդունած դաստիարակչական սխտեմը միայն սառնութիւն և պաշտօնական ձեւականութիւն էր հաստատում որդիների և հօր մէջ:

Սակայն եղբայրների համար խորթ, անհասկանալի չը մնաց հարազատների սէրը: Նրանք իրար հետ կապվեցին եղբայրական քնքուշ զգացմունքներով: Մենք շատ քիչ տեղեկութիւններ ունենք Գրիգորի և Անդրէասի պատանեկական կիանքից: Միակ մարդը, որ թողել է իր յիշողութիւնները նրանց մասին, հանգուցեալ հնազէտ Ալէքսանդր Երիցեանն է և մինք այդ միակ վկային էլ կը դիմենք:

Ընտանեկան կեանքն էլ իր վերջն ունեցաւ: Երկու եղբայրները պատրաստվել էին դիմնադրա մտնելու. նրանք աջող քննութիւն տուին, ընդունվեցին և այդպիսով լոյս աշխարհ դուրս եկան: Վանդակից ազատված

թուշունների պէս էին նրանք. հայրական աշխարհի անձուկ հօրիզօնը չքացել էր, տեղի տուել աւելի լայն աշխարհայեցողութեան:



Գրիգոր Արծրունի (գիմնազիստ)

Բայց ինչ էին նրանք այդ դպրոցական հասակում:

1863 թուի յունվարից — պատմում է Երիցեանը — Արծրունու «Գալէրէայի» վերին յարկում պ. Ի. Տէր-Միրէլեանի եւ իմ ընկերուծեամբ բացուեց մի գրավաճառանոց ամեն ազդի գրքերի: Հայերէն բա-



ժինն էլ հարուստ էր եւ շատ նորութիւններ էր բովանդակում իր մէջ: Արծրունի եղբայրները, որոնք արդէն գիմնադիւս էին յաճախում, իրանց ազատ ժամանակն անց էին կացնում մեր գրավաճառանոցում եւ այդպիսով ես միջոց ունեցայ ի մտոյ ծանօթանալ նրանց հետ: Գրիգորը մօտ 18 տարեկան էր, նիհար, բարկացոտ եւ շատ ջղային. Անդրէասը մօտ 16 տարեկան էր՝ խարտեաշ զանգուր մաղերով, երեխայական համակերելի անմեղ պատկերով եւ հանդարտ բնաւորութեամբ: Կրտսեր եղբայրը միանգամայն մեծի ազդեցութեան տակ էր գտնվում: Բայց չնայելով որ գրեթէ օրօրոցից սկսած սրանք միատեղ եւ միատեսակ էին սնուել եւ զարգացել, երկուսի բնաւորութիւնները բոլորովին տարբեր էին: Գրիգորը սիրում էր սրախօսութիւններ անել, ծիծաղել եւ մինչեւ անգամ ծաղրել, Անդրէասը լուռութեամբ լսում էր, ժպտում եւ մինչեւ ականջները կարմրում: Նրանք ուուներէն էին խօսում միմեանց հետ, հօր հետ եւ մեղ հետ: Երբ հայերէնի վրայ խօսք էո լինում, նրանք հեզնական ժպտով պատասխանում էին, որ թէեւ չեն խօսում, բայց փոքր ինչ հասկանում են եւ այնքան, որքան գիմնադիւսի համար պէտք է,—գիտեն: Գրիգորը սիրում էր ծաղրել Պօլսից մեր բերած այնտեղի հայոց գերասանական խմբի պատկերները՝ «Հայք—Պատրօն», Հայք—Պատրօն» բացականչելով եւ ծիծաղելով: Ծիծաղում էր երբ տեսնում էր մեր ձեռքին որեւէ լրագիր՝ «Մեղուն» կամ «Մասիսը»: շտապ կանչում էր նա Անդրէասին, հեզնական ժպտով տալիս էր թերթը նրա ձեռքն ու ասպա բարձրաձայն ծիծաղում. «Տէս, հայք լրագիր էլ են ունեցել, երեւակայում եմ թէ ինչե՛ր են տպում...»:

Գրիգորը եւ Անդրէասը հէնց այդ 1863 թւականին էլ վերջացրին ուսումը Թիֆլիսի գիմնադիւսում: Բայց այստեղ առաջ եկաւ մի արգելք, որ շատ վշտացրեց եղբայրներին. Անդրէասը կարող էր հասունութեան վկայական ստանալ միայն տարի ու կէսից յետոյ, երբ 18 տարեկան կը դառնար:

Գրիգորը—շարունակում է Երիցեանը—պատարաստվում էր գնալու բարձրագոյն ուսումն ստանալու համար, եւ եղբայրները առաջին անգամն էր որ պիտի բաժանուէին: Գրիգորը ծաղրում էր Անդրէասի «անչափահասութիւնը», Անդրէասի խոշոր աչքերը լքցվում էին արտասուքով: Գեներալ Երեմիան նախ կամենում էր ուղարկել Գրիգորին Ֆրանսիա, սպա փոխեց միտքը եւ 1863 թուի ամառը ճանապարհեց նրան Մոսկուա:

Անդրէասը մնաց մենակ, եղբօր բացակայութիւնը նրա համար շատ զգալի էր: Գրիգորը նոյն 1863 թուի սեպտեմբերին մտաւ Մոսկուայի համալսարանի բնագիտական ֆակուլտէտը: Այստեղ, ինչպէս երեւում էր, նա էլ քաշում էր Անդրէասի կարօտը եւ շուտ-շուտ նամակներ էր գրում վերջինիս: Բարի Անդրէասը, ստանալով եղբօր գրութիւնները, ուրախուրակ ներս էր վազում մեր գրավաճառանոցը եւ կարդում մեզ: Գրիգորը հպարտութեամբ նկարագրում էր համալսարանական կեանքը եւ իր պարապմունքները: Մի անգամ եւս, լաւ յիշում եմ, շատ հեզնօրէն գրել էր Մոսկուայի հայ ուսանողների «ժողովի» մասին: Մի ինչ-որ ժողով ունին, մտաւորապէս գրել էր նա, ուր կարդում, վիճում եւ խօ-



սում են միմիայն հայերէն, կ'ասես էլ ուրիշ լեզու չկայ աշխարհի վրայ. ինձ եւս հրաւիրեցին զնալ եւ մասնակցել, բայց ես հրաժարուեցի...»:

Հետեւեալ 1864 թւին Գրիգորը Մօսկվայից տեղափոխվեց Պետերբուրգ, ուր մտաւ համալսարանի նոյն բնազդատական ֆակուլտէտի երկրորդ կուրսը: Այդ տարին Անդրէասն էլ զնաց Պետերբուրգ:

1864 թուի ամառը—գրում է Երիցեանը—ես գնում էի Պետերբուրգ: Գեներալ Արծրունին առաջարկեց ինձ տանել հետս Անդրէասին: Օգոստոս ամիսն էր, երբ մենք հասանք Ռուսաստանի մայրաքաղաքը: Գրիգորը մի քանի օր առաջ տեղափոխուել էր Մոսկուայից... Բայց Անդրէասին չաջողուեց իսկոյն մտնել համալսարան. նրան առաջարկեցին սպասել դարձեալ վեց ամիս, մինչեւ որ կը լրանայ իր 18 տարեկան հասակը: Եղբայրները բնակուեցին միասին եւ բաւականաչափ փող էին ստանում հօրից՝ չափաւոր, բայց առանց պակասութեան, կեանք վարելու: Նրանց առաջին սիրած զուարճութիւնը եղաւ մայրաքաղաքի իտալացոյ օպերան, ուր եւ յաճախում էին ստէպ-ստէպ:

Հայրական երկաթէ խնամակալութիւնից ազատվելը երեք աստիճան ունէր. առաջինը տանից զիմնազիւ մանելն էր, երկրորդը՝ Թիֆլիսից Մօսկվա տեղափոխվելն էր. բայց Մօսկվայում էլ ազատութիւնը կատարեալ

չէր. այդտեղ ապրում էին Երեմիայի աներորդիները, որոնց հսկողութեան էր նա յանձնել Գրիգորին: Երրորդ աստիճանը Պետերբուրգն էր, բայց այդտեղ էլ Երեմիան իր ծանօթներին միջոցով կարող էր հսկել իր որդիներին վրա: Ինչպէս կը տեսնենք, հարկաւոր էր չորրորդ աստիճան էլ՝ կատարեալ ազատութեան հասնելու համար: Կատարեալ ազատութիւնը անազին նշանակութիւն ունէր երիտասարդի համար: Ինքը Գրիգորը, սեփական փորձից խրատված, իր առաջին իսկ յօդուածներում զինվեց ընտանեկան խնամակալութեան դէմ և պահանջում էր որ հայ երիտասարդները բարձրագոյն կրթութիւն ստանան իրանց ընտանիքներէից շատ հեռու տեղերում, ուր նրանք կարող են միանդամայն ազատ լինել իրանց ծնողների կաշկանդող խնամակալութիւնից...



## ԳԼՈՒԽ ԵՐԿՐՈՐԴ.

ՈՒՍԱՆՈՂՈՒԹԵԱՆ ՏԱՐԻՆԵՐ

(1864—1871)

## I

Ժամանակը:—Հայ ուսանողուքիւնը Մօսկվայում եւ Պետերբուրգում:—Գրիգոր Արծրունու առաջին յօդուածները:—Տեսակցութիւն Միխայէլ Նալբանդեանցի հետ:—Հիւանդութիւն եւ ուղեւորութիւն արտասահման:—Նիցցա, շվեյցարական համալսարաններ:—Ինքնամանայութիւն:—Եւստովանութիւնը:—Մի ուրիշ խոսույանութիւն. կորած սէր, «Եվկլիմաս»:—Ինչպէս եր Գրիգորը հասկանում հայ ուսանողի պատճառութիւնները:



Գեներալ Երեմիա Արծրունին մնաց Թիֆլիսի՝ իր փառահեղ առանձնութեան մէջ: Եւ որդիները գնացին դիտութեան տաճարներում կազմակերպելու իբրև մարդ: Նրանց առաջին դաստիարակը ժամանակն էր, որ բոլորովին այն ուղղութիւնը չը տուեց մեծատան զաւակ երկու եղբայրներին, ինչ կը

կամենար նրանց գեներալ, բարձր շրջաններում ապրած հայրը:

Այդ ժամանակը մենք արդէն ճանաչում ենք—վաթսունական թւականները, մտքի ազատագրութեան տարիները, որոնց ընդհանուր պատկերը ներկայացրել ենք մի ուրիշ տեղում \*): Այստեղ մեզ մնում է միայն աւելիայնել, որ վաթսունական թւականները մի միապաղաղ և միանման ժամանակամիջոց չէին ներկայացնում, և այն տարիները, որ անցկացրեց Գրիգոր Արծրունին իբրև առևտայ համալսարանի ուսանող, արդէն պատկանում էին վաթսունական թւականներին առաջ կա՛ծ երկրորդ, նոր սերունդին:

Ազատարար բէֆօրմները, գրական շարժումը առաջացրին քառասնական թւականների զաղափարներով սնուած մարդիկ: Նըրանք իղէալիստներ էին, նրանց կրթողը մետաֆիզիկան էր (բնազանցութիւնը): Բայց ահա Ռուսաստան են մտնում նոր հոսանքներ. թարգմանվում են ժամանակակից եւրօպայի բէալիստ դիտականների հեղինակութիւնները և հրապարակ է իջնում նոր սերունդը: Սկսվում է անհաշտութիւն հնի և նորի մէջ և այդ դրութիւնը նկարագրված է

\*) Տես իմ «Ստեփանոս Նազարեանց» 1902:



Տուրգենևի «Հայրեր և Որդիներ» վէպի մէջ: Հէնց այդ անուններով էլ կնքվում են երկու սերունդները: Հայրերը սկսում են չը հասկանալ որդիներին: Նոր սերունդը բէալիստ է, իրապաշտ է, մտաւոր գործունէութեան մէջ տեսնում է ոչ թէ վերացական ձգտումներ, այլ հասարակական օգուտ: Մինչդեռ հայրերը հետեւում էին ընտանեկան և անձնական բարոյականութեան հին, աւանդական կանօններին, որդիները առաջ են քաշում անձնաւորութեան, անհատի կատարեալ ազատութիւնը, ընտանիք, հիմնված փոխադարձ սիրոյ, համերաշխութեան, համահաւասարութեան սկզբունքների վրա: Երկու սերունդները նման են միմեանց ընդհանուր ձգտումով, որ առաջադիմական է: Այն, համաձայն են, որ պէտք է առաջադիմել, պէտք է բարեփոխել կեանքի ձևերը: Բայց ինչ միջոցով: Այստեղ ահա ճանապարհները բաժանվում են, այստեղ արդէն հայրերն ու որդիները միմեանց չեն հասկանում:

Նորերի, որդիների ամենատաղանդաւոր ներկայացուցիչը գրականութեան մէջ 23—24 տարեկան մի երիտասարդ էր, Դ. Պիսարեւի, որի գրուածքները (նա գրում էր բանտի մէջ) այդ ժամանակ յափշտակութեամբ կարգում էր ամբողջ ինտիլիգենտ Ռուսաստանը: Պի-

սարեւը մի հերոս ունէր—մտածող, առաջադիմող բէալիստ. այդ հերոսի ամբողջ ձրդտումն է անհատի կատարեալ ազատագրութիւնը, նա պիտի կատարելագործվի, զարգանայ գրական գիտութիւնների գեկավարութեամբ: Եւ այդ պատճառով Պիսարեւը վերին աստիճանի ոգևորված եղանակով հրբաւիրում էր գրողներին ժողովրդականացնել պատմական և բնական գիտութիւնները և ինքն էլ միևնոյն ժամանակ իր գործունէութեան զլիաւոր մասը նուիրում էր այդ գործին:

Պիսարեւը չէ ճանաչում հեղինակութիւններ. նա կրկնում է՝ «մենք ազքատ ենք և յիմար» ու պահանջում է կրթութիւն, գրական կրթութիւն, և ամեն բան, որ միայք չունի բէալական կեանքի տեսակէտից, նա համարում է ապարդիւն, անհասկանալի: Հարկաւոր է խելացի, օգտակար աշխատանք: Աշխատանք և աշխատանք: Թող անկախ ու ազատ լինի անձնաւորութիւնը, թող նա ինքը որոչէ իր ոյժերը և այն՝ թէ ինչպէս և ինչ ապարէզում կարող է գործադրել նրանց: Այսպիսով իւրաքանչիւր մարդ նախ և առաջ կը տնտեսէ ոյժերը: Իսկ ոյժերի տնտեսելը մի մեծ սկզբունք պիտի լինի մարդկութեան համար:



Ահա ինչ հոսանքներ էին տիրում վաթսուներկան թւականների երկրորդ կէտում. ահա ինչ մարեր էին յափշտակում այն ժամանակվայ երիտասարդութիւնը: Մեր Գրիգոր Արծրունին այդ իսկ ժամանակվայ արդիւնքն էր: Նա Պիսարեւլի ուղած հերոսներից մէկն էր—մտածող, ստաջադիմող բէալիստ:

Շատ և շատ ցաւալի է որ մենք չունինք Գրիգոր Արծրունու ուսանողական տարիների մանրամասն պատմութիւնը: Այս հանգստի վայրը մեզ այսօր թոյլ չէ տալիս տեսնել թէ ինչպէս մշակվեց նրա մէջ մտածող բէալիստի տիպը, ինչ շրջաններից, ինչ ազդեցութիւններից նա քաղեց այն սկզբունքները, որոնք այնուհետև հաստատվեցին նրա մէջ, ձուլվեցան նրա դոյութիւնն հետ:

Միայն այնքանը գիտենք, որ Գրիգորը Պետերբուրգում մտաւ հայ ուսանողութեան շրջանը: Երբ դորժ ենք ածում «հայ ուսանողական շրջան» անունը, չը պիտի մոռանանք որ դա նշանակում է գլխաւորապէս ազգայնական հողի վրտ դոյութիւնն ունեցող մի համախմբում: Հայ երիտասարդների այդ տեսակ համախմբում մենք առաջին անգամ, քառասնական թւականների վերջից, տեսնում ենք Դօրպատում: Ապա նա «Հիւսի-

սափայլի» ժամանակներում դոյութիւն է ստանում Մօսկվայում, իսկ այստեղից անցնում է և Պետերբուրգ: Պետերբուրգեան հայ ուսանողի ամենաեռանդոտ, անխոնջ նախատիպը Ռափայէլ Պատկանեանն էր: Դեռ յիսուներկան թւականներին նա, համարեա մենակ, հայերէն տպագրութիւն սկսեց հիւսիսային մայրաքաղաքում և շատ բան տուեց, գլխաւորապէս իր ամենազեղեցիկ ոտանաւորները: Այդ դորժուէութիւնը հետզհետէ գրաւում է հայ երիտասարդներին և Պետերբուրգում սկսվում է մի գրական փոքրիկ ժամանակամիջոց, որ չէ կարող մոռացվել մեր պատմութեան մէջ:

1859 թւականին Պետերբուրգում երկու ազգայնական հիմնարկութիւնների միտք է ծագում. մագիստրոս Կարապետ Եզեանց ուղում է բաց անել մի դպրոց՝ յատկապէս հայ երիտասարդներին օտարացումի վտանգից ազատ պահելու և նրանց ազգային կրթութիւն տալու համար, իսկ Մ. Բուրազեանց հայերէն լրագիր հրատարակելու թոյլաւութիւն է խնդրում, բայց չէ ստանում: Հայերէն լրագրի միտքը Պետերբուրգում իրագործում է Ռափայէլ Պատկանեանը, որ ուսումն արտելուց յետոյ բնակութիւն է հաստատում մայրաքաղաքում, բաց է անում սե-



փական տպարան, տպագրում է գրքեր, իսկ 1864-ից սկսում է «Հիւսիս» լրագիրը: Պետերբուրգի հայ գաղութը ունէր այդ ժամանակներում բաւական աչքի ընկնող գրական գործիչներ: Այդտեղ էր երիտասարդ գիտնական Քերովը և Պատկանեանը, այդտեղ էր Ռափայէլի հայրը, քահանայական աստիճանից զրկված Գարրիէլ Պատկանեանը. այդտեղ էր Միքայէլ Միանասրեանը: Հայ ուսանողութիւնը այդպիսով ունէր շատ յարմարութիւններ՝ իր ազգի ցաւերի մասին մտածելու և նրա մտաւոր շահերին նուիրվելու համար:

Հանդուցեալ Երիցեանը պատմում է որ բացի հայ ուսանողական ժողովից, Պետերբուրգում կրթվող երիտասարդները ունէին և մի այլ շրջան—Կարապետ Եղեանցի ընտանիքը, ուր նրանք գտնում էին սիրալիր հիւրասիրութիւն և ուր խօսքն ու գրոյցը պարտում էր հայութեան շուրջը: Այդտեղ էին լինում և Արժրունի եղբայրները: Գրիգորը, որ զեռ գիմնադրացում յայտնի էր իբրև տաք ու վառվուռն երիտասարդ, սկսում է առանձնապէս հետաքրքրվել հայոց հասարակական և գրական հարցերով: Նրա ընկերակիցների մէջ ոչ ոք նրա պէս տողորված չէր վաթսուհական թւականների երկրորդ սերունդի գաղափարներով: Հանրամարդկային, ընդհա-

նուր առաջադիմական իդէալները գտնում են նրա մէջ մի ջերմեռանդ երկրպագու. բայց այդ երկրպագուն չէ մնում ազգայնական գաղափարներից զուրս, կօսմօլօլիտ, այլ մասնաւորում է իր գործունէութիւնը, նուիրելով նրան ամբողջապէս իր ազգին. նա դառնում է հանրամարդկային առաջադիմական ձգտումները ազգայնացնող, դառնում է մտածող և առաջադիմող բէալիստ յատկապէս հայերի համար:

Երիցեանի վկայութիւնից մենք տեսնք որ Մօսկվայում, 1864-ին, Գրիգորը հեռու էր պահվում հայ շրջաններից և զարմանում էր որ ուսանողական ժողովը հայերէն լեզուն է գործածում, կարծես թէ աշխարհի մէջ չը կայ մի այլ լեզու: Միջոց չունենալով ստուգելու թէ որքան ճիշտ է սա, մենք, այնուամենայնիւ, թոյլ ենք տալիս մեզ կարծելու, որ հանդուցեալ հնադէտի այդ խօսքերի մէջ կայ չափազանցութիւն: Եւ այսպէս վարվելու մեզ իրաւունք է տալիս այն հանդամանքը, որ հէնց յաջորդ տարին, 1865-ին, Գրիգորը ոչ միայն այդպէս չէ վերաբերվում հայերէնին, այլ և գրում է երկու յօդուած հայ լրագրում: Այդքան կարճ միջոցում այդպիսի խիստ փոփոխութիւն— շատ հասկանալի չէ: Ամենին չը հերքելով



որ շրջանը կարող էր վճռական ազդեցութիւն անել, արմատապէս փոխել աշխարհայեացքները, մինք, այնուամենայնիւ, ուղում ենք հաւատալ որ այդ կերպարանափոխութեան սկիզբը դրվեց Մօսկվայում, այն ժամանակից, երբ Գրիգորը, ազատվելով իր նախնական դաստիարակութեան կապանքներից, իր արիստօկրատ ընտանիքի նախապաշարմունքներից, ոտք դրեց ուսանողական աշխարհում իբրև հասունացած երիտասարդ, իբրև տպաւորվող, ժամանակի ոգին հեշտութեամբ ըմբռնող մարդ:

Սակայն դա այնքան էլ կարեւոր չէ: Փաստը այն է մնում, որ Արծրունին իր ուսանողութեան երկրորդ տարուց սկսում է գրել հայերէն: Առաջին յօդուածը տպվեց «Մեղու Հայաստանի» լրագրում 1865-ի ապրիլին (№№ 13 և 14) և ունի այսպիսի վերնագիր. «Բնական դիտութիւնների նշանակութիւնը դաստիարակութեան մէջ»: Իբրև բնական դիտութիւններ սովորող, բայց մանաւանդ իբրև հարազատ զուակ իր ժամանակի, երբ Ռուսաստանում լուրջ և առողջ րէալիզմը առանձին ոգևորութեամբ ուսումնասիրում էր բնական դիտութիւնները, Արծրունին, ի հարկէ, այդտեղից պիտի սկսէր: Այս առաջին իսկ քայլում խօսում է նրա մէջ կեանքի,

դրական պահանջների մարդը: Իսկոյն երևում է, որ մեր սկսնակ գրողը «Հիւսիսափայլի» ուղղութեան մարդ է. նազարեանցի ամսագիրը, ինչպէս գիտենք, առանձին ուշադրութիւն էր դարձնում բնական գիտութիւնների վրա: Մանաւանդ որքան «հիւսիսափայլական» շեշտեր ենք գտնում Արծրունու հետեւեալ տողերի մէջ.

«Մենք էլ ունինք լատիներէն լեզուի նման մի լեզու՝ մեր զրաքարը, ունինք նաև Աստուածաշունչ, բրիտանիական հրահանգ եւ այլն, որոնք թէպէտ շատ հետաքրքիր եւ օգտակար առարկաներ են, բայց երեխանց համար անհասկանալի եւ ուրիմ վերացեալ: Եւ ճշմարիտ, ամենին մեզանից յայտնի է, ինչ դժուար է եւ ձանձրալի երեխի համար գրաբառի հոլովմունքներ եւ խոնարհմունք սովորել, կամ թէ Մսերի գրքով Աստուած բառի նշանակութիւնը մեկնել:

Երկրորդ յօդուածը, որ տպվեց դրանից քիչ յետոյ նոյն «Մեղու»-ի մէջ, անուանված է «Երկու խօսք աղջկերանց դաստիարակութեան վրայ»: Այստեղ Արծրունին ցոյց է տալիս իր ապագայ գործունէութեան ամենանշանակաւոր ճիւղերից մէկը—կանանց կըրթութեան և ազատագրութեան պաշտպանութիւնը: Այս մասին մենք մի քիչ յետոյ կը խօսենք: Այժմ բերենք մի կտոր, որի մէջ



քսան տարեկան ուսանողը հանդէս է դալիս իբրև մայրենի լեզուի ջերմ պաշտպան:

Մայրաքաղաքներումը—ասում է նա—մեր տընային կրթութեան մէջ կայ մի ուրիշ անպիտան կողմն էլ: Երեխերը մոռանում են իրանց լեզուն, ուրեմն եւ զրկում են իրանց զարգացման բնական միջոցից, կորցնում են սէրը դէպի իրանց ազգը եւ շատ անգամ էլ ատում են իրանց հայրենակիցներին: Եւ միեւնոյն ժամանակը ինչպէս հայերը, նոյնպէս եւ որդիքը, չափազանց հպարտ են եւ ինքնահաւան, երեւի էնդուր որ չունին ոչ ազգ, ոչ կրօն, ոչ լեզու, ոչ էլ առողջ միտք:

Շատերն են մինչև այդ գրել այսպիսի դառն ու ճշմարիտ խօսքեր: Բայց այս խօսքերը մեղ համար առանձին նշանակութիւն են ստանում, երբ դուրս են դալիս Գրիգոր Արծրունու բերանից: Չէ որ նա ինքն էլ ընտանեկան այդ տեսակ կրթութեան դոհերից մէկն էր. չէ որ նա էլ «հպարտ եւ ինքնահաւան» էր հէնց այն պատճառով որ չունէր առջ ազգ, ոչ կրօն, ոչ լեզու»: Այստեղ մեր առջև կանգնած է օտար ու խորթ կրթութեան պատուհներից մէկը, որ հասկացել է դրութեան անբնականութիւնը և խոստովանում է իր ծնողների մեղքերը:

Դուրս դալով հայկական իրականութիւնից, Գրիգոր Արծրունին հէնց իր առա-

ջին քայլերից ներկայանում է նախ և առաջ իբրև սաստիկ, անխնայ բողոք այդ իրականութեան այլանդակութիւնների դէմ: Եւ նրա բողոքի առարկան ամենից առաջ այն շրջանը պիտի լինէր, որ ամենից շատ էր նրան ճնշել, այսինքն ընտանիքը: Իր ուսանողութեան երկրորդ տարում նա արդէն կանգնած է այն ճանապարհի վրա, որ նրա ամբողջ կեանքի փայլուն ճանապարհը պիտի դառնար: Արդէն իւրացրել է որոշ, հաստատուն աշխարհայեցողութիւններ, հասկացել է մայրենի լեզուի նշանակութիւնը, բողոքողի դերը քնած ու նախապաշարված հասարակութեան մէջ: Նա դիտէ թէ ինչպէս պէտք է ծառայել մի այդպիսի ժողովրդին և իր առաջին յօդուածի համար նշանաբան է առնում Գէօթէի խօսքերը. «Դու չես կարող մի մեծ բան շինել ու ահա սկսում ես փոքր բանից»: Սա դրօշակ է, սա դործունէութեան մի ամբողջ ինքնուրոյն ծրագիր է: Արծրունին իր ամբողջ կեանքում նկատի ունէր որ այդպէս է հայ ժողովուրդը. և այդ պատճառով ամեն ինչ սկսում է այբուբենից, տարականից. բոլոր հարցերը նա քննում է վերին աստիճանի սարգ, հանրամատչելի կերպով, բազմաթիւ անգամ կրկնում է իր ասածները, լուսաբանում և արծարծում է իր



զաղափարները: Իր դաստիարակչական գերը կատարելու համար նա բնութիւնից ստացել էր մի անդին զարդ—պարզ ու կարուկ խօսելու շնորհք: Այդ երկնային շնորհքը նա ցոյց է տալիս իր առաջին գրուածքներէից:

Արծրունին զգում էր իր կոչումը: Եւ այդ պատճառով նա չը բաւականացաւ «Մեղուն» աշխատակցելով: Մի անկախ և ըմբոստ բընաւորութիւն, նա չէր կարող բացվել, ըստեղծել, եթէ չունենար խօսքի սեփական, անկախ գործիք: Եւ մենք տեսնում ենք որ նա դեռ նոյն 1865-ին սկսում է մտածել սեփական լրագիր հիմնելու մասին:

Պատմում են որ Արծրունին մի առանձին սէր ունէր դէպի լրագիրը դեռ մանկութիւնից: Դեռ Մօսկովայում, ասում են, փոքրիկ Գրիգորը խմբագրում էր ֆրանսերէն լեզուով մի լրագիր, որի ընթերցողներն ու բաժանորդները նրա փոքրահասակ քոյրերն ու եղբայրներն էին: Այս երեխայական գործից մենք ոչինչ եզրակացութիւններ հանել չենք ուզում. գուցէ դա մի զուարճութիւն էր միայն, որի խական միտքը նա չէր էլ ըմբռնում: Բայց ահա 1865-ին նա, համալսարանական ուսանող, արդէն հայ գրող դարձած, լրագրական գործին նուիրվելու միտքն է հաստատում իր մէջ: Այստեղ արդէն չենք

կարող ուրանալ կատարեալ դիտակցութիւնը. այստեղ արդէն Արծրունին հանդէս է գալիս իբրև իր ապագայ գործունէութեան որոշ ծրագիր կազմած մի երիտասարդ:

Եւ լրագիր հրատարակելու միտքը նա ծածուկ չէ պահում իր մէջ: Մի օր նա հանդիպում է Միքայէլ Նալբանդեանցին: «Մեր հայրենիքի» և «Ազատ Աստուած»-ի հեղինակը նոր էր դուրս եկել բանտից: Նա Երեմիա Արծրունու լաւ ծանօթն էր դեռ Մօսկովայից: Իսկ երբ գնում էր Էջմիածին, Թիֆլիսում յաճախ այցելում էր Երեմիային և ճանաչում էր նրա երեխաներին: Սօսակցութեան մէջ Գրիգորը յայտնեց Նալբանդեանցին թէ դիտաւորութիւն ունի մանկ հայ հրատարակախօսութեան ասպարէզը: Նալբանդեանցը խրախուսում է նրան, հաւանութիւն է տալիս այդ մտքին, միևնոյն ժամանակ հարկ է համարում խրատներ տալ նրան, խրատներ, որոնք հիմնված էին նրա փոթորկալից կեանքի փորձի վրա: Նա ցոյց է տալիս իրան: Սարսափելի հիւանդութիւնը արդէն բոլորովին կրճտել էր այդ կրակոտ մարդուն. «Հիւսիսափայլի» աշխատակիցը մի քանի ամսովայ հիւր էր այս աշխարհում: Բացատրելով իր դուռնի եկած փորձանքների պատճառը, Նալբանդեանցը խորհուրդ է տալիս Արծ-



րունուն գործել բացարձակ, օրինական ճանապարհի վրա, հեռու մնալ ուսու յեղափոխական գործիչներից: Եւ Արծրունին պատմում էր որ իբ վրա խոր տպաւորութիւն գործեց Նալբանդեանցի այդ խրատը: Եւ իբրաւ, նա իբ ուսանողութեան տարիներում չը յափշտակվեց ժամանակի քաղաքական շարժումներով: Բացի Նալբանդեանցից, Արծրունին ուրիշ ուսանողներին էլ յայտնել է իբ այդ միտքը:

Պետերբուրգում Գրիգորը երկար ապրել չը կարողացաւ: Նոյն 1865 թւականի վերջերում նա սաստիկ հիւանդացաւ, սկսեց արիւն թքել: Այնքան սաստիկ էր հիւանդութիւնը, որ մի անգամ, երբ նա գնում էր բժշկի մօտ, փողոցով անցնողների ուշադրութիւնը գրաւեց: Այնքան յաճախ հաղում և արիւն էր թքում նա, որ անց ու դարձ անողները վարմացած նայում էին ձիւնի վրա կազմվող արեան բծերին և գլուխները շարժելով, շարունակում էին իրանց ճանապարհը: Գրիգորը դիմում է Պետերբուրգի նշանաւոր բժիշկներին, բայց ամենքն էլ յայտնում են որ նա չի ապրի: Նոյն այդ վճիռն է արձակում և հուշակաւոր բժշկատեա պրօֆէսօր Բօտկինը, որին ի վերջոյ դիմել էր Արծրունին: Բօտկինը Գրիգորի մեծ եղբայր Գէոր-

դի համալսարանական ընկերն էր, ուստի և մեծ սիրով ընդունեց հիւանդին, քննեց ամենայն խնամքով, անկեղծ կերպով ցանկանում էր օգնել իբ մտերիմ ընկերի եղբօրը: Բայց հմուտ պրօֆէսօրն էլ գալիս է այն եղբակացութեան, որ ազատել երիտասարդի կեանքը անհնարին է: Գրիգորը պահանջում է որ բժիշկները իբ երեսին յայտնեն ամբողջ ճշմարտութիւնը, ատելով թէ ինքը չէ վախում մահից: Եւ երբ լսում է սարսապելի դատաւճիռը, չէ յուսահատվում, այլ վճռում է գործ դնել վերջին միջոցները:

Բժիշկները ասել էին որ նա երկու ամսից աւելի չի ապրի: Հաղորդելով այդ բանը իբ հօրը, Գրիգորը յայտնում էր նրան թէ ինքը լաւ է համարում անցկացնել իբ կեանքի այդ վերջին ամիսները Փրանսիայի Նիցցա քաղաքում, որ յայտնի է իբ տաք կլիմայով: Երեսիան թոյլ է տալիս դնալ և Գրիգորը անմիջապէս ճանապարհվում է Նիցցա, ուր և բնակութիւն է հաստատում:

Նիցցան Արծրունին նկարագրել է իբ «Վիլիւնա» վէպի մէջ, որի գլխաւոր հերոսն է, ի դէպ ասած, ինքն է: Չմեռը հրաշալի է Նիցցան և այդտեղ են գալիս Եւրօպայի գանազան կողմերից կրծքի հիւանդութիւն ունեցողները: Միջերկրականի ծովափը շա-



տերի համար է դառնում գերեզման, բայց երիտասարդ հասակը, առողջապահական կանոնների համաձայն կեանք վարելը բարեբար ազդեցութիւն են անում Արծրունու վրա: Նա սպրում է Նիցցայում եօթն ամիս և կենդանանում է: Այդ եօթը ամսվայ ընթացքում նա մի բառ չէ արաստանել, որովհետեւ բրփիշկները արգելել էին խօսել: Նա պատմում էր, որ երբ հիւրանոց էր գնում ճաշելու և ծառան բերում էր կերակուրների ցուցակը, նա, որպէս համր, մտաբ դնում էր ուղած կերակուրի վրա և այդպէս ցոյց տալիս թէ ինչ է ուզում ուտել \*): Վտանդը, շնորհիւ այդպիսի կեցութեան և ապա ու մեղմ կլիմայի, անցնում է: Գարնանը նա բոլորովին առողջ էր: Սկսվեցին Նիցցայի անտանելի աաքերը: «Բփիշկների խորհրդով պէտք է փախչէի Նիցցայից, — կարդում ենք «էփէլինա»-ի մէջ: — Քաղաքը թողնելուց առաջ ես ուզեցի հանել տալ լուսանկարս, որպէսզի իմ կենդանագիրս ուղարկեմ Կ. Պօլիս \*\*), ծնողներիս, նրանց ցոյց տալու համար թէ

\*) «Մշակ», 1892, № 147:

\*\*) Վէպի մէջ Արծրունին, իր անձնաւորութիւնը քօղարկելու համար, անուանում է իրան պօլսեցի: Դա միակ կենսագրական անճշտութիւնն է վէպի մէջ:

առողջացել եմ: Բայց երբ ստացայ լուսանկարս, զարմացած մնացի... Միթէ ես այդ աստիճան չաղացել էի... ես աչքերիս չէի հաւատում...»:

Մահից ազատվելով, նորից ստանալով իր



Գրիգոր Արծրունին Նիցցայում

երիտասարդական ոյժերն ու եռանդը, Արծրունին շտապում է վերանորոգել իր պարսպամունքները, որոնց ընդհատել էր սարսափելի հիււանդութիւնը: «Ուրեմն ես կատարելապէս առողջ եմ, մտածեցի ես, ուրեմն և



կարող եմ այստեղ, արտասահմանում, շարունակել և աւարտել համալսարանական ուսումս», ասում է «Էվէլինայի» հերոսը: Պետերբուրգ վերադառնալու մասին, ի հարկէ, չէր էլ կարելի մտածել: Նա մնում էր Եւրոպայում, հետո, շատ հետո իր ընտանիքից և հայրենի հասարակութիւնից: Նա ճաշակեց այնքան հեռաւորութեան տուած բարիքները և այնուհետև իր յօգուածներում պնդում էր թէ ամեն մի երիտասարդ հայ, որ կամենում է ազատ և բազմակողմանի դարգանալ, իւրացնել եւրոպական քաղաքակրթութիւնը, պիտի շատ և շատ հեռանայ իր տանից ու քաղաքից:

«Բժիշկը խորհուրդ էր տուել ինձ երկու շաբաթից յետոյ գնալ Եվէյցարիա և այնտեղ անցկացնել ամառը: Ես վճռել էի գնալ Յիւրիխ, որտեղ կարող էի համալսարանական դասախօսութիւններին էլ հետևել»: Այդպէս էլ անում է նա: Բնակութիւն հաստատելով Եվէյցարիայում, նա ուսանող է գրվում Յիւրիխի համալսարանում, սկսում է եռանդով սրբապել: Միևնոյն ժամանակ վերանորոգում է իր գրական գործունէութիւնը, որի սկիզբն էր դրել Պետերբուրգում: (1866 թւի ընթացքում Թիֆլիսի հայոց պարբերական մամուլի մէջ լոյս չը տեսաւ Արծրունու և ոչ

մի յօդուածը: Բայց հետևեալ տարվանից նա սկսում է կանօնաւոր կերպով աշխատակցել զլիսաւորապէս «Հայկական Աշխարհ» ամսագրին, երբեմն-երբեմն յօդուածներ ուղարկելով նաև «Մեղուն»:

Առաջին գրուածքը, որ Արծրունին ուղարկեց «Հայկական Աշխարհին», մի գեղեցիկ յօդուած էր «Աշխատենք» վերնագրով, քաղուածք էր մօտէն Արուի «Le Progrès» անունով գրքից: Այդ յօդուածը, որի մէջ այնքան սիրուն կերպով բացատրված է աշխատանքի նշանակութիւնը, Արծրունին կազմել էր ժընեվում 1866-ի նոյեմբերին:

Յիւրիխի համալսարանում Արծրունին երկար չէ մնում, այնտեղից տեղափոխվում է ժընեվ, բայց շուտով այդ տեղն էլ է թողնում. 1867-ին նա անցնում է Գերմանիա և այդտեղ ուսանող է մտնում Հէյդլբերգի համալսարանը: Յիւրիխում և ժընեվում նա զլիսաւորապէս լսում էր քաղաքական և քաղաքատնտեսական դիտութիւններ, իսկ Հէյդլբերգի համալսարանի փիլիսոփայութեան ֆակուլտէտում — քաղաքատնտեսութեան պատմութիւնը, ֆինանսները և առհասարակ քաղաքատնտեսական դիտութիւնները. միաժամանակ գրվել էր և ընադիտական բաժնի մի քանի դասախօսութիւններին:



Այդ բոլոր առարկաներից դասախօսում էին այնպիսի նշանաւոր պրօֆէսօրներ, ինչպէս են Բլունչլի, Բաու, Տրէյչկէ, Կնիս, Հելմհօլց, Վունդ: Եւ Արծրունին ընտրեց գիտութեան այդ ճիւղերը, նկատի ունենալով իր նպատակը—հայերէն լրագիր հրատարակելը:

Համալսարանական պարագմունքները չէին մոռացնել տալիս Արծրունուն հայոց մամուլը և նա մեծ եռանդով շարունակում էր իր աշխատակցութիւնը: Նրա գրուածքները աննկատելի չէին անցնում, ընդհակառակը, գործում էին խոր տպաւորութիւն և փոքրաթիւ ընթերցող հասարակութեան մէջ ստեղծում էին համակրանք դէպի երիտասարդ հեղինակը: Այստեղ մինք դեռ այդ գրուածքների մասին չենք խօսում: Հետաքրքրականը այստեղ այն է թէ ինչպէս Արծրունու մէջ կազմակերպվեց որոշ աշխարհայեցողութիւն, որոշ ու խիստ ուղղութիւն:

Մենք տեսանք մեր եռանդոտ ուսանողին Ռուսաստանում. տեսանք որ նա վաթսուհակն թւականների երկրորդ կէսի մարդ էր, այսինքն մտածող բէալիստ, անհատի ազատութեան երկրպագու, կատարելագործող, առաջ տանող աշխատանքի քարոզիչ: Այդ պաշարով նա անցաւ Եւրօպա: Բազաքակիթ, ազատ երկրների մէջ նա աւելի ևս հարըս-

տացնում է այդ պաշարը, աւելի ևս լայն հօրիգօծներ է տեսնում, գրական գիտութիւնների մէջ հմտանում է, կրթվում, հիմնաւորապէս դաստիարակվում: Նրան դաստիարակում էր ոչ միայն բարձրագոյն դպրոցը, այլ և կեանքը իր բազմաթիւ երևոյթներով, հարուստ գրականութիւնը:

Հետաքրքրական է պատկերացնել Արծրունու ուսանողական կեանքը, տեսնել թէ ինչ էր անում, ինչպէս էր աշխատում, ինչ տպաւորութիւններ էր վերցնում ուսանողական միջավայրերից: Բանի որ չը կան այդ մասին տեղեկութիւններ, մենք դարձեալ պիտի դիմենք «Էվէլինային», չը մոռանալով որ այդ վէպի հեղինակը «ես» անունով գործող անձի մէջ իրան է նկարագրել: Ահա ինչպէս է նկարագրում իր կեանքը Յիւրիխում.

Ես կատարելապէս առողջացած էի զգում ինձ եւ պարապում էի մեծ եռանդով. ուսանողական գործունեայ կեանքը կլանել էր ինձ իր մէջ ամբողջապէս: Այդտեղ գրաւում էր ինձ եւ մի նոր երևոյթ, նոր ոչ թէ միայն ինձ համար, բայց եւ ամբողջ Եւրօպայի համար... Ուղիղ այդ ժամանակ երեւացին Յիւրիխի համալսարանում երկու ուսուցիչ, Եւրօպայի համալսարանների առաջին ուսանողուհիներ, կանանց բարձրագոյն կրթութեան մարմնացած կարապետներ... Ես շտապեցի ծանօթանալ նրանց հետ եւ այն օրից յափշտակվեցայ հասարա-



կական նոր իդէալներով: Այդ երկու կանանց շուրջը խմբվում էինք մենք, այլ եւ այլ ազգութիւններին պատկանող ուսանողներս. նրանք, այդ կանայք էին, որոնք կազմում էին ուսանողների այդ բոլոր տարբեր խումբեր իրար մէջ կապող օղակը...»:

Այդ ուսանողուհիների մասին Արծրունին մի յօդուած ունի «Հայկական Աշխարհի» մէջ (1869): «Հասարակական նոր իդէալներ», որոնց իւրացնում է տղամարդը կնոջ ազդեցութեան տակ—այս մասին շատ է գրել Արծրունին, այս նիւթի վրա է հիմնված նրա «Էվէլինան»: Կինը, ինչպէս վկայում է ինքը, Արծրունին, 1891 թւականին գրած իր մի առաջնորդող յօդուածում, մեծ դեր է կատարել նրա մտաւոր աշխարհի մէջ, նրա հասարակական իդէալների կազմակերպելու, ամրանալու մէջ: Եւ հէնց այդ է պատճառը, որ Արծրունին մեզանում կնոջ իրաւունքների, կնոջ զարգացման, ազատագրութեան ամենասանխոնջ եւ ամենաջերմ կողմնակիցն է եղել սկզբից մինչև վերջ:

Առաւօտները—շարունակում է «Էվէլինայի» հեղինակը—ես լսում էի դասախօսում իւնները համալսարանում, ճաշից յետոյ պարսպում էի մասնագիտութեանս, քաղաքատնտեսութեան վերաբերեալ ընթերցանութեամբ, իսկ երեկոյեանները փորձում էի իմ թոյլ ոյժերս հայրենիքիս, Կ. Պօլսի հայոց լրագիր-

ներին թղթակցութիւններ գրելում... Գրուածներս սկսում էին աւելի եւ աւելի յաճախ երեւալ Կ. Պօլսի պարբերական մամուլի էջերում: Ես ուզում էի գրել, միշտ գրել, անընդհատ կերպով գրել:

Սա ճիշտ է, սրա ապացոյցն է «Հայկական Աշխարհի» և «Մեղուի» մէջ փոփած յօդուածների բազմութիւնը: Հայրենիքը երբէք չէր մոռացվում, չէր դադարում նրա մտածմունքների առարկան լինելուց: Բայց ինչպէս էր նա ճանաչում իր հայրենիքը, ինչ դադար էր կազմել իր ազգի մասին: Ուսանողական տարիները թէ Ռուսաստանում և թէ Եւրօպայում մտցրել էին նրան հանրամարդկային լուսաւոր, առաջագէմ գաղափարների մէջ: Նա մկրտվեց այդ աւազանում, ուխտեց իր ամբողջ ոյժերը նուիրել իր ժողովրդին: Այժմ շատ կարեւոր է իմանալ թէ ինչ էր տեսնում նա այդ ժողովրդի մէջ և նրա ուխտը ինչ էր պարունակում իր մէջ:

Բարեբախտաբար, այս նշանաւոր հարցի վերաբերմամբ Արծրունու կենսագրութիւն գրողը չի խարխալի ենթադրութիւնների, հաւանականութիւնների մէջ: Ինքը, Արծրունին, գրել է այդ մասին 1880 թւականին, այն ժամանակ, երբ նա կրակոտ եռանդով բանակոխ էր մղում կրօնական հարցի առի-



թով: Գրուածքը անուանւիւած է «Իմ խոստովանութիւնը» \*): Եւ որովհետեւ այդ խոստովանութիւնը չափազանց կարեւոր է Արծրունուն ճանաչելու համար, ուստի մենք կը բերենք նրա իսկական խօսքերը, կարելի եղածին չափ ընդարձակ:

Ապրելով—ասում է նա—նախ Ռուսաստան, այն է Մօսկվայի եւ Ս. Պետերբուրգի, եւ յետոյ Արտասահմանի մտաւոր շրջաններում, եւ ականայ սկսեցի ուշադրութիւն դարձնել ինձ շրջապատող երեւոյթների վրա: Ռուսը աշխատում է իր ուս ազգի համար, գրում է, դպրոցում դասատուութիւն է անում, գրքեր է հրատարակում, համայնարանի մէջ դասախօսութիւններ է անում ուս հասարակութեան համար:

Ես թողեցի Ռուսաստանը տկարութեան պատճառով եւ դնացի արտասահման: Այնտեղ այնպիսի մտաւոր կենտրոններում, ինչպէս Յիւրիս, Ժենեվ, Հէյդլբերգ, Վիեննա եւ Փարիզ, որտեղ եւ կացել եւ ուսում եմ առել, եւ աւելի էլ համոզվեցայ թէ ամեն ազգութեանը պատկանող անհատը գործում է կամ պատրաստովում է գործել իր ազգի համար:

Գերմանական համալսարանները լի են, բացի գերմանացիներով եւ այլազգի ուսանողներով՝ ամերիկացիներով, շվեդացիներով, յոյներով, դանիացիներով, շվեյցարացիներով, ֆրանսիացիներով, չէխերով, բուլղարացիներով... Եւ այդ ազգերին պատկանող իւրաքանչիւր անհատը ուսում էր առնում, գի-

\*) «Մշակ», 1880, № 164.

տութիւն էր սովորում, որպէսզի ժամանակով պիտանի լինի իր ազգութեանը:

Երբ ես խօսում էի այդ այլ եւ այլ ազգութիւններին պատկանող ընկերներին հետ, եւ նախանձում էի նրանց, որովհետեւ նրանցից իւրաքանչիւրը խօսում էր իր ազգութեան, իր հայրենիքի, իր մայրենի լեզուի մասին: Ընկերներին հետ խօսելով եւ երբէք չէի հարցնում թէ ինչ կրօնի է պատկանում նրանցից իւրաքանչիւրը, այլ ինչ ազգութեան է պատկանում նա: Եւ մինչեւ անգամ բուլղարը, բուլմիցացին, չէխը, սերբիացին, որոնք անկախ քաղաքական կեանք չունէին, այնու ամենայնիւ խօսում էին իրանց հայրենիքի, իրանց ազգութեան, իրանց մայրենի լեզուի, իրանց դպրոցների, իրանց հայրենի գրականութեան ու մատուլի մասին:

Միայն մենք, սակաւաթիւ հայերս, նոյնը ասել չէինք կարող մեր մասին, որովհետեւ չունէինք դեռ այն ժամանակ ոչ կենդանի մայրենի լեզու, գրեթէ չունէինք դպրոցներ, չունէինք նոր գրականութիւն, չունէինք մամուլ, չունէինք վերջապէս ազգութեան վրա գաղափար, չունէինք ազգային ինքնաճանաչութիւն:

Եւ անհա ինչ էր երիտասարդ հայի դրութիւնը, ինչ էր մանաւանդ երիտասարդ հայ գրողի դրութիւնը, որ գրիչը ձեռքին, փորձ էր փորձում ինքն էլ օգտաւէտ հանդիսանալ իր մայրենի գրականութեան ու լրագրութեան ասպարիզում, փորձ էր փորձում ինքն էլ պատրաստվել, հմտութիւններ ընդունել, ապագայում իր ազգին օգտաւէտ լինելու համար,— եւ միեւնոյն ժամանակ իր առջեւ ազգութիւն չէր տեսնում, այլ տեսնում էր մի կրօնական ազանդ:

Ինչպէս գործեմ եւ իմ ազգութեան համար, ա-



սում էի ես ինքս ինձ, երբ որ պարզ տեսնում եմ  
 թէ մի որոշ ազգութեանը չեմ պատկանում, իսկա-  
 պէս ոչինչ ազգութիւն չունիմ, այլ պատկանում եմ  
 միմիայն մի կրօնական ազանդի, պատկանում եմ  
 մի ցեղին, որ գուցէ մի ժամանակ եղել է մի ազ-  
 գութիւն, բայց այժմ այլեւս ազգութիւն չէ, չունի  
 ազգային ինքնատճանաչութիւն, այլ միայն մի ա-  
 դանդ է:

Ես ակամայ սկսում էի յիշել իմ մանկութեան եւ  
 պատանեկութեան ժամանակ ինձ շրջապատած երե-  
 ւոյթները, սկսում էի հոգեբանապէս քննել եւ զննել  
 թէ ինչ բան է հայը:

Ես սկսում էի յիշել թէ երբ որ մարդը հար-  
 ցնում էր լուսաւորված հային, թէ նա ո՞վ է, նա  
 շատ անգամ ամաչում էր խոստովանվել թէ հայ է,  
 իսկ եթէ պատասխանում էր թէ հայ է, իրան այդ  
 անունը տալով չէր հասկանում այդ բառով ազգու-  
 թեան գաղափարը, այլ միայն այս ինչ եկեղեցուն  
 պատկանելը: Հայը այն պատճառով հայ չէր, որ  
 հայոց ազգութեան էր պատկանում. այլ այն  
 պատճառով հայ էր, որ հայոց եկեղեցուն էր պատ-  
 կանում: Ուրեմն նրա մէջ չը կար դեռ եւս ազգային  
 ինքնատճանաչութիւն, այլ միայն կրօնական մի ա-  
 դանդին պատկանելու համոզմունքը: Եւ այդ խօս-  
 քը՝ «ես հայ եմ», հայը մեծ մասամբ արտասանում  
 էր մի որեւէ օտար լեզուով, որի այբենարանը ան-  
 գամ նրան ծանօթ չէր:

Նոյնը երբ հարցնում էի մի ռամիկ հային՝ թէ  
 դու ո՞վ ես.—«Հայ-քրիստոնէայ եմ», լսվում էր պա-  
 տասխանը:

...Հայը իր ազգութիւնը ազգութեան մէջ չէր  
 տեսնում, նրան անյայտ էր ազգային գաղափարը,

այլ տեսնում էր իր հայ լինելը միմիայն ազանդի,  
 եկեղեցու մէջ: Պարզ է որ փոխելով կրօնը, նա  
 կարծում էր որ փոխում է եւ ազգութիւնը, կաթօ-  
 լիկ դառնալով նա այլ եւս հայ չէր լինում, այլ նա  
 դառնում էր ֆրանկ, բողոքական դառնալով նա  
 դառնում էր նէմէց, մանմեղական դառնալով նա  
 դառնում էր թիւրք կամ պարսիկ եւ այլն...

Կաթօլիկ հային չէր կարելի մեղադրել որ նա  
 իրան ֆրանկ է անուանում, բողոքական հային չէր  
 կարելի մեղադրել որ նա իրան նէմէց է անուանում,  
 որովհետեւ հայ-լուսաւորչական եղած ժամանակ նոյն  
 հայը նոյնպէս իրան հայ չէր համարում հայրենիքով  
 եւ լեզուով, այլ միայն կրօնով հայ:

... Ես յիշում էի նոյնպէս որ հայ լինելու հա-  
 մար բոլորովին աւելորդ էր հայերէն իմանալ ոչ թէ  
 միայն կեանքի մէջ, այլ նոյն իսկ եկեղեցու խոր-  
 հուրդները կատարելու ժամանակ... (Թող հայրենիքը,  
 թող պատմական, հայրենի հողը, մոռացիք մայրենի  
 լեզուդ,—ինչ փոյթ,—դու դարձեալ հայ ես, եթէ հայու-  
 թեան նշոյլն էլ չը պահելով, կերթաս Հնդկաստան,  
 Զինաստան եւ այնտեղ կը շարունակես քեզ հայ-լու-  
 սաւորչական կոչել:

Եւ ահա հայ երիտասարդ գրողը, յափշտակվե-  
 լով այն օրինակով որ տեսնում էր իր չորս կողմը,  
 տեսնելով որ յոյնը գործում է իր յոյն ազգի համար,  
 բոլբարացին իր բոլբար ազգի համար, եւ այլն, երբ  
 կամենում էր նոյնն անել եւ իր ազգութեան համար,  
 յանկարծ նկատում էր թէ իր ոտքերի տակ գետին  
 չը կայ, թէ իր առաջ չը կայ մի մարմին, որ ազ-  
 գութիւն կարող է համարվել:

... Կարճ էր երեւակայիլ արդեօք այն բարոյա-  
 կան, հոգեկան տանջանքը, որ զգում էր երիտասարդ



հայ գրողը, հասնելով այդ անմխիթար եզրակացումեանը. «ես ոչ մի ազգութեան չեմ պատկանում, ես կրօնական մի սեկտայի, մի աղանդի անդամ եմ միայն, ուրիշ ոչինչ, ուրեմն հէնց որ իմ ցեղակիցներս այս կամ այն պատճառով կը սկսեն մեծ բազմութեամբ կրօնափոխ լինել, ազգութիւն այլ եւս չի լինի, որովհետեւ հիմա էլ չը կայ, որովհետեւ հիմա էլ հայութիւնը հիմնովում է ոչ թէ տեղական անփոփոխ հիմունքներով հայրենիքի, ցեղի ու մայրենի լեզուի վրա, այլ մի պրինցիպի վրա, որ ամեն տեղ, մարդկային պատմութեան ամեն ժամանակներում համարվում էր, համարվում է եւ կը համարվի մի փոփոխական, անցողական, անձնական համոզմունքից կախված, եւ ոչ թէ ցեղի, ազգութեան հետ անխզելի կապ ունեցող մի սկզբունք»...

Եւ անհ երիտասարդ հայ գրողը իր կեանքի, իր գրական ամբողջ գործունէութեան նպատակը պէտք է համարէր իր ամբողջ ջանքերը նուիրել իր ցեղակիցներին, հասկացնել աղանդի եւ ազգութեան տարբեր լինելը, նրանց ազգութեան զաղափարի հասկացնելը, ազգի մէջ ազգային ինքնաձանաչութեան զաղափարի սերմանելը:

Եւ այդ արեցի ես:

Սոստովանութիւնը, ինչպէս տեսնում էք, վերին աստիճանի բնորոշ է՝ Արծրունու ամենաաղլխաւոր գաւառութիւնը հասկանալու համար: Բայց եթէ հիմնովինք միայն այս խոստովանութեան վրա, միակողմանի զաղափար կարող ենք կազմել մեր գործիչի մասին: Գրիգոր Արծրունին ազգայնութիւնը երբէք

չէ հասկացել նեղ, շօփնիստական մաքրով: 1890 թւականին, իր գրական գործունէութեան 25-ամեայ յօբելեանին, Արծրունին նորից դրեց հասարակութեան առաջ իր դաւանանքների ամփոփ ու ամբողջացրած պատկերը: Դրանց հոգին, էութիւնն է «անհատականութեան զարգացումը»: Ահա ինչ է նշանակում այդ միտքը.

Մարդու անհատական զարգացումը՝ նշանակում է կատարեալ եւ անարգել զարգացում նրա բոլոր բնական, ֆիզիքական, մտաւոր եւ բարոյական ընդունակութիւնների, նրա բոլոր ձիրքերի, բոլոր հակումների, բոլոր մարդկային անձնական առանձնատկութիւնների:

Անհատականապէս զարգացած անձնաւորութիւնը առաջ է բերում ընտանիքի անհատական զարգացումը, ընտանիքների բազմութիւնը կազմում է համայնք, համայնքների բազմութիւնը՝ հասարակութիւն: Ապա այդ համագումարումներից գալիս է ազգութիւնը, բայց ոչ իբրև մի վախճանական հասկացողութիւն, այլ իբրև համայնմարդկութեան մի մասնիկ, մարդկային ընդհանուր ցեղի մի բաղկացուցիչ մաս: Ահա այսպէս, անձնաւորութիւնը, ընտանիքը, հասարակութիւնը, ազգութիւնը, զարգանալով իբրև իրանց ա-



ուանձնայատկութիւններն ունեցող անհատներ, վերջ ի վերջոյ գալիս, հասնում են իրանց նպատակին, այն է լինել պիտանի անդամ մարդկութեան, ծառայել հանրամարդկային բարօրութեան: Այդ պատճառով էլ զարգացող անհատները պիտի ղեկավարվեն հանրամարդկային մշանջննապէս սուրբ և անխախտելի դադափարներով: Եւ Արծրունին քարոզում էր այդ դադափարները: Քարոզում էր, ինչպէս ինքն է վկայում, քսան տարեկան հասակից, այն ժամանակից, երբ դեռ ուսանող էր:

Այսպէս ահա մենք տեսնում ենք, որ Արծրունին մտաւ հայոց գրականութեան ասպարէզը միանգամայն կազմակերպված իբրև հրապարակախօս, իբրև հասարակական որոշ իդէալներ ունեցող և այդ իդէալները իր մէջ մարմնացրած մի գործիչ: Մենք, ի հարկէ, չենք ասում թէ իր գործունէութեան ընթացքում նա չը կատարելագործվեց, չը զարգացրեց իր հայեացքները: Ո՛չ: Այստեղ, քանի որ մենք ծանօթանում ենք հրապարակախօսի առաջին քայլերի հետ, խօսք կարող է լինել միայն սկզբունքների, հիմնական կէտերի մասին: Իսկ սրանք անփոփոխ մնացին Արծրունու մէջ մինչև զերեզման: Ուսանողութեան տարիներում նա վերցրեց, իւրացրեց դա-

ւանանքներ, կազմեց հաստատ համոզմունքներ և այդպէս երեան եկաւ մեղանում:

Մենք տեսանք Արծրունու խոստովանութիւնից թէ ինչ դասեր էր տալիս նրան կեանքը: Բայց Արծրունին ունի և մի այլ խոստովանութիւն, որ նոյնպէս շատ բնորոշ է և որի մասին չէ կարելի մի քանի խօսք չասել:

Դա «Էվէլինա» վէպն է:

Իր կեանքի նախավերջին տարիներում Արծրունին յիշեց իր երիտասարդութեան սէրը, յիշեց թէ կինը ինչ դեր է կատարել իր կեանքում և գրեց այդ «հոգեբանական էտիւդը»: Ահա այդ գրուածքի բովանդակութիւնը մի քանի խօսքով: Երիտասարդ ուսանողը Նիցցայում ծանօթանում է մի ֆրանսիացի օրիորդի հետ, սիրահարվում է, փոխադարձ սիրոյ ապացոյցներ է ստանում: Ջերմ է այդ սէրը. նա ամբողջապէս գերում է ուսանողին, տիրապետում է նրա սրտին: Սէրը մի լուսատու աստղի պէս առաջնորդում է նրան մտքի, զգացմունքների աշխարհում. նրա ազդեցութեան տակ երիտասարդը սկսում է ըմբռնել շատ բարդ հարցերի միտքը, սկսում է աւելի մեծ եռանդով նուիրվել իր պարագմունքներին: Վերջացնել ուսումը, ամուսնանալ սիրած աղջկայ հետ ու վերա-



դառնալ հայրենիք—ահա ինչ սիրուն ազա-  
զայ է ծրագրել երիտասարդը:

Բայց սէրը դաւաճան է: Ֆրանսիացի օ-  
րիորդը հրապուրվում է մի ուրիշ ազամար-  
դով, սառչում է, և մեր երիտասարդը հա-  
մուզվում է որ նրա սիրտը այլ ևս իրան չէ  
սրահանում: Մերժված սէրը սկսում է ջարդ  
ու փշուր անել երիտասարդի սիրտը, բայց  
այդ ձգնաժամին օգնութեան է հասնում բու-  
ժիչ գաղափարը: Մի ուսու մտերիմ բարեկամ  
հասկացնում է յուսահատված սիրահարին որ  
դեռ ամեն ինչ կորած չէ, որ կեանքը դեռ չէ  
կորցրել իր միտքը և դեռ կարելի է երջան-  
կութիւն ճաշակել այս աշխարհում: Ծիշտ է,  
վիրաւոր սիրտը գուցէ երբէք այլ ևս չի վե-  
րակենդանանայ՝ նորից մի կին անսահման  
սիրելու համար, բայց նա կարող է մոռանալ  
իրան հասցրած մահացու հարուածները, եթէ  
լայն տեղ բաց անէ իր մէջ մի ուրիշ, աւե-  
լի վսեմ, ոչ եսական զգացմունքի համար—  
սէր դէպի տանջվող մարդկութիւնը:

Այս բարձր գաղափարն էլ դառնում է մեր  
երիտասարդի համար փրկութեան խարխախ,  
նրա անձնական գոբախտութիւնը դառնում  
է մի սրատուանդան, որի վրա բարձրանում է  
ընդհանուրի բախտաւորութեան գաղափարը:

Եսականը, անհատականը տեղի է տալիս  
սքանչելի մարդասիրութեան:

Ծառայել տանջվողներին... Այս է ուզում  
հասկացնել ուսու բարեկամը, նստեցնելով ան-  
բախտ սիրահարին մի մահամերձ, օտարա-  
կան հիւանդի մօտ և սրատուփրկելով խնամել,  
պահպանել նրան: Դիւթական բախասանը  
դանված է: Սրտաբեկ երիտասարդը զգում  
է որ դառնալ ուրիշների համար «եղբայրա-  
կից տանջանքի մէջ»՝ մի գեղեցիկ, ոգևորիչ  
անձնազոհութիւն է: Եւ այդ յայտնութիւնից  
յետոյ նրա մէջ պտտրաստվում է մի ամբողջ  
յեղափոխութիւն: Գնալ այդ կոչման ետեւից,  
դառնալ գթութեան եղբայր մարդկութեան  
համար—ահա ինչ է ստանում տանջված սիրտը  
իր թանկագին կորուստի փոխարէն: Եւ սիրտը  
բախտաւորվում է, նորից թարմանում է, բա-  
բախում է նոր, ուժգին եռանդով, ընդմիշտ  
սլինդ զրկելով մարդկայնութեան վեհ գաղա-  
փարը: Կինը իր սիրոյ հետ մոռացվում է, յետ է  
քաշվում: Երիտասարդը գնում է Հէյդլբերգ՝  
իր ուսումը շարունակելու:

Եւ շարունակում է շատ լաւ, ոգևորված  
իր նոր ապագայով, այն նոր պաշտօնով, որ  
կանչում էր նրան հեռուից—հիւանդապահի  
պաշտօնով: Լինում են մահամերձ անհատներ,  
բայց կան և այնպիսի հասարակութիւններ,



որոնք նոյն օրհասական վիճակն են յիշեցնում, Արծրունին ճանաչում էր այգպիսի մի հասարակութիւն: Ահա նա աւարտել է համալսարանը, ահա նա փիլիսոփայութեան դոկտոր է: Մինչդեռ պատրաստվում է վերադառնալ հայրենիք, ծանր հիւանդի մօտ, անակնկալ կերպով նամակ է ստանում իր նախկին կուռքից, իր էվէլիինայից: Կինը դալիս է նորից փաթաթվելու նրա սաներին: Երիտասարդի տատանումը, թուլութիւնը այդ նամակի սուղն բօսկական է: Նրա «խոցված, վերաւորված սիրտը սաղացել, բուժվել էր», այդ բժիշկը նրա հետ էր և նա թելադրում է մի ժամանակվայ վառ սիրահարին հետեւեալ տողերը.

Այս երկու տարվայ ընծացրում ես շատ աշխատեցի, սաստիկ պարապեցի, քանի որ մտաւոր կեանքով ապրելը դարձել էր ինձ համար կեանքի միակ միակնարութիւն: Ուրիշ որ եւ է զգացմունք այժմ այլ եւս մատչելի չէ իմ սրտին. սիրտս իսպառ ցամաքել, մեռել է այդ ժամանակամիջոցում. ես հրաժարվեցի իմ առաջվայ ապարդիւն ցնորքներից. ես հիմա լաւ համոզվեցայ, որ ոչ մի կին չէ կարող ինձ սիրել անսահման եւ յարատեւ կերպով... Եւ ցամաքած սրտիս մէջ ամփոփված սիրոյ վերջին բեկորները ես այսուհետեւ, մինչեւ մահս, պէտք է նուիրեմ ոչ թէ կնոջ զգացմունքին փոխադարձը տալուն, այլ միմիայն իմ ազգի քաղաքակրթական գործի առաջադիմութեան ծառայելուն:

Այսպիսի սառն, հարատ վճիռ ստորագրելու համար պէտք էր լինել մի մարդ, որ զինուոր էր գրվել ուրիշ պարտաւորութիւնների: Կինը չը կարողացաւ տիրանալ նրան, նուաճել ամբողջովին: Մենք պէտք է տեսնէինք մի խեղճ զոհ, որին մերժված սէրը դարձնում է մարդատեաց, յոռետես, կեանքի մէջ ոչ մի յոյս չունեցող: Բայց այս մի զոհը մի երջանիկ բացառութիւն կազմեց: Կնոջ սրտից աւելի մեծ, աւելի անհուն մի պաշտամունք գտաւ նա—մարդկութիւնը: Հէնց այսպիսի մի սքանչելի զիւտի համար էլ պէտք էր շնորհակալ լինել կնոջը, իբրև պատճառի, իբրև զրգողի: Եւ երիտասարդի մէջ չը կայ ատելութիւն զէպի այդ մերժող կինը: Ընդհակառակն նա պահում է իր անբախտ սիրոյ առաջին առարկայի մասին մի սիրուն, ոգևորիչ յիշատակ, նրան է նայում ամեն անգամ, երբ գաղափարական կուրբաչառում յոգնած՝ նեցուկ ու խրախոյս է որոնում նոր սյժ ու ետանդ ստանալու համար...

Եւ այսպէս գաղափարականը վերակշիռ է հանդիսանում Գրիգոր Արծրունու կեանքի մէջ նոյն իսկ մի այսպիսի վճռական, զուտ անձնական հարցում: Գաղափարի համար էր նա ծնված: Եւ գաղափարականը նրա հետ էր ամեն տեղ—թէ համալսարանում, թէ ընկե-



բական շրջաններում: Նոյն իսկ ուսանողական խնճոյքների մէջ անհոգութիւն, անտար-



Ուսանողական խնճոյք Հելսինքիում

բերութիւն չը կայ գէպի բարձր մտքերը: «Ես —ասում է «Էվէլինայի» հերոսը—ամբողջ

սրտով մասնակցում էի նրանց (ուսանող ընկերների) ուրախ խօսակցութիւններին, նըրանց լուրջ վիճաբանութիւններին, նրանց հետ միասին, գինու կամ գարեջրի բաժակը ձեռիս, ճառում էի մեր իւրաքանչիւրի ազագայ հասարակաց գործունէութեան մասին... Այդ ճառերումն էին արտայայտվում մեր յոյսերը մարդկութեանը պիտանի լինելու, մեզանից իւրաքանչիւրի յոյսերը իր ազգին կարողութեան չափ օգտաւէտ լինելու մասին»...

Արժրունին այդպէս էլ մնաց իր ամբողջ կեանքում: Նա մի մոռյլ ասկէտ չէր, սիրում էր շրջաններ, խօսակցութիւն, վերին աստիճանի սրամիտ, վառվառն խօսակից էր, բայց դատարկաբանութիւններից ուղղակի զզվում էր և իսկական զուարճութիւն ստանում էր այնպիսի խօսակցութիւններից, որոնց նիւթն էր որ և է հասարակական կամ գիտական հարց, վիճաբանութիւնների մէջ մտնաւանդ Արժրունին տաք էր, առանձին ոյժ, ոգևորութիւն էր ցոյց տալիս: Արժրունու ալքոմում մենք գտանք մի լուսանկար, որի վրա պատկերի տէրը գրել է հետեւեալ բնորոշ խօսքերը. «Մնաս բարե, Նիցցա, և մեր բոլոր գըրաւիչ ճաշերը, որոնց ժամանակ իմ ամենասիրելի Գ. Ն. Արժրունին այնքան թունդ վիճում էր, ոչ թէ ինչպէս նրա համեստ, խո-



նարհ ծառայ վ. Բեզեկիրսկին. 5 մայիսի, 1866»:

Եւրոպական հասարակական կեանքի, զբրականութեան, համալսարանի, ընկերական շրջաններէ արած ազդեցութեան վրա աւելացնենք և գերմանական ընտանիքը: Աբովեանցի, Նազարեանցի նման՝ Արծրունին էլ անսահման երախտագիտութեամբ է վերաբերվում նրան: «Մնաս բարև և դու, գերմանական նահապետական հիւրասէր ընտանիք, —ասում է Արծրունին.—դու, որ լայն մարդասիրական զգացմունքով ներշնչված՝ ամեն ջանք էիր անում, որքան հնար է, սիրալիր և ջերմ կերպով ընդունել, հիւրասիրել օտարազգի ուսանողին, նրան մոռացնել տալու համար իր հեռաւոր հայրենիքի և ընտանիքի ժամանակաւոր բացակայութիւնը»:

Մենք պէտք է աւելացնենք որ Գրիգորի համար չը կար ընտանիքի բացակայութիւն: Նրա սիրելի Անդրէասը չը մնաց Պետերբուրգում, նոյնպէս տեղափոխվեց արտասահման և Հէյզլբերգում երկու հարազատները միասին էին: Միասին էլ նրանք ոգեորվում են իրանց հայրենակիցներին ծառայելու մաքով: Անդրէասը զեռ Գրիգորից առաջ է մտքում գնում վարժվել հայերէնի մէջ Մխիթարեանների մօտ: Այս նպատակով

նա 1868-ին գնում է Վենետիկ և այդտեղ գասեր է առնում Հ. Ալիշանից: Անդրէասն էլ յօդուածներ էր ուղարկում «Հայկական Աշխարհին», ուր նրանք տպագրվում էին Ա. Ա. ստորագրութեամբ: Միևնոյն ծառի երկու հարազատ ճիւղեր, միևնոյն տեսակ կրթութիւն ստացած, միևնոյն գաղափարով տոգորված, այդ երկու եղբայրները, սակայն, միևնոյն չէին իրանց խառնուածքով, իրանց ներքին կոչումով: Անդրէասը շատ յետ մնաց իր եղբորից հայկական հրատարակախօսութեան մէջ և փայլեց ուրիշ ասպարէզում: Գրիգորը կեանքի, կուէի մարդ դարձաւ, իսկ Անդրէասը — եւրոպացի գիտնական պրօֆէսոր:

Գրիգոր Արծրունին, աղբերով Եւրոպայում, չէր բաւականանում միայն ուսում ըստանալով և իր իմացած ճշմարտութիւնները տպագրութեան միջոցով իր ազգին հաղորդելով: Նա մի և նոյն ժամանակ հետևում էր մեծ ուշադրութեամբ թէ Եւրոպայում ինչ են ասում, ինչ են գրում հայերի մասին: Շվէյցարիայի և հարաւային Գերմանիայի փոքրիկ համալսարանական քաղաքներում գոյութիւն ունէին հասարակական հարուստ գրադարաններ «Մուզէում» անունով: Այդտեղ կենտրոնացած էր ամեն ինչ, որ վերաբերվում է գիտութեան և գրականութեան և այդպիսի



տեղերում պարագոյրը ամեն յարմարութիւն ունէր Եւրօպայի մտաւոր կեանքի բոլոր ճիւղերին հետեւելու: Արծրունին անդամ է դառնում այդ զրազարաններում և յատկապէս ջոկում ու դասաւորում է այն ամենը, ինչ վերաբերում է հայերին և այն մահմեդական պետութիւններին, ուր նրանք ապրում են:

Այսպիսով նա բաց արաւ «Հայկական Աշխարհի» մէջ մի շատ հետաքրքրական, բազմակողմանի բաժին, ուր հաւաքված էին արտասահմանեան օրվայ տեղեկութիւնները հայերի մասին: Այս բանի վրա ուշադրութիւն չէր դարձնվում մեր այն ժամանակվայ մամուլի մէջ: Ծիշտ է, արտասահմանեան թղթակցութիւններ մենք տեսնում ենք դեռ «Հիւսիսափայլի» մէջ, բայց դրանք պատահական երեւոյթներ են, ընդհանուր ընաւորութիւն չեն կրում և հայերի մասին շատ քիչ են խօսում: Գրիգոր Արծրունին, սխտեմ դարձնելով հայերին վերաբերվող տեղեկութիւնները մի տեղ հաւաքելը, մօտ երկու տարի կարողացաւ շատ հետաքրքրական տարեգրութիւններ տալ, որոնք «Հայկական Աշխարհի» մէջ աչքի են ընկնում իբրև խիստ բազմակողմանի, թարմ նիւթեր:

Հեռանալով արտասահմանից, Արծրունին ցանկութիւն էր յայտնում որ հայ ուսանող-

ները շարունակեն իր սկսածը: Բայց արտասահմանեան ուսանողութեան մէջ չը գտնվեցան երիտասարդներ, որոնք նրա պէս հասկանային հայ ուսանողի պարտաւորութիւնները: Եւ միայն Անդրէաս Արծրունին էր, որ մնալով Եւրօպայում, բաւական երկար ժամանակ շարունակում էր այդպիսի քրօնիկադրի պաշտօնը:

Այսպէս էր արտասահմանում կազմակերպվում մեր ապագայ հօր մարտնչողը:

Ի՞նչ էր գրում և ի՞նչպէս էր նա գրում արտասահմանից: Տեսնենք նախ և առաջ թէ ինչ էր մեր մամուլը այն ժամանակ:



## II

Ս. Նազարեանցի նամակից:—Գեղեցիկ սկսուած, շոկ առաջաբան:—Չարունակողը:—Հայ մանուշղ Կովկասում: «Մեղու»:—Երկու տեսակ կրքուրիւն համարարանական եւ Միխրարեաններ:—Մուրադեան վարժարան:—Մարկոս Աղաթեկեան եւ նրա «Կուռնկը»:—Ազգայնամուշ ուղղութիւն:—Ներսիսեան դպրոց:—Վերակորոզում «Մեղու»:—Նոր խմբագրութեան անկարողութիւնը:—Նմուշներ:—Ցեադիմակակի պատերը, նկարված «Մեղուի» մեռնով:—Ս. Սեփական եւ «Հայկական Աշխարհ»:—Ջանկեր եւ հետեւակներ:—Դասակակներ, արժանաւորութիւններ, պակասութիւններ:—Ռեֆորմ ուղղագրութեան մեջ:—Այդ ռեֆորմի անցեալը:—«Վանատական» շրագիր եւ «Գարուն» ամսագիր:



Իր մահից մօտ հինգ տարի առաջ Ստեփանոս Նազարեանցը իր մասնաւոր նամակներից մէկում գրում էր հետեւեալ տողերը. «Այսպէս դադարեցաւ ու վերջացաւ մեր գործունէութիւնը, որ ես կը համարեմ միայն իբրև մի գեղեցիկ սկսուած, մի լոկ յառաջաբան, ոչինչ աւելի» \*):

\*) Յ. Նազարեանց — «Ընտիր հատուածներ». Թիֆլիս, 1889, կր. 207:

Գեղեցիկ սկսուած, լոկ առաջաբան... Աւելի ճիշտ անուններ Նազարեանցի գրական գործունէութեան համար չէ էլ կարելի գտնել: Համեստ են թւում այդ անունները, փոքրիկ: Բայց գործը, որ այդ անուններով է երևան դալիս: Հետ է երևում նա հետուից նայողին, մանաւանդ նրան, որ թեթե կերպով է վերաբերվում իրերին, որ երեսջթներ ի ու հանգամանքների կշռագատութեան մէջ չէ խորատուզվում: Դժուար մեծագործութիւններից էր այդ առաջին քայլը մեղանում, մեր վերակենդանութեան այդ առաջաբանը: Մենք այդ տեսանք իր տեղում: Տեսանք թէ որպիսի մեծ ջանքեր էին հարկաւոր, որպիսի անձնութեան պէտք էր կուել յանուն առաջին խօսքերի, սկզբնական քայլի:

Եւ անա այդ քայլը արված է, այդ առաջաբանը գրված է: 1865-ին, երբ «Հիւսիսափայլ» բոլորովին լուց, այդ գեղեցիկ իրողութիւնը մեր ճակատագրի սեփականութիւնըն էր դարձել: Յետոյ Պէտք էր կանգ առնել առաջին քայլի, առաջին բառի վրա. պէտք չէր առաջ գնալ, առաջաբանից բուն գործին անցնել: Այս հարցերն էր տալիս ժամանակը, այս հարցերը կենսական նշանակութիւն ունէին նոր արթնացող, շարժումի անհրաժեշտ



տութիւնը նոր զգացող ժողովրդի համար, երբ մեր գրական հօրիզօնի վրա երեսց Գրբիգոր Արծրունին: Նա գալիս էր պատասխան տալու, գալիս էր առաջաբանը շարունակելու:

Այստեղ մենք դեռ պարտաւոր ենք նկարագրել այն ասպարէզը, ուր սկսեց գործել Արծրունին: Ի՞նչ կար այդ ժամանակ մեզանում, ի՞նչ էր ներկայացնում հայոց մամուլը:

Նախ ուշադրութիւն դարձնենք տեղի վրա: «Հիւսիսափայլի» հետ վերջացաւ Մօսկվայի փոքրիկ հայ գաղթականութեան առաջնակարգ նշանակութիւնը մեր գրականութեան տեսակէտից: Քանի կար այդ ամառը, քանի Նազարեանցը դէն չէր գրել իր գրիչը, Մօսկվան էր այն տեղը, որ հայերի համար մի «զարթուցիչ մեքենայ» էր, ինչպէս ասում է այն ժամանակվայ գրողներից մէկը. Մօսկվայից էին սղասում նոր խօսքի, այնտեղից եկող համարձակ, թարմ, անողորմ մտքերն էին յուզում մարդկանց:

Առաջին քայլը Մօսկվան էր. այնտեղ գրվեց նոր հայութեան գաղափարի առաջաբանը: Գուցէ սա մի ճակատագրական անհրաժեշտութիւն էր. գուցէ այդ մեծագործութիւնը անկարելի էր կատարել հայ ժողովրդի բնակութեան տեղում, քանի որ

պահանջում էր այնքան սաստիկ կռիւ: Նազարեանցը ուժեղ էր և նրանով, որ կուռում էր հեռուից, որ չէր ենթարկված իր հայրենիքի ճնշող պայմաններին: Բայց նոյն այդ հեռաւորութիւնը լաւ չէր առաջադիմութեան շահերի տեսակէտից: Օտար երկնքի տակ մնայուն հող չէր կարող գրաւել հայկական հրատարակախօսութիւնը: Նա պիտի մօտենար բուն ժողովրդին, պիտի մտնէր նրա մէջ: Լուռւմ է Նազարեանցը և իրողութիւն է դառնում որ հայոց պարբերական մամուլը ոչ Մօսկվայում պիտի սպրէ, ոչ Պետերբուրգում, ոչ էլ Թէոդոսիայում: Նրա համար ամենայարմար տեղը Թիֆլիսն էր, որ թէև նոյնպէս գաղթականութիւն էր հայերի համար, բայց մի գաղթականութիւն, որ նախ շատ խոշոր էր և երկրորդ՝ շատ մօտիկ էր հայի հայրենիքին:

Ինչպէս յայտնի է, Թիֆլիսում էր սկսվել հայոց մամուլը: Առաջին շաբաթաթերթերը՝ «Կովկաս» և «Արարատ», զանազան պիտանի և անպիտան գրուածքների և տեղեկութիւնների անկապ, վայրկիւրոյ ժողովածուներ էին, այսինքն պատկանում էին այն տիպին, որ հաստատովեց մեր մամուլի մէջ՝ նրա սկզբնաւորութեան օրից: Լրագիրը տպում էր այն, ինչ ձեռքն էր ընկնում, չը կար խրմ-



բազրութիւն, այս բառի իսկական նշանակութեամբ, չը կար դաւանանք, ուղղութիւն: Երրորդ շարաթաթեթ «Մեղու Հայաստանին» դարձեալ մի այդպիսի ժողովածու էր. և եթէ չը լինէր «Հիւսիսափայլ»-ը, չը լինէր Մեղու»-ի հակառակութիւնը նրա դէմ, Մանդինեան քահանայի օրգանը ոչ հարկաւորութիւն, ոչ էլ առիթ կունենար յայտնելու իր պաշտամունքը, իր հաւատամբը: Միայն «Հիւսիսափայլ»-ի դէմ ուղղած գրուածքների մէջ կարելի էր տեսնել թէ ինչ է ուղում Թիֆլիսի շարաթաթեթը, ինչն է նրան ուրախացում և վշտացում: Մնացած ժամանակներում նա դէսից-դէնից հաւաքած հատուածների մի խառնարան էր, առանց որ և է ընտրութեան, առանց խմբադրական որևէ շնորհքի:

1860 թւականից Թիֆլիսի այդ տեսակ մամուլի մէջ նկատվում է բարեփոխութիւն: Այդ թւից հրատարակվում է «Կոռնկ Հայոց Աշխարհի» ամսագիրը, որի խմբագիրն էր Կ. Պօլից Թիֆլիս եկած Մարկոս Աղաբէկեանը: Ամսագիրը առաջինն էր Թիֆլիսում, որ ունէր որոշ ուղղութիւն, քարոզում էր, մտքեր էր արծարծում: Ի՞նչ ուղղութիւն էր դա:

Ստեփանոս Նաղարեանցի կենսագրութեան

մէջ\*) մենք բացատրեցինք թէ ինչ ուղղութիւն ունէր այն կրթական շարժումը, որ սկսվեց ուսանալերի մէջ XIX դարի առաջին քառորդից: Այդտեղ մենք տեսանք որ այդ շարժումը մի ինքնուրոյն բան չէր, այլ ընդօրինակում գլխաւորապէս Մխիթարեան միաբանութեան ստեղծած կրօնական-հայրենասիրական կրթութեան սխառմի: Այդ սխառմը մեր դպրոցական հիմնարկութիւնների հոգին դարձաւ երկար ժամանակ: Արտվանցը և Նաղարեանցը, դուրս գալով այդ դըպրոցներից, օտար բարձրագոյն դպրոցներ գնացին և այդտեղ միայն նրանց առջև բացվեցին նոր ու լայն հորիզոններ: Նրանք հասկացան քաղաքակրթութեան, հանրամարդկային առաջադիմութեան էութիւնը և դարձան մեղանում անբաւական, բողոքող, պահանջող այժ: Նրանց հետեցին ուրիշ երիտասարդներ: Եւ մեր աշխարհայեցողութիւնների, մեր գրականութեան մէջ յաղթող հանդիսացաւ օտար բարձրագոյն կրթութարաններից դուրս բերած առաջադիմական շարժումը:

Թիւրքահայերի վրա Մխիթարեանների կրօնական-ազգայնական նեղ ուղղութիւնը

\*) Եր. 28—30:



աւելի խոր, աւելի երկարատև ազդեցութիւն թողեց: Բայց այնտեղ էլ, թէև փոքր չափերով, նկատուում էր նոյն երևոյթը: Եւրօպայի համալսարաններում կրթութիւն ստացած եւրիտասարդութիւնը լայն կերպով էր ըմբռնում ազգութեան դադարաբը, քաղաքակրթութեան պահանջները: Դրա փայլուն ապացոյցն է մեր նշանաւոր հրատարակախօս Ստեփան Ոսկանը, ինչպէս նաև այն երիտասարդները, որոնք 1848-ի յեղափոխութեան գաղափարներով անվեցին և ապա Կ. Պօլսում առաջ բերին մի վերանորոգչական շարժում, որի պտուղներից մէկն էր թիւրքահայերի Սահմանագրութիւնը:

«Կռունկ»-ի խմբագիրը Մխիթարեան կրթական սիստեմի աշակերտներից էր: Քառասնական թւականներից Մխիթարեանների դպրոցական գործի մէջ տեղի է ունենում մի մեծ փոփոխութիւն: Նրանց դպրոցներից մէկը, Մուրատեան վարժարանը, տեղափոխվում է Պարիզ. թէև Ֆրանսիայի մայրաքաղաքում էլ և. Ղազարի վարդապետները ամեն կերպ աշխատում էին իրանց դպրոցը մի փակ, վանական կրթարանի դրութեան մէջ պահել, բայց շրջապատը, միջավայրը այսպէս թէ այնպէս ազդում էր, այնպէս որ եւրօպական լուսաւորութիւնը կարողանում էր իրան

ցոյց տալ Մուրադեան վարժարանի շէնքից և այդ դպրոցի լաւագոյն ժամանակները հէնց այն տարիներն են, երբ նա գտնվում էր Պարիզում: Այդ ժամանակամիջոցում Մուրադեան վարժարանից դուրս եկած մի խումբ աշակերտներ (Պէշիկթաշլեան, Հէքիմեան, Մամուրեան, Շիշմանեան) մեծ դեր կատարեցին թիւրքահայերի մէջ: Վանական կրթութիւնը աւելի լայն հիմքերի վրա էր կանգնել. մնալով իր էութեամբ խիստ կրօնական, նա այլևս այնքան նեղահայեաց չէր, ընդունում էր եւրօպական մտքով լուսաւորվելու անհրաժեշտութիւնը: Միևնոյն ժամանակ վանական դպրոցը սաստիկ դարգացրել էր և իր երկրորդ իղէալը—ազգասիրութիւնը: Դա նոյն հին ազգասիրութիւնն էր, հիմնված շօվինիստական սնապարծութեան վերա, ամբողջովին ոգևորվող միայն պատմական անցեալով: Գաղափարները, աշխարհայեցողութիւնները նոյնն էին, բայց դրանց արտայայտողները աւելի դարդացած էին, հետևաբար աւելի ազատ էին անհեթեթութիւններից, աւելի ոգևորված էին և ճառական աւելի մեծ ընդունակութիւններով օժտված:

Նշանաւոր է, որ Մուրադեան վարժարանի լաւագոյն ժամանակների սաները երկու



տեսակ ուղղութիւն էին ներկայացնում ազգասիրութեան ասպարէզում: Կաթօլիկները (օր. Պէշիկթաշեան, Հէքիմեան) աշխատում էին միութիւն ստեղծել հայերի մէջ ազգայնական հիւժքի վրա, այսինքն, մի կողմ թողնելով դաւանական հարցերը, աչքի առաջ ունենալ այն մեծ իրողութիւնը, որ հայերը, ինչ եկեղեցու էլ պատկանեն, եղբայրներ են իրար հետ. մինչդեռ լուսաւորչականները (օր. Մամուրեան, Աղաբէկեան և կաթօլիկութիւնից վերադարձած Շիշմանեան) խստութեամբ զինվեցին կաթօլիկութեան դէմ, իրանց ուսուցիչ Մխիթարեանների դէմ և հայոց եկեղեցին հրատարակեցին ազգութեան ամենագլխաւոր հիւժք: Եկեղեցական ազգայնութեան ասկեզարն էր. մեր ազգասէրները օտարադաւան հայերի համար փրկութեան մի միակ ճանապարհ դիտէին—վերադարձ մայրենի եկեղեցու ծոցը:

Կարգալով Մարկոս Աղաբէկեանի երկար ու ձիգ յօդուածները, մանաւանդ «Կոռունկի» առաջին տարում տպւածները, դուք հաղիւ էք կարողանում չը մտանալ, որ զրոյը եկեղեցու պաշտօնեայ չէ, այլ մի աշխարհական մարդ է: Աղաբէկեանը յայտարարեց հայոց ազգը մի «կրօնական ընկերութիւն»: Լուսաւորութիւնը, դաստիարակութիւնը, առաջա-

դիմութիւնը նա միայն հոգևորականներէց էր սպասում և անդադար կրկնում էր որ այդ միջոցից դուրս չը կայ փրկութիւն: Հայը իր անևիկքը իմանալու, իր առջևի ճանապարհը ճանաչելու համար միշտ պիտի յետնայէ, աչք չը վերցնէ իր նախնիքներէց, դաստիարակական առաջնորդ ընտրէ նրանց և ոչ ուրիշ մէկին: Բաւական է, ասում էր նա, մի լաւ եկեղեցական պատմութիւն, քաւական է որ ներկայի հայը շատ մօտիկուց ճանաչէ իր հին հայրապետներին, իշխաններին, եպիսկոպոսներին, վարդապետներին ու սըրբերին, և նրան այլևս անելու շատ բան չէ մնում: Իր դաւանանքը նա խտացնում էր հետեևալ տողերի մէջ.

Ըստ իմ կարծեաց, ճշմարիտ Հայ քրիստոնեայն նա է, որ իր նախնեաց հաւատոյ հողին ունի և իր բարրն ու վարրն էլ ըստ այն հողոյն է ուղղել: Այս հողին մի հայ մարդ չի կարող ստանալ այսօր մեր մէջ, մինչև որ մեր նախնիքը քաջ չճանաչէ, չզգայ թէ նրանք ինչպէս քրիստոնեայ էին և այս միայն մի խորին հայկական ուսմամբ և կրթութեամբ կըլինի. մի լուսաւոր մտքով և ոչ Մխիթարեանց ձեռքով նրանց գրքերը կարգալով Հայանալ\*):

«Կոռունկը» ազգեցութիւն ունեցաւ. նա ասելի շատ էր կարգացվում, քան նոյն իսկ

\*) «Կոռունկ», 1862, եր. 889:



«Հիւսիսափայլը», մանաւանդ շատ էր տարածված նա թիֆլիսից դուրս, զաւառներում և առաջին տարին ունէր 440 բաժանորդ: Եկեղեցական ազգասիրութիւնը նրա մէջ հասաւ իր ամենամեծ զարգացման: Աղաբէկեանը բողոքող չէր, ընդհակառակն, դիմադրում էր բողոքողներին, օրինակ, «Հիւսիսափայլին»: Նա անխնայ դատափետող չէր, այլ դրուատող, երգող, լացող, աղաչող: Ապրելով պատմական անցեալով և ուրիշներին էլ խրատելով այդպէս ապրել, «Կոռնիկը» մեր հնութիւնից դուրս էր բերում միայն փառք ու պարծանք. նրա համար չը կար մի այլ ազգ, որ հայի շափ իրաւունք ունենար պարծենալու իր նահատակութիւններով, իր եկեղեցով: Չը կայ մեր ազգի պատմական կեանքի մէջ ընդհանուր ազգային պակասութիւն. կան միայն դաւաճաններ: Ներկայի դժբախտութիւններն ու ցաւերը առաջացել են նրբանից, որ չը կայ հայերի մէջ սէր, միարանութիւն, որ հոգևորականները կրթված չեն: Ազգային միաբանութեան համար պէտք է թողնել կուսակցութիւնները, հակառակութիւնները: Ի՞նչ դադարարական կոիւներ, ի՞նչ անհամաձայնութիւններ են հարկաւոր, երբ կայ մի միակ ճշմարտութիւնը—եկեղեցին իբրև մատակարարող ազգային-բարոյա-

կան լուսաւորութեան: Մի սերտ միաւորութիւն ժողովրդի և հոգևորականութեան մէջ, միաւորութիւն՝ պատմութեան հովանու տակ, և հայութիւնը երջանիկ էլ կը լինի, առաջադէմ էլ:

Հեշտ է եզրակացնել թէ որքան մեծ էր տարբերութիւնը «Կոռնիկը» կրօնական-ազգայնամոլական ուղղութեան և «Հիւսիսափայլի» վերանորոգչական-հանրամարդկային իդէալների մէջ, իբրև ազգասիրական օրգան, «Կոռնիկը» մեղանում հանդիսանում էր Մեսրոպ Թաղեաղեանցի «Աղապէր» շարաթաթերթի\*) ուղղակի ժառանգ: Կովկասի սահմաններից դուրս ինքնագոհ, երգող, ողբացող ազգասիրութիւնը ունէր մի ամբողջ մամուլ, այսպէս էր «Արծիւ Վասպուրականին», այսպէս էր «Արշալոյս Արարատեանը»: Ռուսահայերի մէջ «Մեղուն», «Ճառքաղը», «Մասեաց Աղանին» էին նոյն դերը կատարում: Բայց պէտք է խոստովանել որ «Կոռնիկը» այդ օրգաններից ոչ մէկի նման չէր, նա մի քանի քայլ առաջ էր գնացել: Դա պահպանողականութեան նոր սերունդն էր, որ չէր վախում եւրոպական լոյսից, առաջադիմութիւն:

\*) Կալիթա, 1846—1851:



էր կանչուամ, սակայն մի առաջադիմութիւն, որ յարմարեցրամ է հայ ազգի հանդամանքներին, աւանդութիւններին: Մենք պէտք է շեշտենք «Կոռւնկի» և մի այլ յատկութիւնը, իր միւս զասակիցների նման նա չէր վարակված մի կոյր թշնամութեամբ նազարեանցի և նրա «Հիւսիսափայլի» դէմ. իր ամբողջ ոյժով հակառակվելով նազարեանցին եկեղեցական վերանորոգութիւնների հարցում, «Կոռւնկը» ընդունում էր և այն, որ նազարեանցը յարգանքի և երախտագիտութեան արժանի գործիչ է: Առհասարակ, Թիֆլիսի առաջին հայ ամսագիրը բռնում էր մի տեսակ միջին տեղ առաջադէմ և սահմանողական կուսակցութիւններին մէջ: Այսպէս են ստում մեզանում: Մենք կը համաձայնվէինք այս կարծիքի հետ, եթէ նրա վրա աւելացընվէր անպատճառ և այն, որ մէջ տեղ կանդնած ամսագիրը, իրրե միշտ գէպի յետ նացող, աւելի սիրում էր ետևում կանդնածներին, յետադիմականներին, աւելի դրանց հետ էր հարազատ, համախոհ և սրտակից:

Աղարէկեանի ուղղութեան աջողութիւնը հասկանալու համար մենք պէտք է անպատճառ նկատի ունենանք և այն խոշոր հանդամանքը, որ Թիֆլիսում նա դատու պատրաստ հող: Եւ հող պատրաստողը ներսիսեան զըպ-

րոցի այն շրջանն էր, որ յայտնի է «Շանչեանի դար» անունով: Այդ դարը նոր էր աւարտվում, երբ երեաց «Կոռւնկը»: Սկսվել էր նա դեռ ներսէս կաթողիկոսի օրով, 1852 թւականից: Պետրոս Շանչեանը, մի կրթված, ազնիւ մարդ, բարեկարգեց դպրոցի ուսումնական մասը, հանեց նրան հին մանկավարժական հասկացողութիւնների տիրապետութեան տակից և մօտեցրեց նոր սահանջներին: Շանչեանն էլ ջերմ կրօնասէր մարդ էր. Ռուսաստանում ստացած իր համալսարանական կրթութիւնը (եղել էր բժշկական, իրաւաբանական ֆակուլտետներում) լրացնելու համար գնաց արտասահման և Սօբբօնում լսեց դասախօսութիւններ աստուածաբանութիւնից: Ներսիսեան դպրոցում նա աւանդում էր կրօն իր կազմած դասագրքերով, որոնք յետոյ տպագրվեցին Թիւրքիայում, միակ հայերէն գրքերը, որ հեղինակել է իր կեանքում Շանչեանը: Կրօնական ջերմեռանդութեան հետ դպրոցում ծաղկում էր և հայերէնագիտութիւնը: Այստեղից անսպարդ է, որ ներսիսեան դպրոցի աշակերտները պիտի համակրէին «Կոռւնկի» ուղղութեան: Եւ նրանցից շատերը դարձան «Կրունկի» աշխատակիցներ, արժարժում էին



Աղարէկեանի կրօնական-ազգասիրական հայ-  
կացիները և դաւանութիւնները:

Հետաքրքրական է որ պահպանողական  
հին սերունդը վերաբերվեց իր նոր սերնդին  
այնպէս, ինչպէս վերաբերվում էր «Հիւսի-  
սափայլի» դպրոցին: Հին սերունդը հալա-  
ծանքներ յարուցեց Շանշեանի դէմ, որ  
հէնց նոր, թարմ մարդ լինելու պատճառով  
եկեղեցի քանդող, պրօտեստանտ, հերետիկոս  
էր համարվում: Ինքը, Շանշեանը հոգեոր իշ-  
խանութեան ուղղած իր դիմումներով, իսկ  
նրա աշակերտները մամուլի միջոցով, ինչ-  
պէս նաև կեանքում, կռիւ էին մղում հին  
սերնդի դէմ յանուն ազգային առաջադիմու-  
թեան, բարեկարգ կրթութեան: Այդ հալա-  
ծանքների մէջ հին սերնդի ծայրայեղ լու-  
սավախութիւնն էր երևում: Որ Շանշեանը  
ոչ պրօտեստանտ էր, ոչ էլ հերետիկոս, նոյն  
իսկ այն չափով, ինչ էր հին սերնդի աչքում  
Նաղարեանցը, դրա ամենալաւ ապացոյցը  
այն է, որ 1866-ի կաթողիկոսական ընտրու-  
թիւնների ժամանակ լուրջ զիտակութիւն  
կար Շանշեանին նստեցնել ամենայն հայոց  
կաթողիկոսական աթոռի վրա: Որդիները  
կուում էին հայրերի դէմ, համարելով նրանց  
չափազանց անշարժ, չափազանց հընա-  
ցած ու նախապաշարված: Ահա հնապաշտ,

աւանդապահական ուղղութեան մէջ երևան  
եկած այս առաջադիմութեան ներկայացու-  
ցիչն էր «Կոռնկը»:

«Հիւսիսափայլից» յետոյ դա երկրորդ  
պարբերական հրատարակութիւնն էր ու-  
սահայերի մէջ, որ ունէր խիստ որոշված,  
խիստ աչքի ընկնող գոյն և գրական արժա-  
նաւորութիւնների կողմից էլ բաւական բար-  
ձր էր կանգնած: Եթէ «Հիւսիսափայլը» եւ-  
րօպական մտքով առաջադիմական շարժման  
դպրոցը հաստատեց մեղանում, «Կոռնկն» էլ  
թթու ազգայնամոլութեան, եկեղեցասիրա-  
կան—պահպանողական մտածութեան ամե-  
նահռոմեոսն արտայայտիչը դարձաւ: Եւ այս  
բանը Աղարէկեանին աջողվեց մի համեմա-  
տարար կարճ միջոցում, այն է՝ երեք տար-  
վայ ընթացքում: Նայելով այդ աջողութեան,  
նայելով համակրողների բազմութեան, պէտք  
էր ենթադրել թէ ազգայնական ուղղութեան  
հետևող ամսագրի դրութիւնը միանգամայն  
սպահովված պիտի լինի ժողովրդի գիտակ-  
ցական վերաբերմունքով:

Բայց այդպէս չէր դրութիւնը և մենք շատ  
հետաքրքրական բաներ ենք իմանում այն  
խոստովանութիւնից, որ հրասպարակ բերեց  
«Կոռնկի» հրատարակիչ Համբարձում Էն-  
ֆրաճեանը 1862-ի սեպտեմբերին: Աւանդ,



ջերմ, գրուատող, շոյող հայրենասիրութիւնն էլ չէր կարողանում փրկել մամուլը հասարակութեան գերեզմանային անտարբերութիւնից: Հրատարակիչը երեք տարվայ ընթացքում մեծ վնասներ էր արել: Եւ ինչ գառն, բայց ճիշտ եզրակացութիւնների էր հասել այդ միջոցում:

Ցաւելով պէտք է խոստովանենք թէ մեր եւ մեր պաշտօնակիցներու կողմանէ—ասում է նա—որ այժմս Բուսաստանի մէջ սկսուած եւ շարունակուած ազգային շրջանաւոր հանդէսները ո՛չ ազդի գիտակցութեան եւ նորա աննահանջի բաղձանքներու ծնունդներն են եւ ո՛չ նոցա կեանքը պահպանելու չափ, չեմ ասում քանի մի հազար, այլ թէ քանի մի հարիւր կարեկից ընթերցողներ են գտնուում: Այս ճշմարտութեան դառն փորձը առանք մենք ինքնին այս երեք տարուայ միջոցումը եւ նոյնը նկատեցինք մեր պաշտօնակից միւս հրատարակութեանց վերայ: Մինչդեռ ուրիշ ազգաց մէջ օրացիր պահպանելու համար քանի մի հազար բաժանորդը հազիւ բաւական են համարուում, մենք հայերէն հրատարակութեան ձեռնարկողներս հազիւ թէ երկու կամ երեք հարիւրից աւելի ունեցել ենք, եւ որ արժանին է ուշադրութեան, այս չնչին թիւն անկամ մեզ կարելի է եղել ձեռք բերել բարեկամաց եւ սակաւամիւ բարենախանձ համազգի եղբարց միջնորդութեամբ: Թող ներուի մեզ պարզաբար ասել, որ ազգային օրագրերու բաժանորդագրութիւնը մինչեւ օրս հրատարակչաց կողմանէ առաւել մուրացկանութեան

է նմանել, քան թէ մի ինքնայօժար եւ փոխադարձ առեւտուրի:

Այս սղորմելի գրութիւնը հարկադրում է հրատարակչին ամսագիրը ամբողջովին յանձնել խմբագիր Աղաբէկեանին, ինքը մնալով լսկ սեփականատէր: Թողնելով «Կուռնիկը», Էնֆիաճեանը մի այլ հրատարակչական ձեռնարկութիւն է սկսում: Մանդինեան քահանայի «Մեղուն» հոգեվարժի մէջ էր. խմբագիրը խնդրում էր ազգասէրներին ազատել իրան ծանր բեռից, որովհետեւ բաժանորդներ չը կան, ազգը այլ եւ չէ պահպանում ազգային լրագիրը, մինչև իսկ չի ուզում վրձարել անցեալ տարիներից մնացած ապառիկները: Էնֆիաճեանը, չը կամենալով որ կորչի լրագրի իրաւունքը, ձեռք է բերում «Մեղուն» և Մանդինեան քահանան հեռանում է ապարէզից, վերջին անգամ աղաչելով որ իր «նիսիէքը» ուղարկին:

Իր «Կուռնիկով» Համբարձում Էնֆիաճեանը հանդէս էր բերել Մարկոս Աղաբէկեանին: Այժմ վերանորոգված «Մեղունով» նա հասարակութեան առաջ էր հանում մի նոր մարդու, որ մինչև այդ անյայտ էր: Այդ նոր մարդը Պետրոս Սիմէօնեանցն էր, նոր-նախիջեանցի, որ եղել էր Դօրպատի համալսա-



բանում, բայց չը վերջացնելով ուսումը, եկել էր Թիֆլիս և ուսուցչութեամբ էր պարապում: Սիմէօնեանցը յանձն առաւ խմբագրի պաշտօնը. մշտական աշխատակիցներ էին Ստեփան Պալասանեան և Գէորգ Տէր-Աղէքսանդրեան: Այս նոր սյօքերով «Մեղուն» սկսեց հրատարակվել 1863 թւականից: Ի՞նչ էին բերում այդ նորերը:

Սուանձնապէս աչքի ընկնող ոչ մի բան 1862-ի վերջում տպված մի յայտարարութեամբ հրատարակիչ Էնֆիաճեանը բացատրում էր ընթերցող հասարակութեան թէ ինչ պիտի լինի վերանորոգված «Մեղուն»: Մի հատ դաւանանք ունէր խմբագրութիւնը, այն էլ փոխ առած Ստեփանոս Նաղարեանից: Դա այն էր թէ հայերի կոչումն է դառնալ միջնորդ եւրօպական քաղաքակրթութեան և ասիական խաւարում նստած ազգերի մէջ. մի կոչում, որ պարտք է դնում հայերի վրա կատարելագործվել, կրթվել և զարգանալ: «Մեղուն» ուղում էր ծառայել այդ գործին: Բայց ի՞նչպէս, ի՞նչ ուղղութիւն, ի՞նչ գոյն պիտի ունենար: Այդ մասին նոր խմբագրութիւնը չէր կարողանում մի որոշ բան ասել: Յայտարարութիւնն էլ վկայում էր որ վերանորոգվածը նոյն «Մեղուն» պիտի

լինի, բայց մի քիչ բարեփոխված: Ահա ինչ էր ասում նա.

«Մեղու Հայաստանի» րագրոյն բովանդակութիւնը (programma) եւ չափը թէպէտ եւ մնում է միեւնոյնը, բայց նիւթերու ընտրութիւնը եւ առհասարակ նրա ներքին ուղղութիւնը նոր հրատարակչի, նոր խմբագրի եւ նոր աշխատակցաց ազդեցութեան տակ ընկնելով, անտարակոյս մի նոր եղանակաւ ներկայացնելու է գալ տարի ընթերցասիրաց առաջնէ: Կս մասին մեր կողմանէ հէնց ըսկզբից որ եւ իցէ խոստմունքներ յառաջ բերել անկորդ ենք համարում եւ թողնում ենք, որ հայ կարողացողները ժամանակին իրանք դնանաւեն էս հանդիսի անկի կամ պակաս արժանաւորութիւնը:

«Մեղուի» ծրագիրը երեք մաս ունէր. «Քաղաքական, Բանասիրական, Զբօսարան»: Մի կարող և ընդունակ խմբագիր այս նեղ սահմանների մէջ էլ բաւական գործ կարող էր կատարել: Բայց «Մեղուն» մի երեւոյթ չէր մեղանում, գոնէ «Կոունկի» պէս երկույթ: Ունենալով քաղաքական-հասարակական մի օրգանի անհրաժեշտ հանգամանքները, նա շատ հեռու մնաց այդպիսի օրգան լինելուց. ղեկավարելու, հոսանք ստեղծելու ընդունակութիւն նա ցոյց չը տուեց: Համոզմունքներով, հայեացքներով դա «Կոունկի» ևտեից քարշ ընկնող մի արբանեակ էր, ու-



բեմն պահպանողական բանակի նոր սերունդից էր:

Նոր խմբազիրը, իբրև բարձրագոյն դպրոցում եղած մի մարդ, չէր կարող թիֆլիսի իրականութեան մէջ աչքի չընկնել նրանով, որ մի քանի հարցերի վերաբերմամբ նոր հայեացքների էր հետևում: Այսպէս, նա գործում էր հին աղայական դասակարգի դէմ կուռղ կուսակցութեան մէջ. Ջալալեան և Կրիստոպոսի և Թայիրեանի կուսակցութեան հակառակորդն էր նա և ժողովրդական սկզբունքի պաշտպան: «Հիւսիսափայլի» համակրողն էր, բայց երբէք չը կարողացաւ նրա համարձակ, որոշ գոյն ունեցող հրապարակախօսութեան նմանվել: Պ. Սիմէօնեանցը բացի հրապարակախօսական յօդուածներից ոչինչ չէր գրում. բայց նրա հրապարակախօսութիւնը վերին աստիճանի թոյլ էր, ջրալի: Նա չէր կարողանում սլարդ ու կարուկ կերպով պահանջներ դնել, վրդովել, յուզել ընթերցողին: Լինելով մի նոր ու թարմ մարդ, որ մասնում էր մամուլի ասպարէզը մի այնպիսի ժամանակ, երբ հասարակութիւնը քնած էր, երբ նրան կարող էր ցնցել իւրաքանչիւր ուժեղ հարուած, Սիմէօնեանցը հէնց առաջին քայլերից չը կարողացաւ հետք թողնել, փոքր ի շատէ նկատելի ակօս անցկա-

ցնել: Նա կոչվածներից չէր, չունէր պաշար, չունէր խօսքով բորբոքելու երկնային շնորհքը:

Եւ «Մեղուն» կենդանանալ չէր կարողանում: Մանդինեան քահանայի և նրա յաջորդի մէջ տարբերութիւնը այնքան քիչ նկատելի էր, որ հազիւ թէ կարելի լինի երկար խօսել դրա մասին: Մի բան ճիշտ է. վերանորոգված «Մեղու» մէջ չէին երևում Մանդինեանի ժամանակների թոյլ, երկխայական, ծիծաղաշարժ յօդուածներն ու ստանաւորները: Բայց բաւական էր այդքանը: Մի լրագրի հոգին կեանքն է, հրապարակախօսութիւնն է. իսկ Սիմէօնեանցի յօդուածներում հոգի չը կար: Դրանք պաշտօնական, սառն, երկարաբանութեամբ ձանձրացնող քարոզներ էին: Եւ ինչպէս քարոզչի կոչում չունեցող, բայց անպատճառ քարոզիչ դառնալ կամեցող քահանան կամ վարդապետը ունի իր համար մի միանման ձև, որով դիմում է «օրհնեալ ժողովրդին», այնպէս էլ Պ. Սիմէօնեանցը անշափ սիրում էր դուրս գալ իր լրագրի էջերում՝ «յայտնի է ամենքին», «բազմիցս կրկնել ենք», կամ՝ «քանիցս մենք պատիւ ենք ունեցել յայտնելու պատուելի հասարակութեանը» [խօսքերով\*]:

\*) Պայ և աւելի լաւը.— «Թէ «Մեղուն» և թէ «Պունի».



Առաջին տարվայ ընթացքում վերանորոգված «Մեղուի» մէջ մի առանձին բացառութիւն կարելի է համարել Պալասանեանի գրական-քննադատական յօդուածները, որոնց մէջ երևում է հեղինակի զարգացումը, քննադատական ընդունակութիւնը: Բայց այդ յօդուածները երկրորդ տարուց սկսեցին չերևալ «Մեղուի» մէջ և լրագիրը այլևս աչքի ընկնող գրական ոյժեր չունէր: Խմբագրի դատողութիւնները պտտում են օդի մէջ, վերացական բնաւորութիւն ունեն, կեսանքի երեսօթների վրա չեն հիմնված, ամեն ինչ գրվում էր այնպէս, որ կրքեր չը յարուցվեն, որ հարուածը խիստ ընդհանուր բնաւորութիւն ունենայ, չը ցաւեցնէ:

Մշտական բաժիններից ամենահարուստը քաղաքականն էր: Եւ սա հասկանալի է.— այդտեղ աշխատանքը ևւրօղական և ուս լրագիրներից քաղած կտորների թարգմանութիւնն է: Բայց չէ կարելի ասել թէ նոր խմբագրութիւնը այդ կողմից մի առանձին երախտիք ունենայ իր ընթերցողների առաջ. քաղաքական բաժին ունէր և Մանդինեանի «Մեղուն» և այդ բաժինը անհամեմատ հա-

լրագիրը (?) քանիցս անգամ պատիւ ունեցան հրատարակու իրանց թերթերի մէջ...» (1863, № 21):

րուստ էր 1861 թւականին, երբ լրագրի զլիւաւոր աշխատակիցը Միքայէլ Պատկանեանն էր: «Ազգային» կոչված բաժինը արդէն խմբագրութեան ամբողջ անկարողութիւնն է պատկերացնում: Այդտեղ նիւթերը, բացի խմբագրութեան դատողութիւններից և Կ. Պօլսի հայ լրագիրներից վերցրած արտատպութիւններից, համարեա միմիայն ևկեղեցիների, դպրոցների գրամական հաշիւներն են. զնալով «Մեղուն» ճառերի անզուսպ սիրահար դարձաւ և լցնում էր իր էջերը զանազան հանդէսների և թագումների ժամանակ արտասանած երկար ու անհամ ճառերով:

Բնորոշ է որ հէնց առաջին տարում «Մեղուի» նոր խմբագրութիւնը ընդհարվեց հասարակական պահանջների հետ և չը դիտէր թէ ինչպէս տանէ դործը որ լաւ լինի: «Բարի Խորհուրդ» յօդուածի մէջ \*) խմբագրութիւնը պատմում է այսպիսի բան.

Այսպէս անն շատ անգամ պատահել է եւ Մեղուի խմբագրութեանը լսել զանազան բարի խորհուրդներ, որոնք բոլորովին միմեանց հակառակ լինելով, չէ դիտացել թէ որը նրանցից աւելի ընդունէ ու նրամով վարուի, որ աւելի կարողանայ հասնել իր նպատակին, այն է ընթերցողներին օգտաւէտ

\*) 1863, № 17:



լինել, տալով նրանց այն կերակուրը, որն որ նորա հասկացողութեան ու պահանջողութեան համեմատ լինի, ուստի եւ մարտական ու սննդարար: Ահա պատմենք այս զանազան խորհուրդները, որոնք խղճուկ Մեղուն մի քանի ժամի մէջ այլ եւ այլ բարենպատակ եւ բարեկամ անձինքներից միջոց է ունենում լսելու: Մեր պատմելու դիտաւորութիւնը այն է, որ յետոյ զառնանք բոլոր ընթերցողներին եւ խնդրենք որ ամենքն էլ յայտենն իրանց միտքը, որ մենք էլ նոցա համեմատ վարվենք, տալով նոցա այն, ինչ որ իրանք կը պահանջեն մեզանից. տանք այն հարկը, որն որ պարտականութիւնը կ'պահանջէ, յիշելով Աւետարանի՝ տուք զկայսերն կայսեր եւ զԱստուծոյն Աստուծոյ խօսքերը:

Այս դիմումը ընթերցողին, այս հարցումը թէ ինչ կը կամենաք եւ ինչպէս կը կամենաք, արդէն ապացոյց է որ խմբադիրը չունէր իր սեփական որոշ գաղափարը իր ստանձնած պաշտօնի մասին: Նա ինքը չը պիտի ղեկավարէր ընթերցողին, այլ, ընդհակառակը, ընթերցողը պիտի ղեկավարէր նրան, պիտի ծրագիրը սար նրան: Բայց կարող էր տեղի ունենալ ընթերցողների պլէբիսցիտ, կարող էր կայանալ մի համայնական վճիռ, որ որոշէր թէ Պետրոս Սիմէօնեանցի «Մեղուն» ինչ պիտի անէ որ օգտաւէտ լինի: Այս պիտի հարցերը ընթերցողը չէ վճռում, այլ հասարակական օրգանի ղեկավարը, եթէ նա

ունի կոչում, տաղանդ, ժամանակի եւ ժողովրդի հանգամանքների մէջ թափանցելու ընդունակութիւն: Եւ պատահեց այն, ինչ պէտք է պատահէր: Հայ ընթերցողը ոչ ինչ չասաց եւ «Մեղուն» շարունակեց գնալ այնպէս, ինչպէս սկսել էր: Խմբագրութիւնը ընդունակութիւն էլ չունէր բաւարարութիւն տալու ընթերցողի պահանջներին: Ահա մէկը Մօսկվայից գրում է որ ցանկալի է տեսնել «Մեղուի» մէջ թղթակցութիւններ գաւառներից: Ինքը, Սիմէօնեանցը, չը հասկացաւ այդ անհրաժեշտութիւնը եւ նրան ցոյց տուին: Բայց ինչ արաւ նա: Տպագրեց այդ նամակը, իր կողմից աւելացրեց թէ ինքն էլ շատ լաւ հասկանում է որ թղթակցութիւնները շատ են հարկաւոր: Աստուած ողորմած է, դրանք էլ կը լինեն: Եւ «Մեղուի» մէջ այնուհետեւ, տարիների ընթացքում, եթէ մի մի պատահում էլ էին թղթակցութիւններ, դրանք համարեա միմիայն «աղգային» նիւթ էին պարունակում: դպրոցական այս ինչ տօնը, այս ինչ առաջնորդի կատարած հանդէսը, արտասանած ճառը եւ այլն: Ժողովուրդ չը կար, որովհետեւ լրագիրը չէր առաջացնում ժողովրդի կեանքը ուսումնասիրելու պահանջ, չէր տալիս ծրագիր թղթակցներին, մտքեր չէր շարժում:



Անտարբերութիւնը այսպիսի հանգամանքների մէջ մի բնական երևոյթ է: «Մեղուն» ճիշտ որ «խղճուկ» էր, ինչպէս անուանում էր նրան խմբագիրը: Հրատարակիչ Էնֆիաճեանցի շեշտած այն իրողութիւնը թէ մուրացկանութեան պէս մի բան է ամսագիր կամ լրագիր հրատարակելը՝ զուտ ճշմարտութիւն էր և «Մեղուի» վերաբերմամբ: Նոր խմբագրութեան երկրորդ տարին, այն է 1864-ին, լրագիրն ունէր ընդամենը 237 բաժանորդ, որոնցից միայն 183 հոգի էին վճարել բաժանորդագրինը: Յաջորդ տարին աւելի է ընկնում լրագրի նիւթականը: Այս անգամ «Մեղուն» ունի 270 անուանական բաժանորդ, բայց փող վճարողների թիւը իջնում է 150-ի: Խմբագրութիւնը մուտք ունեցել է 1000 բուբլի, ծախս 1250 բուբլի:

Ոչինչ չէր օգնում, թէև գործադրվում էին մուրացկանութեան բոլոր միջոցները: Խմբագրութիւնը իր թերթը ուղարկում էր և այնպիսի մարդկանց, որոնք բաժանորդ չէին գրվում, երևի այն յոյսով թէ այդ մարդիկ կը խղճահարվեն և դոնէ ամաչելուց բաժանորդ կը գրվեն: Բայց դոնէ դուռն ընկած անպատիւ հայ լրագիրը ոչ խղճահարութիւն, ոչ հետաքրքրութիւն էր զարթեցնում. և մարդիկ, երկու կամ երեք ամիս «Մեղուն»

այդպէս ճրի ստանալուց յետոյ, սկսում էին յետ դարձնել համարները և յայտնում էին թէ էլ չեն կամենում ստանալ<sup>\*)</sup>:

Խմբագրութիւնը աշխատում էր հասկանալ այդ երևոյթի պատճառները և ամեն յարմար ղէպքում յայտնում էր թէ պատճառը մի է—այն, որ «Մեղուն» խայթում է, այսինքն որ թշնամութիւն կայ, հակառակութիւն կայ «Մեղուի» դէմ: Մենք աւելորդ չենք համարում բերել այստեղ այդ բացատրութիւններից մէկը, որ տպից 1864 թւականի վերջում:

Գիտեմ, —ասում է խմբագիրը—պէտք է հարցնեն թէ բաս ինչու Մեղուն ինքն էլ չէ սատակում, երբ խայթում է, որ յատկական է մեղուների բնատրուծեանը: Մենք կը պատասխանենք, որ այս հասարակ Մեղուններից չէ, սա Հայաստանի Մեղուն է. որն որ հեշտ սատկելու ասրանք չէ, թէև խիստ շատերը կան, որոնք կ'համաձայնէին նորա թաղման ծախան էլ իրանց վերայ առնելու ու ճոխ դաղաղ էլ շինել կ'ոտային նորա համար, եթէ միայն նա կամենար փոխիլ առ հարս. բայց մենք կ'ասենք, որ Մեղուն ի միսիթարուծիւն այսպիսի բարեկամաց աւելի աշխուժութեամբ պէտք է վարէ իր կեանքը, որի համար շատ բան հարկաւոր չէ, հերթ է մի բանի ծաղիկների հիւծն էլ. բայց Աստուծոյ ողորմութեամբ

\*) 1865, № 11:



Հայաստանը, չնայելով իր աւեր եւ խոպանացեալ լինելուն, դեռ եւս ունի այնքան ծաղիկներ, որ կարողանայ կերակրել իր մէկ Մեղունին, որ սա սովամահ չմեռնի: Թող ուրեմն նորա յիշեալ բարեկամները խնդան միայն նորա վերայ, որ Մեղուն դեռ միայն սովից չէ սատակում, բայց կաղզուրել ու զօրանալ էլ չէ կարող: միայն Թող յիշեն նորա այն էլ, որ օր աւուր ծաղիկների թիւն էլ աւելանում է, ուստի եւ նոցա այս ուրախութիւնն էլ շատ կարճատեւ կ'լինի. ու այն ժամանակ Մեղուն նոցա յուղարկաւորութեան համար ներդաշնակ ու քաղցր բզրոցներ կ'հանէ: «յիշատակ արդարոց օրհնութեամբ եղիցի» ասելով:

Սա միևնոյն ժամանակ մի նմուշ է Պետրոս Միմէօնեանցի հրապարակախօսութիւնից: Ո՞ւմ վրա ազդէր, ինչպէս ազդէր այսպիսի լեզուն, այսպիսի խօսակցութիւնը: Եւ դեռ կարծում էին թէ «սովամահ սատակելու» դրութեան հասնելու պատճառը այսպիսի ստիպիչութիւնն ու անհամութիւնը չէ, այլ այն, որ «Մեղուն» շատերին է խայթում:

Ճիշտ է, Հայաստանի Մեղուն առանց խայթի չէր: Բայց ամբողջ հարցը նրա մէջ է, թէ արդեօք նրա խայթոյները համո՞ւմ էին նպատակին, ցաւեցնո՞ւմ էին շատերին թէ ոչ: Կարգալով նրա հրապարակախօսական յօդուածները, մենք չենք զգում խայթոց, թէև տեսնում ենք տեղ-տեղ բաւական

խօսութիւն: Միմէօնեանցը առաջին տարիներում գիտէր խօսել առաջադիմութեան անունից, գիտէր եթէ ոչ իսկական պատերազմ, զոնէ զրա նամանութիւնն ունեցող մի բան մղել հնապաշտութեան, անշարժութեան դէմ: Բայց այդ բոլոր շարժողութիւնների, ջանքերի մէջ «Մեղուն» մնում էր «Մեղու», այսինքն թոյլ, տարուբերվող, անհաստատ: Եթէ նա մի որեէ ազդային պակասութիւն էր երևան հանում, միևնոյն ժամանակ իր պարօքն էր համարում աւելացնել թէ այդ պակասութիւնը յատուկ է ուրիշ ազդերին էլ: Եթէ մի մի յարձակվում էր ազաների վրա, միևնոյն ժամանակ աշխատում էր թուլացնել այդ յարձակման նշանակութիւնը, աւելացնելով, թէ, ի հարկէ, բոլոր ազաները չեն վատ և իր ասածները ամենքին չեն վերաբերվում: «Մեղուն» դժգոհութիւններ յայտնել դիտէր, բայց անուններ տալ, փաստեր վերլուծել, շարիքը իր իսկական անունով ներկայացնել չը գիտէր: Ամեն ինչ փրօված ու տարածված էր օդի մէջ, խարխալվում էր անորոշութեան մէջ, վերացական էր, ընդհանուր բառեր:

Փոքր ի շատէ՛ աջող, բաւարարութիւն տուող յօդուածներից մենք, նմուշի համար, վերցնում ենք մէկը: Շատ քիչ են այն դէպ-



քերը, երբ «Մեղուն» պարզ ու կտրուկ ոճով արտայայտած լինի իր դաւանանքը: Բայց մենք առանձին ուշադրութիւն դարձնում ենք այդ յօդուածի վրա այն պատճառով, որ «Մեղուն» այդտեղ շատ ճիշտ նկարել է իր սեփական պատկերը, իր սամբոզի սպազանս: «Մի քանի խօսք» է այդ յօդուածի վերնագիրը \*): Խօսքը առաջագէձ և յետագէձ կուսակցութիւնների մասին է:

Այս հակառակ կուսակցութիւնքը—ասում է «Մեղուն»—իւրաքանչիւր ազգի մէջ ծագում են այն ժամանակ, երբ նորա մի մասը յառաջադիմութեան ճանապարհի վերայ կանգնելով սկսում է առաջ երթալ ու իր հետ կամենում է տանել թուլամորթ եւ ծանրաշարժ եղբարց էլ, որոնք չեն կամենում համաձայնել իրանց սիրած անգործունէութեան եւ անշարժութեան փիճակը թողնելու: Սրանից ծագում է կոիւր երկու կուսակցութեանց մէջ, որ միշտ վերջինների անկումովն է վերջանում: Այստեղ յառաջադէմները յարձակողական փիճակի մէջ են, իսկ անբարեմիտները կամ անշարժները պահպանողական փիճակ են պահում: Յառաջադէմների գեղեցիկ ճակատների վերայ գրած են ողեւորող լուսաւորութիւն, գիտութիւն, մարդութիւն, մշտնադիտ քրիստոնէութիւն եւ պարզութիւն սուրբ խօսքերը: Իսկ յետադէմների հին ու փոշիով ծածկած կերպարանների վերայ գրած են. խաւար, մոլութիւն, քու-

թիւն, խարդախութիւն, կեղծ կրօնասիրութիւն եւ ազգասիրութիւն: Այս վերջինները դէմ յանդիման կանոնաւոր պատերազմ տալու կարողութիւն չունենալով գործ են դնում ամեն անազնիւ միջոցներ իրանց պիտոյեաններուն ճնշելու համար, միայն նոցա ջանքերն էլ ի զուր են եւ իրանց գործ դրած չարիքը իրանց զլխին պէտք է հաւաքունեն: Նոցա զըլխաւոր ղէնքերն են միշտ քսութիւնը, մատնութիւնը եւ ժողովրդեան կրօնական զգացմանց լարերը, որոնք աշխատում են լարելու յառաջադէմների դէմ: Այսպէս ամեն ազգերի մէջ էլ, երբ հինքը կամենում էին հալածել յառաջադիմութեան եւ լուսաւորութեան զաւակներուն, աշխատում էին դնել սոցա վերայ անհարազատութեան կնիքը դէպի իրանց եկեղեցին: Բնականաբար այս երեւոյթը երեւեցաւ եւ մերերի մէջ: Սկզբումն յառաջադէմ երիտասարդները բողոքականութեան անունը ստացան, բայց երբ այս անունը չկարողացաւ հաստատուել նոցա վերայ, հանունը դէս զուրս բերին բարի մարդիկ նեստորականութիւնը եւ կարծեմ վերջապէս մահմեդականութիւնը ու կընաւ կարծեմ վերջապէս մահմեդական առաջ բերելու: Յայտնի բան է, այս ամենն էլ անարժան միջոցներ են՝ արժանի նրանց գործ դնող անարժան մարդոց:

Այս տեսութեան «Մեղուն» նորից վերագրածաւ իր № 41-ի մէջ: Այստեղ էլ շեշտովում են նոյն հանդամանքները:

Արդէն անբաւականութիւնները յետադէմների եւ յառաջադէմների մէջ սկսած են մեր ազգումն էլ որովհետեւ լուսաւորութեան արշալոյսը իր շողքը զընցել է մեր վերայ էլ... Յետադէմները աւելի գործ

\*) 1864, № 38:



են ածում իբրև ղէնք քսութիւնը, բամբասանքը, նենգութիւնը, խորամանկութիւնը, դաւամանութիւնը եւ մատնութիւնը, որոնց մէջ կրթուել են իրանք եւ որոնց առաջնորդութեամբ անցրել են իրանց կեանքի ասպարէզը. բայց եթէ պատահում էլ է երբեմն, որ կարծես աշկարայ հանդէս են կամենում դուրս գալ, այս յուսահատութեան զօրութիւնն է, որ բոլորէպէս ոյժ է տալիս նրանց:

Ո՞ր առաջադէմ, արմատական թերթ կը կարմրէր այս տողերից: Բայց «Մեղուն» իսկական առաջադէմ թերթ չէր: Ո՛չ, հէնց այս իսկ յօգուածների մէջ երեսում են կղերական պաշտամունքի պոչերը: «Մեղուն» գովաբանում էր առաջադիմութիւնը, օրինական և ցանկալի էր համարում պատերազմը առաջադիմութեան և յետադիմութեան մէջ, բայց ինքը նոյն առաջադիմութեան, նոյն պատերազմի ղիճուոր չէր: Ի՞նչպէս բացատրենք այս երևոյթը:

«Մեղուն» դեռ երիտասարդական հասակում էր: Երիտասարդութիւնը սովորաբար լուսասէր է, ունի իր թռիչքները ղէպի առաջ, ունի իր լաւագոյն ողևորութեան բուրգները, երբ լոյսը, ազատութիւնը, ճշմարտութիւնը խօսեցնել են տալիս բարձրաձայն: Կեանքի մէջ անթիւ են այնպիսի անհատներ, որոնք իրանց ծաղիկ հասակում տեսել են

գաղափարական գարուն, բայց մի գարուն, որ կարճատև է եղել, միայն մի քանի ժրպտուն օրերից կաղմկած: Թուել են այդ օրերը, և կուռքերը կործանված են, սրբութիւնը պղծված է, իրէպնների տաճարը անդութ կերպով աւերված:

Այսպէս էր և «Մեղուն»: Երիտասարդական ժամանակի մի քանի հատ աղօտ, առաջադէմ դաւանանքներ—սրանք մի քանի անամպ օրերն են նրա երկարատև կեանքի մէջ: Երկար ապրեց «Մեղուն»: Բայց ինչու համար: Ոչ թէ այդ սակաւաթիւ անամպ օրերի համար, այլ որպէսզի մարմնացնէ ճիշտ և ճիշտ այն իսկ յետադիմութիւնը, որի գէմքը, որի մտաւոր ազդատութիւնը, որի դործածած անազնիւ ղէնքը ճարտար պարզութեամբ նկարագրված են վերև բերած տողերի մէջ: Պետրոս Սիմէօնեանցը մարդարէ էր իր վերաբերմամբ: Հայոց մամուլի ասպարէզում նրան վիճակված չէր ստեղծադրծողի ինքնուրոյն դեր: Կեղծ էր այն դրութիւնը, որ երիտասարդական հասակը տալիս էր նրան, անակնկալ կերպով յատկացնելով նրան առաջադիմութիւնը պաշտպանողի պաշտօն: Իսկական դերը առջնում էր, և այդ դերն էր՝ հանդիսանալ առաջադիմութեան թշնամի, խոչընդոտ: Ահա ժամանակով, երբ Գրիգոր



Արծրունին հրապարակ կը գայ իբրև խմբագիր, մենք կը տեսնենք թէ որպիսի դարմանալի հարադատութեամբ Պետրոս Միմէօնեանցը կը մարմնացնէ իր սեփական ձեռքով դատապարտած յետադիմական տիպը...



Եւ պէտք է նկատենք որ գրական ու հրապարակախօսական տեսակէտից այսքան թոյլ ու խեղճ «Մեղուն» միակ լրագիրն էր, որ մնում էր հրապարակի վրա, Թիֆլիսի պէս մի հայաշատ կենտրոնում:

Մեր պարբերական մամուլը դեռ խանձարուրի մէջ էր գտնվում, այնպէս որ մենք դեռ չէինք կարողանում տարբերութիւն դրնել ամսագրի և լրագրի մէջ: Ամսագիրը ուրիշ պաշտօն ունի, լրագիրը՝ ուրիշ. մեղանում այդ երկու տիպերը խառնված էին. լրագիրը ամսագրական նիւթեր էր տալիս, ամսագիրը — լրագրական: Ահա թէ ինչու մենք նկատի ենք առնում այն հանդամանքը, որ վերանորոգված «Մեղուն» հէնց առաջին տարին ամսագրական մամուլը Թիֆլիսում անկման էր դիմում, հետեաբար և լրագրի համար ասպարէզում ուժեղ մրցակից չը կար:

1863 թւականին «Կոռունկը» այլ ևս առաջվանը չէր: Ազբատ են նիւթերը, Մարկոս

Աղաբէկեանը այլ ևս առաջվայ թեկերը չունի, աղգայնամոլութիւնը բանաստեղծական աղմուկով չէ առաջ տանում: Մնալով մենակ, առանց ապահով հրատարակչի, լոկ բաժանորդների տուածին ապաւինած, «Կոռունկը» քայլ առ քայլ մօտենում է իր հոգեվարքին: Բայց տարվայ սկզբին Աղաբէկեանը կարծես նոր ճանապարհի վրա էր, կարծես ուզում էր խոստովանել իր սեփական մեղքերը:

Լաւ դիտենանք, — ասում էր նա յունվարի համարում, — լաւ դիտենանք որ քանի որ մեր մտաւոր մշակութիւնը ոտանաւորներ, թեթեւ-մեծեւ գրուածքների յառաջ բերելու, վերիվերոյ ճառեր, ներքոյներ յօրինելու եւ այլ չեմ իմանում ինչ տեսակ քամու նման խօսքեր, իմաստներ շարադրելու վրայ կը կայանայ, մեր ուսումնականութիւնը շինովի զարդու կնամանի, եւ հաստատուն բան չի լինի եւ կդառնայ այն զեղեցիկ կանանց նման, որոնց բոլոր սիրունութիւնը մի քանի փողի սնդոյրով է եւ այն երիտասարդաց, որոնց բոլոր դաստիարակութիւնը իրանց արտաքին շորերուն, վայելչութեան եւ արժողութեան մէջն է:

Ճիշտ այսպէս, այն: Երգող, ճառող ազգասիրութիւնը ապաշխարում էր հրապարակով: Բայց այդքանը միայն: Սովորութիւնը ուժեղ է հանդիսանում բարի կամեցողութիւնից. և զբանից յետոյ էլ «Կոռունկը» տալիս է



այն, ինչին սովորել էր, այսինքն ճառեր, ներբողներ և «Թեթև-մեթև» ոտանաւորներ:

Նշանաւոր է, որ «Կոռնիկ» վերաբերմամբ էլ հասարակութիւնը պահանջներ ունէր: Պահանջում էին որ ամսագիրը աւելի պարզ, հանրամատչելի լեզուով խմբագրվի, որպէս-զի հեշտ լինի նրան հասկանալը: Ազարէկեանը խոստանում է կատարել իր ընթերցողներին այդ պահանջը, բայց, հակառակի պէս, 1863-ի «Կոռնիկը» նախընթաց տարիներին էլ դժուարամարս ու քիչ հասկանալի էր. նրա էջերը այժմ լցվում էին սրտամական գրաբար յիշատակարաններով: Այստեղ էլ, ուրեմն, նոյն անկարողութիւնը հասարակութեան մէջ գոյացվող պահանջների առաջ, ինչ տեսանք «Մեղուի» մէջ: Գահավիժումը ճակատագրական էր և «Կոռնիկ» համար: Նա փակում է տարին 260 բաժանորդով, բայց է անում հետեւեալ տարվայ բաժանորդագրութիւնը, բայց 1864-ին չէ հրատարակվում և Ազարէկեանը, թողնելով մի քանի հատ բաժանորդներ, զնում է Պոլիս:

Սակայն «Կոռնիկը» թողնում էր ժառանգութիւն: Նրա աշխատակիցները մօտենում են «Մեղուին», որի ուղղութիւնը արդէն լիովին համապատասխանում էր «Կոռնիկ» ուղղութեան: Այդ ուղղութիւնը ապագայում

ստացաւ մեղուականութիւն բնորոշ անունը, թէև աւելի արդարացի կը լինէր անուանել կռուակականութիւն, քանի որ «Մեղուն» այդ ուղղութեան ստեղծողը չէր մեղանում, այլ միայն աւանդապահը:

«Կոռնիկը» իր խմբագրի հետ բոլորովին շանյայտացաւ մեր գրական հօրիզօնից: 1864-ի յուլիսին հրատարակվեց մի յայտարարութիւն, որ յայտնում էր թէ «Կոռնիկը» պիտի շարունակէ իր գոյութիւնը: Դարձեալ մի նոր մարդ էր հանդէս գալիս: Յայտարարութեան տակ գրված էր ստորագրութիւն. «Սմբագրող-Տնօրինող Կանդիդատ Մոսկվայի Համալսարանի, Ուսուցիչ պատմաբանական գիտութիւնների, Ս. Ստեփանէ»:

Ստեփանոս Ստեփանէ (Ստեփանեան), մի գօրեցի հայ, որի նախնիքները Թիւրքիայից էին գաղթել, նոր էր աւարտել Մոսկվայում իր ուսումը և թիֆլիսում ուսուցչութիւն էր անում: Մոսկվայի հայ ուսանողութեան ամենաեռանդուն անդամներից մէկն էր Ստեփանէն, նա ղեռ համալսարանում եղած ժամանակն էր սկսել գրել հայերէն և նրա ամանակն էր սկսել գրել հայերէն և նրա ամենը մենք տեսնում ենք «Հիւսիսափայլի» մէջ: Կէնց այդ ամսագրի առաջին տարուց (1858), երբ սկսվեց «Կոռնիկ» հրատարակութիւնը, Ստեփանէն սկսեց գրել և այդտեղ,



սպառնալով զլիսաւորապէս ոտանաւորներ, որոնց համար երբեմն գործ էր ածոււմ «Իշխան Բագրատունի» կեղծ անունը \*):

Թիֆլիսում Ստեփանէն ուզում էր նոր ամսագրի իրաւունք ստանալ: Բայց մինչև այդ միտքը իրագործելը նա, Մարկոս Աղաբէկեանի նման, վերցրեց «Կոռնկը». այսինքն նա խմբագիր էր, հրատարակութեան ամբողջ գործը իր վրա էր առնում, իսկ սեփականատէր Էնֆիաճեանցը մնում էր լսկ անուշով հրատարակիչ: Այս պայմանների մէջ Ստեփանէն սկսեց իր գործունէութիւնը և շուտով տեսաւ թէ որքան անյարմար պայմաններ են գրանք, ուստի, այլևս երկար չը սպասելով, սկսեց միջնորդել իր սեփական ամսագիրն ունենալու մասին:

Յայտնի է թէ Ստեփանոս Ստեփանէն (յետոյ Խորէն վարդապետ և վերջը եպիսկոպոս), որքան զարգացած, մանաւանդ որքան եռանդոտ մարդ էր: Վաթսուհական թւա-

\*) Միքայէլ Նալբանդեանցը շատ երիտասարդների համար օրինակ դարձաւ: Սկսեցին նմանվել նրան ոչ միայն գրելու, գաղափարներ արծարծելու մէջ, այլ և կեղծ անուններ հնարելու մէջ: Ստեփանէի «Իշխան Բագրատունին» անշուշտ «Կոմս Էմմանուէլի» ազդեցութեան տակ է կազմվել: «Հայկական Աշխարհը» ունէր մի աշխատակից՝ «Գուրս Մանդակունի» անունով:

կաններին նա երեան է գալիս մեզանում իբրև նոր երից մէկը, որ արդիւնաւոր կերպով գործում է մանկավարժական ասպարէզում, իսկ մամուլի մէջ հանդիսանում է լայն ու լուսաւոր գաղափարների քարոզիչ: Իբրև Մօսկվայի ուսանող և «Հիւսիսափայլի» աշխատակից, նա գտնվում էր Նազարեանցի ազդեցութեան տակ: Այդ ազդեցութիւնը այնքան սաստիկ էր, որ Ստեփանէի առաջին գրուածքներում (օրինակ, 1864-ի յայտարարութեան մէջ) մենք տեսնում ենք Նազարեանցի ոճը, դարձուածքները, նոյն իսկ սիրած բառերը: Դա առաջին մարդն էր, որ փորձում էր «Հիւսիսափայլի» գրական դասընթացը հաստատել Թիֆլիսում, այսինքն մօտեցնել հայկական կեանքին:

Սկզբից եւթ Ստեփանէն կամենում է որևէ կերպով զանազանել իր «Կոռնկը» Աղաբէկեանի «Կոռնկից»: Ամսագրի անունը նա դարձնում է «Կոռնկ Հայկական Աշխարհի (փոխանակ «Հայոց Աշխարհի»), փորձում է հեռացնել այդ անունից «Կոռնկ» անունը, «որովհետեւ,—ասում է նա—կոռնկը թռչունների մէջ յիմարների նշան է», սակայն այդ բանը չաջողվեց: Բայց «Կոռնկ Հայկական Աշխարհի» անունն էլ չը բաւականացրեց Ստեփանէին. լինելով աշխարհաբարի ջերմ



պաշտպան, նա ընդունում էր ուսու յայտնի գրող Կարամզինի ասածը—«Գրիր այնպէս, ինչպէս խօսում ես», ուստի հէնց առաջին համարից սկսեց անուանել իր ամսագիրը «Հայկական Աշխարհի Կոուսկի»: Երկրորդ փոփոխութիւնը, որ նա մտցրեց իր ստանձնած գործի մէջ, բաժանորդագնի էժանացնելըն էր. փոխանակ 8 ըուբլու, նա նշանակեց 5 ըուբլի, բայց միևնոյն ժամանակ ծաւալն էլ փոքրացրեց. այսպէս անում էր որպէսզի ամսագիրը գնի կողմից էլ մատչելի լինի և շատ տարածվի:

Նոր «Կոուսկը» պիտի հրատարակվէր 1864-ի հոկտեմբերից: Բայց հէնց առաջին քայլից Ստեփանէի վրա ծանրանում էր մի պակասութիւն, որ ձակատագրական էր նրա ամբողջ գործունէութեան ընթացքում. դա այն էր, որ ամսագիրը հրատարակվում էր խիստ անկանօն կերպով: Առաջին համարը հոկտեմբերին հրատարակվելու փոխարէն լոյս տեսաւ միայն 1865-ի ապրիլին: Միացրված էին չորս ամսվայ համարները և այնուհետև երկու, երեք ամսվայ համարները միացնելը սովորական բան դարձաւ Ստեփանէի համար:

Առաջին յայտարարութիւնը, որով նոր խմբագիրը ներկայանում էր հասարակութեան, բաւական երկար էր, բայց և որոշ ու

պարզ: Դա նորոգված «Մեղուի» յայտարարութիւնը չէր: Ստեփանէն հէնց առաջին քայլից դրօշակ էր պարզում, որի վրա գրում էր «Միտք և Քննութիւն»: Առաջին յայտարարութիւնը ցոյց է տալիս որ նոր խմբագիրը լաւ տեղեակ է իր սկսած գործին, ունի որոշ աշխարհայեացքներ, որոշ հասկացողութիւն այն կեանքի մասին, ուր նա պիտի գործէր: Հայկական իրականութիւնը նրան ներկայանում է իբրև մի ճահիճ. չը կայ սէր դէպի ընթերցանութիւն, հրապարակի վրա կանգնած է այն տխուր, յուսահատական իրողութիւնը, որ «Թիֆլիսում, որ կամենում է հպարտ մնալ ուրիշ հայաբնակ քաղաքների առաջ միայն հայ բնակչութեան բաղմամբագրութեամբ», անկարելի է հայերէն մի հատիկ ամսագիր աղահօովել: Լաւ տեղեակ լինելով այս իրողութեան, Ստեփանէն, այնուամենայնիւ, յուսով և հաւատով է սկսում իր գործը, որի նպատակն էր «տարածել Հայերի մէջ այն մտքերը և դադարտարները, որոնք, լինելով եւրոպական լուսաւորութեան և քաղաքակրթութեան պտուղներ, կազմում են եւրոպական կեանքի պարծանքը»: Իւրաքանչիւր տետրակի ծաւալը նա նշանակում էր 2—3 թերթ և աւելացնում էր. «Եթէ մի օր ստորագրողների թիւը կը հասնէ 600—700,



մենք խոստանում ենք տալ մեր ստորագրողներին 4—5 թերթեր»։ Ահա ինչ ակնկալութիւն ունէր Ստեփանէն ապագայի համար։

1865-ի ապրիլին, ինչպէս ասացինք, լոյս տեսան «Հայկական Աշխարհի Կռուելի» ամսագրի № 1, 2, 3, 4 մի գրքի մէջ։ Նրա ճակատին դրված էր «Օրագիր Ուսումնական և Գրականական»։ Հետեւելով Նազարեանցի օրինակին, Ստեփանէն էլ ամսագրի իւրաքանչիւր տետրակի վրա դնում էր իր նշանաբանը։ Սկզբում զա պօրտուգալացի հռչակաւոր բանաստեղծ Կամօէնսի «Os Lusíadas» (Ղուսիտանականը) պօէմայից վերցրած հետեւեալ կտորն էր. «Դու կ'տեսնես հայրենիքի սէրը ոչ թէ շարժված անարգ շահասիրութիւնից, բայց բարձր և իբր յաւիտենական»։ Իր ըստանձնած գործի պաշտօնը Ստեփանէն հասկանում էր այսպէս.

Մեր Օրագրի առաջին սրբազան պարտականութիւնը լինելու է մշակել Հայերի առաջնացումեան համար միշտ և անդադար։ Ազգի առաջնացումիւնը կախված է ազգ կազմող մասնաւոր անձերի առաջնացումիւնից։ Մասնաւոր անձերի առաջնացումիւնը կարելի է միայն բարեկարգված ուսումնարանների և գիտումեան միջնորդումեամբ, երբ գիտումեան հետ անպայման դաստիարակվում է, լուսաւորվում է և սիրտը։ Առանց սրտի և հոգու դաստիարակումեան գիտումիւնը չունի գրեթէ

ոչինչ կատարելու ազգի բարոյական փրկումեան համար։ Գիտումիւնը կարելի է տարածել միայն ընթերցանումեամբ։ Ուրեմն մեր օրագիրը աշխատելու է անդադար տարածել ընթերցանումիւնը, այնուհետեւ հնչտ է իրադործել բոլոր մնացածը։ Ընթերցանումիւնից առաջանալու են բարին, ճշմարիտը և գիտումիւնը, երբ սկիզբները, որոնք կազմում են մարդի վերջնակէտ և առանց որոնց մարդս առաւել մօտ է անասնական դրութեան։ Ընթերցանումիւն, ահա առաջին և վերջին խօսք, որ պիտի կրկնէր ամենայն ճշմարիտ հայն իւր ընկերին, եթէ ցանկանում է նա Հայերի բարոյական վերականգնումը, բարոյական փրկումիւնը... Գէպի յիշված խնդիրները—ուսումնարաններ, կրթումիւն և լուսաւորումիւն, ազգումիւն—մենք կ'վերադառնանք միշտ և կ'մերկացնենք ինչ որ փաթածված մնացել է անխմաստումեամբ մինչև այսօր։ Եթէ այս կը հաւանէ մեր սիրելի ընթերցողը, ուրախ ենք, եթէ կը վշտանայ (առանց վիրաւորվելու ամենեւին), առաւել ուրախ։ Եթէ նա վայր կ'ոգէ տետրակը, անարդար կ'վարվի, եթէ կ'հասկանայ—ապա յոյս կայ բարոյական փրկումեան։ Հարկաւոր չէ երբէք մոռանալ մեր ընթերցողին, որ նախընթաց օրի օտարտոի կարծիքները (պարադօկսները) յետագա օրի ճշմարտումիւնների են։

Կարելի է մի օր մեր լապտերի լոյսի առաջ մեր ընթերցողը տեսնէ այն կուռքերի բոլոր անճոռնումիւնը, որոնց նա երկրպագում է այսօր, կարելի է նոյնպէս նվազող սովէրի յետեւից նա նկատէ նորա անմահ ժպիտով ճշմարտումիւնը, Աւետարանի դուստրը, արդարումեան քոյրը։

Այսպէս էր նոր խմբագիրը հասկանում հա-



տարակական կարիքները: Եւ կարող ենք ասել թէ այստեղ չը կայ բէալականութիւն, նուրբ ըմբռնողութիւն: Ուրիշ հարցերը եթէ մի կողմ թողնենք, բաւական կը լինի վերցնել հէնց զխաւոր նպատակը, որ ընթերցանութիւն տարածելն է: Հայը չէր կարգում. — սա ճիշտ որ ամբողջ գեբախտութեան պատճառն էր: Մեծ բարերար, նոյն իսկ հերոս կը լինէր այն մարդը, որ կը կարողանար կոտորել հայի այս յամառ ատելութիւնը գէպի գիրքը: Հայը չէր կարգում. սա մի աննշան, ժամանակաւոր երևոյթ չէր. դեռ Մովսէս Խորենացին իր ժամանակի և իրանից առաջ եղած հայերին յանդիմանում էր որ չը կայ սէր գէպի ուսումնասիրութիւնը, գէպի գիրքը: Ինչո՞ւ էր այսպէս: Հին անընթերցասէր հային ոչ որ չէր հարցնում և մենք չը գիտենք թէ ինչ կարող էր նա պատասխանել: Բայց նոր ժամանակների ընթերցողը ունէր պատասխան և այդ պատասխանը նոյնպէս մի հարց էր. — Ի՞նչ կարգաւ Այս հարցը արդէն լսվում էր Ստեփանէի ժամանակ: Եւ իրաւ ինչ էր տալիս մամուլը, ինչ էր տալիս գրականութիւնը:

Ահա այդ մեծ պահանջը հասկանում է Ստեփանէն: Յոյսերով, աշխատելու պատրաստականութեամբ լի մի զարգացած երի-

տասարդ, նա վստահութեամբ յանձն է առնում ընթերցանութեան նիւթ տալ հայ գրագէտին: Մնում էր որ հասարակութիւնն էլ իր պարտքը ճանաչէր և միջոցներ տար: Բայց հասարակութիւնը միենոյնն էր, ինչ «Հիւսիսափայլի», «Մեղուի», հին «Կուռնկի» վերաբերմամբ: Նոյն այդ առաջին համարում Ստեփանէն հարկադրված էր հետևեալ խոստովանութիւնն անել.

Մենք կարծում էինք, թէ ստորագրողների թիւը հնար կ'տար մեզ աշխատեցնելու մեր գործի զանազան կողմերի վերա ուրիշ գործող ձեռներ եւ ձեռք բերելու զանազան գրողների գեղեցիկ յօդվածներ, վճարելով նոցա, առանձին պայմանով, նոցա արժանաւորութեան համեմատ, բայց ստորագրողների ներկա թիւը այնպիսի է, որ կարողանալու է հազիւ հազ ծածկել խմբագրական տարեկան ծախսեր, տըպելով ամիս-ամիս միայն խոստացված երկու թերթը եւ այն սեփական աշխատութեան գործերից: ...Մնալով այս պայմանների մէջ, խոստանում ենք կատարել այն, ինչ միայն հնարաւոր է այսպիսի ծանր գործերի մէջ միակ մշակին սորա ամենաջերմ աշխատութեամբ: Թէեւ այժմ այս այսպէս, բայց մենք չենք տարակուսում բոլորովին: Սիրելով մեր գործը, կարծում ենք որ ժամանակով գուցէ ստորագրողների թիւը հնար կ'տայ մեզ հրաւիրել մեր գրողներին աշխատակից լինելու մեր գործի մէջ:

Բայց այս յոյսը երբէք չիբազորովեց: Ստեփանէի ամսագիրը մինչև վերջը տառապում



էր միջոցների պակասութիւննից և այդ պատճառով երբէք չը կարողացաւ զարգանալ: Վերին աստիճանի անկանօն կերպով հրատարակուեալ էին նիհար, փոքրագիր տետրակներ. բնականաբար, գրանք չը պիտի կարողանային իրագործել այն ահագին գծուար նպատակը, որ ընթերցանութիւն տարածելն էր ժողովրդի մէջ: Խմբագիրը պատրաստ էր, բայց ինչ կարող էր անել: Նայենք Ստեփանէի հրատարակած հաշիւն\*): Վեց տարվայ ընթացքում նա ստացել է ընդամենը 3637 բուբլի, ծախսել է 4054 բուբլի: Եղել է տարի (1867), երբ նա ունեցել է 86 բաժանորդ. 430 բուբլով պէտք էր մի տարի ամսագիր հրատարակել: Սա հրաշքի նման մի բան էր թուում և կարծեմ միայն հայ խմբագիրն է, որ այդպիսի ընդունելութիւն է գտնում այն հասարակութիւնից, որին ուխտել է ծառայել իր ամբողջ ոյժերով:

Երկու աջողակ տարի է ունեցել Ստեփանէն և գրանցից մէկն է 1869 թւականը: Բաժանորդների թիւը այնքան է, որ խեղճ խմբագիրը իրան երջանիկ է համարում: Այդ երջանկութեան մէջ նա յոյս էր յայտնում թէ եկող տարին էլ (1870 թ.) ամսագրի հա-

\*) «Հայկական Աշ.», 1871, № 4—5:

մար «նոյնպէս բաղաւոր կ'լինի ստորագրողների թւի կողմից, ինչպէս այս տարի»: Եւ երեւի այդ դարմանալի աջողակութիւնն էր պատճառ որ Ստեփանէն սպաղրեց այդ «բախտաւոր» տարվայ բաժանորդների ցուցակը, մի բան, որ նա չէր անում: Նայում ենք այդ ցուցակին և տեսնում ենք որ ամսագիր ստացողների թիւը հասնում է... 191-ի: Այս էր հայ խմբագրի երջանկութիւնը: Բայց դա բոլորը չէ. 20 օրինակի զինը տուել է Ստեփանէի եղբայր Միքայէլը, որ զանազան հիմնարկութիւններին իր կողմից նուէր ուղարկւովի: Խմբագրութիւնն էլ ունի նուէրներ, փոխանակութիւն լրագիրներին հետ, ձրի ուղարկում է աշխատակիցներին: Այդ բոլորը դուրս գալով, մնում է որ ամսագրին գործակալների միջոցով գրվողների թիւը հասնում է 120-ի: Բախտաւորութիւն էր, այն, ստանալ ամբողջ 733 բուբլի բաժանորդագին, բայց ինչ թշուառ բախտաւորութիւն...:

Բայց կրակոտ եռանդը, վառ սէրը դէպի գործը չը պիտի թոյլ տային որ Ստեփանէն էլ Պետրոս Սիմէօնեանցի նման մի անձար, աննկատելի խմբագիր դառնայ: Ո՛չ, Ստեփանէին աջողութեամբ է այդպիսի ողբալի պայմանների մէջ էլ կատարել աչքի ընկնող մի գործ և եթէ չը լինէր նա, «Հիւսիսսփայլի»



դադարումից մինչև եօթանասնական թւականների սկիզբը մեր մամուլը կը ներկայացնէր մի կատարեալ անապատ, և նրա միակ զարդը կը մնար «Մեղուն»: Եթէ Ստեփանէն իր ամսագրով չը կարողացաւ մեծ ազդեցութիւն անել, խոր հետքեր թողնել, դոնէ այն ծառայութիւնը մատուցեց որ վառ էր պահում առաջադիմութեան թոյլ ու փոքրիկ ճրագը: Նրա շուրջը հաւաքվում է մի խումբ, որ գրում է մեր և օտար կեանքից: «Մեղունից» պահանջում էին զաւառական թղթակցութիւններ, նա ստում էր Աստուած ողորմած է: Ստեփանէն այդպէս չէր. նա նամակներ է գրում, ամսագրի մէջ հրաւէր կարդում, ծրագիր է տպում, խոստանում է տարին երեք նամակ գրողին ձրի ուղարկել ամսագիրը. և այդ ջանքերը ի զուր չեն կորչում, Ստեփանէն սկսում է թղթակցութիւններ ստանալ: Ուշադրութիւն դարձնելով ժամանակակից կեանքի վրա, նա սկսում է կանոնաւոր ներքին տեսութիւններ, մի բան, որ նորութիւն էր կազմում մեղանում, եթէ չը հաշւենք «Ճոգադի» սկար ներքին տեսութիւնները: Ստեփանէն այս բաժնում ոչ միայն արձանագրում էր փաստեր, այլ և յաճախ քննադատում էր նրանց:

Կենդանութիւն է ստանում ամսագիրը.

դոնէ նրա պէս կենդանի, աշխոյժ մի այլ օրգան չը կար ուսանայերի մէջ. այդ պաշտօնը կատարում է «Մմբագրութեան Պատասխաններ» բաժինը, որ շատ հետաքրքրաշարժ էր իբրև խմբագրութեան հայեացքներ և դատողութիւններ առօրեայ դանաղան հարցերի վերաբերմամբ: Ստեփանէն ոչինչ չէ խնայում միտք շարժելու, հետաքրքրութիւն դարձեցնելու համար:

Առաջին տարին նա մեծ դժուարութեամբ է վերջացնում. անցել էր 1865 թւականը, բայց խմբագրութիւնը դեռ բաւարարութիւն չէր տուել իր բաժանորդներին: Երևում է որ Ստեփանէն յաճախ ընդհարվում էր «Կրուունի» սեփականատէր Էնֆիաճեանի հետ: Վերջինս չէր թոյլ տալիս որ ամսագիրը տպվի մի այլ տպարանում, իսկ իր տպարանը սաստիկ ուշացնում էր «Կրուունի» տպագրութիւնը: Ստեփանէն չէր թագցնում գրութիւնը և մի խուլ պայքար էր մղում հրատարակչի դէմ հէնց ամսագրի էջերում: Այսպէս նա, օրէնքով ստիպված լինելով նշանակել և հրատարակչի անունը, ընթերցողին մոլորութիւնից ազատելու համար, այս կերպ էր մի փոքրիկ նկատողութեան մէջ ընտրուում էնֆիաճեանի դերը.



Երբեմն վաճառական մարդ, զանազան առևտրական հաշիւներով, բոլորովին առանց ամեն մրտաքի եւ կարծիքի (պրետենսիայի) օրագրականութեան գործը հասկանալու, առնում է կառավարութիւնից օրագրի հրատարակման իրաւունքը: Սորանից առանձին պայմանով ստանում է ուրիշ բանիմասց ուսումնականը եւ վարում է օրագրի ամենատեսակի գործերը թէ արտաքին եւ թէ ներքին, այսինքն եւ հրատարակողի եւ խմբագրողի պաշտօններ... Sapienti sat. Իմաստունին բաւական է այսչափ...

1866 թ. սկզբում Ստեփանէն հրատարակում է ամսագրի երեք միացած համարները եւ դրանով փակում է առաջին տարին: Բայց այս անգամ ամսագիրը այլ եւ «Հայկական Աշխարհի Կռուճիկ» չէ, այլ պարզապէս «Հայկական Աշխարհ»: Սա արդէն նոր ամսագիր է: Որի թոյլաութիւնը ստացել էր Ստեփանէն: «Կռուճիկը» նա վերադարձրեց Էնֆիաճեանին եւ այլ եւ չը հրատարակեց: Ստեփանէն գոհութիւն էր յայտնում որ իր գործը «բոլորովին ազատեցաւ պ. Էֆիաճեանցի... հոգաբարձութիւնից»: Բայց թէ քանի՞քանի մանր-մունր արգելքների պիտի յաղթէր խըմբագիրը՝ իր գործը կանօնաւորելու համար, երեսում է այն հանգամանքից, որ նա թիֆլիսում չը գտաւ մի այլ հայերէն տպարան, ուր տպէր ամսագիրը: Վերջապէս նա 100 ռուբլի է տալիս վրացի տպարանատէր Մէ-

լէքովին, որ այդ գումարով հայերէն տառեր է բերել տալիս Մօսկվայից: Բայց դրանով դժուարութիւնը չէր վերանում. և տպարանի հարցը դեռ երկար շարձարեց Ստեփանէնին մինչև որ նա սեփական փոքրիկ տպարան բացաւ:

«Հայկական Աշխարհը» հրատարակվեց մինչև 1871 թւականի կէսը: Ի՞նչ էր ներկայացնում այդ «գրական և մանկավարժական» օրգանը: «Հայկական Աշխարհի» երկրորդ տարուց Ստեփանէն փոխեց կամօճեանից վերցրած նշանաբանը և այնուհետև ամսատետրակների ճակատին դնում էր հետեւեալ լատինական ասացուածքը. Quod possum facio, faciant meliora potentes—Ինչ կարող եմ կատարում եմ, թող կատարէ առաւել լաւով կարող է»: Սա աւելի համեստ նշանաբան էր, համապատասխանում էր Ստեփանէի ոյժերին և նրան շրջապատող հանգամանքներին: Ի՞նչ էր նա կարողանում անել:

Նայելով «Հայկական Աշխարհի» գործունէութեան, շատերի մէջ կարծիք կազմվեց թէ Ստեփանէն ուղղում է «Հիւսիսափայլի» շարունակողը գտնաւ: Այս կարծիքը Ստեփանէն արձանագրել է իր ամսագրի մէջ 1867-ին: Եւ իրաւ, շատ հանգամանքներ կային, որոնք արդարացնում էին մի այդպիսի կարծիք: Նախ և առաջ այն մեծ պատ-



կառանքը, որով Ստեփանէն խօսում էր Նազարեանցի մասին: «Հիւսիսափայլը» նա անուանում էր «լուսաբարոզ» և 1866-ին, Նայբանդեանցի մահվան առիթով, գրում էր.

Միքայէլ Նալբանդեանի անունը անբաժան է լուսաբարոզ «Հիւսիսափայլ» օրագրի գեղեցիկ փառքի հետ: Նալբանդեանի բոլոր յարգողներին չպիտի յուսահատեցնէ միայն կորուստի ցաւը, այլ ամենեքեանս պիտի միշտ մտաբերենք, որ մեր առաջ դրված է, որպէս գեղեցիկ յիշատակ, նորա ազնիւ եւ արժուն գրաւոր աշխատութիւնը եւ նորա անդադար գործունէութիւնը:

Բացի արանից «Հայկական Աշխարհի» ուղղութիւնն էլ միևնոյնն էր ցոյց տալիս: Ստեփանէի ամսագիրը գէթ մասամբ վերադարձրեց մեր մամուլին «Հիւսիսափայլի» հետ անհետացած գեղեցիկ ժամանակը. դարձեալ սեանում ենք հասարակութեան որոշ վերաբերմունք դէպի ամսագիրը. — կան համակրողներ, շատ են և հակառակորդները: Հայ երիտասարդութիւնը, զխաւորապէս ուսանող երիտասարդութիւնը, «Հայկական Աշխարհի» մէջ է երևան դալիս. ամսագրի լոյս տեսնելուն սպասում են անհամբերութեամբ. ուսանալիքի փոքրաթիւ ինտելիգենցիան նրանով է փոքր ի շատէ հետաքրքրվում:

Որքան նմանութիւններ «Հիւսիսափայ-

լին»: Եւ նմանութիւնը բոլորովին լրացնելու համար «Հայկական Աշխարհը» շարունակ բանակուի է մղում «Մեղուի» դէմ, անուանում է նրան խաւարամիտ, յետամնաց: Այդ կռիւը սկսվեց հէնց առաջին տարուց, այն իսկ ժամանակից, երբ Ստեփանէն հրատարակեց «Կոռնկի» առաջին համարը: Պետրոս Սիմէօնեանցը իր իսկական դերի մէջ էր մտնում. «Մեղուն», սովորաբար թոյլ, անհետաքրքրական, փոքր ի շատէ կենդանութիւն ստանում էր հակառակորդի հետ վիճելիս: Սեփական աղքատիկ պաշարը միշտ սպառված էր, բայց դրա փոխարէն որքան շատ կարելի էր խօսել ուրիշների գրուածքների դէմ: Դա դառնում է ապրելու միջոց. «Մեղուին» հարկաւոր էր մի հակառակորդ. չունենալ մէկը, որին պէտք էր դիմադրել, նշանակում էր մնալ սեփական ընդունակութիւններին ապաւինած, այսինքն ջուր ձեծել, «Բաղմիցս կրկնել ենք», կամ «Բանի անգամ «Մեղուի» խմբագրատունը պատիւ է ունեցել յայտնելու» դարձուածքներով: Ստեփանէն շատ համառօտ պատասխաններ էր տալիս «Մեղուին»: Բայց դա արգելք չէր, որ վերջինս երկար պարսպի Ստեփանէի տոհմաբանութեամբ, բացատրէ թէ ինչպէս է Ստեփանեան ազգանունը Ստեփանէ դարձել և այլն....



Ահա այսքան հանգամանքներ կային, որոնք կարծել էին տալիս թէ «Հայկական Աշխարհը» աշխատում է «Հիւսիսափայլէ» շարունակութիւնը դառնալ: Բայց Ստեփանէն բոլորովին այլ տեսակ է վերաբերվում այդ կարծիքին: 1867 թւականին նա գրում էր.

Ոմանք աննպատակ մարդիկ (բարի նպատակ չունեցողին եւ աննպատակ կիոչեմ) կասեն թէ «Հայկական Աշխարհը» մտածում է հին ճշմարտաբարող «Հիւսիսափայլէ» գործը կատարելու. Սա անմիտ խօսքերից է. Այս ասօղը կեանք, առաջադիմութիւն չպիտի հասկանա. «Հիւսիսափայլը» 1860 թւին էր, իսկ «Հայկական Աշխարհը» 1867-ին. 7 կամ 8 տարի բարոյապէս վերածնվող ազգի կեանքում մեծ նշանակութիւն ունի իհարկէ. Բոլորը փոխվում է. Միայն... եւ «Մեղ. 2-ի» այդ կարօղ էին երբէք չփոխվել վատից դէպի լաւ. 8 տարի առաջ ք. Մանդինեանի խմբագրութեամբ նոյն աննպատակ եւ յետախաղաց լրագիր էր նա, ինչպէս եւ այժմ պ. Սիմէօնեանի խմբագրութեամբ. 1860 թւին «Մեղ. 2-ի» կհայտնէր «Հիւսիսափայլը», 1867-ին նա կհայտնէ «Հայկական Աշխարհը». Անմիտ «Մեղ. 2-ի» բան է — միշտ եւ միշտ եւ միշտ ամէն ազնիւ եւ խելացի գործը հայտնել. «Հայկական Աշխարհը», իհարկէ կարօղ չէ երբէք բաւականանալ միայն այնով, ինչ որ կատարեց Հիւսիսափայլը:

Այսպէս ահա, Ստեփանէն մի տեսակ վիրաւորանք էր համարում «Հիւսիսափայլէ» շարունակութիւն համարվելը: Մոռանալով

այն խօսքերը, որ մի տարի առաջ ասել էր Նալբանդեանցի մասին, Ստեփանէն այժմ գրում էր.

Իսկ հանգուցած Մ. Նալբանդեանով թող դարձեալ աննպատակ մարդիքը յափշտակվին. «Հայկական Աշխարհը» իւր կարծիքը ասաց մի օր. Նալբանդեանը այդ աշխոյժ, թեթեւագրիչ երիտասարդ էր, բայց իբրև գործունէութեան կատարելատիպը թող դարձեալ պ. Սիմէօնեանը շինէ. Խմաստուն Հայն գիտէ, որ Նալբանդեանը հաստարմատ ուղղութիւն մի կարօղ չէր ունենալ եւ չունէր, որովհետեւ գիտութեանը (science) ծանօթ չէր:

Ի՞նչ է սա նշանակում: Ստեփանէն, ի հարկէ, Նալբանդեանցի եւ Նալբանդեանցի գաղափարներին հակառակ չէր: Նա միայն ուզում էր ասել որ «Հիւսիսափայլը» կատարելութիւն չէր, որ նա հին է, անկատար: «Հայկական Աշխարհը» նրա կոյր ընդօրինակութիւնը չէ, այլ ուզում է աւելի առաջ գնացած, աւելի զարգացած լինի իբրև հասարակական օրգան: Եթէր տարին քիչ ժամանակ չէ, եթէր տարուց յետոյ երեսացող մի ամսադիր չը պիտի բոլորովին նման լինի նախորդին, եթէ մի ազգ առաջադիմում է եւ ոչ թէ կանգնած է անշարժ:

Դատելով անաչառութեամբ, Ստեփանէն այս խօսքերի մէջ կայ ճշմարտութիւն: «Հայ-



կական Աշխարհը» «Հիւսիսափայլի» հետ համեմատած՝ առաջագիմուծիւն էր գոնէ այն կողմով, որ նրա մէջ աւելի շատ էր ցոլանում ժամանակակից կեանքը, որ նա խուսափում էր ծանր, անմարս նիւթերի կուտակումից, որ «Հիւսիսափայլի» թոյլ կողմն էր: Ի զուր էր Ստեփանէն վերցնում «Հիւսիսափայլի» 1860 թւականը, որպէսզի կարողանայ ասել թէ Նազարեանցի և իր մէջ 7 տարվայ տարածութիւն կայ: «Հիւսիսափայլը» դադարեց 1864-ի վերջում, այն ժամանակ, երբ Ստեփանէն արդէն խմբագիր էր. ուրեմն ոչինչ հեռաւորութիւն չը կայ երկուսի մէջ. Ստեփանէն, ընդհակառակն, անմիջապէս յաջորդեց Նազարեանցին: Եւ եթէ կայ երկուսի գործերի մէջ մեր վերեր յիշած տարբերութիւնը, դա՛ ամենևին տարիների արածը չէ: «Հայկական Աշխարհը» մի քանի քայլ առաջ էր «Հիւսիսափայլից» հէնց այն պատճառով, որ նա հրատարակվում էր թիֆլիսում և նրա խմբագիր-հրատարակողը աւելի եռանդուն էր, աւելի յարմար հանգամանքներով շրջապատված:

Բայց «Հայկական Աշխարհի» այդ աջողութիւնը, համեմատական առաջագիմուծիւնը աւելի արտաքին հանգամանքներ ունէր, աւելի խմբագրի կազմակերպողական ընդու-

նակութիւնից էր կախված, քան հրատարակախօսական տաղանդից: Իբրև հրատարակա-



Ստ. Ստեփանէ

խօս, Ստեփանէն անհամեմատ ցած է Նազարեանցից: Նախբանդեանցի վերաբերմամբ



էլ Ստեփանէն անարդար էր. նա կարող էր Նալբանդեանցից շատ բարձր լինել իր ուսումով, բայց հրապարակախօսութեան մէջ գիտութիւնը չէ չափը, այլ տաղանդը, մարդկանց սրտի հետ խօսելու ընդունակութիւնը: Եւ հէնց այդ է պատճառը, որ Ստեփանէն, չը նայած որ մրցակից չունէր իր առջև, չը կարողացաւ Նաղարեանցի և Նալբանդեանցի շարքում գասլել իբր հրապարակախօս:

Նա, ճիշտ է, կոչում էր, պահանջում էր առաջադիմութեան, եւրօպական լուսաւորութեան անունով: Բայց այդ բոլորը արտայայտվում էր մանր-մունր չափերով, դիտաւորապէս դպրոցական հարցերի շուրջն էր պտըսում: Նաղարեանցն էլ համարեա միշտ կըրթութեան և դաստիարակութեան հարցերով էր հանդէս գալիս, բայց միևնոյն ժամանակ նա յարուցանում էր ընդհանուր ազգային հարցեր, քննադատում էր մեր հասարակական կարգերը, մեր գաղափարները, կուռում էր մեր յետաճանցութեան դէմ այնպիսի հարցերում, ինչպէս են կրօնական համբերողութիւն, ազգայնական լայն գաղափար, հիմնված ոչ թէ եկեղեցական-գաւառական առանձնութեան, այլ լեզուի և ծագման վրա: Ստեփանէն երբէք չը կարողացաւ Նաղարեանցի պէս ըմբոստ բողոքողի դեր կատարել, առա-

ջադիմական հանրամարդկային հասկացողութիւնները չը գտան «Հայկական Աշխարհի» խմբագրականների մէջ այն կրակոտ, ուժղին պաշտպանութիւնը, ինչպէս «Հիւսիսափայլի» մէջ: Նաղարեանցի առջև միայն կրթական կարօտութիւնը չէր, այլ ամբողջ ազգը իր նախապաշարմունքներով, ստրկութեան երկար դարերում իւրացրած հողերանութեամբ. նա հարուածում էր հայութեան հիմնաւոր արատները—առանձնամոլութիւն, անհատականութիւն, համայնական շահերի կատարեալ բացակայութիւն: «Հայկական Աշխարհի» խմբադիրը այսքան լայն ասպարէզ չունէր. Նաղարեանցի հետ համեմատած, նա աւելի նեղ մանկավարժ էր, քան մի հրապարակախօս՝ այս բառի ընդարձակ նշանակութեամբ:

Ժողովրդին մօտեցող, ժողովրդի կեանքը իր էջերի մէջ առնող մամուլը չէր կարող անչարժանալ միայն դպրոցական և եկեղեցական հարցերի շրջանում: Ժամանակ էր որ հայ մամուլն էլ նկատի առնէր ընդհանուր տնտեսական կուլտուրական հարցեր, ըմբռնէր կեանքը իր լայն, բազմակողմանի պահանջներով: Ստեփանէն այս գործի մէջ չը կարողացաւ մի քայլ անել դէպի առաջ: «Հայկական Աշխարհի» մէջ շատ կայ պօլէմիկա, շատ անգամ աղնիւ բռնկումով, օրինաւորու-



թեամբ և արժանապատուութեան զգացմունքով մզված կոխւ. բայց հասարակական հարցեր քննադատող, առաջադիմական տեսութիւններ պարզող և ժողովրդականացնող խմբադրական յօգուածներ համարեա չը կան:

Եւ սա բնական է: Ստեփանէն աւելի քարոզիչ էր, զիւրավառ մի մարտնչող, քան կեանքի հարցերը արծարծող, քննադատող: Իր գրուածքների մէջ նա յաճախ զիմուժ է ասեւորանական, քարոզչական ոճին: Օրինակ.

Այո ես կաղաղակեմ, կզանգատեմ, կբողոքեմ, կխնդրեմ, կաղաչեմ, մինչև կհասնեմ նպատակիս. եւ սիրելով անկեղծ սրտով, անյոյս չեմ. Հայկական ուսումնարանները կտեսնեմ մի օր բարելաւ դրութեամբ եւ հոգօւ յաղծանակով կյայտնեմ ընթերցողներիս, կշնորհաւորեմ եւ կհանգստացնեմ նոցա.

Այո քահանաների հետ Հայերին պէտք են եւ ուսուցիչներ. Հայկական ազնիւ երիտասարդներ այս կերպով պիտի պատրաստվեն ազգին ծառայելու. Մինը պիտի կրթէ անդադար մեծերին, աւետարանը վարդապետելով, միւսը—փոքրերին իրեանց քաղաքացիական պարտքերը ճանաչեցնելով.

... Հայեր, իմ պաշտելի Հայեր, բաւականացրէք. կամեցէք թափել ձեր վերաից բազմադարեան անէծքը: Սկսեցէք այնպիսի կեանք վարել, որ մարդկութեանը ամօթ չլինէր խոստովանելու, թէ ահա նորա անդամ է եւ հայկական ազգը.

Հայեր, իմ ազնիւ Հայեր, լինենք այնպէս, որ մարդկութեանը, եթէ ոչ պարծենալով, զոնէ ամաչելով չմտաբերէր Հայերին.

Հայեր, սիրելի Հայեր, ժամանակ է: Թող շարժվի եւ մեղանում ազգային ինքնասիրութիւնը. Բաւականացնենք այն արհամարհանքը, որ վայելում ենք այսքան ժամանակ օտար ազգերի կողմից:

Հայեր, հայասէր Հայեր, ամէն ազգ ունի շօնգրական Երզի պէս—

Այն սուրբ օրեր, որոնց մեզնից իւրաքանչիւր Սպասում է մեծ, սուրբ հաւատով.

... Հայեր, խելացի Հայեր, մեր սուրբ օրերը, Հայերի բարեբաղդութեան օրերը զալու են, երբ մենք կուեննանք բարեկարգ ուսումնարաններ բանիմաց տեսուչներով եւ ազնիւ ուսուցիչներով, երբ հայկական եկեղեցի կկազմեն Յիսուսին արժանապէս պաշտօղներ եւ պաշտօնեաներ, երբ մեր ժողովուրդը անհող ամբոխից իմաստուն հասարակութիւն կդառնա.

Ազնիւ տեսուչներ, ազնիւ ուսուցիչներ, ազնիւ քաղաքացիներ! Կրթեցէք նոր սերունդը բարոյական հիմով, աւետարանի լոյսով եւ ճշմարտութեամբ.

Իր ճառական ոճով, բոմատիկ զեղումներով Ստեփանէն աւելի անցեալին էր պատկանում, քան նոր օրերին, ապագային: Նա էլ, Նազարեանցի նման, շատ էր սիրում ճառեր տպագրելը, մանաւանդ երբ զրանք դամբանականներ էին մեռած ուսանողների գերեզմանների վրա: Անձնական տարրը մեծ դեր էր խաղում Ստեփանէի համակրանքների մէջ: Այսպէս 1865-ին նա մի ահազին մահացուցակ տպագրեց Գրիգոր Տէր-Մկրտչեանի մասին, որ իր ուսանող ընկերներից էր,



մեռել էր թողախտից, չը կարողանալով վերջացնել ուսումը. ոչ միայն մահացուցակը, այլ և ամսագրի առաջին երեսը սև չըջանակներով էին պատած: Ստեփանէն յիշատակում էր հանգուցեալի մահվան նոյն իսկ տարեդարձները: Եւ սակայն, այդ ուսանողը միայն մի յուսատու երիտասարդ էր և առանձին մի ծառայութիւն չէր մատուցել իր ազգին: Այնուամենայնիւ, Ստեփանէն ողբում էր այդ մահը իբրև հասարակական դժբախտութիւն:

Սօսելով Ստեփանէի թերութիւնների մասին, չէ կարելի զանց անել և այն, որ նա հաւատացած էր թէ ամսագիրը հրատարակում է միայն ընտրեալների համար:

Ով է համակրում մեր օրագրին եւ ով է կարող բնականապէս համակրել, սիրել եւ հետեւել նրան? — հարցնում է նա մի տեղ եւ իսկոյն պատասխանում. — Այն ամեն շայն, որ զգում է մտաւորական զարգացման կարօտութիւն, նա, որ ցանկանում է առաջադիմութիւն, նա, որ հանդիստ եւ անվրդով լսում է ճշմարտութիւն, մի խօսքով նա, որ զուրկ չէ առողջ իմաստից: Մեր օրագրի միտքը եւ ցանկութիւնը հասկանալու համար հարկաւոր է անշուշտ մտաւորական զարգացումն, հարկաւոր է հասկացողութեան ընդունակութիւն ունենալ: Այն յօդուածները, որ մենք հրատարակում ենք, այն լեզուն, որ մենք գործ ենք անում, այն մտքերը եւ ճշմարտութիւնները, որ մեր օրագիրը քարոզել է եւ մինչեւ

վերջին շունչը պիտի քարոզէ, կարող են հասկանալ եւ համակրել նորա միայն, որոնք ունին մի մտաւոր զարգացումն, եւ որովհետեւ մտաւորապէս զարգացածները անբաղդաբար մեր մէջ այնքան բազմաթիւ չեն, ուստի օրագիրս պիտի բաւականանայ սակաւաթիւ ստորագրողներով, մինչեւ կբազմանան հայկական աշխարհի բազդից մեր հասարակութեան մէջ առաւել հասկացողները եւ զարգացածները, մինչեւ կաւելանան մեր ընտրված անդամները:

Այստեղ ահա Ստեփանէն բողբոլվին չէր հասկանում հայ պարբերական հրատարակութեան խորհուրդը: Ընտրեալների, զարգացածների համար հայերէն ամսագիր... Բայց մեծ հարց է՝ այդ ընտրեալները կարօտ էին «Հայկական Աշխարհին»: Ինտիլիգենտ, զարգացած հայը չը պիտի կարգար Դօբրօլիւբովից, Պիտարեվից թարգմանած կտորները կամ Մասէի «Մի կտոր հացի պետմութիւնը», որոնք տպվում էին «Հայկական Աշխարհի» մէջ. ինտիլիգենտ հային հարկաւոր չէր Մասէն, իսկ Դօբրօլիւբով և Պիտարեվ նա կարող էր կարգալ ուսեսերէն: Այդ դասակարգից չը պիտի կազմվէր ընթերցողների այն բանակը, որ կարողութիւն կը տար հայ խմբագրին աւելի ընդարձակել իր գործը: Ընտրեալ հայը կը հետաքրքրվէր հայերէն ամսագրով այն ժամանակ, երբ սրա մէջ կը գտնէր հայկական կեանքի արտայայտութիւնը, հա-



սարակական և գրական հարցերի ւսուումնա-  
սիրութիւնը: Այդ կողմից «Հայկական Աշ-  
խարհը» քիչ հետաքրքրական էր, հարուստ  
չէր:

Ո՛չ, հայերէն ամսագիրը, լրագիրը ուրիշ  
տեսակ ընթերցող պիտի ունենար, մանա-  
ւանդ այն ժամանակները, երբ ինքնուրոյն  
աշխարհային գրականութիւնը դեռ համարեա  
չը կար, երբ հրապարակախօսութիւնը միայն  
դպրոցական և եկեղեցական կարիքներով էր  
զբաղված և չուներ իր առջև աւելի լայն հա-  
սարակական հօրիզօններ: Սկսելով իր գործը  
այն բողոքովին սնսխալ համոզմունքով թէ  
հային դեռ պէտք է կարգալ սովորեցնել,  
Ստեփանէն շատ շուտ մոռացաւ այդ իրողու-  
թիւնը և սկսեց կարծել որ եթէ իր ամսա-  
գիրը փոխանակ սպասած 6—7 հարիւր բա-  
ժանորդների մի քանի տասնեակ ըն-  
թերցող ունի, պատճառն այն է, որ ընտ-  
րեալներ չը կան: Ընթերցողներ ստեղծելու,  
ժողովրդական խաւերից հետաքրքրօղներ  
առաջ քաշելու մասին նա չէ էլ մտածում:  
Կարծես ընտրեալները երկնքից պիտի ընկ-  
նէին. մինչդեռ եթէ ընկնէին էլ, հայերէն  
ամսագիր չը պիտի կարգային: Առհասարակ,  
վաթսուանական թւականների մեր մամուլին  
չէր աջողվում ընթերցողների շրջաններ նուա-

ճել. ինչքան մարդիկ կարողանում էր հաւա-  
քել բաժանորդագրութիւն անուանվող մու-  
րացկանութիւնը, այդքան էլ ընթերցող ու-  
նէր ամսագիրը կամ լրագիրը:

Եւ երբ մի խմբագիր համոզվում է թէ  
իր ամսագիրը ժողովրդի, ամբողջի համար չէ,  
թէ ինքը միայն զարգացած մարդկանց հետ  
կարող է գործ ունենալ, հասկանալի է թէ  
որքան պիտի նա սահմանափակվի, որքան  
պիտի հեռու մնայ ժողովրդի գործից, որքան  
անօգուտ պիտի համարէ եռանդը, անդադար  
կատարելութեան ձգտելու պահանջը: Հուա-  
տալ թէ պէտք է մի կերպ տանել ամսագիրը  
ամենատղորմելի դրութեան մէջ, մինչև որ  
ընտրեալները կը բազմանան—դանշանակում  
էր սպանել գործը, սպանել սեփական հա-  
ւատը, փտահութիւնը:

Ասացինք որ Ստեփանէն մոռանում էր  
այն, ինչ հաստատ զիտէր գործը սկսելիս:  
Այս հանդամանքը մենք ուզում ենք առանձ-  
նապէս շեշտել: Որքան առաջ էր գնում «Հայ-  
կական Աշխարհը», այնքան Ստեփանէն թու-  
լանում էր իրրև մարտնչող, առաջադէմ հրա-  
պարակախօսութեան ներկայացուցիչ: Շուտով  
մենք կը տեսնենք, որ նա չափաւորներից էր,  
համարձակ, արմատական մտքերը նրան էլ  
վախեցնում էին, ուստի և նա տպադրում



էր Գրիգոր Արծրունու մի քանի յօդուածները զանազան վերապահումներով: Դա, ուրեմն, նորերից չէր, իր ժամանակի ամենաառաջաւոր քարոզիչ խմբագիր չէր, մէկը այն իսկական հրապարակախօսներից, որոնք զենում են զարգացող գաղափարների հետ, չեն հնանում:

«Հայկական Աշխարհի» խմբագիրը մեծացաւ այն ազատամիտ աշխարհայեցողութիւնների շրջանում, որոնց ներկայացուցիչը մեզանում «Հիւսիսափայլն» էր. բայց այդտեղ էլ նա չը կարողացաւ հաստատ պահել: Ազատամիտ դպրոցը մեծ կարևորութիւն էր տալիս կրօնական կրթութեան: Ստեփանէն այս կողմից աւելի առաջ գնաց, քան իր նախորդները: «Ազատութիւնը բարեւոքացնում է բարքը և կրօնասիրութիւն է տարածում» — ահա մեր երիտասարդ, համալսարանական խմբագրի դաւանանքը: Եկեղեցու և եկեղեցականներին վերաբերմամբ Ստեփանէի բռնած դիրքը նմանութիւն անգամ չունի այն դիրքին, որ բռնել էր Նազարեանցը:

Վերջիններ հէնց մի փաստ: «Հիւսիսափայլի» մարդիկ, Նալբանդեանցի ղեկավարութեամբ, կուռում էին Գաբրիէլ վարդապետ Այվազեանի դէմ: Այդ պայքարի հանգամանքները, պատճառը մենք պատմել ենք մի ու-

րիչ տեղ \*) . յայտնի է նոյնպէս, որ «Հիւսիսափայլի» սնհաշտ թշնամիներից մէկն էլ Այվազեանն էր, որ ամենայն հաճութեամբ տպագրում էր իր ամսագրում ամենաանդուազ յարձակումներ Նազարեանցի դէմ: Ընդհարումը ունէր իր խոր, օրինաւոր պատճառները. Այվազեանը կղերական-վանական դաստիարակութեան ներկայացուցիչն էր, մինչդեռ «Հիւսիսափայլի» մարդիկ աշխարհական ազատ կրթութիւն էին պահանջում: Ստեփանէն ոչ միայն ի նկատի չէր առնում այս բոլորը, այլ և հիացած էր Այվազեանի վրա: Լսելով որ Երևանի ժողովուրդը ուղում է Այվազեանին իր առաջնորդ ունենալ, նա զրում էր. «Փառք և պատիւ Երևանի ժողովրդին... Պարծանք ձեզ, Երևանի Հայք»:

Այսքան հիանալու համար բաւական էր այն հանգամանքը, որ Այվազեանը կրթված, զիտուն հոգևորական էր: Մինչդեռ «Հիւսիսափայլի» խմբի համար զլիսաւորը զիտնականութիւնը չէր, այլ ողին, ուղղութիւնը: Այսպիսով Ստեփանէն աւելի Աղաբէկեանի «Կուռնիկ» դպրոցին էր յարած: Գիտութիւն ստացած հոգևորականութիւն — և այլևս ոչինչ,

\*) «Ստեփանոս Նազարեանց», հատոր երկրորդ:



ամեն ինչ ինքն իրան կը գայ, կը լինի. չէին քննադատուում եկեղեցու վարչական կարգերը, բարեփոխութիւններ չէին առաջարկուում, մրցութիւն, կռիւ չը կար: Այս բանի մէջ Ստեփանէն Նաղարեանցի յաջորդը չէր: Դրա ամենաբաւ ապացոյցն այն է, որ Ստեփանէի դէմ չը զինվեցին պահպանողական տարրերը, նրան ազգի և եկեղեցու թշնամի չը յայտարարեցին և նա առանց դժուարութիւնների հոգևորական դարձաւ:

1866 թւին կաթողիկոսական ընտրութիւն կար: Մեր մամուլի վերաբերմունքը դէպի այդ հարցը այսպէս էր: «Մեղուն» հետեւեալն էր գրում.

Բայց ո՞վ են այս հայրապետին, Աստուծոյ ծառային եւ պաշտօնատարին ընտրողները, մարդիկ, թոյլ եւ տկար մահկանացուներ... Ուստի թող բոլոր ազգը եւ մանաւանդ յարգոյ եւ սքեզան պատգամաւորները խնդրեն առաջ Աստուածմէ, որ Սա չը դարձնէ իր երեսը նրանցից, «Տէր, մի դարձու՞մանէր զերեսս քո յինէն»: Եւ յետոյ կշռեն, դատեն, քննեն, հասկանան, որ ինչ բարին է, աղօթեն Աստուծոյ, որ ցոյց տայ իր ընտրեալ Դաւթին, ու յետոյ թափեն սորա զլսին իւրը\*):

Իսկ ինչ ունէր ասելու Ստեփանէն, որ

\*) 1866, № 35:

«Մեղուի» խմբագրին բթամիտ, հնամուլ, ոչընչութիւն էր անուանում: Ահա ինչ.

Յոյս ունինք, որ թէ պատգամաւորների ընտրութիւնը եւ թէ նոցա ձայն տալը կաթողիկոսի համար կլինի սուրբ սրտով եւ անարատ մտքով: Հաւատում ենք, որ այս գործը ամեն Հայի համար սուրբ եւ մեծ գործ է: Համարձակուում ենք նկատել, որ կաթողիկոս պիտի ընտրվի այն անձն, որ արդէն հանդիսացել է ազգի առաջ իւր գեղեցիկ գործերով ազգաշինութեան կողմից:

Ինչպէս տեսնում էք, տարբերութիւն համարեալ չը կայ ազատամիտ և պահպանողական խմբագիրների մէջ:

Մեր տեսութիւնը «Հայկական Աշխարհի» որպիսութեան մասին փակուում ենք հետեւեալ եզրակացութիւններով: Ստեփանէն մի լաւ կրթված մարդ էր, առաջադիմական ձգտումներով, բայց չունէր հրապարակօսական տաղանդ: Նրա ամենամեծ ծառայութիւնն այն էր, որ ազատամիտ հրապարակախօսութեան առաջին փորձը մտցրեց կովկասում, Թիֆլիսի մէջ: Ինքը չը լինելով մեծ ընդունակութիւններով օժտված մարտնչող, այնքան սէր և համակրութիւն ունէր դէպի երիտասարդութիւնը, դէպի եւրօպական լուսաւորութիւնը, որ կարողացաւ իր ամսագիրը դարձնել հայ երիտասարդութեան համար աշխատելու տեղ: «Հայկական Աշխարհը» դարապլուխ չը



կազմեց մեղանում, ինչպէս կազմել էր «Հիւսիսափայլը», նոյն իսկ «Կոռուկը»։ Նա սկըսված առաջադիմական ուղղութեան շարունակութիւնը չէր, ոչ էլ մանաւանդ զարգացումը։ Նրա մէջ պահվում էր առաջադիմական մտքի ընդհանուր ոգին, համեստ ճրագը։ Խըմբագիրը մեծ դեր չը կարողացաւ կատարել, որովհետեւ մեծ պաշար չունէր, համարձակ վերանորոգիչ չէր, մանր-մունր հարցերի վրա էր սպառում իր եռանդը, պայքար էր մղում աւելի անձնաւորութիւնների, քան սկզբունքների, ուղղութիւնների դէմ։

Միայն մի բանի մէջ Ստեփանէն հանդիսացաւ շատ համարձակ բէֆօրմատօր և զրանով էլ բաւական ազմուկ հանեց։ Այդ բանը ուղղագրութիւնն էր։ Գրիգոր Արծրունին նրա ազդեցութեան տակ իւրացրեց ուղղագրական մի քանի ձևեր և նրա «Մշակը» այսօր էլ հետևում է այդ կանօններին։ Ուստի մեզ հարկաւոր է մի քիչ մանրամասն խօսել այդ մասին։

Աշխարհարար լեզուն արդէն քաղաքացիութեան իրաւունք էր ստացել ամբողջ հայութեան մէջ։ Այդ յազթանակը ձևօք էր բերվել երկարատե պատերազմից յետոյ։ Բայց յազթանակողը դեռ շատ տկար ու աղքատ մի բան էր։ Գրական լեզու դառնալիս՝ աշ-

խարհարարը ոչ գրական անցեալ ունէր, ոչ մշակված ու կանօնաւորված հարստութիւն։ Ժողովրդի բերանում ապրած, հարիւր ու մի ճիւղերի բաժանված մի բազմադարեան լեզու էր դա, որ յղկվելու, քաղաքակրթվելու պէտք ունէր։ Եւ նոր լեզուն իր բարեկարգութեան համար աշխատող մշակների պակասութիւն չը տեսաւ։ Իրանց գրական զարգացումով ուստահայերից շատ առաջ անցած թիւրքահայերը աւելի ընդունակ և փորձված հանդիսացան այդ գործի մէջ։ Նըրանց աշխարհարարը հեշտ և շուտ կազմակերպվեց։ Կանօնաւորելով լեզուն, պէտք էր ձեռնարկել նրա կանօնագրութեան, պէտք էր սահմանել նրա համար օրէնքներ։ Այդ գործն էլ առաջ թիւրքահայերը սկսեցին։

1848-ի Ֆրանսիական յեղափոխութիւնը մեծ դաստիարակչական ազդեցութիւն ունեցաւ մի քանի թիւրքահայ ուսանողների վրա, որոնք այդ միջոցին գտնվում էին Պարիզում։ Փետրվարեան յեղափոխութիւնը, որից ծնվեց երկրորդ հանրապետութիւնը, իր ազատական մոլխի մէջ կռեց-կոտից հայկական ազատամիտ, հակակղերական, համարձակախօս հրապարակագրութիւնը, որի առաջին գրօշակակիրը մեղանում էր յեղափոխութեան մասնակցող ուսանողներից Ստեփան Ոսկա-



նը: Նոյն այդ քաղաքական հրդեհը ներշնչեց իր մի ուրիշ զինուոր ուսանողին, բժշկակա- նութեան ճիւղը ընտրած Նահապետ Ռուսինեանին, արմատական բարեփոխութիւնների անհրաժեշտութիւնը:

Ռուսումը աւարտելուց յետոյ Նահապետ Ռուսինեանը վերադարձաւ Կ. Պօլիս: Այդտեղ նրան ընկերացաւ թիւրքահայ բարձր դասակարգից մի համակրելի գործիչ, Նիկողայոս Պալեան, որ նոյնպէս Ֆրանսիայումն էր ուսում ստացել և թէև փետրվարեան յեղափոխութեան անձամբ մասնակցողներէց չէր, բայց նրա դադարիւրներէ ամենաջերմ կողմնակիցներէց էր, քանի որ կրթիւն էր 1830-ի յուլիսեան յեղափոխութեան առաջացրած ազատական կուսակցութեան գրական գործիչների ազգեցեութեան տակ: Այդ երկուսի հետ էր և մի ուրիշ երիտասարդ, Գրիգոր Օտեան, թիւրքահայերի մի այլ նշանաւոր գործիչը \*):

Այս երրորդութիւնը դարձաւ այն կորիզը, որից առաջացաւ թիւրքահայերի մէջ

\*) Գրիգոր Օտեան երեք ընկերների կատարած դերը գեղեցիկ կերպով բացատրել է այն առաջարանի մէջ, որ գրել է Ռուսինեանի կազմած փիլիսոփայութեան դասազրքի համար:

այնքան նշանաւոր և համակրելի շարժումը յիսնական թւականներին: Նահապետ Ռուսինեանը այնպիսի անձնաւորութիւններից չէր, որոնք շատ լաւ և շատ յարմար տեղաւորվում են կեանքի ստեղծած սովորական, շաբլոնական շրջանակներում: Նա ուզում էր նորութիւններ ստեղծել, բարեփոխող և յեղափոխող կարգեր առաջ բերել: Առաջին գործը, որ նրա ուշադրութիւնը գրաւեց, աշխարհաբար լեզուն էր: Ռուսինեանը կանօններ մշակեց նրա համար, այնպիսի կանօններ, որոնք, նրա կարծիքով, պիտի հեշտացնէին լեզուն, միանման ընդհանուր կերպարանք պիտի տային նրան: Այդ նպատակով նա 1856-ին հրատարակեց իր «Ուղղախօսութիւնը»: Ապա ձեռք դարկեց օրացոյցը բարեփոխելուն. ջնջեց ամիսների հոսմէական անունները և, ինչպէս փայել էր մի յեղափոխական գործիչին, ընդունեց ֆրանսիական առաջին յեղափոխութեան ժամանակ մտցրած անունները, թարգմանելով դրանց հայերէնի:

Ռուսինեանի նորմուծութիւնները, ի հարկէ, աղմուկ և աղաղակ բարձրացրին Կ. Պօլսում և ընդունելութիւն չը գտան: Աւելի բախտաւոր գտնուեց Ռուսինեանը իր երրորդ և ամենամեծ ձեռնարկութեան մէջ. դա թիւր-



քահայերի Ազգային Սահմանադրութիւնն էր, որ նա յղացաւ և խմբագրեց իր ընկերակիցներին և համախոհներին հետ, հիմնովելով փետրվարեան յեղափոխութեան սկզբունքները վրա, այն է ժողովրդական քուէ, որ սահմանափակում է անհատական իշխանութիւնը:

«Ուղղախօսութիւնը» մերժվեց և նոյն իսկ պատրիարքի բանադրանքին ենթարկվեց: Բայց նրա մի քանի կանօնները ընդունելութիւն գտան ռուսահայերի մէջ և ընդունողն ու գործադրողը Ստեփանէն էր: Պէտք է ասել որ բոլոր ուղղախօսական կանօնները Ռուսինեան իրանից չէր հնարել. շատ բան նրանից առաջ գործ էին անել առաջին անգամ աշխարհաբար գրքեր շարադրած Մխիթարեանները (Ինճիճեան, Բժշկեան), այսպէս, նրանք շատ տեղերում ու երկրաբար փոխարինում էին վ տառով, մանաւանդ կրօնաւորական բայերի վերջում (օր. տարվան (տարի բառից), սորվին, մտվընին), ող վերջաւորութիւնը գրում էին օ-ով (ծնօղ, սոբվօղ), փորձում էին դէն դցել յ տառը բառերի վերջից, ուր նա չէր արտասանվում և այդ փորձը կատարվում էր վրայ բառի վերաբերմամբ, որ գրվում էր առանց յ-ի:

Մեզանում նաղարեանցն էլ իր գրականական գործունէութեան սկզբում ընդունել

էր մի քանիսը այդ ձևերից, բայց նրանց չուտ թողեց: Ստեփանէն «Հայկական Աշխարհի» հէնց առաջին տարուց ընդունեց այդ բոլոր ձևերը, ինչպէս նաև Ռուսինեանի նրման՝ յոգնակի եր վերջաւորութիւնը գրում էր է-ով (գործէր, գրքէր, սարէր): Այս բոլորը դեռ ոչինչ: Ստեփանէն առաջ գնաց և կանօն ընդունելով—«գրիր, ինչպէս խօսում ես», սկսեց գրել այնպէս, ինչպէս արտասանվում է տառը, մանաւանդ յ-ն, որը շատ տեղերում փոխարինեց հ-ով: Չբ բաւականանալով այսքանով, նա ջնջեց հայկական կէտադրութիւնը և մտցրեց եւրօպականը. մեր միջակէտը նրա համար վերջակէտ էր, իսկ վերջակէտը եւրօպական միջակէտ (;), աւելացրեց «կէտուստորակէտ» նշանը (;), բոլորովին վաճկեց հայոց հարցական և բացականչական նշանները, մտցնելով եւրօպական նշանները: Ամենից զուարճալին այն էր, որ Ստեփանէն այս նորմուծութիւնները փաստաբանում էր նրանով թէ այդպէս աւելի հեշտ կը լինի թարգմանութիւններ կատարելը:

Եւ ահա իր կանօններին հաւատարիմ մընալով, Ստեփանէն գրում էր այսպէս.

Թիֆլիսում հայկական Ներսիսեան ուսումնարանում ըննութիւնը կատարվեցավ. Ուսումնարանի հը-



րավէրից օգուտ քաղողը չեղավ. Ծվ պիտի զնար «վկա լինելու նորա ուսումնական վիճակին», ինչպէս հրատարակված էր? Ծվ չգիտէ ուսումնարանի ամէնաթշվառ դրուժիւնը? Ծվ չգիտէ, որ ուսումնարանում չկա օրինավոր ուսում? Ծվ համոզված չէ, որ ուսումնարանը կարօտ է հիմնավոր հեղափոխութեան?

Ուսումնարանի աշակերտները զուրկ են հայկական լեզվի իմացութենից (նորա մի օր կարող էին զոնէ հայկական լեզվով պարծենալ), հին հայկականը շատ թոյլ կերպով կուսուցանվի, նոր հայկականը ամենեւին չի ուսուցանվի. Հայկական պատմութիւնը չի ուսուցանվի, ռուսական պատմութիւնը նոյնպէս, և սորա ինչ լինելը չգիտեն սիրելի և միանգամայն ցավալի աշակերտները,— այս առարկաների համար ուսուցիչներ չկան Թիֆլիսում, կասէ ուսումնարանի բարեմիտ կառավարութիւնը; նորա, որոնք կան Թիֆլիսում և կարող էին բոլորովին արժանի կերպով ուսուցանել յիշված առարկաները, յարմար չեն եկել ուսումնարանի ազգասէր խնամատարների մտքերին.

**Բարերախտարար.** Ստեփանէն այս նորութիւններէ մէջ մի յամառ ու կոյր բէֆօրմատօր չէր: Նախ և առաջ, նա չէր բռնանում ուրիշների վրա, փաթաթելով նրանց վզին իր ուղղապարտութիւնը. երկրորդ, հաճութեամբ լսում էր հակառակ կարծիքները: Նրան ցոյց տուին, օրինակ, որ ոչ մի միտք չը կայ գործածելու ևւրօպական հարցականը, քանի որ

հայերէնը այն առաւելութիւնն ունի, որ զնվում է անմիջապէս այն իսկ տառի վրա, ուր հարց կայ և ոչ թէ նախադասութեան վերջում, ինչպէս ևւրօպականը: Ստեփանէն համաձայնվեց և հրաժարվեց շատ նորութիւններից, պահպանելով միայն մի քանի բաներ:



Սակայն «Մեղուն», «Կոռնիկը», «Հայկական Աշխարհը» հայոց մամուլի միակ ներկայացուցիչները չեն 1860-ական թւականներին: Պատկերը լրացնելու համար մենք պիտի յիշատակենք և մի քանի երկրորդական հրատարակութիւններ, որոնք ապրում էին այդ ժամանակները թէ Թիֆլիսում և թէ Թիֆլիսից դուրս:

1862 թւականը, մի կատարեալ աղէտի տարի, խոստովանել սուեց «Հիւսիսափայլը», «Մեղուի» և «Կոռնիկը» խմբադիրհրատարակիչներին որ շարունակել գործը այլ ևս անհնարին է: Մինչդեռ «Հիւսիսափայլը» դրանից յետոյ ապրում է էլի մի տարի (1864) և ոչնչանում, «Մեղուն» անցնում է ուրիշ մարդկանց, իսկ «Կոռնիկը» գառնում է «Հայկական Աշխարհ», Թէոդոսիայում Գար-



րի էլ վարդապետ Այվազեանի «Մասեաց Ազաւնին», որ արդէն հոգեվարքի մէջ էր, կորցրած իր նախկին նշանակութիւնն ու արժէքը, մեռաւ ըզրորովին աննկատելի կերպով (1865): Նոյն այդ ժամանակ, դարձեալ ոչ ոքից չը նկատված, մեռաւ Մօսկվայում «Համբաւաբեր Ռուսիոյ» թերթը, հանդուցեալ «Ճռաքաղի» այդ ուղեկիցը և շարունակութիւնը, որ կատարելագէս ոչինչ դեր չէ կատարել մեր գրականութեան մէջ:

Մեռնում էին միմեանց ետեկից, մեռնում էին լաւերն էլ, վատերն էլ: Մեռնում էին զանազան տեսակ առողջութեան տէր հրատարակութիւնները: Մի ընդհանուր ցաւ ըսւած էր—սակաւարիւնութիւնը. ընթերցող չը կար, սառն անտարբերութիւնը յուսահատեցնում էր թէ երիտասարդական աշխոյժով լցվածին, թէ մեռած ծնվածին: Բայց մահերին հետեւում էին նոր անուններ:

Յիւնական թւականների լրագրական և ամսագրական սերունդը անցնում էր, նրա տեղ երևան էր դալիս վաթսուական թւականների սերունդը: 1864-ին Ռափայէլ Պատկանեանը սկսում է իր «Հիւսիս» շաբաթաթերթի հրատարակութիւնը Պետերբուրգում: Բայց Պատկանեանը խմբագիր չէր, այլ բանաստեղծ: Նա մտաւ իրան խորթ, անսովոր

ասպարէզի մէջ, որպէսզի ցոյց տայ իր կատարեալ անկարողութիւնը: «Հիւսիսը» ոչինչ արդեցութիւն չարաւ իր ժամանակակիցների վրա: Ռափայէլ Պատկանեանը հրատարակախօս էր իր ոտանաւորների մէջ. այդտեղ նա դառնութեամբ դուրս էր բերում մեր կեանքի այլանդակ կողմերը, հարուածում էր ազգային անախառութիւնը, մեծամտութիւնը, ծաղրում էր ապականված բարքերը և խորտակում էր կուռքերը. բայց «Հիւսիսի» մէջ այդպիսի ձայն չուներ, այլ տպագրում էր «Ծովազնաց Սենդրագի» հէքիաթական ճանապարհորդութիւնները, զրոյցներ պատմութիւնից, զանազան տեղեկութիւններ: Աննկատելի մնաց «Հիւսիսը» և հազիւ մի տարի ասրեց:

Այդպէս օր-պակաս էին և երկու նոր պարբերական հրատարակութիւններ թիֆլիսում—«Վաճառական» և «Գարուն», որոնք ծնվեցան «Հայկական Աշխարհի» հետ: «Վաճառականի» մասին արդէն կարելի է մի քիչ երկար խօսել, որովհետև դա մի հետաքրքրական երևոյթ էր մեր մամուլի զարգացման տեսակէտից:

«Վաճառականը» իրան կոչում էր «Թիֆլիսի առևտրական դաղէթ» և առաջին անգամ լոյս տեսաւ 1866-ի մարտի 6-ին: Ամբողջին



էր Գեորգ Տէր-Աղէքսանդրեան, զլխաւոր. և համարեա միակ աշխատակիցը—Աղէքսանդր Երիցեան. երկուան էլ մեծ ուսում չը ստացած, բայց բարի դիտաւորութիւններով լըցված: «Վաճառականը» ժողովրդական լրագրի մի փորձ էր. այդ քիչ է, նա խօսում էր այնպիսի առարկաների մասին, որոնք տեղ չէին գտնուում դպրոց և եկեղեցի միայն ճանաչող մեր միւս լրագիրների և ամսագիրների մէջ:

«Հայկական Աշխարհը» սաստիկ ծագում էր այդ նոր թերթը: Բայց ինքը, այդ «Հայկական Աշխարհը», երբէք չէր գրում անտեսական, արդիւնաբերական, ստեղծարարական հարցերի մասին: Այդ բանը անում էր «Վաճառականը»: Ճիշտ է, անում էր շատ թոյլ, միամիտ կերպով, այնպէս, ինչպէս թոյլ էր տալիս նրա խմբագիրների տկար կարողութիւնը մի այդպիսի մեղանում նոր, մասնագիտական պատրաստութիւն պահանջող դործի մէջ: Բայց հօ «Վաճառականն» էլ կարող էր իւրաքանչիւր համարի ճակատին դրել «Հայկական Աշխարհի» նշանաբանը. «Ինչ կարող եմ, կատարում եմ, թո՛ղ կատարէ առաւել լաւ ու կարող է»:

Աւելի լաւ կատարողներ չը կային: Հայ ընթերցողը միշտ պիտի լսէր վարդապետութիւններ, քարոզներ բարձր առարկաների

մասին, բայց դործնական կեանքին ծառայող մասնուլ չունէր: «Վաճառականը» դալիս է այդ պակասը լրացնելու. նա յայտնում է թէ ինչ գրութեան մէջ է անտեսական աշխարհը եւրօսլայում, տալիս է թիֆլիսի շուկայի դները. նա գիտէ որ հայ վաճառականների մեծ մասը արքունական կապալներով է պարապում, ուստի տապաղում է զանազան կապալների և աճուրդների յայտարարութիւնները: Եւ չը կարճէք թէ «Վաճառականը» չը գիտէ լրագրական ուրիշ պարտաւորութիւններ: Ո՛չ, նա տալիս է և դրականունութիւն. դրական կրիտիկա, պատկերներ կեանքից, մի-մի անգամ էլ նոյն իսկ հասարակական հարցեր էլ է շօշափում: Նա աշխատում է միանգամայն հասկանալի լինել վաճառականին, խօսել նրա հետ նրա դործածական լեզուով, ուստի բանեցնում է այսպիսի լեզու.

Գասուղարստովեննիս Իմուչեստով Գեպարտամնտունը նշանակած է էս մարտի 20-ին Թէլաւի ուեղդի Օժիօ եւ Խօրիւի անունով գեղերի մէջը գտնված երկու եկեղեցական բաղի իջարով տալու տորգը: Կավկազսկի Վաեննի Օկրուզի Վոյեննո Մեղիցինսկի ուպրավլենիումը նշանակած է ավրիլի 4-ին Թիֆլիսի Չապասնի արտեկի մասերեալների, պրիպանների եւ կաւէ ամանների հասցնելու տորգը:



Այսպիսի սրտաբաց պարզութեամբ շարաթաթերթը յարմարվում էր իր ընթերցողների լեզուագիտական կարողութեան նաև իր ուրիշ բաժիններում, ուր խօսքը «տորգերի» մասին չէր, այլ վերաբերվում էր տնտեսական և առևտրական կացութեան, գրականութեան: Հարցը, սակայն, սրա մէջ չէ: Իբրև առևտրական-գրական շարաթաթերթ, «Վաճառականը» շատ քիչ ուշադրութեան է արժանի և կարելի է ապահով լինել որ նրա ընթերցող հայ վաճառականը ոչ առանձին հարուստ ու բազմակողմանի տեղեկութիւններ է ստացել նրանից, ոչ մանաւանդ զարգացել է իբրև վաճառական, որի միտքը ուղղում են լուսաւորել, որին ուղղում են ղեկավարել, ցոյց տալ, տանել դէպի առաջ:

Բայց մամուլի պատմութիւն գրողը, կարգալով «Վաճառականի» առաջնորդողները, ուրիշ բաժինները, կանգ կառնէ մի հանգամանքի առաջ, որ հետաքրքրական երևոյթի կերպարանք ունի: Նա կը տեսնէ ժամանակից ծնվող պահանջը: Դա այն պահանջն է, որ մամուլը պիտի թողնէ իր խրատական-ճառական ուղղութիւնը, ամպերից վայր իջնէ և այս աշխարհի հարցերն էլ քննէ, մարդու, հողի, բնութեան ոյժերի, մարդկային յարաբերութիւնների, մի խօսքով դործնա-

կան, կենդանի կեանքի հարցերը: Այդ պահանջը զգացվում էր, և մեղաւորները «Վաճառականի» խմբագիրները չէին, որ կարողութիւն չունէին այդ պահանջին բաւարարութիւն տալու: Նրանք կարող էին մի փորձ անել և անպատճառ անաջող փորձ: Դա դատող ու ճառող ամսագրական մամուլից աւօրեայ լրագրութեան անցնելու փորձն էր: Եւ, ի հարկէ, երկար ապրել չէր կարող. յաջորդ տարին նա արդէն մեռած էր, իսկ «Հայկական Աշխարհը» չարախնդաց հեղինակութեամբ թաղման մի երկար հանդէս էր կատարում նրա գերեզմանի վրա:

Գալով «Գարուն» ամսագրին, բաւական կը լինի ասել այսքանը միայն, որ նրա խմբագիրն էր «Մեղուի» հիմնադիր Ստեփան քահանայ Մանգինեանը: 1862-ին «Իմ նիսիէքը» աղերսական աղաղակով մամուլի սպարէզից փախած քահանայն դարձեալ զալիս էր խմբագրի պաշտօնով: Ի՞նչ ունէր անելու: — Իր եկեղեցական պատմութիւնը տպելու, Տէրունական աղօթքի մեկնութիւնը տալու, դէսից դէնից ձեռք բերած յօդուածներով գարուն ստեղծելու:

Մեր ամսագրի անունը կոչեցինք «Գարուն», որ եկեղեցական, կրօնական, ուսումնական եւ բարոյա-



կան զիտուժիւնների բուրաստաններից քաղելով ծաղիկներ, փունջ կապենք ամազրիս միջոցով, եւ ամեն ամիս ընծայենք մեր սիրելի եղբարց, ինչպէս Գարնան վարդի փունջ:

Այս էր ասում Մանգիւնեան քահանան իր ամազրի առաջին համարում: Բայց նրա գարունը դուրս եկաւ մի չոր, անապատ ու մեռած աշնանավերջ: Թաղվեց «Վաճառականի» հետ:

## III

Դրիգոր Արծրունու աշխատակցութիւնը «Մեղունի» եւ «Հայկական Աշխատիկն»:—Հաստ ուղղութիւն, ոմ, գրութեան մեւ:—Հայերէն լեզու:—Անդրակի յօդուած. դասխարակութիւն, կանանց հարց:—Սեփականի վերաբերմունքը իր նոր աշխատակցին:—«Գերդասանի ազդեցութիւն եւ համաշարսն»:—«Բացված մարդ» հասկացողութիւնը:—Ի՞նչ է զարգացումը:—Խառն ուսումնարանների հարց:—Ազատութիւնը զարգացման հիմք: Գրական-հասարակական ցարեր:—«Երկուսից ո՞րն է շար»:—Գեղարուեստի նշանակութիւնը:—«Գրականութիւն չը կայ»:—Օգուտ, ժողովրդի դատը, մտածող տեսչիս:—Մի հակաճառութիւն:—Արծրունի եւ Գիսարեւ:—Հասարակական կարծիքի որոնումն. «Չարունակե՞նք քե ոչ»:—Տնտեսական հարցեր եւ կրթական ընկերութիւն:

—o—

Այդպէս էր հայոց մամուլի դրութիւնը Ռուսաստանում, երբ Դրիգոր Արծրունին սկսեց գրել:

Իր առաջին երկու յօդուածները, ինչպէս տեսանք, նա տպագրեց «Մեղու Հայաստանի» լրագրում 1865-ին: Այնուհետեւ էլ նա մի



քանի անգամ երեսաց այդ լրագրում: Սակայն նրա աշխատակցութիւնը ամենից շատ բեղմնաւոր էր Ստեփանէի «Հայկական Աշխարհի» մէջ: Այստեղ Արծրունին մի շատ եռանդոտ աշխատակից էր, գրում էր իր իսկական ստորագրութեամբ և այնքան շատ ու լաւ, որ շուտով անուն հանեց ամսագրի ընթերցողների շրջանում:

Հէնց սկզբից, գրական գործունէութեան առաջին, դեռ նոյն իսկ թոյլ, անվստահ քայլերից, Գրիգոր Արծրունին երևան է գալիս իբրև մի շատ ինքնատիպ գէմք, մի անկախ բնաւորութիւն: Քսան և հինգ տարեկան երիտասարդը արդէն վերջնականապէս կազմակերպված է իբրև հասարակական գործիչ, ունի իր որոշ գոյնը, յայտնի և պարզ դաւանանքներ: Դա նրանցից չէր, որոնք սուպարէզ մտնելուց յետոյ են սկսում ճանապարհներ որոնել, ենթարկվել տատանումների, աջից ձախ և ձախից աջ ընկնել: Դիսաւոր սկզբունքների, հիմնական դաւանութիւնների տեսակէտից չէ կարելի գտնել այնպիսի գրուածքներ, որոնցից Արծրունին հրաժարվելու կարիք ունենար իր ամբողջ կեանքի ընթացքում: Այս պատճառով ոչինչ չէր նշանակում այն, որ նա երկար ժամանակ գրում էր «Մեղուի» պէս մի լրագրում,

որ յետոյ դարձաւ նրա ամենաթունդ թշնամին: «Մեղուի» մէջ էլ Արծրունին Արծրունի էր, նոյն գրական գործիչը, որ առանց սայթաքվելու, առանց շեղվելու գնում էր իր ուղիղ ճանապարհով:

Սա Արծրունու ամենախոշոր, նշանաւոր յատկութիւններից առաջինն էր: Երկրորդ նշանաւոր յատկութիւնը մտքեր արտայայտելու ձևն էր: Դեռ մի անյայտ ուսանող, նա ունէր իր սեփական, իրան միայն յատուկ ոճը. կտրուկ, եռանդոտ, հանրամատչելի: «Մեղուի» և «Հայկական Աշխարհի» ճապաղ անդոյն գրուածքների մէջ աչքի է ընկնում այդ սկսնակի ինքնուրոյն ոճը. կարճ նախադասութիւններ և պարբերութիւններ, մի աշխոյժ հետաքրքրութիւն շարժող արտայայտութիւն, և այդ արտաքին թեթև ձևի մէջ՝ համարձակ միտք, զեղեցիկ կերպով պատճառարանված տեսութիւններ, թարմութիւն, ոյժ: Գր. Արծրունին սիրում էր իր յօդուածները բաժանել մանր մասերի. նա սառն կերպով վարդապետող չէր, չէր ճառում, այլ զրոյց էր անում ընթերցողի հետ: Լինել պարզ ու հասկանալի, նկատի ունենալ որ ընթերցողը ոչինչ պատրաստութիւն չունի և կարօտ է տարրական հասկացողութիւնների, խուսափել աւելորդ շատախօ-



սութիւններից և երկարաբանութիւններից, խուսափել մի յօդուածի մէջ ամեն բան ասելու մոլութիւնից—ահա նրա գրելու ձևը: Աւելացնենք գրաւորա և մի այլ, միայն Արծրունուն յատուկ ձև—կրկնութիւնները, միևնոյն միտքը միևնոյն բառերով շատ տեղ արտայայտելը. սրանով նա, կարծես, հայում



Գրիգոր Արծրունին ուսանող Հեղուէրզում

ածում էր իր գաղափարները ընթերցողի մէջ, ինչպէս ասում ենք՝ ծամում, բերանն էր դընում:

Իսկ ի՞նչ լեզուով էր գրում Արծրունին—Մենք արդէն գիտենք թէ ինչպէս էր նա վե-

րաբերվում հայերէն լեզուին: Այժմ, ուսանողութեան ժամանակ, երբ հասկացողութիւնները այնպէս արմատապէս փոփոխվել էին, երբ նա որոնում էր թէ ուր է իր ազգութիւնը, առաջ է գալիս լեզուն իմանալու անհրաժեշտութիւն: Եւ Արծրունին սկսում է սովորել, այնպէս սովորել, որ կարողանում է յօդուածներ ուղարկել հայերէն պարբերական հրատարակութիւններին: Եւ սրբախի կարճ միջոցում...

Դա մի փայլուն օրինակ է: Հայերէնը նոյն իսկ ընտանեկան-գործածական լեզու չէր եղած նրա համար. նա կրթվել էր համարեա բոլորովին օտարացած: Բայց ուսանողական առաջին տարիներում վճռելով գրել հայերի համար, դառնալ հայ հրապարակախօս, նա, բնականաբար, պէտք է սովորէր իր համար գրելի խորթ, օտար հայերէնը: Եւ նա սովորեց, սովորեց՝ որքան կարող էր սովորել մի ուսանող: Շատ շատերը կան մեզանում, որոնք ծնված լինելով աւելի նպաստաւոր հանդամանքների մէջ, այսինքն հայախօս ընտանիքներում, հարկաւոր են համարում կատարելապէս մոռանալ իրանց մայրենի լեզուն և արդարացնում են իրանց անտարբերութիւնը դէպի հայկական գրականութիւնը այն ստերէօտիպ խօսքերով թէ



Վ հայերէն չը գիտեն: Բայց դա արդարացում չէ, այլ ցոյց է տալիս միայն թշուառ հասկացողութիւնների տիրապետութիւնը: Մենք չուտով կը տեսնենք թէ ինչպէս էր Արծրունին ըմբռնում մայրենի լեզուի նշանակութիւնը. կը տեսնենք և այն, որ բաւական չը համարելով ինքնակրթութեամբ, ուսանողական պարապմունքների մէջ ինքնազուլի վարժութիւններով ձեռք բերած հայերէնագիտութիւնը, նա գնաց հայերէնի դասեր էլ առնելու: Կան մարդիկ, որոնք իրանց կոչման ետեից դնում են կատարեալ գիտակցութեամբ, սակաւաթիւ են լինում այդպիսի մարդիկ, և Արծրունին, մէկը այդ սակաւաթիւներից, արաւ այն, ինչ չեն անում կամ չեն ուզում անել հարիւրաւոր նրա նման օտարացածները:

Ի հարկէ, հեշտ չէր միանգամից իւրացնել հայերէն լեզուն: Նա դեռ թոյլ էր իբրև հայերէն գրող և խմբագրութիւնները ուղղում էին նրա լեզուն: Այս բանը կարելի է հեշտ խմանալ, համեմատելով Արծրունու այն յօդուածները, որոնք տպւում էին «Մեղուի» և «Հայկական Աշխարհի» մէջ. օրինակ, միևնոյն գրչի տակից դուրս եկած գրուածներում մենք մի տեղ տեսնում ենք «էնդուր որ» («Մեղուի» լեզու), միւս տեղ «այնոր

համար» («Հայկական Աշխարհի» լեզու): Եւ Արծրունին ոչինչ չունէր դրա դէմ. նա մինչև անգամ հրապարակով շնորհակալութիւն էր յայտնում «Հայկական Աշխարհին», որ «նա այնպէս գեղեցիկ կերպով ուղղում է իր ոճը»: Լեզուին նա նայում էր ոչ իբրև նպատակի, այլ միջոցի վրա: Եւ սակայն Արծրունու հակառակորդները միշտ այն էին պահանջում որ նա լեզուն նպատակ դարձնէ: Այս առարկային մենք դեռ կը վերադառնանք: Այժմ հետեւենք Արծրունու գրուածքներին: ✓

Իր անդրանիկ յօդուածում \*) Արծրունին զինվում է գոյութիւն ունեցող դաստիարակչական սիստեմի դէմ: Սերունդ դաստիարակողներն են դպրոցը և ընտանիքը: Դպրոցում տիրում է անօգտակար դաստիարակութիւն, որ չէ ծանօթացնում դաստիարակվողին ընական գիտութիւնների հետ, այսինքն չէ հասկացնում թէ ինչ է մարդը, ինչ է նրա ընդհանուր հայրենիքը—աշխարհը, ինչ օրէնքներով է կառավարվում ընտելութիւնը, տիեզերքը և այլն:

Գալով երկրորդ դաստիարակչին, այսինքն ընտանիքին, Արծրունին ասում է որ

\*) «Բնական գիտութիւնների նշանակութիւնը դաստիարակութեան մէջ» («Մեղու», 1865, № 13 և 14):



ընտանիքը ազատ, խելացի, առաջագէտ զարգացման թշնամին է: Ինքը, այդ երիտասարդ ուսանողը, ընտանիքի բռնակալ լուծից ազատված միտքն էր: Գենեքալ Արծրունու երկաթէ խնամակալութիւնը Գրիգորին շատ բան էր սովորեցրել, ազգու բողոքի շատ նիւթ էր պատրաստել: Կեանքի երկարամեայ փորձը այն աստիճան ճնշող էր նրա համար, որ նա իր ազատութեան հէնց առաջին քայլերից զինվեց ծնողական լուծի դէմ: Ընտանիքը—նախապաշարմունքների բոյն. ընտանիքը—հին, փտած գաղափարները խստութեամբ պահպանող, նուիրագործող. ընտանիքը—հաւասարութեան, ազատութեան սկզբունքը խեղդող և անսահման բռնակալութիւնը սըրբագործող:—Ի՞նչ կը լինի այդպիսի մթնոլորտում մեծացող նոր սերունդը:

Պէտք է այդ սերունդը ազատել ընտանիքի խեղդող ազդեցութիւնից. պէտք է նրան միջոց տալ հեռանալու նախապաշարմունքների միջավայրից, կրթվելու ազատ եւ անկախ, կրթվելու իբրև ժամանակի զաւակ, դրական գիտութիւնների պահանջների համաձայն:

Նայելով հայ ընտանիքի խորքին, Արծրունին տեսնում է այդտեղ դարաւոր մեծ անարդարութիւնը: Տղամարդը դեռ կարող է

հեռանալ ընտանիքից, կրթվել նրա ազդեցութիւնից դուրս: Բայց ի՞նչ անէ կինը: Նա չէ կարող հեռանալ, նա պինդ կապված է ընտանիքի հետ, ճնշված է այնտեղ և միշտ սողէտ է, անպատրաստ: Բարեկարգ, լուսաւոր ընտանիք, ընտանեկան դաստիարակութիւն չէ էլ կարող լինել, քանի որ ընտանիքի և հասարակութեան մէջ այնքան կարևոր դեր կատարող կինը միանգամայն անպատրաստ է, սողէտ: Եւ Արծրունին պահանջում է կնոջ համար էլ օգտակար, իրական և լայն կրթութիւն՝ տղամարդի հետ համահաւասար:

Այսպէս, իր առաջին իսկ քայլից Արծրունին հանդիսանում է կանանց հարցի ջերմ, պերճախօս պաշտպան: Կինը իբրև լիակատար իրաւունքներով մարդ, կինը իբրև հասարակական գործիչ—անհա Արծրունու իրէտալը այն օրից, երբ նա առաջին անգամ գրիչ վերցրեց իր ձեռքը:

Ահա ինչ էր գրում այդ գրիչը.

Ենդ հայոց կանայք, կարծում են թէ ձեզ հարկաւոր չէ կրթութիւնը. ձեր հայրեր չեն տուել ձեզ կրթութիւն եւ չեն էլ տալիս մինչեւ հիմի: Կարծում են, թէ զեղեցկութիւնը եւ փողը աղջկայ ամենամեծ արժանաւորութիւններ են, եւ այս արժանաւորութիւնների տէր լինելով աղջիկը կարող է մարդու գնալ: Բայց չեն մտածում այն բանի վերայ, որ,



մայր դառնալով, նա չէ կարող օրինաւոր դաստիարակութիւն տալ իր որդիերանց, էնդուր որ ինքն տրգէտ է: չունի մինչեւ անգամ մի թեթեւ հասկացողութիւն մարդու բնութեան վերայ, կեանքի եւ դաստիարակութեան վերայ: Մարդու բնութիւնը, կասեմ ինձ: մինձէ կարելի է մի ջահէլ աղջկայ ձեռքին տալ մի գիրք, որի բովանդակութիւնը լինի Անատոմիա եւ Ֆիզիոլոգիա, այսինքն, մարդու մարմնի եւ կեանքի ուսումը: Մինձէ այդ ամօթ չէ: Ինչո՞ւ է ամօթ, պատասխան եմ տալիս ես, ինչի էք կարծում, որ աղջկերք տգէտ պէտք է լինին, եւ տղայոց նման չպէտք է ուսում առնեն. ինչո՞ւ... Բայց ինձ չեն էլ ուզում լսել եւ կրկնում են. ամօթ է, ամօթ. ուրեմն, եմէ այդպէս է, պատրաստեցէք մի անպիտան սերունդ, անպիտան թէ հոգով եւ թէ մարմնով. այս երեւի ամօթ չէ:

Նախապաշարմունքները, պապենական աւանդութիւնները չեն թոյլ տալիս իւրացնել դաստիարակութիւնը լայն հայեացքով: Եւ իր առաջին բողոքը այդ նախապաշարված իրականութեան դէմ Արծրունին վերջացնում էր Հերշէլի հետեւալ խօսքերով. «Յառաջագիմութեան համար հարկաւոր է մարդուս ոչ թէ միայն շատ բաներ ուսանել, բայց և հարկաւոր է նրան շատ բաներ մոռանալ»: Այս գեղեցիկ խօսքերը Արծրունին նշանաբան է դարձնում իր ամբողջ գործունէութեան համար: Նա ոչ միայն ինքն է շատ բան մոռանում, այլ և իր ամբողջ ոյժով աշ-

խատում է որ հասարակութեանն էլ մոռացնել տայ շատ բան:

Նոյն այդ դաստիարակութեան հարցին Գրիգոր Արծրունին վերադառնում է իր երկրորդ յօդուածում, որ նուիրված էր յատկապէս աղջիկների կրթութեան \*): Ասելով իր առաջին յօդուածի մէջ թէ հայ կինը միանգամայն տղէտ է, միանգամայն անպատրաստ, Արծրունին միայն խաւար ու անուս մեծամասնութիւնը չունէր ի նկատի, միայն այն բազմութիւնը, որ առհասարակ հարկաւոր չէր համարում ուսում տալ աղջիկներին: Ո՛չ, նա խօսում էր ընդհանրապէս, աչքի առաջ ունենալով և կրթութիւն ստացող աղջիկներին:

Ծանօթ էք դուք մեր աղջկերանց դաստիարակութեան կանոնների հետ, — հարցնում է նա: — Այս կանոնները շատ հեշտ է մտրում պահել: Ով որ կարողութիւն ունի, պարտաւորութիւն պէտք է համարի սովորցնել իր աղջկան ֆրանսերէն լեզու, պիտանօ ամելը, լաւ ճաշակ ունենալ շորեր ընտրելու ժամանակ եւ զիսաւոր բանը — մունջ կենալ:

Ահա մեր կրթութեան ուղղութիւնը: Ահա ամենամեծ կրթութեան աստիճանը, որին մեռերի կար-

\*) «Երկու խօսք աղջկերանց դաստիարակութեան վերա», № 23:



ծիրով կարող է հասնել կնամարդը: Իսկ ես կասեմ որ այդ տեսակ կրթութիւնը կրթութիւն չէ:

Ի՞նչ ենք պահանջում կնամարդուց: Մենք պահանջում ենք նրանից, որ նա օգուտ բերի հասարակութեան, իսկ այդ կերպով կրթած կնամարդը երբէք օգուտ չէ կարող բերել, որովհետեւ նորա ըստացած կրթութիւնը չէ բաւականացնում հասարակութեան պիտոյքներին:

**Դպրոցական կրթութիւնը Արծրունին այսպէս է նկարագրում.**

Յոյր ուսման ժամանակը աղջկերք սովորում են մեծ աշխատասիրութենով իրանց դասերը, խօսում են ֆրանսերէն, կորցնում են մեծ մասը իրանց առողջութիւնը, լցնում են իրանց գլխները դարդակ բաներով ու նախապաշարմունքներով, իսկ իրանց մտքի զարգացումը շատ քիչ են առաջ տանում: Սովորում են բառ առ բառ ձեռնարկութեան գրքի խօսքերը, շատ անգամ առանց նրանց միտքն էլ հասկանալու, իսկ վարժապետները այսպիսի հանգամանքների մէջ պարտաւորութիւն են համարում իսկական իրողութիւնների միտքը չմեկնել նրանց: Եւ այն աղջիկը, որ կուզենայ այս կամ այն իրողութեան վերայ դատողութիւն անել, կհամարվի ազատախօս կամ յիմար:

**Եւ ոչինչ հասկացողութիւն կնամարդի կոչման կամ մօր պարտաւորութիւնների մասին. աղջիկները ոչ միայն սեփական դատողութիւն ունենալու պատրաստութիւն չեն**

**ձեռք բերում, այլ և կորցնում են իրանց ունեցածը և նրանց մէջ սպանւում է բնական միտքը:**

Այդ կողմից ցածր դասի կանայք մինչեւ անգամ վեր են այդ տեսակ կրթած կնամարդերից. ցածրը դասի կնամարդը չէ կորցրել գոնեայ իր բնական խելքը, իսկ այն կրթեալ կուլտուրներին շատ անգամ տիրապետում է մի դարդակ ուղղութիւն, որ յարուցանում է նոցա մէջ զղուանք դէպի մտաւոր եւ մարմնաւոր աշխատանքը, սպանում է նրանց մէջ ուղիղ հայեացումը կեանքի վրայ, զարթուցանելով միայն էր դէպի անդադար զբօսանք եւ դարդակ պծնասիրութիւն:

**Ու հերքելով այն հին նախապաշարմունքը թէ կին մարդը ուրիշ կերպ չէ էլ կարող լինել, թէ նա ընդունակութիւն էլ չունի մըտաւոր գործունէութեան, զարգացման մէջ, Արծրունին անցնում է հայ աղջիկներին առնային դաստիարակութեան: Դպրոցը այնպէս է. իսկ ի՞նչ է տալիս ընտանիքը.**

Մեր տնային դաստիարակութիւնը հասարակաց դաստիարակութենից (դպրոց) անգամ վատ է: Ոչինչ չէ սպանում այնքան մարմին ու հոգի, ինչքան այս դարդակ դաստիարակութիւնը: Ինչ՞ու է այդպէս: Էնդուր որ մենք չենք հրաժարվել հին սովորութիւններից, իսկ նոր ուղղութիւնը չենք ընդունել իսկապէս: Եւրոպացիների կրթութենից մենք սեպակա-



նացրել ենք մեզ միայն արտաքին կողմը, իսկ կըրթուածեան հիմունքը դարձեալ ասիականն են: Մէկ կողմից երեխերանց ուսուցանում ենք Ֆրանսոզերէն խօսել, պիանօ ամել, կարդացնում ենք թեթեւ զըրականութեան անօգուտ գրքերը (օգտաւէտ գիտութիւնները շատ քիչ են ուսուցանում), հազցնում ենք նրանց եւրոպական շորերը.— իսկ միւս կողմից գերդաստանի հայրը նոյն ասիական հրամայողն է մընում, որի խօսքը պէտք է կատարվի առանց հակառակվելու: Երեխերը չունին մտածելու ու գործելու ազատութիւնը.— եւ այսպիսի ուղղութեան պըտուող ինչ է, անշուշտ թէ մարմնական թէ մտաւոր չզարգացումն: Տղայք շուտ են ազատվում այդ ուղղութեան լուծից, իսկ աղջկերք շատ անգամ բոլոր կեանքը չեն կարողանում ազատվել այս վատ կրթութեան ներգործութենից:

**Դա հասարակական գծրախտութիւն է: Չէ կարող հասարակութիւն զարգանալ, երջանկանալ, եթէ կիներ մնայ անկիրթ կամ գրսից միայն կրթված:**

Տղամարդը բազմութիւն է դաստիարակում, կնամարդը անհատներին. բայց անհատներից է կազմվում եւ հասարակութիւնը. ուրեմն կնամարդու նըպատակն էլ նոյնպէս է հասարակութեան համար օգտաւէտ անդամներ պատրաստելը. նպատակը մի է բերել օգուտ հասարակութեան: Որովհետեւ կնամարդը առանձին անձների հոգեւոր եւ մտաւոր դաստիարակչի պաշտօն է կատարում, ուրեմն նա կարող է ոչ թէ միայն իր զաւակներին բարոյական ուղղու-

թիւն տալ, այլ նա նոյնպէս ընդունակ է եւ ամեն մարդու վերայ, ով որ նրա ձեռքի տակն է ընկնում, բարոյական ազդեցութիւն ունենալ: Յայտնի բան է, որ ինչքան հաստատ կրթութիւն կոտանան կնամարդիկ, այնքան էլ աւելի կերեւայ նոցա ազդեցութիւնը հասարակութեան մէջ: Իսկ անկիրթ ազգերի մէջ այս ազդեցութիւնը գրեթէ աննկատելի է, ինչպէս ընդհանրապէս եւ մեր Հայերի մէջ էլ: Մեր կնամարդիկ առհասարակ չեն ստացել կրթութիւն, այնպէս որ նոցա մեծ մասը միշտ իրանց մարդոց կոպիտ ազդեցութեան տակն են ընկնում: Հայը անսահման հրամայող է իր գերդաստանի մէջ, նորա կինը ու որդիքը պէտք է լսեն նորա խօսքերը առանց հակառակելու: Այս հանգամանքից Հայի մէջ ծագեցան այն աննախանձելի յատկութիւնները, որոնց ամենավատերը են իշխանասիրութիւն եւ կամակորութիւնը. նորա այս պակասութիւնները երեւում են նորա ամեն գործի մէջ: Աւելացրէք այդ պակասութիւնների վերայ եւ մեր մտաւոր զարգացման պակասութիւնը, եւ ձեզ հասկանալի կլինի, թէ ինչու երբէք յաջողութիւն չկայ մեր ընդհանուր գործերի մէջ, թէպէտ եւ գործը ամենահեշտ ու չնչին գործ լինէր:

**Ի՞նչ անել, սակայն, որ ընտանիքը կենդանանայ, ինչպէս ազատել նրան «Երամայող, իշխանասէր և կամակոր» հօր ազդեցութիւնից: Արծրունին խելացի, կանօնաւոր, օգտաւէտ կրթութիւն է պահանջում:**

Փոխանակ աղջկան զլուխը յիմար ու անօգուտ առարկաներով լցնելու, ծանօթացնենք նրան հաս-



տատ գիտութիւնների հետ: Փոխանակ նորա բնական ուսումնասիրութիւններից ամէն բան թաղցնելու, ամօժ չհամարենք ծանօթացնել նրան բնութեան հետ, մարդու, մարմնի ու կեանքի ուսման հետ: Հարկաւոր չէ յափշտակել նորա միտքը զանազան առասպելներով, բայց ընդհակառակն, պէտք է աշխատել կազմելու նորա մէջ բնական եւ ուղիղ հայեցումը քաջախարհի վերայ: Մէկ խօսքով չպէտք է սպանել նորա հոգին ու մարմինը ասիական դաստիարակութեամբ, այլ նախապաշարմունքները դէն զցելով ծանօթացնել նրան իսկական գիտութիւնների հետ եւ մօտացնել նրան տղամարդոց ընկերութեան, որի զարգացումը աղջկերանց մտաւոր զարգացման կարող է մի մեծ օգուտ բերել եւ հիմքը դնել մի ուրիշ ուղղութեան, մի ուրիշ կեանքի:

Այս երկու յօդուածները, ինչպէս գիտենք, Արծրունին գրեց Պետերբուրգից: Այնուհետեւ հիւանդութիւնը տարաւ նրան արտասահման եւ նա համարեա մի տարի ստիպւած էր լռութիւն պահպանել: Պետերբուրգում դրած սկիզբը, ինչպէս տեսնում էք, չէ կարելի վատ անուանել մի հրապարակախօսի համար: Թէև այդ սկսնակը դեռ երկրորդ կուրսի ուսանող էր, դեռ 25 տարեկան, բայց հանդէս էր գալիս բաւական լուրջ պատրաստութեամբ: Փոքր ինչ խակութիւն գրուածքի մէջ, ի հարկէ, երևում է եւ չէ կարող չհրեւալ: Բայց որքան իմաստալից յօդուածներ

են, սրպիսի վստահութեամբ երիտասարդ հեղինակը գրիչ է շարժում, որքան կտրուկ կերպով լուծում է հարցերը:

Գրիգոր Արծրունու առաջին խօսքը ընտանիքի, անշարժութեան, բռնութեան դէմ էր: Ուսանողական նստարանից նա դատափետում էր անօգուտ, վերացական դաստիարակութիւնը, արտաքուստ իւրացրած քաղաքակրթութիւնը: Երեսուն հինգ տարուց աւել է անցել այն օրից եւ դեռ այսօր էլ ճշմարտութիւն շատ եւ շատ կայ այդ տեսութիւնների մէջ: Այսօր էլ ընտանիքը միևնոյն է, միևնոյն է մանաւանդ կանանց կրթութիւնը, հասարակութեան պահանջներին անհամապատասխան, պիանօի, արդ ու զարդի, պճնամոլութեան մի կրթութիւն: Կինը դեռ դաստիարակիչ չէ այն մտքով, ինչպէս հասկանում էր Արծրունին:

«Ես այդ կրթութիւնը կրթութիւն չեմ համարում», «հարցնում եմ», «ինձ պատասխան չեն տալիս»... Ո՛րպիսի համարձակութիւն գրական ասպարէզում նոր լոյս ընկած մի ուսանողի կողմից: Այդ ինքնավստահութիւնը, համոզված մարդու այդ կորովը Արծրունու առաջին քայլերի հետ երեսացող հիմնական յատկութիւններ են: Դա նրա բնութիւնն էր, նրա բարոյական ղէմքն էր



կազմում: Երկրորդ յօդուածը նա վերջացնում էր այսպիսի կծու հեզնութեամբ.

Բայց չկարծէք, յարգոյ ընծերցողներ, որ այս տողերի գրողը նպատակ ունէր խորհուրդներ տալու ոչ, նա մտադիր էր միայն իր միտքը յայտնել, եւ երբէք սովորութիւն չունի խրատելու, էնդուր որ նա չէ մոռացել մեր սիրելի բանաստեղծի \*) զեղեցիկ խօսքերը՝ թէ

Գրքիդ մէջ պարսաւանք մի տալ Հային,  
Հայը խրատ (թէ եւ խելօք) ատում է.

Մի ծիծաղիլ նորա տխմար գործերին,

Որ նա աւանդ հայրենական կարծում է...

Սկզբից և եթ պատերազմող, քանդող:  
Արտասահմանը աւելի ևս զարգացնում է  
նրա մէջ այս յատկութիւնները: Արտասահ-  
մանում նա աւելի ևս համարձակ ու ինքնա-  
վստահ է դառնում և նրա գրուածքները,  
արդէն արծրունական յատուկ ոճով, շօշա-  
փում են հասարակական և կրօնական զա-  
նազան հարցեր: Նա գրում է անդադար

«Հայկական Աշխարհի» 1867 թւի № 4—  
5-ի մէջ տպւեց «Աշխատենք» յօդուածը: Դա  
քաղուածք էր Փրանսիացի գրող էլիմօնը Ա-  
բուի «Le Progrès» (Առաջադիմութիւն) ա-  
նունով գրքից: Յօդուածի տակ գրված էր.

\*) Գամառ-Քաթիլա:

«Գրիգոր Արծրունի.—Նոյեմբեր, 1866»: Խըմ-  
բագրութիւնը աւելացնում էր այդ յօդուա-  
ծին հետեւեալ նկատողութիւնը.

Այս զեղեցիկ յօդվածը մենք հեռու տեղից, Ժե-  
նևից ստացանք վերջին օրերում մի հայկական ազ-  
նիվ երիտասարդից, որը, ինչպէս լսել էինք, զը-  
նացել էր Չվէիցարիա իւր ատղջութիւնը վերա-  
կանգնելու. Հասկանալի է, որ յօդվածս առանձին  
նշանակութիւն ունէ մեզ համար եւ շտապեցինք նո-  
րան հրատարակելու, մանավանդ սորա զեղեցիկ մըտ-  
քէրը շուտ հաղորդելու ընծերցողներիս:

Ստ. Ստեփանէն առհասարակ քնքշութեամբ  
և առանձին հիացմունքով էր վերաբերվում  
ուսանող երիտասարդներին, որոնք գրում  
էին իր ամսագրում: Բայց այլ էր նրա վե-  
րաբերմունքը դէպի Գրիգոր Արծրունին և  
այս նկատողութիւնը վերջինը չէ, որի մէջ  
նտ արժանաւոր մեծարանք էր մատուցա-  
նում իր աշխատակցի ընդունակութիւննե-  
րին: Այնուհետև էլ մինչև 1871 թւականը,  
ինչպէս կը տեսնենք, Ստեփանէն, ամեն յար-  
մար դէպքում, դովասանքներով էր յիշատա-  
կում Գրիգոր Արծրունուն, որ շուտով դար-  
ձաւ «Հայկական Աշխարհի» մէջ մի կենտրո-  
նական անձն, մի ոյժ, որ ստուերի մէջ էր  
թողնում նոյն իսկ խմբագրին: Այս հանդա-



մանքը ցոյց է տալիս որ Ստեփանէն ունէր մարդ ճանաչելու ընդունակութիւն. հէնց առաջին թարգմանական յօդուածից նա իմացաւ որ իր նոր աշխատակիցը «հայկական ազնիւ երիտասարդների» սովորական տիպին չէ պատկանում, որ նա ասելիքներ ունէր:

Առաջին յօդուածը, ճիշտ է, թարգմանական էր, ուրիշի յայտնած մտքերի քաղուածք էր, բայց հէնց ընտրութիւնը պարտաւորեցնում էր ուշադրութիւն դարձնել բժշկվելու համար արտասահման գնացած երիտասարդի վրա: Էդմօնդ Աբուն փառաբանում էր աշխատանքը իրրեմիակ անկասկած միջոց մարդկութիւնը բարեբախտութեան հասցնելու համար: Աշխատանքը իրրե ընդհանուր պարտականութիւն, իրրե իւրաքանչիւր մարդու հաւատամք. աշխատանք՝ չը նայած գործի դժուարութեան, աշխատանք՝ առանց վարձատրութեան, դափնիներ ստանալու ակնկալութեան. աշխատանք՝ մարդու, հասարակութեան օգտի համար: Այդ մտքերը շատ լաւ յարմարվում էին Արծրունու ընաւորութեան, ուղղութեան: Մի բէալիստ աշխատաւորի հոգին էր խօսում նրանց մէջ: Արծրունին, ինչպէս այդ տեսակ աշխատաւորի առաջին խոշոր տիպ մեղանում, Աբուն նոյն այդ մտքերով դուրս եկաւ հասարակութեան առաջ,

երբ յայտարարում էր թէ 1872 թւից պիտի հրատարակէ «Մշակ» լրագիրը:

«Ի՞նչ վնաս, թող յայտնի չլինին ասպագայ սերունդներին մեր անունները: Մեզ բաւական է, թէ մեր աշխատած գործը օգուտ կըբերէ մարդկութեանը:

«Թո՞ղ կորչէ անունը—բարի գործը չի կորչի... Աշխատենք»:

Թարգմանութեան հետեւեցին ինքնուրոյն յօդուածներ: Նոյն 1867-ին Ստեփանէն տպագրեց Արծրունու երկու յօդուածները—«Գերդաստանի ազդեցութիւն և Համալսարան» և «Քանի մի մտքեր»: Դրանց մէջ Արծրունին պտոյտ էր անում այն հարցերի շուրջը, որոնց շօշափել էր 1865-ին «Մեղուի» մէջ տպված իր յօդուածներում: Մենք տեսնում ենք նրան դարձեալ կուեղիս ընտանիքի վատ ազդեցութեան դէմ, դարձեալ կանանց համար ազատ ու օգտակար կրթութիւն պահանջելիս:

Առաջին յօդուածում Արծրունին խօսում է Թիֆլիսում համալսարան հիմնելու մասին: Յանկալի է այդպիսի մի բան թէ ոչ, եւ առանց տատանվելու, Արծրունին ասում է թէ ցանկալի չէ, ինքը չէր կամենայ որ Կովկասի մայրաքաղաքը ունենայ բարձրագոյն դպրոց: Պատճառը միևնոյնն է—ասիական



բանակալ ընտանիքի գոյութիւնը: Այդ ընտանիքը պիտի ոչնչացնէ համալսարանինչանակութիւնը, ազդեցութիւնը:

Բերենք մի քանի կտորներ այդ յօդուածից՝ աւելի Գրիգոր Արծրունու գրութեան ձևի, ոճի, դատողութեան եղանակի հետ ծանօթացնելու համար.

Ասենք Թիֆլիսում համալսարան կայ: Ասենք եւ երէկ զիմնազիստ էի Թիֆլիսի զիմնազիայում, եւ այսօր միեւնոյն քաղաքի մէջ ուսանող դարձայ. փոխվեցաւ արդեօք իմ դրութիւնս:

Ամենեւին ոչ: Այսօր երէկվայ նման ես դասերից յետոյ տուն եմ գալիս, նոյնպէս տեսնում եմ իմ գերդաստանի կեանքը, նոյնպէս լսում եմ իմ ծընողների խօսակցութիւնը, նոյնպէս երեխայ եմ:

Ուրեմն ձեր բոլոր ցաւը, կասեն ինձ, այն է որ երեխան իւր դրութիւնը չէ փոխում իւր գերդաստանում մնալով:—Սյո՛, այդ է իմ ցաւը եւ զիտէք ինչի: Այնոր համար որ ես կկամենայի, որ մարդիկ լաւանան (սա կարծեմ վատ ցանկութիւն չէ), բայց լաւանալ մարդիկ կարող են միայն փոխելով իւրանց դրութիւնը:

Մենք լաւ մարդիկ ենք, այդ ճշմարիտ է, բայց մեր երեխաներ մեզնից լաւ պէտք է լինին, իսկ մեր երեխաների երեխաներ առաւել եւս լաւ կլինին: Ինչի է այդպէս: Այնոր համար որ ինչքան զնում են մարդիկ, այնքան շատանում են զիտութիւնների: Կիտութիւնների շատանալու ժամանակ մարդիկ լաւանում են: Շատ մտածելուց լաւանալը մարդիկների մէջ ասում են «զարգացումը»:

Մենք ամէնքս պէտք է աշխատենք զարգացնել մեր խելքը, որովհետեւ այն ժամանակ աւելի հեշտ կլինի մեր հայրենակիցներին օգուտ բերել, ուրեմն եւ հետագայ սերունդներին եւս առաւել լաւ կհանք պատրաստել:

Գուք համաձայն էք ինձ հետ, սիրելի ընծերցող\*), որ մենք պէտք է աշխատենք մեր խելքը զարգացնելու, բայց ասացէք ինձ, զուք ինչպէս էք կարծում, մենք որտեղ կարող ենք աւելի լաւ զարգացնել մեր խելքը՝ գերդաստանում ապրելով, կամ թէ մեր ծնողներից հետու մնալով ուսում առնելու ժամանակ:

Ես ասում եմ, որ երիտասարդի համար աւելի հեշտ է իւր խելքը զարգացնել իւր գերդաստանից հետու ապրելով, քան թէ իւր ծնողների մօտ մնալով:—«Ինչի է այդպէս, կասեն ինձ, մի՞թէ չէ կարելի սովորել ամեն տեղ»: Այդ ճշմարիտ է, պատասխանում եմ ես, բայց մարդս բացվելու ու առաջ զնալու համար բաւական չէ որ սովորէ, հարկաւոր է նմանապէս, որ նա եւ շատ մոռանայ: Եւ մոռանալ մինչեւ անգամ աւելի դժվար է քան թէ սովորել: Ի՞նչ է հարկաւոր մեզ մոռանալ: Հարկաւոր է մոռանալ գերդաստանի մէջ ստացած թիւր եւ ցուրտ մտքերը, բարբերի եւ վարբի կոպիտութիւնը եւ երեխայութենից զլսի մէջ արմատացած նախապաշարմունքը:

... Իւր ծնողներից միշտ կախված լինելով, երի-

\*) Ես ասում եմ «ընթերցող», բայց չեմ լմանում լինում են արդե՞ք ընթերցողներ այդպիսի յօդուածներին:



տասարդը չէ ուսումնասիրում կեանքը, չէ զարգացնում իր բնութիւնը, միշտ անփորձ է մնում կեանքի մէջ: Ոչինչ չէ զարգացնում այնպէս երիտասարդին, ինչպէս անկախ կեանքը, երբ որ մարդը սովորում է սեփական ընդունակութիւններին եւ բնութեան զօրութիւններին հաւատ ընծայել, ստիպված լինելով օգնել իւր անձին կեանքի ամէն դժուարութիւնների մէջ:

Մենք չենք քննի այստեղ այն հարցը թէ որքան ճիշտ էր Արծրունու հայնցակէտը կովկասեան համալսարանի մասին: Կարելի էր առարկութիւններ անել այդ մտքերի դէմ: Կարելի էր, օրինակ, ցոյց տալ որ Թիֆլիսի համալսարանը, միւս կողմից, այն օգուտը կը տար որ մատչելի կը դարձնէր բարձրագոյն ուսումը մեր երկրի ազգաբնակչութեան ստորին, անապահով դասակարգերին. կովկասը այն օգուտը կը ստանար, որ բարձր ուսում ստացած մարդէկ շատ կունենար: Ինքը Արծրունին, տարիներ անցնելուց յետոյ, «Մշակի» մէջ սկսեց քարոզել թէ պէտք է բաց անել համալսարան Թիֆլիսում: Այդ ժամանակ նա, յիշելով իր յօգուածները «Հայկական Աշխարհում», ասում էր թէ Թիֆլիսը փոխվիլ է, առաջագիմել է, այժմ կարող է համալսարանական քաղաք դառնալ: Վիճելի է և այդ հանգամանքը, Բայց մենք մի կողմ

թողնելով այդ բոլորը, այստեղ կանգ կանենք Արծրունու գլխաւոր մտքի վրա, որ, մեր կարծիքով, անհերքելի ճշմարտութիւն է ներկայացնում:

Բանն այն է, որ Արծրունին բաւական չէր համարում այն ուսումը, որ տալիս է համալսարանը: Ոչ թէ դէպքում, ոչ թէ պաշտօնապէս վկայված կրթութիւն, այլ իսկական զարգացում: Անշուշտ, այն ժամանակներն էլ կային դիպքում ստացած շատերը: Բայց միթէ դրանք բոլորը իսկապէս կրթված, իսկապէս լայն զարգացման տիրացած մարդիկ էին, որ կարողանային յեղափոխութիւն առաջացնել մեր կեանքի մէջ:— Ի հարկէ, ոչ:

Ի՞նչ էր հասկանում լուսաւորութիւն բառով,— հարցնում է Արծրունին.— Այն, որ մեր մէջ աւելի կլինին ուսումն աւարտած երիտասարդներ. այդպէս չէ: Բայց այդ բաւական չէ: Ցանկալի կլինէր, որ բացված մարդիկ առաւել մեծ թւով լինէին մեր մէջ:

Սա մի շատ կարեւոր հայնցակէտ է Արծրունու գործունէութեան մէջ: Այժմից նա պարզում էր այն, ինչ ապագայում ամենակատաղի կռիւների առարկայ պիտի դառնար: Արծրունին պատերազմ հրատարակեց ոչ միայն հին սերունդի, յետամնացութեան, լուսաւարասիրութեան դէմ, այլ և համալսարանա-



կան այն ինտելիգենցիայի դէմ, որ չէր կատարում իր դերը, որ ընդունակութիւն և պատրաստութիւն չունէր կեանքի մէջ կուլտուրական—առաջադիմական գործ կատարելու և, ընդհակառակն, խոչընդոտ էր հանդիսանում, արգելքներ էր առաջ բերում: Եւ հարուածելով այդ ինտելիգենցիան, Արծրունին ի նկատի չէր առնում համալսարանական դիպլոմները: Բաւական չեն դիպլոմները, յայտարարում էր նա դեռ իր գրական գործունէութեան սկզբում. հարկաւոր են զարգացած, «բացված» մարդիկ: Եւ այսպիսի համալսարանական սերունդ պատրաստելու համար, ի հարկէ, յարմար միջավայր չէր թիֆլիսը, ուր համալսարանի պատերից դուրս ուսանողը ընդանուր զարգացողական շրջաններ չէր գտնի: Արծրունին առաջնակարգ խոչընդոտ համարում էր ընտանիքը: Եւ միթէ կարող էր ուրիշ կերպ դատել հայ ընտանիքից դուրս եկած երիտասարդը: Յիշենք Արովեանցին, Նազարեանցին, յիշենք թէ որքան ահագին ազդեցութիւն ունեցաւ նրանց զարգացման վրա գերմանական ընտանիքը, որի ծոցում ապրում էին մեր առաջին պիօներները: Այնքան մեծ էր տարբերութիւնը եւրօպական և ասիական ընտանիքի մէջ, որ Արովեանցն էլ, Նազար-

եանցն էլ կտրվեցին իրանց հայրենի ընտանիքներից, գերմանուհիների հետ ամուսնացան:

Համալսարանի փոխարէն Արծրունին խորհուրդ էր տալիս հիմնել Թիֆլիսում հասարակական դասախօսութիւններ: Այդ միջոցով դիտութիւնը հասկանալի կը դառնար հասարակութեան բոլոր խաւերի համար: Ուսանող երիտասարդութիւնը, ի հարկէ, դարձեալ կը զիմէր օտար երկիրներ՝ համալսարան մտնելու համար, որովհետև հասարակական դասախօսութիւնները չեն կարող փոխարինել համալսարանը. նրանք այն օգուտը կը տան միայն, որ ժողովուրդը կը ծանօթանար գիտութեան հետ և այդպիսով կամացկամաց կը դաստիարակվէր, կը դառնար մի այնպիսի հասարակութիւն, որ այլևս չի լինի համալսարանական կրթութեան համար մի վերին աստիճանի աննպաստ միջավայր:

Ուրեմն, դեռ 1867 թիւին Արծրունին մեր երկրի համար առաջարկում էր ժողովրդական համալսարան, այն մեծագործ հիմնարկութիւնը, որ այժմ այնքան տարածված է արևմուտքում և քաղաքակրթված ազգերի պարծանքն է կազմում:

Նոյնպիսի գեղեցիկ նորութիւն պարունակում է իր մէջ և «Բանի մի մտքեր» յօդ-



ուածը: Ազատ, բնական զարգացման կողմնակից Գրիգոր Արծրունին այստեղ դատաւարտում է միակողմանի զարգացումը, խօսում է բարոյականացնող դաստիարակութեան մասին:

Բարոյականացնող դաստիարակութիւն... Ձը կարծէք թէ Արծրունին այնպէս էր հասկանում այդ բանը, ինչպէս առհասարակ հասկանում էին այն ժամանակները: Բարոյականացնող դաստիարակութիւնը, տիրող ընդհանուր կարծիքով, ձեռք է բերվում բարոյական-խրատական ուղղութեամբ, այսպէս անուանված՝ հողեշահ ընթերցանութեամբ, կրօնասիրութեամբ, մի խօսքով այն բոլոր միջոցներով, որ մշակել է կէս-վանական և կէսաշխարհական դաստիարակութիւնը: Արծրունին այդ բոլոր միջոցների մասին խօսք անգամ չէ ասում. բարոյականացնող դաստիարակութիւնը նրա համար նոյն ազատ, բնական, օգտակար կրթութիւնն էր:

Բարոյական հասկացողութիւնն էլ անհատի ստացած կրթութեան հետեանք է: Եթէ այդ կրթութիւնը չէ եղել միակողմանի, սահմանափակ, եթէ մարդը իսկապէս զարգացած է, եթէ նրա բնական ընդունակութիւններն են նրա զարգացման հիմքը զարթել, նա, ուրեմն, ունի ինքնաճանաչութեան, ինք-

նաքննութեան մի հզօր միջոց իր արարքները քննելու և նրանց լաւն ու վատը իմանալու համար: Քիչ կրթված, միակողմանի կրթված, մանաւանդ անբնական, արհեստական կրթութիւն ստացած մարդը անկարող է հասկանալ թէ ինչ է վատութիւնը:

Երեխային դեռ դպրոցական հասակից են զրկում այդպիսի բնական, լայն զարգացում ստանալու հնարաւորութիւնից: Երեխան ուղարկվում է այն դպրոցը, ստանում է այն կրթութիւնը, ինչ որոշում են ծնողները: Ի՞նչ պէտք է դառնայ երեխան ապագայում — այդ վճռում են նրա ծնողները, մինչդեռ վճռողը ինքը երեխան պիտի լինի: Եւ այսպէս մոռացվում, արհամարհվում է բնական մեծ օրէնքը:

Մարդիկ հաւասար ընդունակութիւններով չեն ծնվում: Մէկ երեխայ մի առարկայի ընդունակութիւն է ցոյց տալիս, միւսը ուրիշին: Եւ եթէ չէք իմանում ինչ բանին ընդունակ է երեխան, նորա խելքը չսպանելու համար, տուէք նորան այնպիսի դաստիարակութիւն, որ նա փոքր թէ շատ ամէն առարկաների վերա տեղեկութիւն ունենայ: Ես ասում եմ տեղեկութիւն ունենայ, եւ ոչ թէ իմանայ: Հարկաւոր չէ երեխային առարկաներ իմանալ, բաւական է, որ նա նոցա վերա հասկացողութիւն ունենայ, որ նա կարողանայ զարգացնել իւր միտքը, այսինքն տեսնել ինչ բանի նա ընդունակ է եւ ինչ բանի



ընդունակ չէ: Այն ժամանակ նա, մեծանալով եւ հասկանալով թէ ինչ առարկայի ընդունակութիւնն է զգում նա իւր մէջ, կընտրէ այն առարկան եւ կպարտապէ նրանով առանձնապէս:

Այդ պատճառով կարելի է ասել թէ մարդիկ ըստ պատճառում են իւրանց երեխաների միտքը, երբ դեռ փոքր հասակից, չիմանալով երեխաների ընդունակութիւնը, ստիպում են նոցա այս կամ այն բանով պարտապել, այս կամ այն առարկայ ընտրել: Մէկին ստիպում են զինւորական լինել, միւսին վաճառական:

**Միտք սպանող այս կրթութիւնը, այս ստիպողական ուսումը տալիս է հետեանքներ, որոնք աղէտալի են դաստիարակվողի համար:**

Երեխան ուրիշ առարկաներ չիմանալով, եւ պարտապելով միշտ ծնօղներից նշանակած առարկայով, որի ընդունակութիւնն չունի նա, կորցնում է վերջապէս հաւատ զէպի իւր հասկացողութիւնը: Նա իւրան անընդունակ տղայ է համարում, աւելորդ արարած աշխարհիս երեսին: Իսկ երբ որ մարդս իւրանից, իւր հասկացողութիւնից յոյս չունի, նորան մտնում է միայն իւրան արհամարհել եւ անմիտ ու անզոր՝ եւ անբարոյական կեանք վարել:

Ուրեմն առաջին նա կորցրեց ընդունակութիւնն, եւ երկրորդ բարոյականութիւնը:

**Չարգացած խելքը անբարոյականութեան թշնամին է. զարգացրէք խելքը, և բարոյա-**

**կանութիւնը, որ մեծ կապակցութիւն ունի նրա հետ, ինքն ըստ ինքեան կը գայ:**

Մեծ մասով մարդիկ այն պատճառով վատ են գործում, որ չեն մտածում արած բանի վերա: Ե՞րբ էք տեսել որ մարդը ուրիշ մարդին վատութիւն անելու ժամանակ, հաստատ իմանար, թէ նա վատութիւն է անում. մարդը վատ գործ եւս անելու ժամանակ կարծում է թէ նա արդար է: Ինչի է այդպէս. նորա համար որ նա կամ առիթ չէ ունեցել, կամ սովոր չէ իւր գործերը խելքով քննելու: Եւ թէպէտ նա արդար եւս չէ, նա պատճառ է զըտնում, որը, նորա կարծիքով, նորան պէտք է արդարացնէ՝ ձեր աչքերում:

**Այդ միտքը հաստատելու համար Արծրունին բերում է մի քանի օրինակներ, որոնցից կը վերցնենք մէկը.**

Այնպիսի մարդն եւս շատ անդամ տեսած կլինիք, որը թէպէտ եւ լաւ մարդ է, լաւ է իմանում իւր գործը, աշխատասէր է եւ օգտաւէտ իւր հասարակութեան համար, բայց իւր զերդաստանում եւ մասնաւոր կեանքի յարաբերութիւններում մինչեւ այն աստիճան անբարոյական է լինում, որ ստրկութեան մէջ է պահում իւր կլինը, կոպիտ կերպով է վարվում երեխաների հետ, չէ թոյլ տալիս իւր աղջկան իւր միտքը զարգացնել, — մի խօսքով սպանում է իւր զերդաստանի մէջ ամէն տեսակ մտաւոր կեանքը: Եւ այդ բոլորը անելով, այն լաւ մարդը կարծում է թէ զեռ լաւութիւն է անում իւր երեխաներին եւ



իւր կնոջ, նոցա հետ այդ կերպով վարվելով: Նա կարծում է թէ արդար է, որովհետեւ առիթ չէ ունեցել իւր կեանքում դաստիարակութեան վերա մտածելու: Նա լաւ է իմանում իւր գործը, բայց աւելի ոչինչ չէ իմանում: Եւ այդ բոլոր մարդիկ եւս կարծում են թէ արդար են, որովհետեւ առիթ չունեցան կամ սովոր չէին իւրանց կեանքի մէջ, իւրանց վարմունքի վերա մտածելու եւ իւրանց գործերը քննելու:

Այդ բոլոր մարդիկների անբարոյականութիւնը միակողմանի ուսումից է ծագում: Իսկ միակողմանի ուսումը, կամ միակողմանի զարգացումը այն ժամանակ է ծնվում, երբ որ մարդիկ առիթ չունին կամ սովոր չեն իւրանց արած գործերի վերա մտածել, նորա չեն մտածում, բայց ընդհակառակն նորա հիմնում են իւրանց վարմունքը հին արմատացած նախապաշարմունքի եւ ընդունած սովորութիւնների վերա:

Եթէ մտադիր էք վատ չանելու, պէտք է մտածէք այն բանի վերա, որ մտադիր էք անելու: Ուրեմն ինչքան շատ կմտածէք ձեր գործերի վերա, այնքան սակաւ վատութիւն կանէք:

Իսկ մտածել, սեփական գործերը քննադատել կարող է այն մարդը, որ զարգացած է բազմակողմանի կերպով: Նեղ, միակողմանի զարգացումից պէտք է հեռու մնալ: Միակողմանի նախապաշարմունքներով լի կըրթութեան սիստեմի մի երևոյթ է և այն, որ տղաները և աղջիկները անշատվում են միմեանցից, առանձին-առանձին դպրոցներում

են սովորում: Արծրունին ազգացուցանում է այդ սիստեմի անբարոյականացնող ազդեցութիւնը և առաջարկում է խառն դպրոցներ բաց անել:

Ամէնից մեծ անբարոյականութիւնը փակված ուսումնարանների մէջ է լինում, թէ տղաների եւ թէ աղջիկների, — ասում է նա: — Այն ուսումնարանների մէջ, որոնք թէպէտ եւ փակված չեն, բայց դարձեալ բաժանված են, անբարոյականութիւնը այնքան մեծ չէ: Միայն մէկ հնարք կայ անբարոյականութիւնը հեռացնելու, — այդ հնարքը խառն ուսումնարաններն են:

Ոչինչ այնքան անբարոյական չէ, ինչպէս այն կասկածը, որը երեխաների մէջ է ծնվում բաժանված ուսումից: Աղջիկներին կրկնում են թէ ամօթ է եւ լաւ չէ տղաների հետ ընկերութիւն անել, տղաներին ասում են, որ հեռանան աղջիկներից: Այդ տեսակ անլուծանելի խորհուրդը կասկած է գցում երեխաների մէջ: Այդ կասկածից կարելի է աւելի սպասել վտանգ, քան թէ աղջիկների եւ տղաների շարունակ քնական յարաբերութիւններից:

Խառն ուսումնարանները Ամերիկայում կան եւ մի քանիս հեւ Զվէիցարիաում: Բայց Զվէցարիաում նորա միայն սկզբնական ուսումնարաններ են:

Սովորութիւնը մեծ բան է: Ամերիկայի ուսումնարանների մէջ տղան այնպէս սովորում է ամէն օր իւր կողքին աղջիկներ տեսնել, որ վերջապէս նոցա յարաբերութիւնները ընկերական եւ եղբայրական են դառնում: Երբ նոցա յարաբերութիւնները քնական են դառնում, խորհրդաւոր կարծիքները կորչում են նոցա գլուխներից:



Մի ուրիշ լաւ կողմ եւս կայ, ինչպէս ես ասացի, խառն ուսման մէջ տղաները աղջիկների հետ ուսումնարանի մէջ լինելով կորցնում են իւրանց կոպտութիւնը, որը աւելի կմեծանար, եթէ նորա միշտ իւրանց ընկերների, տղաների մէջ էին մնացել:

Աղջիկներն իւրանց կողմից աւելի խելօքանում են, սովորում են աւելի պարզ դատել, աւելի ազատ վարվել եւ խօսել:

«Բացի սրանից այդ տեսակ ուսումնարանների մէջ աղջիկ եւ տղան ամէն օր միմեանց տեսնելով, միմեանց հետ բարեկանում են եւ բարեկամութենից շատ անգամ դուրս է գալիս սէրը:

Ասում են որ այդ բարեկամութենից ծագած սէրը ամենաբարդաւոր ամուսնութեններ է ծնում»:

Առաջարկվում էր հայերին մի այնպիսի նորութիւն, որ այդ ժամանակ առաջաւոր մարդկութիւնը միայն երկու երկրում էր կարողացել իրագործել. կարող էր մեզ պէս մի ասիական ժողովուրդ այնքան հիմնաւոր, ցնցումներ առաջացնող մի մեծ յեղափոխութիւն ընդունել իր հասկացողութիւնների մէջ: Զարմանալին հէնց այն է, որ մեզ պէս մի յետ մնացած, խեղճ ժողովրդի մէջ էլ նոր, արմատական միտքը պատուաստվում էր առանց մեծ դժուարութիւնների: Հարկաւոր էին միայն լուսաւոր միջնորդներ, ազատ մտքի տէր առաջնորդներ: Աստուծո՛ւսմարանի միտքը իրագործեց Թիֆլիսում Ստեփանէն, բայց անելով Հաւլարարում իր

Մարիամեան դպրոցի բաժանմունքը, ուր տղայ եւ աղջիկ միասին էին սովորում:

Ի՞նչ էր դա ցոյց տալիս:—Այն, որ առաջաւոր հրապարակաօսը չը պիտի ծածկէր իր ազգից լուսաւոր մարդկութեան գաղափարները լոկ այն պատճառով, որ այդ ազգը դեռ պատրաստված չէ, դեռ չէ հասել քաղաքակրթված եւրօպական հասարակութիւնների: Ազգերը աշակերտում են իրար: Եւ ինչպէս անհատների կրթութեան մէջ անպայման հարկաւոր էր ազատութիւն, լայնարձակ համբերողականութիւն, այնպէս էլ մի ազգ համաշխարհային կրթարանում չը պիտի անդէտ ու սահմանափակված մնայ քաղաքակրթութեան հարցերի վերաբերմամբ: Գրիգոր Արծրունին իր գործունէութեան սկզբից հետեւում էր այդ գաղափարին: Նա այն տեսակ գործիչներից չէր, որոնք կանգ են առնում «աստիճանաբար», «յաջորդաբար» հասկացողութիւնների առջև: Իր ազգին գաղափարներ քարոզելիս նա ղեկավարվում էր այն ճշմարտութեամբ, որ հայութիւնը իբրև ազգ, պիտի հետեւէ ժամանակի մտաւոր-հասարակական հոսանքներին, պիտի նոյնպէս մտածէ այն հարցերի վրա, որոնք յուզում են լուսաւոր մարդկութիւնը, պիտի նայէ իր կեանքին ու գործերին նորագոյն քաղաքակրթու-



թեան տեսակէտից, պիտի քննէ իրան ու իր շրջապատը այնպէս, ինչպէս և ևրօպացի առաջաւոր մարդն է քննում:

Այս բացարձակ, անսահմանափակ և ևրօպականութիւնը մէկն էր Արծրունու այն յատկութիւններէից, որոնք այնքան խիստ տպաւորութիւն, մի տեսակ սարսափ էին ազդում հայ հասարակութեան շատ անդամներին: Գրիգոր Արծրունու դէմ բողոքներ, հայհոյանքներ բարձրացրած մարդկանց անհաղին մեծամասնութիւնը այն դէպքը ունէր իր ձեռքին, որ նա ի նկատի չէ առնում հայ ազգի առանձնայատկութիւնները, չէ որոշում ու կշռում թէ ինչ մտքեր կարելի է քարոզել մեղանում և ինչ մտքեր պէտք է թողնել այն պատճառով, որ հայը պատրաստված չէ նրանց ընդունելու և գործադրելու: Բայց Արծրունին յանձն չէր առնում այդպիսի դատաւորի, սրբազրոյի, վճռողի դեր:

Եւ կարող էր նա մի այդպիսի դեր կատարել, մնալով իր կոչման, իր համոզմունքների մէջ:—Ո՛չ, դա անհնարին էր: Արծրունին ունէր մի գերազոյն իղէալ—համամարդկային առաջադիմութիւնը: Այդ առաջադիմութիւնը, յանուն ընդհանուր մարդկութեան երջանկութեան, պահանջում էր որ բոլոր ազգերը հաղորդակից լինեն իր բարիքներին:

Եւ Արծրունին իւրաքանչիւր զարգացած մարդու պարտականութիւնն էր համարում կատարել համամարդկային առաջադիմութեան առաքելի դերը իր շրջանում, իր ազգի մէջ: Սկզբից և եթ քարոզելով անհատի ազատութիւն, կրթութեան ազատութիւն, նա չէր կարող սահմանափակումների, սրբազրութիւնների կողմնակից լինել, և եթէ կային ատելի բաներ, զրանցից առաջինը Արծրունու համար այն էր, որ մի տեսակ խնամակալութիւն է հաստատվում անհատի, ազգի վրա, մի տեսակ ցէնզուրայի է ենթարկվում մարդկային միտքը:

Ահա մի ուրիշ փաստ: 1867 թւին Միքայէլ Միանսարեանցը հրատարակեց Պետերբուրգում Էդուարդ Լաբուլէի երեք հըրապարակական դասախօսութիւնների թարգմանութիւնը՝ «Ազգային կրթութիւն» վերնագրի տակ: Դասախօսութիւններն էին. «Ինքնակրթութիւն», «Ազգային կրթութիւն» և «Ազգային գրատուններ»: Վերջին հատուածի առիթով Գրիգոր Արծրունին «Ազգային գրատուններ» վերնագրով մի քննութիւն տպագրեց նոյն 1867-ին «Մեղու Հայաստանի» լրագրի մէջ\*): Այստեղ Արծրունին ա-

\*) № 49:



նաջին անգամ ցոյց է տալիս իր վերաբերմունքը դէպի մեր գրականութիւնը, առաջին անգամ յայտնում է իր կարծիքը մեր գրականութեան մասին: Ինչո՞ւ համար է Միանսարեանցը տպագրել Լաբուլէի դասախօսութիւնները: Երևի այն մտքով որ հայերն էլ սկսեն ժողովրդական ազգային գրադարաններ բաց անել՝ ինքնակրթութեան գործը իրանց մէջ տարածելու համար: Բայց հայերը բաց կանեն գրադարաններ:—Արծրունին պատասխանում է.

Մեզ մօտ, Հայերի մէջ, հարկաւոր չէ տանջվել եւ պատճառը պտտել, ինչու մենք գրատուն չենք հիմնում... Հոգս չբաշէք, խնդրեմ, ժողովրդական «դահլիճ» կարող էք ունենալ, ժողովրդական «պահարաններ» էլ կարող էք շինել,—բայց ժողովրդական «գրատուն» չէք կարող կազմել, այն պատճառով, որ ժողովրդական լեզուով գրքեր գրած չկան:

Գրականութիւն չը կայ, ուրեմն: Արծրունին այդպիսի խօսքերով էր մտնում մեր գրականութեան մէջ: Այս միտքը նա պարզել և ապացուցել է մի ուրիշ յօդուածում, որին շուտով կը դիմենք մենք: Այժմ հարկաւոր է մեզ ծանօթանալ «Ազգային գրատուններ» յօդուածի գլխաւոր գաղափարի հետ, որի մէջ Արծրունու ազատ հայեացքներն են դրված:

Էդուարդ Լաբուլէն, դասախօսութիւն կարդալով Վերսալում՝ ժողովրդական գրադարան հիմնելու մասին, չէ բաւականացել գրադարանների ընդհանուր կրթական նշանակութիւնը պարզելով, այլ և փորձել է գրադարանների բովանդակութեան մասին վրձիւ տալ: Գրադարանը, ասում է նա, քաղաքական մտքեր տարածելու նպատակ չը պիտի ունենայ: Դրէք գրադարանում կրօնական այնպիսի գրքեր, որոնք չեն յուզի մեզ: «Մենք չենք ընդունիլ միայն այնպիսի գրեանք, որոնց մէջ պարունակվում են կրօնական բանակուութիւնք. մենք չենք սիրում վիճարանութիւն, թէև նա լինէր աստուածաբանական, և ցանկանում ենք միայն, որ մեր մէջ թագաւորէր խաղաղութիւնը: Ինչ որ վերաբերում է այն գրքերին, որոնք քաղաքական ներկայ հարցերովն են զբաղված, մենք այդ տեսակ գրեանքն էլ չենք ընդունիլ»:

Այս սահմանափակումների, այս արգելքների դէմ ահա Արծրունին բողոքում է: Նա ասում է.

Մի՞թէ վիճարանութիւնները անխաղաղութիւն պիտի ծնեն, եւ ինչպէս կարելի է առանց վիճարանութիւնների ինքնակրթութեան նպատակին հասնել: Խաղաղութիւն ինքնակրթութեան մէջ չէ կարող լինել, խաղաղութիւնը ինքնակրթութեան մէջ կանուան-



վի—անշարժութիւն: Մինձէ պ. Ղաթուլէ չէ իմանում որ կրթութիւնը մշտնջենաւոր վիճաբանութիւն ու կռիւ է սեպհական տգիտութեան դէմ:—Այբուբէն սովորելու ժամանակ մարդ պիտի կռվի սեպհական տգիտութեան դէմ, մի ինչ եւ իցէ զիրք կարգալու ժամանակ մարդ պիտի կռվի նախապաշարմունքի դէմ,—մի ուսում սովորելու ժամանակ մարդ պիտի կռվի իր անհասկացողութեան դէմ: Երբ որ մարդը քիչ թէ շատ բացվել է, կռիւը էլի չէ դադարում. նա էլի պիտի սովորի, որ իւր հասկացողութեան ընդունակութիւնը չկորցնէ, նա էլի պիտի կարգայ, որ իւր ճնշած նախապաշարմունքներին հնար չը տայ կրկին անգամ տիրապետելու նրան: Նախապաշարմունքը մարդու մշտնջենաւոր թշնամին է, որի դէմ եմէ մարդը չի պատերազմիլ իւր բոլոր կեանքը, նա վրտանգի մէջ կլինի նորա իշխանութեանը ենթարկվելու: Նախապաշարմունքը անտեսանելի թշնամի է, որ միշտ աշխատում է մարդու վերայ իշխել եւ եթէ բաւական ուշադրութիւն չի դարձնիլ մարդ նորա վերայ—նա կյաղթէ:

Նոյն իսկ պատահել է եւ պ. Ղաթուլէի հետ:

Կան մարդիկ, որոնք թէպէտ եւ լաւ աշխատող մարդիկ են, բայց մտածողների ոչ մի կուսակցութեան չը պատկանելով, շատ անգամ ձգտելով դէպի անհասանելի զաղափարներ,—մի ինչ եւ իցէ սկզբունք են պաշտպանում եւ իսկ այդ սկզբունքների դէմ են զործում իրողապէս:

Քարոզելով կրթութիւն, պ. Ղաթուլէ չէ նկատում, որ նա ինքն կրթութեան դէմ է զործում, էնդոր որ ցոյց է տալիս անհամբերութեան (intolérance) օրինակը, արգելք դնելով այնպիսի գրքերին, որոնց նա չէ սիրում, հասարակաց գրատունը մտնելու:

Քարոզելով կրթութիւն, պ. Ղաթուլէ չէ նկատում, որ նա ինքնակրթութեան արգելք է դնում, էնդոր որ հնար չէ տալիս այս կամ այն տեսակ գրքերին ազգային գրատան մէջ տեղ բռնել, ուրեմն եւ հնար չէ տալիս ամենեւին անարգել պարապել այն գրքերով, որոնց համար մարդ ընդունակութիւն կամ համակրութիւն է զդում: Քարոզելով խաղաղութիւն, չէ նկատում, որ խռովութեան օրինակ է տալիս, չընդունելով այս կամ այն տեսակ գրքեր, որոնք նա չէ սիրում, ուրեմն պատճառ է տալիս եւ միւս անդամներին ինչ եւ իցէ ուրիշ տեսակ գրքերին արգելք դնել, որոնք նորա չեն սիրում:

Ուրեմն դարձեալ նոյն հիանալի սկզբունքը—ազատ կրթութիւն, լինի դա զպրոցում, թէ դուրսը, հասարակութեան մէջ: Ազատ մտքի դէմ արգելքներ չը պիտի դնվի. թո՛ղ նա արտայայտվի, ազատ քննադատութիւնը կարող է զսել թէ ինչն է հարկաւոր և անհարկաւոր: Այս միտքը աւելի լայն ու պարզ կերպով արծարծված ենք տեսնում Արծրունու մի ուրիշ յօդուածում: Նկատենք այստեղ, որ վերեւում բերած մեր կտորի մէջ, բացի ազատ զարգացման սկզբունքից, ուշադրութեան արժանի հանդամանք է և այն, որ Արծրունին նախ լսիստ անհրաժեշտ է համարում կռիւը զարգացման, առաջադիմութեան համար և երկրորդ խօսում է մտածողների որոշ կուսակցութեան պատկանե-



լու մասին, իբրև նոյնպիսի մի անհրաժեշտութեան՝ գործողի համար: Բաւական չէ լաւ աշխատող մարդ լինել. պէտք է ունենալ որոշ ուղղութիւն, պատկանել որոշ բանակի, որոշ կուսակցութեան: Ինքը, Արծրունին, սկզբից և եթ խիստ գունաւորված հասարակական գործիչ էր և մեղանում բանակների, դրօշակների անհրաժեշտութիւնը կեանքի մէջ գործադրողը գարձաւ:

«Ազգային գրատուններ» յօդուածի առիթով Ստեփանէն գրում էր «Հայկական «Աշխարհի» դեկամբերի համարում.

Հայկական երիտասարդ Գ. Արծրունին, որի գրքիչը բաւական յայտնի է «Հայկական Աշխարհի» ընթերցողներին, «Մեղ. Հ.-ի» լրագրում (№ 49) «Ազգային գրատուններ» անունով յօդված է հրատարակել. Արժէ այդ իմաստուն յօդվածը կարգալ-Միայն կցաւեմ, որ այդ յօդվածի ոճը նոյնպէս սիրուն եւ կանոնաւոր չէ, ինչպիսի լինում է «Հայկական Աշխարհում» տպված պ. Արծրունու յօդվածներում առհասարակ:

Այս նկատողութիւնը առիթ գարձաւ որ Գրիգոր Արծրունին մի շարք խիստ և սուր մտքեր յայտնէ մեր գրականութեան մասին: Ստեփանէն մասնաւոր նամակով խնդրել էր նրան յայտնել իր կարծիքը «Հայկական Աշխարհի» այդ նկատողութեան առիթով: Եւ Արծրունին յայտնում է իր կարծիքը մի հա-

մարձակութեամբ, որ նրա ամենագեղեցիկ գրուածքների զարդն է կազմում: Յօդուածը անուանված է «Նամակ դէպի խմբագրող Նիցցաից» և տպված է «Հայկական Աշխարհի» 1868 թ. № 2—3-ի մէջ:

Սուքը ոճի մասին է և Արծրունին, չնորհակալութիւն յայտնելով որ Ստեփանէն այդպէս լաւ ուղղում է իր ոճը, ասում է թէ ինքը ամենին արգելք չի դնի որ «Մեղուի» խմբագրութիւնն էլ իր կարծիքների և կանոնների համեմատ ուղղէ իր ոճը: «Թող ամէն օրագիր ուղղէ ոճը, ինչպէս որ կամենում է... ես սրան մեծ գին չեմ դնում», աւելացնում է նա:

Ո՞րն է այդ երկու ոճերից առաւել կանոնաւորը, — «Հայկ. Աշխարհի» թէ «Մեղու Հայաստանի»: — ճշմարիտ ձեռք ասեմ— ես չեմ համարձակի դատաւոր լինել այդպիսի բաներում: Մանաւանդ որ կրկնում եմ, ես ոճին մեծ գին չեմ դնում, լեզուին մեծ նշանակութիւն չեմ տալիս յօդվածի մէջ:

Թող լեզուն հասկանալի լինի... այդ բաւական է:

Առհասարակ կասեմ, ոճը եւ լեզուն մեծ նշանակութիւն չեն կարող ունենալ, երբ ազգի զլխաւոր պակասութիւնը— տղիտուժիւնն է:

Երբ որ ձեր նպատակն է ազգին ինչ եւ իցէ միտք հասկացնել, ազգին մտածել տալ, — մի՞թէ միեւնոյն չէ, ձեր ոճը «Հայկական Աշխարհի» թէ «Մեղու Հայաստանի» ոճը կլինի. — Մի՞թէ միեւնոյն չէ դուք ձեր յօդվածում «մարդուն» կասէք թէ «մարդին»:



Սա մի շատ հիմնաւոր հարց էր, որ այն ժամանակ հրապարակ էր բերում բէալական օգտի, դործնական առաջադիմութեան կողմնակից միտքը: Մեր գրողները, խմբագիրները լեզուի մասին էին խօսում, վիճում: Ստեփանէի մտքած նորաձևութիւնները ազմուկ էին հանել. վիճում էին զրանց դէմ, պահանջում էին վերացնել, Ստեփանոս Նազարեանցը մինչև իսկ ուզում էր «Լապտեր Հայաստանի» հրատարակել լեզուն նորմութեան թիւններից ազատելու համար: Հարցը, ի հարկէ, կարևոր էր: Բայց Արծրունին գալիս էր այդ վէճերի ապարդիւն լինելը ցոյց տալու: Ապարդիւն, ի հարկէ, ընդհանուրի տեսակէտից: Միևնոյն չէ՞ Ունեցէք նոյն իսկ շատ բաւ մշակված, կանօնաւոր լեզու, ինչ օգուտ, երբ ժողովուրդը կարդալու բան չունի: Լեզուի մասին էին վիճում. բայց ում համար, քանի որ ժողովուրդը սէր չունի դէպի դրականութիւնը, հայերէն չէ կարգուս: Արծրունին շարունակում է.

Պարոն Ե. Ս., որը «Հայկ. Աշխ.» օրագրին (№ 9) Մօսկվայից նամակ էր գրել, ասում է իւր նամակում ձեր օրագրի նորաձևութիւնների պատճառով. «Շատերը հեռացել են, կհեռանան եւ մընացորդը... ամէնքը գոչեցին, բողբոցին, մեծից մինչև փոքրը... ժողովրդին ընթերցանութիւն է հար-

կաւոր, ընթերցանութիւն, եւ ոչ այբ, բն, գիւմ նոր ի նորոյ նստեցանել: Յունվարը հ-ով գրել, յայտարարութիւնը կամ յայտնութիւնը հ-ով, ոչինչ յառաջադիմութիւն չի յառաջանալ:»

Իմ միտքս այն է, որ եթէ արդարեւ հասարակութիւնը հարկաւորութիւն էր զգացել կարողաւ եւ մտածել, նորան աններելի կլինէր հեռանալ կարդալուց եւ թողնել միակ օրագիրը միայն այն պատճառով, որ այն օրագիրը թէպէտ եւ զեղեցիկ յօդվածներ է տպում, բայց «յունվար» հ-ով է գրում, եւ «վերայ» առանց յ առի, եւ այլն:

Կարծեմ որ պ. Ե. Ս. սխալվում է, ասելով, թէ «ժողովրդին ընթերցանութիւն է հարկաւոր»: Եթէ ժողովրդին ընթերցանութիւն «հարկաւոր» լինէր (հայերէն լեզուով), Կովկասում երկու օրագրներից առաւել կլինէր, եւ այդ երկու օրագրները այնքան աղքատ չէին լինի... Կարծեմ ես յայտնել եմ միտքս սորա մասին շատ անգամ:

Հայերը երբէք ուրախութեամբ չէին կարդում, երբէք չէին ստորագրվում որ եւ իցէ օրագրին, որ եւ իցէ նպատակ աչքի առաջ ունենալով. նորա մինչեւ այժմ եւս չէին հասկանում թէ հարկաւոր է օրագիրը մտածելով կարդալ, եւ ոչ թէ ամէն գրված խօսքին հաւատալ: Մինչև այժմ Հայերը մի որ եւ իցէ օրագրին ստորագրվելով, «ազգասիրութեան» պատճառով էին ստորագրվում, եւ ոչ թէ օգտի պատճառով, կարդալու նպատալով, խելք զարգացնելու նպատակով:

Հայն շատ կկամենար հրաժարվիլ օրագրի ստորագրութենից, բայց մինչև այժմ պատճառ չկար որ հրաժարվէր... Ազգասէր ես, պէտք է հայ օրագիր ստանաս:



Բայց այժմ «Հայկ. Աշխ.» օրագիրը, «վերայ» բառը առանց յ զրեց եւ «շունվար» հ-ով զրեց... ահա պատճառ կայ հեռանալու եւ հրաժարվելու ըստորագրութենից... Եղու ինչ ես կարծում, պ. Ստեփանէին փող տամ, որ նա մեր հին հայկական լեզուն, աղամային լեզուն աղաւաղէ... չէ, եղբայր, ես ազգասէր եմ ու աւելի լաւ է ոչինչ չեմ կարգայ, յիմար ու տղէտ կմնամ, քան թէ «շունվար» հ-ով կարդամ եւ «վերայ» առանց յ տառի...»:

«Գոչեցին, բողոքեցին մեծից մինչեւ փոքր»: Տէր Աստուած... դուք ինչ արեցիք, պ. Ստեփանէ... առաջ Հայերը խիստ շատ էին կարդում, այժմ դուք նոցա ազգասիրութիւնը այնքան վիրաւորեցիք, որ նորա վնասեցին, ազգասիրութեան պատճառով, իւրանց ամբողջ կեանքը տղէտ մնալ, բացի օրացուցից ոչինչ չկարդալ...

Ո՛չ, պ. Ե. Ս., իմ կարծիքով դուք սխալվում էք... Ժողովրդին ամենեւին ընթերցանութիւն հարկաւոր չէ:

Գիտէք ինչ կպատահէր, եթէ արդարեւ ժողովրդին հարկաւոր լինէր ընթերցանութիւնը: Եթէ նկատել էր, թէ օրագիր մի այլանդակում է նորա լեզւի ոճը, ժողովուրդը, այո, կգոչէր, կբողոքէր, անբաւական կլինէր, բայց որովհետեւ նա առանց ընթերցանութեան չէր կարող մնալ, նոր անբաւականութենից իսկոյն մարդիկներից մէկը օգուտ կբաղէր եւ կհիմնէր մի ուրիշ օրագիր: Փոխանակ զոչելու, հիմնեցէք ուրիշ օրագիր... Ձէք կարող:

Այո, ես շատ լաւ եմ հասկանում, որ չէք կարող, որովհետեւ զիտէք թէ ժողովուրդը չէ վարձատրում, չէ ապահովացնում մտաւոր աշխատանք. օ-

րագիր հրատարակելը Հայերի մէջ նշանակում է իւր անձը քաղցած մահին զոհել:

Ոչ, մեր ժողովրդին հարկաւոր չէ ընթերցանութիւն, բայց «հարկաւոր է մեր ժողովրդին կարդալ սովորեցնելը», նորան ընթերցանութիւնը «սիրել տալը», նորան «մտածել սովորեցնելը»:

Ես հայկական լեզւի վերա չեմ նայում որպէս նրպատակի վերա, բայց ինչպէս միջոցի վերա: Ոչ թէ «կարդանք հայերէն», որովհետեւ «Հայեր ենք»,— այլ կարդանք հայերէն, որովհետեւ հայերէն առաւել լաւ ենք հասկանում, քան թէ ուրիշ լեզու: Օրագիր հրատարակեցէք ոչ թէ այն նպատակով, որ ընթերցողներից «հայասէրներ» եւ «ազգասէրներ» շինէք,— բայց այն նպատակով, որ Հայերից «մարդիկ» շինէք:

Մայրենի լեզուի հարցը Արժրուհին այստեղ անցողակի կերպով է շօշափում և այդ պատճառով նրա այն ձևակերպութիւնը թէ հայերէն պէտք է կարդալ այն պատճառով որ այդ լեզուն աւելի լաւ ենք հասկանում, քան մի ուրիշը, բաւական խախուտ և անհիմն է թւում: Սակայն այս նախադասութիւնից չը պէտք է դատել թէ ինչ վերաբերմունք ունէր Արժրուհին առհասարակ դէպի մայրենի լեզուն: Մենք դեռ մի քանի անգամ առիթ կունենանք տեսնելու թէ որքան խոր պատճառաբանութեամբ էր նա հարկաւոր համարում որ մայրենի լեզուին առաջնակարգ դեր և նշանակութիւն տրվի կրթութեան գործում:



Եւ այսպէս ահա, Արծրունին բոլորովին այլ կերպով էր լուծուած այն ահագին, կեանքի և մահվան նշանակութիւն ունեցող հարցը, որ այնքան տանջուած էր մեր խմբագիրներին: Դա օրվայ հարց էր. այն երևոյթը, որ հայերի մէջ չէ կազմվում ընթերցող դասակարգ, որ ամսագիրը, գիրքը դնող չէ գտնում,—սֆինքսի պէս կանդնած էր գրական մարդկանց առջև և մնում էր անհասկանալի: Աշխատում էին հասկանալ նրան. կարծում էին թէ ընթերցող չը կայ, որովհետև հայը զուրկ է գիտութիւնից, որովհետև նա բարեխիղճ չէ, հասկանալ չէ ուզում որ գրականութիւնը հարկաւոր է աղգային դէմք, ինքնուրոյնութիւն պահպանելու համար: Մենք տեսանք նոյնպէս, որ «Մեղուն» ընթերցողների պակասութիւնը թշնամիներին էր վերագրում, մինչդեռ «Հայկական Աշխարհը» կարծում էր թէ հայերէն գիրքը, քրագիրը կը տարածվեն այն ժամանակ միայն, երբ կրթվածների, ընտրեալների թիւը կը բազմանայ:

Գրիգոր Արծրունին մտնում էր այդ տանջող սֆինքսին ուրիշ կողմից: Նա ասում էր. գրականութիւն չը կայ, ժողովուրդը չէ կարդում, կարդալու պահանջ չունի. պէտք է նրան սիրել տալ ընթերցանութիւնը, պէտք

է սովորեցնել նրան մտածելը: Մինչև այդ խմբագիրների առջև ժողովուրդն էր մեղաւոր: Արծրունին ասում էր. ժողովուրդը մեղաւոր է մի յայտնի չափով, բայց մեղք ունին և գրողները: Հասկանալով հանդերձ որ հայերի մէջ լրագիր հրատարակելը նշանակում է սովամահի զոհ դառնալ, նա, այնուամենայնիւ, ընդունում էր որ ժողովրդին կարելի է սիրել տալ ընթերցանութիւնը և պէտք է սիրել տալ: Ստեփանէն էլ մի ժամանակ գիտէր որ պէտք է ընթերցասիրութիւն տարածել. բայց մի կարճ միջոցում համոզվեց որ այդ չէ կարելի անել մամուլի միջոցով, պէտք է դեռ սպասել որ զարգացած մարդիկ շատանան: Այսպէս դատելով, նա, ի հարկէ, համոզված էր որ ինքը, իբրև խմբագիր, արել է և անում է այն, ինչ հարկաւոր էր և պէտք էր անել: Սակայն Արծրունին ասում էր. ո՛չ, մամուլը չէ անում ինչ հարկաւոր է, մամուլը իր պարտականութիւնը լաւ չէ կատարում:

Հասարակութիւնը չէ մտածում, ժողովրդի մէջ հասարակական կարծիք չկայ,—ասում է նա:—Գոնէ օրագիրը պէտք է ուղղութիւն էր տուել հասարակութեան կարծիքին:

Ահա ինչն է մտապնդում, ահա ինչից է



այնքան մահամերձ հիւանդ մեր մամուլը: Եւ Արծրունին այդ պակասութիւնը ցոյց է տալիս մի օրինակով, որ վերցնում է իր մասին եղած գովասանական նկատողութիւնից, այսինքն նոյն «Հայկական Աշխարհից».

Բայց ինչ ուղղութիւն են տալիս մեր օրագիրները, հարցնում է նա:

Գրեցէք մի յօդված, օրագիրը կասէ. «արժէ կարդալ այդ յօդվածը»: Մի՞թէ սա կրիտիկա է: Ինչի արժէ կարդալ այդ յօդվածը:—Ասում է նմանապէս. «իմաստուն յօդված է»:

Ի՞նչ է նշանակում «իմաստուն»: Մի՞թէ այդ բառը հասարակութեանը կհասկացնէ յօդվածի «ինչ փնելը»:

Օրինակ ես կարդացի մի յօդված եւ չհասկացայ նորան. միւս յօդվածը կարդացի եւ չհամաձայնեցի նորա մտքերին: Մի՞թէ այդպիսի եւ սորա նման խօսքերը «արժէ կարդալ այդ իմաստուն յօդվածը», ինձ կհասկացնեն ինչ որ ես չեմ հասկացել, ինձ կմեկնեն այն մտքերը, որոնց հետ ես համաձայն չեմ...

Օրինակ, իմ «Համալսարան» յօդվածի մասին պ. Հայասէրը ասաց թէ նա «քաղցր տպաւորութիւն ունեցաւ հասարակութեան վերայ»:

Ինչի քաղցր տպաւորութիւն ունեցաւ նա հասարակութեան վերայ: Նորմ համար, որ ես հայ եմ եւ հայերէն յօդված գրեցի, կամ նորմ համար, որ ես ասացի թէ համալսարանի հիմնելը առաւել վնաս կըրերէ, քան թէ օգուտ... Կամ թէ նորա համար, որ ես հասարակական դասախօսութիւնների միտք տուի...

կամ թէ նորա համար, որ ես ասացի թէ որքան հեռու փախչենք մեր տղէտ ծնօղներից, այնքան լաւ կլինի:

Յայտնի չէ ինչի նա «քաղցր տպաւորութիւն» ունեցաւ:

Մի՞թէ այդպիսի խօսքերը կարող են ինչ եւ իցէ օգուտ բերել կարդացողին, մի՞թէ կարող են մարդին ինչ եւ իցէ միտք մեկնել, յօդված հասկացնել, ուղղել հասարակութեան կարծիք:

Ժողովուրդը չէ մտածում, եւ օրագիրը պիտի սովորեցնէ մտածել...

Ստեփանէն ոչինչ չը պատասխանեց. ընդհակառակն, երբ 1868-ին «Մեղուի» մէջ տըպվեց Արծրունու «Շարունակներ թէ ոչ» յօդուածը, նա «Հայկական Աշխարհում» նորից տպեց մի այդպիսի նկատողութիւն, այն զանազանութեամբ միայն որ «իմաստուն յօդված» չէր այս անգամ գրված, այլ «իմաստալից յօդված»:

Հետեւելով ժամանակագրական կարգին, մենք «Աղգային գրատուններ» յօդուածից յետոյ պիտի յիշատակենք «Ի՞նչ է կնամարդ» անունով յօդուածը, որ տպվեց «Հայկական Աշխարհի» 1868 թ. № 1-ի մէջ: Այգտեղ Արծրունին նորից կանանց հարցն է պաշտպանում եւրօպական հեղինակաւոր մարդկանց վկայութիւնների միջոցով, մէջ է բերում գիտնական աշխարհի ասպացոյցները թէ



կինն էլ միանդամայն ընդունակ է աշխատանքի, հետևաբար ոչ մի հիմք չը կայ զըրկելու նրան գործելու հնարաւորութիւնից: Մենք նորից չենք դիմի այդ յօդուածի մանրամասնութիւններին, քանի որ արդէն դիտենք թէ ինչ հայեացքներ ունէր Արծրունին կանանց հարցի վերաբերմամբ: Կասենք միայն, որ զրեւու ձեի, մտքեր քարոզելու, համարձակ, նոր եզրակացութիւններ բերելու և ապացուցանելու մէջ նա աւելի և աւելի առաջագիմում է: Օրինակ, որքան գեղեցիկ է այս ձեակերպութիւնը. «Ոչ, վատը ճանաչել արժանաւորութիւն չէ, բայց այն է արժանաւորութիւնը, երբոր մարդս լաւն ու վատը իմանալով, լաւը վատից կարող է զանազանել»:

Մինչև այժմ Գրիգոր Արծրունին խօսում էր գլխաւորապէս զաստիարակութեան մասին, զնելով նրա մէջ հասարակական հարցերի քննադատութիւն: Բայց ահա 1868-ին նա տալիս է և զրական քննադատութեան առաջին փորձը: «Երկուսից որն է լաւը» յօդուածում նա պատասխանում է այն հարցին թէ ինչ են զեղարուեստական ստեղծագործութիւնները:

Ասում են թէ չը պէտք է կարգալ այնպիսի վէպեր, որոնց մէջ կեանքի անբարոյա-

կան, վատ կողմերն են նկարագրված: Այդպիսի վէպերի ընթերցանութիւնը կարող է անբարոյականացնող ազդեցութիւն ունենալ երիտասարդ սերունդի վրա: Պիտարելը առհասարակ բացասական վերաբերմունք ունէր դէպի զեղարուեստը, համարելով նրան անօգուտ մի բան: Դաստիարակութեան մասին գրած իր մի յօդուածում Պիտարելը սաստիկ դատապարտում էր այն ծնողներին, որոնք թոյլ են տալիս իրանց երեխաներին կարգալ Պօլ-դը-Կօկի, Դիւմա-հօր և Դիւմա-որդու վէպերը: Դրանք ամօթալի դատարկապարտութեան պտուղներ են, այլանդակ և անբարոյական բաներ: Գրիգոր Արծրունին հակառակվում է այդ մտքին: Եւ այստեղ էլ մենք տեսնում ենք ազատ մտածողութեան, ազատ զարգացման համոզված կողմնակցին:

Նա հարցնում է թէ ինչ նպատակով են գրվում զրական ստեղծագործութիւնները: Գրողը իր միջավայրի, իր հասարակութեան, իր ժամանակի պտուղն է, արտայայտութիւնն է:

Որովհետեւ գրողները միակ, առանձնապէս չեն ապրում, իսկ հասարակութեան մէջ են ծնվում ու ապրում, հասարակութեան կարծիքներն ու տպաւորութիւններն են բաժանում, — ուրեմն նորա հասա-



րակումեան պտուղներ են, ոչ թէ երկնքից ընկած հրաշքներ:

Հասարակութիւնը ինչ կարծիքներ, ինչ ձգտողութիւններ, ինչ կիրքեր ունի, իւրանց լաւ եւ վատ յատկութիւններով, — այդ բոլորը այն հասարակութեան գրողներ եւս ունին, միայն թէ նոցա մէջ կեանքի այդ բոլոր երեւոյթները առաւել հաստատ ուղղութիւն ստացան, ընդարձակվեցան նոցա ընդունակութեան միջոցով, զարգացան, եւ զրականական ձեւը ստացան:

... Ուրեմն գրողը իւր դարի պտուղն է, իւր ժամանակի արտայայտութիւնն է:

**Գրական ստեղծագործութիւնները գրվում են այն նպատակով, որ սովորեցնեն հասարակութիւնը մտածել և իր կեանքը քննել, ուրեմն և ձգտել դէպի լաւը, դէպի առաջադիմութիւնը:**

Մարդկային հասարակութիւնը կատարեալ չէ, նա անբարոյական է լինում, պակասութիւններ ունի, Ի՞նչ միջոցով կարող է նա իւրան լաւացնել: — Մըտաւոր աշխատանքի միջոցով:

Երկու հնար կայ մարդիկներին մտածել սովորեցնելու. այդ հնարներից առաջինը այն է, երբ գրողը առաջարկում է հասարակութեանը կատարեալ գաղափարներ, կատարեալ մտքեր: Երկրորդը այն է, երբ գրողը ներկայացնում է հասարակութեանը նորա կեանքի պակասութիւններ:

Առաջինը ներկայացնում է իւրանից հնարած լաւ օրինակը, կատարեալ գաղափարը, — երկրորդը

ներկայացնում է իսկական կեանքի մէջ գտնված կողմը, կամ եթէ կարելի է ասել, ներկայացնում է վատ գաղափարը:

Առաջինը առաջարկում է հասարակութեանը ձգտել դէպի «լաւը», — երկրորդը հրաւիրում է հասարակութիւնը բննել բոլոր նորա մէջ գտնված «վատը»:

Երկուսից որն է լաւը:

Ես կարծում եմ, որ ինչպէս առաջին, նոյնպէս եւ երկրորդ հնարները լաւ են եւ օգտաւէտ են:

Հարկաւոր է որ մարդս, ձգտելով դէպի լաւը, աչքի առաջ կատարեալ գաղափար ունենայ: Բայց նմանապէս հարկաւոր է նորան եւ իւր սեփական պակասութիւններ իմանալ եւ բննել, որ նա հնար ունենայ այդ պակասութիւններից բժշկվելու:

Այս հասկացողութիւնը գեղարուեստական երկերի մասին Գրիգոր Արծրունին պահեց մինչև իր կեանքի վերջը և նրա մահից մի տարի առաջ գրված մի գրական քննադատութեան մէջ մենք տեսնում ենք այս միեւնոյն վերաբերմունքը դէպի գեղարուեստի մէջ ախրող ուղղութիւնները: Հաւասարապէս յարգելով այն ուղղութիւնը, որ կեանքի անողորմ մերկացում և վերլուծում է տալիս և այն, որ խուսափում է այդ վերլուծումից և ներկայացնում է կատարելատիպեր և իդէալներ, Արծրունին ինքը անձամբ աւելի համակրում էր այս վերջին, գաղափարական ուղղութեան. դրա ապացոյցն է նրա «Եվէլինամ»:



Սակայն նա ընդունում էր միւս, նատուրալիստական ուղղութեան օրինականութիւնն ու օգտակարութիւնն էլ, և ոչ միայն չէր վրդովվում այդ ուղղութիւնից, շատ շատերի նման չէր ազդակում թէ նա բարքերի կատարեալ ապականութիւն է առաջացնում, այլ ընդհակառակն, համարում էր նրան անհրաժեշտութիւն, կեանքը ճանաչելու, կեդտերը մերկացնելու մի լաւ միջոց: Ծարձեռակելով իր գատողութիւնները, նա ասում էր.

Եվրոպայի հասարակութեան մէջ պակասումիւններ կան, անբարոյականութիւն կայ,—բայց եւ կան մարդիկ, որոնք այդ պակասութիւնները յայտնում են, անբարոյակոմունութեան երեւոյթները քննում են:

Մեր ժողովրդի մէջ, Հայերի մէջ, միթէ պակասութիւններ չկան, միթէ անբարոյականութիւն չկայ,—բայց կան արդեօք Պօլ դը Կօկի կամ Գիւմաների նման գրողներ, որոնք ներկայացնէին հասարակութեան կեանք, պակասութիւններ յայտնէին:

Եվրոպացիների մէջ անբարոյականութիւն կայ, բայց մի եւ նոյն ժամանակին նոքա եւ գրողներ ունին, որոնք յայտնում են անբարոյականութիւնը.—մեր մէջ, Հայերի մէջ, անբարոյականութիւն կայ, բայց մենք մեր անբարոյականութիւնը չենք յայտնում:

Երկուսից ո՞րն է լաւ:

Ի հարկէ, անբարոյականութիւն մերկացնելը: Եւ Արծրունին գտնում է, որ քանի որ

մենք չունինք մեր սեփական կեդտերը մերկացնող հեղինակներ, գոնէ պիտի օգուտ քաղենք օտար գրականութեան գրքերից, գոնէ նրանց պիտի կարգանք, որպէսզի սովորենք առհասարակ մարդկային անբարոյականութիւնը քննել:

Պօլ դը Կօկը եւ Ալէքսանդր Գիւմա-որդին իւրանցից չեն հնարել այն անբարոյականութիւնը, որ նոքա նկարագրում են: Այն անբարոյականութիւնը կայ, ուրեմն ոչ ոք իրաւունք չունի նորան չիմանալ:

Իմանալը պարտաւորական է, իմանալուց վախ չը կայ, վտանգ չը կայ: Ի՞նչպէս: Արծրունին վստահ է քննող, զտող, զարգացած մտքի վրա: Կայ այդ միտքը, և մարդը այնքան ուժեղ է, որ անբարոյականութիւնը նրան չի դիպչի, նրան չի վարակի, ընդհակառակն, արիւթիւն կը ներշնչէ նրա դէմ կուելու, նրան ոչնչացնելու համար: Եւ՝ ահա որքան գեղեցիկ կերպով է նա ձևակերպում իր ասածման վստահութիւնը դէպի զարգացած, ուժեղ միտքը.

Կամ (զուցէ) այնքան փոքր յոյս ունինք մեր ընտանեան զօրութենից, մեր խելքից եւ մեր բարոյական զօրութենից, որ վախենում ենք բոմաններ կարդալով այն բոմանների մէջ նկարագրված պակասութիւններից օրինակ առնել...



Եթէ այդպէս է, շատ լաւ ենք անում, որ չենք կարողում:

Եթէ այդպէս է, շատ լաւ ենք անում, որ մեր երեխաներին եւս կարողալ չենք տալիս այն գրքերը: Եթէ մենք մեզ այնքան թոյլ, չբացված եւ անբարոյական ենք համարում, որ երեխաներին չենք իմանում մեկնել գրքերի մէջ նկարագրված պակասութիւնները, — առաւել լաւ կանենք, որ նոցա չտանք այն գրքեր կարդալու: Եթէ մենք ինքներս եւս մեզ այնքան «թոյլ» ենք համարում կամ զգում, որ Պօլ դը Կօկի բօմանը կարդալով, փոխանակ մտածելու, նորա նկարագրած անբարոյական անծից օրինակ կառնենք եւ մենք եւս նորա նման անբարոյական կղառնանք... առաւել լաւ կանենք, որ չկարդանք:

Եւ այսպէս, Արծրունին այստեղ էլ, ինչպէս «Ազգային գրատուններ» յօդուածում, աւելորդ, նոյն իսկ մնասակար է համարում սահմանափակումներ ի մէջ դնել ընթերցանութիւնը, պահանջում է որ ընթերցողը ազատ լինի իր ընտրութիւնների մէջ, որ դատարարակողը լինի կեանքը իր գրական եւ բացասական կողմերով: Միակողմանի դատարարակութեան թշնամի լինելով, Արծրունին, ի հարկէ, չէր էլ կարող ուրիշ կերպ դատել Գրքերի բովանդակութիւնը ինչ ուզում է թող լինի. մաքերը, գաղափարները թող հակասական լինեն: Ի՞նչ մնաս Գլխաւորն այն է, որ ընթերցողը լինի պատրաստ-

ված: «Բացված մարդ» — ահա այն դրութիւնը, որի մէջ մարդկութեան իւրաքանչիւր անդամ կարող է եւ պարտաւոր է ամենայն ազատութեամբ եւ համարձակութեամբ իմանալ չարն ու բարին իրանց ամբողջ մերկութեամբ: Ո՛րպիսի հաւատ դէպի բազմակողմանի, լայն զարգացումը: Արծրունին երբէք չը շեղվեց այդ ջերմ հաւատից, երբէք չը թուլացաւ այն պաշտամունքի մէջ, որի մարմնացումը «բացված մարդն» էր:

Մենք տեսանք թէ Գրիգոր Արծրունին ինչպէս էր բացատրում այն հանգամանքը, որ հայերի մէջ մամուլը ոչինչ հեղինակութիւն չունի: Մամուլը հասարակական կարծիք չէ առաջացնում, մտածելու նիւթ չէ տալիս հասարակութեան, ասում էր նա: Ինքը, այդ նոր սկսող հրատարակախօսը, ունէր մի առանձին շնորհք իր դրչով աղղելու, մաքեր յարուցանելու, որովհետեւ գիտէր թարմ, հետաքրքրական հարցեր արծարծել: Այսպէս, նրա «Գերդաստանի աղղեցութիւնը եւ Համալսարան» յօդուածը, ինչպէս վկայում է ժամանակակիցներից մէկը\*), «ձեռքէ ձեռք անցաւ», տարօրինակ թւաց, «Հայկական Աշխարհը» վկայեց որ այդ յօդուածը «առանձին

\*) Աղ. Երկցեան, «Գրիգոր Արծրունի», եր. 75:



քաղցր տպաւորութիւն» թողեց ընթերցողներին վրա: Մենք տեսանք որ Արծրունին ուզում էր իմանալ թէ ինչո՞ւ քաղցր տպաւորութիւն է թողել յօդուածը, ուզում էր իմանալ հրապարակական կարծիք իր մտքերի մասին, կրիտիկա: Բայց ոչ ոք չը խօսեց մամուլի մէջ: Միայն մասնաւոր խօսակցութիւններին իմացաւ Արծրունին որ կան մարդիկ, որոնք բոլորովին համաձայն չէին նրա հետ, առարկութիւններ ունէին նրա դէմ: Ուստի նա մի անգամ էլ վերադարձաւ Թիֆլիսում համալսարան հիմնելու հարցին, տպագրելով «Հայկական Աշխարհի» մէջ «Կրկին համալսարանի մասին» յօդուածը: Այդտեղ նա ջրում էր բերանացի առարկութիւնները, սակայն նոր իրողութիւններ և փաստեր չէր բերում: Մենք արդէն մանրամասն գիտենք թէ ինչո՞ւ Արծրունին դէմ էր Թիֆլիսի համալսարանին:

Անշուշտ այդ նոր յօդուածն էլ օտարոտի պիտի թւար շատերին: Սա մի շատ նշանաւոր երևոյթ է, այս օտարոտի տպաւորութիւնը: Նշանակում էր որ հայ ընթերցող սովոր չէր այդպիսի ինքնուրոյն մտքերի, նշանակում էր որ Գրիգոր Արծրունին սովորական գրողներից չէր, այլ իր գրուածքներով մտցնում էր ոչ միայն քաղցր տպաւորութիւն, այլ և զարմանք, մի թերահաւատ

տրամադրութիւն, որ կարծես հարցնում էր. «Ճիշտ է նա ասում»: Մեր անշարժութեան, մեր մտաւոր տափակութեան մէջ ընթերցողը չէր սպասում այդպիսի համարձակ նորութիւնների: Եւ ինչո՞ւ միայն ընթերցողը: Հայ խմբագիրն էլ յանկարծակիի էր դալիս, շիտթվում էր, չը գիտէր թէ ինչ անէ Արծրունու գրուածքների թողած օտարոտի տպաւորութեան տակ:

Այդ կողմից շատ նշանաւոր է Արծրունու «Գրականութիւն Հիւսիս» յօդուածը, որ տպագրվեց «Հայկական Աշխարհի» սեպտեմբերի համարում: Ստեփանէն գրեց յօդուածի սկզբում մի ծանօթութիւն, որ նրա կատարեալ շուարումն է ցոյց տալիս և միևնոյն փամանակ շատ լաւ պատկերացնում է այն տպաւորութիւնը, որ թողնում էր Արծրունին հայկական շրջանների վրա: Բանից դուրս էր դալիս որ նա ութ ամիս պահել էր յօդուածը, չը կարողանալով իմանալ թէ ինչ անել. — տպել թէ չը տպել: Ահա մեր խմբագրի խոստովանութիւնը.

Այս յօդվածը ստացել ենք յունվար ամսին: Բայց, ցանկանալով օրագրումս աւելի այնպիսի յօդվածներ հրատարակել, որոնց համար պատասխանատու կարող էինք մենք եւս դառնալ եւ սորան այսպիսի յօդվածներից չհամարելով, դժվարանում էինք հրա-



տարակել: Մի եւ նոյն ժամանակ բոլորովին ցանկանում էինք մտածող ընթերցողներին մասնակից կացուցանելու այն խելացի եւ միանգամայն օգտակար մտքերին, որոնք գտնվում են այս յօդվածում: Ուստի մենք անհրատարակեցինք այս յօդվածը, պատասխանատվութիւնը նոյն ինքն հեղինակին թողնելով:

Իսկ որ տարօրինակ հանգամանք: Մարդը չէ կարող պատասխանատվութիւն յանձն առնել, հետեաբար համաձայն չէ այն մտքերի հետ, որ յայտնում է Գրիգոր Արծրունին. բայց միևնոյն ժամանակ այդ մտքերը այնքան զեղեցիկ և օգտակար են երևում, որ խմբագիրը մեղք է համարում թաղցնել նրանց իր ընթերցողից: Համաձայն չը լինել և միևնոյն ժամանակ խոստովանել մտքերի զեղեցկութիւնը—ահա ինչ վերաբերմունք է ստեղծվում հայկական իրականութեան և Գրիգոր Արծրունու մէջ այդքան վաղ ժամանակից: Եւ այդ վերաբերմունքն էր տեսնում Արծրունին իր ամբողջ կեանքում:

Սակայն արդար լինենք Ստեփանէի վերաբերմամբ: «Գրականութիւն չկայ»<sup>\*</sup> յօդ-

<sup>\*</sup> Այս վերնագիրը յիշեցնում է ռուս նշանաւոր քննադատ Բէլինսկու առաջին մեծ յօդուածը, որ նոյնպէս մեծ տպաւորութիւն թողեց ընթերցող հասարակութեան վրա:

ուածը, իսկ որ, անօրինակ մի երևոյթ էր մեր մամուլի մէջ: Պատմել նրա համառօտ բովանդակութիւնը կը նշանակէր զրկել նրան այն ոյժից, այն ինքնուրոյնութիւնից, որոնք նրա զարգերն են կազմում: Ուստի մենք կը բերենք համարեա ամբողջ յօդուածը, թոյլ տալով մեզ համառօտութիւններ այնտեղ, ուր այդ հնարաւոր է:

## I

Ինչի էք սովորում որ եւ իցէ լեզու:

Երեք նպատակով. առաջինը, որ կարողանաք մի հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալ,— երկրորդը, որ ծանօթանաք այն հասարակութեան զրականութեան հետ,— եւ երրորդը, որ կարողանաք ինքներդ այն հասարակութեանը նորա լեզուի միջոցով ձեր միտքը յայտնել, շարադրութիւններ գրելով:

Ինչի ենք սովորում հայկական լեզու:—Մի եւ նոյն երեք նպատակով:

Առաջինը, որ կարողանանք հայկական հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալ... Բայց հայկական հասարակութեան հետ յարաբերութիւններ ունենալու համար անպատճառ հարկաւոր չէ հայերէն իմանալ: Վրաստանի Հայերը վրացերէն առաւել լաւ են խօսում, քան թէ հայերէն. Հայաստանի կողմերի (օրինակ Երևանի) Հայերը ոչ թէ միայն հայերէն են իմանում, բայց ամէնքը նմանապէս եւ թուրքերէն են խօսում: Վերջապէս Ռուսաստանի Հայերը ռուսերէն են իմանում:



Ժողովրդի ստորին դասերը առաւել վրացերէն կամ թուրքերէն են խօսում,— ժողովրդի վերին դասերը, այսինքն ուսում առածները, առաւել ռուսերէն են խօսում: Ինձ կասեն թէ նորա այն պատճառով են խօսում ռուսերէն, որ ուսում են առել ռուսերէն լեզուով: Յայտնի բան է, սա է պատճառը.— այս ինչ լեզուով կկամենայիք որ նորա ուսում առնեն: Ռուսերէն լեզու մեզ միջոց է տալիս գիմնադիօններ եւ համալսարաններ մտնել,— իսկ հայերէնը այդ միջոց չէ տալիս, որովհետեւ հայկական օրինաւոր ուսումնարան չկայ: Ռուսերէնը մեզ ձնար է տալիս ուսումնական գրքեր կարդալ,— իսկ հայերէնը... բայց սորա մասին յետոյ կխօսեմ:

Ուրեմն իրողութիւնը նոյն է մնում, որ Հայերի հետ յարաբերութիւններ ունենալու համար հարկաւոր չէ անշուշտ հայերէն իմանալ:

## II

Երկրորդ նպատակը, որ մարդս պիտի աչքի առջեւ ունենայ մի որ եւ իցէ լեզու սովորելու ժամանակ, այն է որ նա կարողանայ հասարակութեան գրականութեան հետ ծանօթանալ: Իսկ գրականութեան հետ ծանօթանում ենք այն նպատակով, որ նորանից ինչ եւ իցէ օգուտ քաղենք:

Ուրեմն մենք հայերէն ենք սովորում, որ կարողանանք հայկական գրականութեան հետ ծանօթանալ:

Հայկական գրականութիւն... Ի՞նչ հայկական գրականութիւն... Կայ արդեօք հայկական գրականութիւն: Եւ եթէ կայ, ինչ օգուտ կարող ենք նորանից քաղել:

Նոր հայկական գրականութիւն չկայ: Գոնէ ես չեմ կարծում, որ երկու կամ երեք գիրք, չորս կամ հինգ օրագիրներ,— կարելի լինէր գրականութիւն անուանել: Հին հայկական գրականութիւն կայ, եւ շատ հարուստ է, այդ ճշմարիտ է: Հին հայկական գրականութիւն ոչ թէ միայն հարուստ է, բայց եւ ուղղութիւն ունի:

Բայց ինչ ուղղութիւն: Յարմար է նա արդեօք մեր այժմեան հարկաւորութիւններին: Կարծո՞ք ենք արդեօք մեր հին գրականութենից այնպիսի մտքեր քաղել, որոնք կարօղանային մեր ազգի բարք ու վարքը նորոգել, եւ մեր կեանքին ու մեր խելքի ընդունակութիւններին մի նոր օգտաւէտ ուղղութիւն տային:

Հարկաւոր է վերջապէս խոստովանել մեր պահանջմունքը. հարկաւոր է ստել թէ ինչ է հարկաւոր մեզ մեր կեանքը նորոգելու համար:

Կեանքի մէջ երկու կողմ կայ. նիւթական եւ մտաւորական կողմեր: Այդ երկու կողմերը հարկաւոր է զարգայնել:

Նիւթական կողմերից մեր ազգին հարկաւոր են. երկրագործութիւն, Վաճառականութիւն, Արվեստ, Վաճառաշահութիւն եւ ճանապարհներ:

Մեր բարոյական կեանքը զարգացնելու համար մեզ հարկաւոր են. Ուսումնարաններ (աղջիկների եւ տղաների), Գրականութիւն, Օրագիրներ, Թատրօններ, Հասարակական դասախօսութիւններ, Արհեստ, խելացի եւ ուսումնական Հոգեւորականներ:

Մի խօսքով մեզ հարկաւոր է հարստութիւն, նիւթական եւ մտաւորական հարստութիւն: Իսկ հասարակութիւնը չէ կարօղ հարստութեանը հասնել առանց աշխատանքի: Եւ օրինաւոր աշխատանք կազմելու



համար, հարկաւոր է ուսում տարածել երկրի մէջ: Իսկ ուսում տարածելու եւ ուսում ընդունելու համար հարկաւոր է կրկին աշխատանք:

Ուրեմն մեր բոլոր պահանջումնքն ինչ է:—«Աշխատանք» մտաւորական եւ նիւթական:

Այժմ ես ձեզ հարցնում եմ. կարծո՞ղ է արդեօք մեր հին գրականութիւնը մեր մտաւոր եւ նիւթական աշխատանքին օրինաւոր ուղղութիւն տալ, այսինքն այնպիսի ուղղութիւնը, որ մեր այժմեան պիտոյքներին յարմար լինէր:—Չէ՞ք իմանում...\*):

... Մենք մեր հին գրականութենից կարօղ ենք ծանօթանալ հին Հայերի կեանքի հետ: Մեր հին գրականութիւնը մեզ ցոյց է տալիս հին Հայերի յարաբերութիւններ ուրիշ ազգերի հետ, մեզ ցոյց է տալիս, որ հին Հայերը զօրեղ էին, քաջ էին, որ նոցա բարոյական եւ հոգևորական զարգացումը մեծ աստիճանին էր հասել, որ կնամարդիկ քիչ թէ շատ բացված էին, եւ վերջապէս որ Հայերը հին ժամանակներից սկսած երկրագործութեամբ եւ վաճառականութեամբ էին պարապում:

Այդ բոլորը նա մեզ ցոյց է տալիս,—բայց նա մեզ չէ ցոյց տալիս թէ մենք մեր այժմեան կեանքին ինչ ուշադրութիւն պէտք է տանք, որ մեր այժմեան պիտոյքներ կատարենք, որ երկրի մէջ աշխատանք տարածենք:

Հին գրականութիւնը մեզ ցոյց է տալիս թէ «մենք ինչ ենք եղել եւ ինչ ենք արել»,—բայց նա մեզ չէ ցոյց տալիս թէ «մենք ինչ պէտք է անենք»:

\*) Այստեղ Արծրունին հին կեանքի և գրականութեան մասին վկայութիւններ է բերում Եզօփի «Внутренній бытъ древней Арменіи» աշխատութիւնից:

Մեր հին գրականութիւնը պատմագրական ուղղութիւն ունի, եւ բացի տրանից այն ազգասիրութիւնը, որով ոգեւորված էին մեր հին գրողները, նորան բանաստեղծական ուղղութիւն է տալիս:

Կարօղ է արդեօ՞ք այդպիսի ուղղութեան գրականութիւնը օրինաւոր ուղղութիւն տալ մեր այժմեան պիտոյքներին:

Ես ասացի, որ մեր այժմեան պահանջումնքը աշխատանք է, մտաւոր եւ նիւթական:

Ասենք թէ դուք մտադիր էք երկրագործութեամբ կամ շերամապահութեամբ պարապելու,—կամ մտադիր էք երկաթի հանքեր կառավարելու... Կարծո՞ղ էք դուք արդեօք ձեր գործը օրինաւոր կերպով առաջ տանել, եթէ դուք եվրօսպացիների, արեւմտեան գրականութեան եւ ուսման հետ ծանօթ չէք: Եթէ դուք միայն հին հայկական գրականութեան հետ էք ծանօթ, կարծո՞ղ էք դուք օրինաւոր կերպով առաջ տանել ձեր գործը: Այ, չէ՞ք կարօղ, այնոր համար, որ հայկական գրականութիւնը չունի ընդհանր, գործնական ուղղութիւն, այսինքն չունի այնպիսի ուղղութիւն, որից մարդս կարօղանար այնպիսի ուսում և տեղեկութիւններ քաղել, որոնք նորան հարկաւոր լինէին իւր ամենօրեայ պահանջումնքը կատարելու եւ հարկաւոր աշխատանք կատարելու:

Երբ ես կամենում եմ երկրագործութեամբ կամ շերամապահութեամբ պարապել, ես չեմ դառնայ դէպի այնպիսի գրականութիւն, որ պատմագրական եւ պօէտիկական ուղղութիւն ունի: Կամ երբ ես տեսնում եմ իմ հասարակութեան տղիտութիւնը, տեսնում եմ որ հայրենակիցներս վատ են դաստիարակում իւրանց երեխաները,—եւ ես մտադիր լինիմ օրինաւոր մանկավարժական ուղղութեամբ ուսումնա-



րան հիմնել, ես չեմ դառնայ դէպի այն գրականութիւնը, որը պատմագրական եւ պօէտիկական ուղղութիւն ունի, եւ որը մի օրինաւոր մանկավարժական գիրք չունի...

Կարելի է այն գրքերի մէջ, որոնք Վենետիկում, Վեննայում կամ Կ. Պօլսում են հրատարակվում, կան «մարդկային ամեն գիտութիւններից առած աշխատանքներ»—բայց սորա միայն թարգմանութիւններ են եւ այնքան փոքր թւով են, որ բաւական չեն կարօղ լինել մի ինչ եւ իցէ գործ կամ գիտութիւն սխտէմատիկական կերպով ուսումնասիրելու համար:

... Ուրեմն իրողութիւնը նոյն է մնում, որ մենք հայկական լեզու այն նպատակով չենք սովորում, որ մեր գրականութեան հետ ծանօթանանք եւ նորանից օգուտ քաղենք... որովհետեւ գրականութիւն չկայ:

### III

Ես ասացի որ երբորդ նպատակը, որ մարդս պիտի աչքի առաջ ունենայ մի որ եւ իցէ լեզու սովորելու ժամանակ, այն է որ նա կարօղանայ հասարակութեանը նորա լեզուի միջոցով իւր միտք յայտնել ինչ եւ իցէ յօղվածներ կամ գրքեր գրելով:

Ես նմանապէս ասացի, որ մենք գրականութիւն չունինք, որ մենք ոչինչ չենք գրում,—իսկ այժմ ես հարցնում եմ ձեզ, ինչ է պատճառը որ մեր մէջ ոչինչ չէ գրվում:

Պատճառը, որ մեր մէջ ոչինչ չէ գրվում (կամ շատ սակաւ է գրվում) այն է, որ մեր հասարակութիւնը հարկաւորութիւն չէ զգում դէպի ընթերցանութիւնը:

Ե՛րբ էք տեսել որ մի որ եւ իցէ բան կատար-

վի, պատրաստվի կամ տեղծվի մի հասարակութեան մէջ, երբ այդ հասարակութիւնը այն բանի հարկաւորութիւն չէ յայտնում:

Օրինակ Յրանսիայում, ամբողջ օր աշխատելուց յետոյ, մարդիկ հարկաւորութիւն են զգում գիշերը միասին հաւաքվելու, խօսելու, կաֆէ կամ զինի խմելով օրագիրներ կարդալու, կամ բիլիարդի խաղով մարմինը քիչ վարժելու,—եւ հասարակութեան այդ հարկաւորութեանը նայելով հիմնում են Յրանսիայի ամեն քաղաքների մէջ պանդոկները մեծ թւով:

Մեր մէջ մարդիկ չեն զգում հարկաւորութիւն հաւաքվելու, օրագիրներ կարդալու կամ խօսելու,—ուրեմն եւ այնպիսի հաւաքվելու տեղեր եւս չեն հիմնվում մեր մէջ:

Շվէյցարիայում գրքեր կարդալու հարկաւորութիւն կայ,—ուրեմն եւ զրեթէ ամեն քաղաքում հասարակական գրատուններ կան, որտեղ ուրախութեամբ օտար մարդին անգամ ձրի ներս են բերում գրքեր կարդալու:

Մեր մէջ հասարակութիւնը հարկաւոր չէ զգում գրքեր կամ օրագիրներ կարդալու, ուրեմն եւ ոչ թէ միայն հասարակական գրատուններ չեն հիմնվում, բայց եւ գրքեր անգամ չեն գրվում մեր լեզուով:

Եւ ինչից պիտի իմացվի, որ մի ինչ եւ իցէ բանը ձեզ հարկաւոր է,—ինչից պիտի իմացվի, օրինակ, որ ձեզ հարկաւոր է հացը, շորերը եւ այլն:

Նորանից կարօղ եմ ես միայն եզրափակել որ ձեզ այդ բաները հարկաւոր են, երբ ես տեսնում եմ որ դուք փող էք մխտում այդ բաներ գնելու համար:

Եթէ հարուստ էք, ձեր հարստութեան մէկ մաս էք տալիս նոցա գնելու համար, ի՞նչ հարուստ չէք,



կաշխատէք եւ ձեր աշխատանքից ստացած փողով կզնէք ձեզ հարկաւոր բաներ:

Մեր մէջ, Հայերի մէջ, հայկական օրագիր հրատարակողներ կամ գրքեր գրողներ չեն կարող այդ աշխատանքով ապրել, որովհետեւ այդպիսի աշխատանքը մեր հասարակութեան մէջ չէ վարձատրվում — ուրեմն սորանից կարելի է եզրափակել, որ հասարակութիւնը հարկաւորութիւն չէ զգում մտաւոր աշխատանքի:

Կամ կկամենայիք, կարելի է, որ զօրը ձեզ համար ձրի աշխատէ: Կկամենայիք ձրի ստանալ զօրի աշխատած զրքերը, կամ կկամենայիք որ ձրի հրատարակվին օրագրներ... Բայց եթէ զօրը ձրի պիտի աշխատէ, նա, ապահովացրած չլինելով, երկար ժամանակ չէ կարող աշխատել, որովհետեւ իւր աշխատանքի համար վարձատրված չլինելով, քանի մի ժամանակից յետոյ կամ պիտի քաղցած մեռնէ, կամ պիտի դադարեցնէ իւր աշխատանքը եւ ուրիշ մի բանով պարապէ:

Մի՞թէ կամենում ենք նմանել այն հարուստ մարդին, որ ուսուցչին իւր տունը կանչելով, իւր որդուն դաս տալու համար, պարծենում է թէ բարերարութիւն է անում ուսուցչին, որովհետեւ նորան պարապեցնում է; հաց է տալիս նորան... Նա չէ կամենում համաձայնել, որ ուսուցիչը նորան նմանապէս մեծ բարերարութիւն է անում, որովհետեւ լուսաւորութիւն է տալիս նորա տղէտ երեխային: Բաւական չէ, որ ուսուցիչը լուսաւորում է տղէտ երեխային, — հարուստ մարդը կկամենար, որ նա այդ բանը ձրի անէր... Բայց ինչո՞վ պիտի ապրէ ուսուցիչը, եթէ նա իւր աշխատանք ձեզ ձրի կառաջար-

կէ... Ուրեմն ինչո՞վ էք պարծենում, որ դուք նորա աշխատանքը վարձատրում էք:

Կային ի հարկէ մարդկային պատմութեան մէջ այնպիսի մարդիկ, որոնք զոհել էին իւրանց կեանքը իւրանց ազգ լուսաւորելու համար, որոնք վարձատրված չլինելով, ձրի ուսուցանելով, — քաղցած կամ սպանված էին մեռել: Այն ազգերը, որոնք ունեցել են այդպիսի մարդիկներ, կարող էին, այո, երեւելի ազգեր լինել, — բայց նոքա իրաւունք չունին իւրանց «հասարակութիւն» անունը սեփականացնել: — Ինչի: Այնոր համար որ ազգը կարող է իւրան «հասարակութիւն» կանչել միայն այն ժամանակ, երբ նա աշխատանքի հարկաւորութիւն է զգում առհասարակ, եւ գլխաւորապէս մտաւոր աշխատանքի, որ ամեն ուրիշ աշխատանքների հիմն է եւ կառավարիչ: Եւ նորանից միայն կարող է մարդս եզրափակել, որ հասարակութեանը հարկաւոր են մտաւոր աշխատողներ, երբ նա ապահովացնում է մտաւոր աշխատողներին, այսինքն վարձատրում է հեղինակների աշխատանքներ: Իսկ երբ որ ազգը առանց վարձատրելու մտաւոր աշխատողներին, սպասում է — որ զարի մէջ գան մէկ կամ երկու մարդիկ, որոնք ձրի նորան կուսուցանեն եւ յետոյ քաղցած մեռնեն... այդպիսի ազգը «ազգ» կարող է իւրան անուանել, բայց նա դեռ չէ հասել այն աստիճանին, որ իւրան «հասարակութիւն» անուանի:

Բայց ին՞՞ կասեն, թէ ես սխալվում եմ, թէ Հայերը եթէ հարկաւորութիւն չեն զգում հայ լեզուով զբրած գրքերը կարդալու, — դա չէ նշանակում, որ նոքա առհասարակ պահանջմունք չունին մտաւոր աշխատանքին: Ընդհակառակն, կան նոցա մէջ այդ պահանջմունքը, միայն թէ նոքա հարկաւորութիւն



են զզոււմ, որ այդ պահանջմունք ուրիշ միջոցով կատարվի, այսինքն որ գրքեր եւ օրագիրներ ոչ թէ հայ լեզուով գրվեն, այլ որ եւ իցէ օտար լեզուով: Որովհետեւ նոցա լեզու հնացել է, նոցա համար անհասկանալի, կամ գոնէ դժուար հասկանալի է դարձել, եւ նոցա հարկաւոր է այժմ մի ուրիշ, օտար, աւելի կենդանի, աւելի հասկանալի, աւելի մշակված լեզու...

Կարելի է որ սա ուղիղ է, պատասխանում եմ ես, բայց այն ժամանակ երկուսից մէկը պէտք է ընտրէք:

Եթէ հայերը մտաւոր աշխատանքի պահանջմունք ունին, բայց կամենում են, որ այդ պահանջմունքը ուրիշ որ եւ իցէ օտար լեզուի միջոցով կատարվի, եւ ոչ թէ իւրանց ասեփական լեզուի միջոցով,—այն ժամանակ Հայերը իւրանց «ազգ» չեն կարօղ անուանել:

Կամ եթէ ամենեւին հարկաւոր չէ Հայերի համար մտաւոր աշխատանքը,—այն ժամանակ նոքա «հասարակութիւն» չեն կարօղ իւրանց անուանել:

Ուրեմն երկուսից մէկը.

Կամ մենք «ազգ» չենք,

Կամ «հասարակութիւն» չենք:

#### IV \*)

... Ուրեմն, եթէ մենք այն նպատակով հայկական լեզու չենք սովորում, որ յարաբերութիւններ ունենանք, այն նպատակով եւս չենք սովորում, որ

\*) Այստեղ Արժրունին համառօտ կերպով նորից կըրկնում է իր ասածները:

կարդանք, ոչ եւս այն նպատակով, որ գրենք,— ուրեմն ինչի ենք սովորում հայկական լեզու...

Վայ... Այդ էր պակաս... Հայեր ենք ու հայերէն չսովորենք...

— Ես ձեզ չեմ ասում, թէ հայերէն մի սովորէք, բայց ես ձեզ հարցնում եմ. ինչ նպատակով էք սովորում հայկական լեզու, կամ ինչ օգուտ էք բաղում այդ լեզու սովորելուց:

Ի՞նչ է ասում... օգուտը ձրն է... Հայ ես,— պէտք է հայերէն սովորես:

Սա պատասխան չէ:



Եւ իրաւ, դա պատասխան չէր: Այդպիսի մութ, անորոշ, օղային պատասխանով չէր լուծվի այնքան կարևոր ու մեծ հարց, որպիսին է մայրենի լեզուն մի ազգի համար: Հայը իր լեզուի վրա ուշադրութիւն էր դարձնում ազգասիրաբար. մինչդեռ անհրաժեշտութիւն պիտի դարձնէր իր համար օղտակարութեան տեսակէտից, պիտի նրան ընտրէր իրրեւ ամենազօրեղ զէնք իր նիւթական և մտաւոր հարստութեան, իր երջանկութեան համար: «Ես ձեզ չեմ ասում թէ հայերէն մի սովորէք»: Արժրունին, այն, այդ չէր ասում: Չէր ասում և այն, թէ եթէ չը կայ հայկական գրականութիւն, դա նշանակում է որ նա չը պիտի էլ լինի, եթէ ժո-



դովրդի մէջ ընթերցանութեան պահանջ չը կայ, չը պէտք է էլ փորձել ընթերցանութեանը պահանջ դարձնել: Արծրունին ուղում էր միայն հաստատել իրողութիւնը, այն, որ գրականութիւն չը կայ: Եւ դուք տեսնում էք թէ որպիսի ուժեղ տրամաբանութեամբ էր նա այդ հաստատում: Հաստատելուց յետոյ նա դիմում էր հայերին և հարցնում էր. երբ գրութիւնն այսպէս է, ի՞նչ էք ուղում անել:

Եւ հարցը այդպէս չը լուծված չէր թողնում Արծրունին: Ասելով թէ դա պատասխան չէ, նա ամեն ինչ վերջացրած չէր համարում: Իր յաջորդ յօդուածը, «Իդէալիստներ» վերնագրով, նա սկսում էր այն խօսքերով, որոնցով վերջացրել էր «Գրականութիւն չկայ» յօդուածը:

Այո, սա պատասխան չէ,—գրում էր նա,—կամ անկի լաւ ասեմ, սա պատասխան է, բայց սա «իդէալիստների» պատասխան է:

Վաթսուռական թուականների այն սերունդը, որ պահանջում էր գործ, գրական գիտութիւն, աշխատանք հասարակաց բարեքի համար, «իդէալիստ» փոքր ինչ հեղինական անունով էր մկրտում այն մարդկանց, որոնք գաղափարներին երկրպագելն էին համարում

առաջադիմութեան ամենալաւ միջոցը: Իդէալիստ—դա բէալիստի հակապատկերն էր: Բէալիստը պահանջում էր մարդու գործունէութիւնից, առդանդից, ընդունակութիւնից անմիջական, իրական օգուտ, մինչդեռ իդէալիստը հաւատում էր որ միայն հացով չէ մարդ ապրում: Արծրունին, իբրև նոր սերունդի ներկայացուցիչ, այս յօդուածի մէջ շատ խիստ գոյներով դուրս էր բերում բէալիստի պատկերը, արհամարհանքով վերաբերվելով դէպի իդէալիստները: Ճիշտ է, մեղանում չը կար հարուստ գրականութիւն, չը կար մանաւանդ ղեղարուեստ, որի շուրջը յաճախ ընդհարվում էին իդէալիստները և բէալիստները, բայց և այնպէս, մեղանում էլ շատ թեթև կերպով գծազրված էր երկու սերունդների, հայրերի և որդիների դոյութիւնը: Կային մեղանում շատ իդէալիստներ. դրանք յիսունական և վաթսուռական թուականների հասարակական հոսանքների ազդեցութեան տակ կրթվածներն էին: Ահա երևան էր գալիս և անողոք բէալիստը, որ գալիս էր օգուտ պահանջելու և ժխտելու այն, ինչ օգուտ չէ տալիս: Մեր գրականութեան մէջ դեռ ոչ ոք չէր ներկայացրել աշխատաւորի, գործնական բէալիստի պահանջները: Այդ անում էր Արծրունին: Եւ որքան սիրուն կերպով:



Գիտէք «իդէալիստ» ինչ է նշանակում, հարցնում է նա եւ պատմում.

Ես ծանօթ էի մի նկարչի հետ: Այդ նկարիչը շատ զեղեցիկ կերպով էր նկարում սարեր, ձորեր, երկինք ու ջուրը:

Մի անգամ նորա պատկերների վերա նայելով, ես հարցրի նորան.— ինչի աշխարհիս երեսին ազնիւ ու զեղեցիկ բաները ամէն մարդի համար հաւասար կերպով հասանելի չեն: Օրինակ ձեր զեղեցիկ նկարչութիւնները, որոնք բնութեան պատկերներ են ներկայացնում, հասկանալի են միայն քիչ թէ շատ ուսում առած մարդին, բայց ժողովրդի ամէն անդամին, մանաւանդ հասարակ մարդին, արվեստաւորին \*) օրինակ, հասկանալի չեն: Ձեր պատկերներն ո՞վ կզնէ,— այնպիսի մարդ, որ աւելորդ փող ունի: Ձեր պատկերը երբ որ դահլիճում էր դարսած, ուր ժողովուրդը նորան տեսնելու էր գնում,— ձեր պատկերը ո՞վ հասկացաւ...

Շատ սակաւ մարդիկ նորան հասկացան, եւ այնպիսի մարդիկ, որոնք քիչ թէ շատ բացված էին:

Իսկ ժողովուրդը... նորան ինչ, որ դուք զեղեցիկ կերպով սարեր ու ջուր էք նկարում:... Նա ուրիշ հարկաւորութիւններ ունի, նա աղքատ է, նա հարկաւորութիւն է զգում իւր կեանքը լաւացնելու,

\*) Պէտք է ի նկատի ունենալ, որ արհեստ և արուեստ բառերը այն ժամանակ զործ էին անջատ բովորովին հակառակ այն նշանակութեան, որ նրանք ունին այժմ: «Արուեստաւոր» այստեղ պէտք է հասկանալ մեր այժմեան «արհեստաւորի» մտքով, և ընդհակառակն, «արհեստ» հիմնական մեր «զեղարուեստն» է:

նա աշխատանքի է կարօտ, նա անբարոյականութեան մէջ է, նա մարմնի ու հոգու պակասութիւններ ունի... Նորան ինչ, որ դուք նկարում էք բնութիւնը:

«Ես նկարում եմ բնութիւնը, պատասխանեց նրկարիչը, որովհետեւ բնութիւնը զեղեցիկ է: Ամեն զեղեցիկ բանի տեսարանը զոյացնում է մարդիս մէջ բարձր ու ազնիւ զգացմունք, զոյացնում է զեղեցկութեան ճաշակը, եւ մաքրում է նորա սիրտը կոպիտութենից, կոպիտ զգացմունքից»:

— Շատ զեղեցիկ կերպով էք խօսում, պարոն նկարիչ, բայց մի՞թէ դուք կարծում էք թէ ժողովուրդը ժամանակ ունի (եւ այնքան զարգացած է) որ կարողանայ ձեր զեղեցիկ նկարչութիւններից այդ ուսմունք քաղել: Դուք կամենում էք նորան կոպիտութենից ազատել, նորա զգացմունքը մաքրել... բայց ժողովրդի կեանքն ինքն կոպիտ է: Նորան կոպիտութենից ազատելու համար, նորա կեանքը հարկաւոր է փոխել: Իսկ ժողովրդի կեանքը փոխելու համար, նորան հարկաւոր են աշխատանք եւ ուսում: Նորան հարկաւոր է աշխատել, հացը ճարել, նորան հարկաւոր է տղիտութենից ազատվել, մտածելու սովորել, որ նա կարողանար առաւել բարոյական լինել:

Իւր աշխատանքն եւս կառավարելու (համար ?) ժողովրդին հարկաւոր է մտածելու սովորել:... Ես եւս ինձ կատարեալ մարդ չեմ համարում, ես եւս ժողովրդից եմ, ես եւս հարկաւորութիւն եմ զգում մտածելու, որովհետեւ մտածելը ինձ հնար է տալիս առաւել արդար կերպով վարվել մարդկանցի հետ, ուրեմն մտածելուց եւս առաւել բարոյական եմ դառնում: Ես հարկաւորութիւն եմ զգում մտածելու, եւ



կարծում եմ որ արհեստը անօգուտ չպէտք է մնայ, այլ նա եւս պէտք է օգնէ ինձ մտածելու:

Նկարեցէք այնպիսի բաներ, որ ստիպեն ժողովուրդը մտածելու, նկարեցէք հասարակութեան կեանքից այնպիսի անցքեր, որոնք մեր վատ դաստիարակութեան, մեր տղիտութեան, մեր նախապաշարմունքի հետեւանք ու պտուղներ են... Նկարեցէք մեր բարոյական ու մարմնական պակասութիւնները, նկարեցէք այն մեր բարոյական պակասութիւնները, որոնք մեր հասարակութեան նախապաշարմունքի պտուղներ են, որոնց մենք տեսնում ենք, բայց որոնց վերա մենք ուշադրութիւն չենք կամենում դարձնել, վախենալով հասարակութեան նախապաշարմունք վիրաւորելու... Նկարեցէք հասարակութեան կեղտը... Նկարեցէք...

—Ո՛չ, պարոն, ոչ... երբէք ես այդպիսի բան չեմ անի եւ երբէք այն նկարիչը, որ իւր սննձ է պատուում, չպէտք է այդպիսի բան անէ... Արհեստը աստուածների գործ է, նորան թի կհամարձակի ցածրացնել մինչեւ այն աստիճան, որ նորա միջոցով ներկայացնէ հասարակութեան պակասութիւններ, հասարակութեան կեղտը... Ո՛չ, ես այդ բարձր, աստուածային գործը կեղտի մէջ չեմ ման ածի... Արհեստը պէտք է արհեստի համար ապրէ...

Ընթերցող, հասկացանք դուք ինչ որ ասաց նկարիչը: Եւ ծանաչեցիք արդեօք, ինչ մարդ է իմ նրկարիչս... Նա «իդէալիստներից» է:

Իսկ ես, իմ նկարչի խօսքերը ամենեւին չեմ հասկանում,—ճշմարիտ:—Ես միայն այն գիտեմ, որ ես «ժողովուրդ» եմ եւ կկամենայի որ անօգուտ բան իրաւունք չունենար աշխարհիս երեսին ապրելու: Ես կկամենայի, որ ամեն բան ինձ օգնէր լաւանալու,

ձգտելու դէպի բարոյականութիւնը, դէպի իմ կեանքի լաւացնելը, դէպի առաջադիմութիւնը... Իսկ այնպիսի նկարչութիւնները, որտեղ ներկայացրած է (Քէյտեմ եւ երեւելի Բաֆայէլի ձեռով) զեղեցիկ կնոջ տկոյր մարմինը, կամ բնութեան տեսարանը, սարեր, ձորեր ու ջուրը,—սորանից, ես խոստովանում եմ ձեզ, սորանից ես առաւել բարոյական չեմ դառնում:

Եւ մի շարք այսպիսի «իդէալիստներ»: Ահա մէկը գիրք է կարդում: Հարցնում էք նրան ի՞նչպէս է դուր գալիս գիրքը, նա պատասխանում է՝ «չատ լաւ է գրած»: Եւ ուրիշ ոչինչ, նա չի պարզի գրքի արժանաւորութիւններն ու պակասութիւնները, որովհետեւ նա գրքից օգուտ քաղելու համար չէ ընթերցանութեամբ պարապում, այլ «կարդում է... կարդալու համար»:

Ահա մի գրող, զիցուք Ֆրանսիացի գրող Լամարտինը: Գրել է նա ահագին քանակութեամբ գրքեր: Լեզուն շատ լաւ է, կարդում էք մեծ ախորժակով: Բայց միտք շատ քիչ կայ այդ գրուածքների մէջ: «Այնպիսի գրքեր մեզ չեն դրդում մտածել, բայց ընդհակառակն սպանում են մտածելու ընդունակութիւնը, և ծուռ մտքեր յայտնելով, ոգևորում են իրանց ձեռի շնորհով՝ մարդի զգացմունք ու ցնորք»: Դա, ուրեմն անօգտակար գրող է, դա գրում է գրելու համար:



Ահա մի մարդ, որ շատ սիրում է խօսել, բայց խօսել ոչ թէ այն նպատակով որ մի միտք յայտնէ, այլ խօսել այն նպատակով որ առիթ ունենայ «իր սեփական ձայնը լսելու»: Խօսելու ժամանակ նա սիրահարվում է իր սեփական ձայնի վրա: Ուրեմն մի մարդ է դա, որ խօսում է խօսելու համար:

Ահա հարուստի որդին Ամբողջ օրը ոչինչ չէ անում, իսկ գիշերը թատրոն է գնում: Ինչո՞ւ: «Հասարակութիւն տեսնելու, իր սեփական անձը ցոյց տալու համար, և բեմի վերա ազդիկների... ռաներ տեսնելու համար»: Նա, ուրեմն, թատրոն է գնում ոչ թէ օգուտ ստանալու համար, այլ թատրոն գնացած լինելու համար միայն: Մինչդեռ բեմի վրա հեղինակը արծարծում է որ և է հարց, որի մասին վիճելով, մենք կարող ենք մի յայտնի օգուտ ստանալ, մի յայտնի հայեացք կազմել հասարակական այս կամ այն երևոյթի մասին: Հարուստի որդին, որ թատրոնում գտնում է իրան ցոյց տալու և ուրիշներին տեսնելու բաւականութիւն միայն, նոյնպէս «իդէալիստ» է:

«Առհասարակ—ասում է Արծրունին—երբ որ մարդը մի գործ անելով մի առանձին նպատակ կամ օգուտ աչքի առջեւ չունենալով, այն գործի «գոր-

ծողութեան» մէջ իւր համար բոլոր բաւականութիւն է գտնում—այդպիսի մարդը «իդէալիստ է»:

Այդպէս որոշելով «իդէալիստի» տիպը, Արծրունին դիմում է հայ ազգին և ասում է.

Մենք Հայերս, ամենքս «իդէալիստներ» ենք:

Երբ որ ես ձեզ հարցնում եմ, ինչ նպատակով էք սովորում հայկական լեզու, կամ ինչ օգուտ էք քաղում այդ լեզու սովորելուց:—Դուք ինձ պատասխանում էք. «Օգուտը ո՞րն է... Հայ ես—պէտք է հայերէն իմանաս»:

Մենք «իդէալիստներ» չենք միթէ, երբ մեր սեփական լեզու այն նպատակով չենք սովորում, որ նորանից օգուտ քաղենք, որ նորա միջոցով մտքեր յայտնենք, յարաբերութիւններ ունենանք, նորա միջոցով զարգացնենք մեր խելքը, գրքեր կարդալով, կամ յայտնենք մեր մտքերը, գրքեր գրելով:

Մենք «իդէալիստներ» չենք միթէ, եթէ մենք մեր սեփական լեզու սովորելուց ոչինչ օգուտ չենք քաղում, բայց այնուամենայնիւ սովորում ենք նրան:

Մենք «իդէալիստներ» չենք միթէ, եթէ մենք մեր լեզու միայն այն նպատակով ենք սովորում... որ սովորենք մեր լեզու: «Ո՛չ, մենք ազգասիրութեան պատճառով ենք սովորում մեր լեզու»:

Հասկան՞ում էք դուք արդեօք ինչ է ազգասիրութիւնը:

Ազգասիրութիւնը այնպիսի զգացումն է, որով մարդը պարտաւորվում է «օգտաւէտ» լինել իւր հասարակութեան:

Ուրեմն, սա ամենեւին ազգասիրութիւն չէ, երբ որ մարդը իւր ազգի լեզու իմանալով, ոչինչ «օգուտ»



չէ քաղում այդ լեզւի ուսումից, ուրեմն իւր լեզու իմանալով, ոչինչ «օգուտ» չէ բերում, ուրեմն «օգտաւէտ» չէ լինում իւր հասարակութեանը:

Ազգասիրութենից մարդը պարտաւորվում է «օգտաւէտ» լինել իւր ազգին: Իսկ նա ազգասիրութեան պատճառով է սովորում իւր ազգի լեզու: Բայց լեզու սովորելուց նա ոչինչ «օգուտ» չէ քաղում, եւ չէ բերում իւր ազգին: — Ուրեմն նորա ազգասիրութիւնը «անօգուտ», աննպատակ ազգասիրութիւն է, կամ «իդէալիստի» ազգասիրութիւն է:

Այն Հայն, որ Հայերի մէջ ապրելով, երկիր է փորում, — թէեւ նա «ամենեւին» հայերէն չէր իմացել, — առաւել մեծ ազգասէր է (այնոր համար որ երկիրը փորելով նա «օգտաւէտ» է լինում իւր հասարակութեանը), ասում եմ, առաւել մեծ ազգասէր է քան թէ այն Հայն, որ հայերէն իմանալով, ոչինչ օգուտ չէ քաղում իւր հայերէն գիտենալուց:

Ահա ինչ գրականութիւն չը կար հայերի մէջ: Գրքեր, ի հարկէ, կային, հեղինակներ, թարգմանիչներ եղել էին և կային: Բայց դրանք «իդէալիստներ» էին: Գալիս է ըէտալիստ մարդը և ասում է գրականութիւն չը կայ: Նրան չեն հասկանում. չեն հասկանում որ ըէտալիստի համար այդ գրքերը, որքան էլ գեղեցիկ լինին, ոչինչ են, քանի որ օգուտ չեն բերում ժողովրդին, ոչինչ են, ինչպէս նկարչի այն հիմանալի պատկերը, որ ներկայացնում է ընտելութիւնը, բայց որից ոչինչ օգուտ քաղել չէ կարող ժողովուրդը:

Օգուտ, միայն օգուտ: Ինչին է ձեր մաքուր արուեստը, ինչին են ձեր ազգասիրական ճառերը, երբ ժողովուրդը տգէտ է, անբարոյական հասկացողութիւնների մէջ ընկած, երբ նա հաց պիտի ճարէ իր համար, բայց միջոցներ չը գիտէ: Նա ժողովուրդ եմ, բացականչում է մեր ըէտալիստը ինքնավստահութեամբ, պահանջողի խստութեամբ. ես ժողովուրդ եմ, կեանքը ինձ ճնշում է, տապալում է: Ինձ հարկաւոր է օգուտ քաղել գիտութիւնից, քաղաքակրթութիւնից և ինձ համար այն ամենը, ինչ իմ անմիջական, իրական օգուտից դուրս է, գոյութեան իրաւունք չը պիտի ունենայ. ես ժողովուրդ եմ, իսկ դուք ինչ էք տալիս ինձ, ազգասիրական ճառեր, խրատներ, վարդի ու սոխակի պատմութիւն...:

Ժողովուրդը, նրա կեանքը, նրա օգուտը, հողը, արդիւնաբերութիւնը և գիտութիւն, գրական գիտութիւն — ահա ինչ դրօշակով է հրապարակ գալիս մեզանում այդ նոր մարդը: Եւ նրա խօսքը արտասանված է ժամանակին. դա մի խիստ բողոք էր մեր ուղղութեան դէմ. դա գալիս էր կանոնեցնելու մեր բռնած ընթացքը, յեղաշրջելու մեր հասկացողութիւնները գործի և պարտականութեան մասին: Արժրուներն ոչ միայն յայտնում էր



մտքեր, այլ և պատրաստ էր պաշտպանել նրանց: Բայց նրան չէին հակաճառում, նրա դէմ բանակոխ չէին սկսում, թէև նա ինքն էր բանակուծի հրաւեր կարգում և այդ հրաւերը մենք տեսնում ենք ուղղած նոյն իսկ «Հայկական Աշխարհին»:

«Իդէալիստներ» յօդուածն էլ Ստեփանէն տպագրեց վերապահումներով, պատասխանատուութիւնը հեղինակի վրա թողնելով, այսինքն յայտարարելով թէ համաձայն չէ հեղինակի հետ \*): Խմբագրական կարճ նկատողութիւններից դէնը Ստեփանէն չէր զրնում. նա երբէք չը յայտնեց թէ ինքը ինչ կարծիքներ ունի, թէ ինչու համաձայն չէ իր աշխատակցի մտքերին: Արծրունին, ինչպէս տեսանք, ուղում էր որ «Հայկական Աշխարհը» գուրս գայ այդ անորոշ դիրքից, գոնէ ասէ թէ ինչու է զովում, իմաստուն անուանում նրա յօդուածները: Պատասխան չեղաւ: «Գրականութիւն չը կայ» յօդուածին կցած խմբագրական նկատողութիւնը առիթ դարձաւ, որ Արծրունին մի անգամ էլ հրաւեր ուղղէ Ստեփանէին «Հայկական Աշխար-

\*) Պէտք է նկատենք, որ «Հայկական Աշխարհում» շատ ուրիշ յօդուածներ ու նամակներ էլ էին տպւում զրոգների պատասխանատուութեամբ:

հի» 1869 թ. № 1—2-ի մէջ տպւած «Նամակ խմբագրութեան»-ը այդպիսի հրաւեր է պարունակում: Այդտեղ Արծրունին նորից սպացուցանում էր որ ճիշտ է իր ասածը թէ հասարակութիւնը կարգալու պահանջ չունի: Եւ ապացոյցը հէնց ինքը «Հայկական Աշխարհն» էր: Խմբագրութիւնը իր յայտարարութեան մէջ ասել էր թէ այն ժամանակ նա կը կարողանայ ընդարձակել իր գործունէութիւնը, երբ բաժանորդների թիւը կաւելանայ:

Ի՞նչ է նշանակում ստորագրողների Թւի մեծանալը,—հարցնում էր Արծրունին:—Նշանակում է Թէ ժողովրդի մէջ աւելի ու աւելի է յայտնվում կարգալու եւ մտածելու պահանջումը:

Ու դիմելով քաղաքական տնտեսութեան, նա արծարծում է փոխանակութեան օրէնքը, որ մի եւ նոյն բանն է հաստատում: Բայց ինչու է Արծրունին հրապարակ հանում մի այդպիսի իրողութիւն: Որովհետև նա հետագօտող է, իսկ հետագօտողի պարտքն է մերկացնել իրողութիւնները ամենայն ճշտութեամբ: Ասելով թէ ժողովուրդը կարգալու պահանջ չունի, նա ամենին չէ կամեցել մեղադրել ժողովուրդը, հետևաբար և եղբակացնել թէ ի գուր է աշխատել այդ ժողովուր-



դի համար: Մի մասնագէտ ուսումնասիրում է մի լեռնային սառցակոյտի դիրքը, հաշուում իմանում է որ սառցակոյտը այս ինչ ժամանակ պիտի վայր ընկնէ և վնաս հասցնէ սարի ստորոտում ապրող ժողովրդին: «Մի՞թէ դուք կասէք թէ այդ իրողութիւնը հաստատելով, ուսումնագէտը մեղադրում է բնութիւնը», հարցնում է Արծրունին:

Մենք, ի հարկէ, այդպիսի բան չենք ասի: Հաստատել իրողութիւնները, նշանակում է որոշել հիւանդութեան յատկութիւնները, գտնել հիւանդութիւնը, նրա դիագնոզը դնել: Հաստատելով իրողութիւնը, Արծրունին կանգ չէր առնում: Ո՛չ, հաստատելը բաւական չէ: Հիւանդը իմանում է թէ ինչ ցաւ ունի: Յետո՛յ: Յետոյ նա բնականաբար հարցնում է՝ ինչ է հարկաւոր անել: Արծրունին պատասխանում է.

Նամակիս վերջում կասեմ թէ մեզ, Հայերիս, հարկաւոր է այժմ (եւ կարիլի է ունենալ) միայն երկու ուղղութեան գրուածքներ, որոնք մեզ օգտաւէտ կարողանային լինել, օգնելով աշխատանքի տարածմանը.— նախ այնպիսի ուղղութեան գրականութիւնը, որնոր ժողովրդին առաջարկէր գիտութեան փաստեր, — երկրորդ որ քննէր հասարակութեան կեանքի երեւոյթները:

Բայց ահա դեռ ուրիշ ինչ կայ իմանալու.

Սա չէ նշանակում, որ այդ երկու ուղղութիւններին հետեւելով բոլոր գրողները միեւնոյն աչքով պէտք է նային երեւոյթների վերա.— ամենեւին ոչ, այս երկու ուղղութիւններին եւս հետեւելով, գրողներից ամէն մէկը կարող է իւր սեփական հայեացքով նայել գործի վերա: Բազմակողմանի կերպով քննված երեւոյթը առաւել հասկանալի է հասարակութեանը: Չանազան ուղղութիւններին հետեւող գրողները անշուշտ հարկաւոր են գրականութեան մէջ:

Մտքերի ազատ փոխանակութիւն էր ուղում Արծրունին, կարծիքների տարբերութիւնը նա շատ ցանկալի էր համարում: Սա շատ բնորոշ է այն մարդու համար, որին շնորհված էր անսպառ եռանդով մտքեր յուզել մեզանում, ահագին բանակոհիւններ բաց անել, դողափարական պայքար բորբոքել: Թո՛ղ ուրիշները նոյնպէս յայտնեն իրանց կարծիքները: Իսկ մինչև այդ Արծրունին իր սեփական համոզմունքն էր գնում մտածող հայերի առաջ, ուղղելով նրանց հետեւալ ըմբոստ ու կծու տողերը.

Իսկ այնպիսի գրուածքները, որտեղ բարոյականութիւն, կարգ եւ ազգասիրութիւն է բարոզվում... այնպիսի գրվածքները թող գրողը տանէ...: Բաւական են մեզ բարոզողները, մանաւանդ ազգասիրութեան... Հէրիք է այս խափանացած (?), հնացած, մաշված ուղղութիւնը... Մեզ հարկաւոր է այժմ աշխատանք,— իսկ աշխատանքին կարօղ է օգնել գրա-



կանութիւնը, միայն այդ երկու ճանապարհներ ընտրելով. գիտութիւն եւ քննութիւն:

Այս տողերը այլ ևս ոչինչ անորոշութիւն չեն թողնում Արծրունու հրապարակախօսական դէմքը ամբողջովին դժագրելու համար: Ամեն ինչ պարզված է, առաջին քայլերը չափազանց խոշոր, ուղղադէմք, անյողոթող են: Բայց մենք կը կամենայինք այստեղ մի հիմնական հարց էլ շօշափել: Ո՞րքան ինքնուրոյնութիւն կար Արծրունու մէջ, որքան սեփական աշխատանք ունէր նա իր աշխարհայեցողութիւնները մշակելու, իւրացնելու մէջ: Այս հարցը մեզ տանում է մի հետաքրքրական համեմատութեան:

Մենք մի քանի անգամ առիթ ունեցանք յիշատակելու մի ուրիշ գրողի անուն, որի ազդեցութիւնը այնքան նկատելի է Արծրունու վրա: Դա Պիսարեվը է: Տեսնենք ինչ կապ կայ այդ երկուսի մէջ, ինչ էր Արծրունին Պիսարեվի վերաբերութեամբ—արդեօք հետեօղ թէ կրկնող, թարգմանիչ...

Կարգալով Արծրունու սուսնողական ժամանակների մի քանի գրուածքները (օր. «Իդէալիստներ», կանանց կրթութեան մասին), մենք իսկոյն յիշում ենք Պիսարեվին: Անկարելի է չը յիշել, որովհետեւ այդ երկու գրող-

ների մէջ նմանութիւնը այնքան մեծ է, որ ակամայ այսպիսի հարց է ծագում. արդեօք Արծրունին, այդ յօդուածները գրելիս, իր սեղանի վրա բացած չունէր Պիսարեվի գրուածքները, արդեօք յաճախ չէր նայում այդ բաց էջերին:

Վաթսուհական թւականներէ նոր սերունդին նուիրած մեր տողերում մենք խօսեցինք Պիսարեվի մասին: Երբ Արծրունին մտաւ համալսարան, Պիսարեվը արդէն անուն վաստակած գրող էր և նրան յափշտակութեամբ կարդում էր ամբողջ երիտասարդ Ռուսաստանը: Դեռ 1864-ին նա գրել էր իր «Բէալիստներ» աշխատութիւնը, մի հրապարակախօսական գոհար, որի մէջ նոր սերունդը հանդէս էր բերված իր դադափարներով, հասկացողութիւններով, պահանջներով: Մենք արդէն գիտենք թէ ինչ էր այդ նոր սերունդի, այդ բէալիստների հաւատամքը: Անձի կատարեալ ազատութիւն, բնական գիտութիւն, աշխատանք, իրական օգուտ, զարգացած միտք, մտածող բէալիստ—այս բոլոր հասկացողութիւնները, նոր ժամանակի այս գաղափարները Պիսարեվը արծարծել, պաշտպանել ու վեր է հանել շատ փայլուն կերպով: Դիմենք մի քանի մանրամասնութիւնների:



Պիսարեվը անհաշտ թշնամի էր այն ուղ-  
ղութեան, որ կոչվում է «արուեստը արուես-  
տի համար». նա պահանջում էր որ բանաս-  
տեղծը լինի իր ժամանակի առաջաւոր  
մարդ, ոչ թէ երգէ լուսին, սոխակ ու  
վարդ, այլ մտածելու նիւթ տայ ընթերցո-  
ղին, ոչ թէ սեփական փոքրիկ զգաց-  
մունքները, «ես»-ը հանէ հրապարակ, այլ հա-  
սարակական հարցերին արձագանք տայ: Գրո-  
ղից նա պահանջում էր օգուտ: Ով որ օգուտ  
չէ բերում իր գրուածքներով, նա թերու-  
տ է, անհասկացող է, տախակութիւն է: Ահա,  
օրինակ, ինչ էր նա ասում բանաստեղծներէ  
մասին.

Իմ կարծիքով, ճշմարիտ բանաստեղծը, զրիչ  
վերցնելով, իրան տալիս է խիստ ու պարզ հաշիւ  
այն մասին, թէ դէպի ինչ ընդհանուր նպատակ կը  
լինի ուղղված նրա նոր ստեղծագործութիւնը, ինչ  
տպաւորութիւն պիտի թողնէ այդ ստեղծագործու-  
թիւնը ընթերցողների մտքի վրա, ինչ սուրբ ճշմար-  
տութիւն ցոյց կը տայ փայլուն պատկերներով, ինչ  
վնասակար մոլորութիւն արմատախիլ կանէ: Բա-  
նաստեղծը—կամ մտքի մեծ մարտնչող է, անվախ  
եւ անքիժ «ասպետ ոգու», ինչպէս ասում է Հենրիխ  
Հէյնէն կամ թէ մի չնչին պարաղիտ, որ զուար-  
ճացնում է միւս չնչին պարաղիտներին մանր-մունր  
ձեռնածուութիւններով: Միջին տեղ չը կայ: Բանաս-  
տեղծը կամ տիտան է, որ ցնցում է դարաւոր չա-

րիքի սարերը, կամ թէ մի բողոճ, որ փոփոքում  
է ծաղկի փոշին:

Նախապաշարմունքները զգուելի էին Պի-  
սարեվի համար. զարգացած մարդ, կամ, ինչ-  
պէս Գրիգոր Արծրունին էր ասում, բաց-  
ված մարդ է հարկաւոր հասարակութիւն  
կազմելու համար: Նախապաշարմունքների,  
սրբացրած սովորութիւնների դէմ Պիսարեվը  
սաստիկ կուռում էր մանաւանդ կանանց հար-  
ցի մէջ:

Կանանց դատարկ ու անմիտ դաստիարա-  
կութիւնը միտք ու հոգի սպանող մի բան է:  
Աղջկան ասում են թէ նա կրթված, լուսա-  
ւորված կին պիտի դառնայ: Բայց ինչ են  
սովորեցնում նրան:—Փոքր ինչ աշխարհա-  
գրութիւն, մի քիչ քերականութիւն, յետոյ  
պատմութիւնից այս ինչ թւականը և անու-  
նը, յետոյ պարս Ամեն ինչ վայրիվերոյ,  
կցկատուր, անկապ: Ուղեղը ճնշված է, սահ-  
մանափակ. և ամեն միջոց ձեռք է առնվում  
որ նա չը դարգանայ: Հարստութիւնը, գեղե-  
ցիկ շորերը, հասարակութեան դուր գալը  
կեանքի նպատակներ են և դրանց համեմատ  
էլ կինը ստանում է այն, ինչ անհրաժեշտ  
է: Կեանքը անցնում է դատարկ իրարանցման  
մէջ. կնոջը միշտ ճնշում են խոհանոցի, նըն-



շարանի և մօզային խանութի մանր-մունր, գրօշանոց հոգսերը:

Բէպիստը պահանջում է ազատել կնոջը այդ սպանող պայմաններից: Բայց նրա հակառակորդը, որ զեղադէտն է (էսթէտիկ), բողոքում է, ասելով թէ Պիսարեվի նման բէպիստները քանդում են ընտանիքի հիմքերը, քարոզում են անբարոյականութիւն: Ո՛չ, այդպէս չէ, ասում է բէպիստը: Ես տղամարդ եմ, մտածող բէպիստ. և ես պիտի ունենամ ընկեր և բարեկամ կին: Երկուսս լծակիցներ, աշխատակիցներ ենք հասարակութեան մէջ և տանը. մենք զործում ենք միասին, փոխադարձաբար իրար օգնում ենք, մէկի զիտութիւնը, փորձը լրացնում է այն պակասը, որ ունի միւսը: Վերջապէս մենք միասին դաստիարակում ենք մեր երեխաներին և այս պարտաւորութիւնը աւելի ևս մօտեցնում է մեզ, շաղկապում է մեր հոգեկան շահերը, մեր գոյութիւնը: Եւ այսպէս մենք միմիանց շատ հարկաւոր, շատ անհրաժեշտ բարեկամներ, ընկերներ ենք: Իմ այսպիսի ընտանիքը կարող է քանդվել, կարող է անբարոյական հասկացողութիւններ մտցնել իր մէջ: Ես և կինս միշտ կը սիրենք իրար, երբէք չենք յողմի միասին սպրեւուց, միասին աշխատելուց: Իսկ դձուր, զեղադէտներ,

բօմանտիկներ, որ ընտանեկան բարոյակաշուծեան պաշտպան էք հանդիսանում, դձուր ինչ հասկացողութիւն ունիք կնոջ մասին: Նա ձեզ համար վայելչութիւն է, խաղալիք է: Ահա հէնց այդպիսի հասկացողութեան վրա հիմնած ընտանիքն է խախուտ ու փրկարուն, որովհետև վայելչութեան զգացմունքը շուտ է ձանձրանում մէկի հետ մնալուց, իսկ խաղալիքը, հէնց որ կորցնում է իր փայլը, աղբանոց գցելու իր է դառնում:

Տեսնո՞ւմ էք որքան նմանութիւններ կան Պիսարեվի և Արծրունու մէջ: Եթէ էլ առաջ գնանք, էլ շատ բան կը տեսնենք: Կը տեսնենք բառերի, դարձուածքների նմանութիւնն էլ: Պիսարեվը, օրինակ, գրում է. «Մեր հայրենակիցների ընթերցանութիւնը նպատակ չունի. ուստի մարդը ոչինչ չէ որոնում գրքի մէջ, ոչ մի բանի մասին հարց չէ տալիս, ոչ մի բանի չէ ուզում հասնել»: Ժիշտ այս մի և նոյն վկայութիւնը չէ, որ տալիս է Արծրունին հայ ընթերցողի մասին: Պիսարեվը, խօսելով կանանց կրթութեան մասին, զարմանում է թէ ինչո՞ւ իգական դպրոցում առաջնակարգ տեղ չը պիտի բռնէ բնական գիտութիւնը, ինչո՞ւ ամօթալի, անպարկեշտ բան պիտի համարվի ծանօթացնել աղջկան մարդակազմութեան և բնախօսութեան հետ



այնպէս, ինչպէս ծանօթանում են տղամարդիկ: Ինչ պատճառով ամօթ պիտի լինի որ կինը իմանայ թէ ինչպէս է կատարվում մարտողութիւնը: Յիշում էք, Արծրունին էլ իր առաջին յօդուածում ասում էր. «Ինչո՞ւ է ամօթ աղջկայ ձեռքը տալ Անատոմիա կամ Ֆիզիոլոգիա, ինչո՞ւ էք կարծում, որ աղջկերքը պէտք է տղէս մնան»...

Կանգնած այս երևոյթի առաջ, մենք մեզ հարց ենք տալիս. ինչ է սա ցոյց տալիս: Ցոյց չէ տալիս արդեօք թէ Արծրունին արտադրում էր Պիսարեվի մտքերը և իբրև սեփական մտքեր մատուցանում էր. հայ հասարակութեան:

Ո՛չ, ընթերցող: Այսպիսի վճիռ կայացնել չէ կարելի:

Մենք կարող ենք ասել թէ Արծրունին կրթվել ու դաստիարակվել է այն գաղափարների ու սկզբունքների վրա, որոնց արտայայտողը եղել է Պիսարեվը իբրև այն ժամանակվայ երիտասարդութեան ներկայացուցիչ: Մենք կարող ենք ասել որ Արծրունին, իր ժամանակակիցների պէս, յափշտակութեամբ կարդացել է Պիսարեվի գրուածքները, եղել է նրանց ազդեցութեան տակ: Կարող ենք այն էլ ասել որ այդ ազդեցութիւնը մեծ դեր է կատարել նրա կեանքի այն

չրջանում, երբ նա գաղափարներ և սկզբունքներ էր իւրացնում: Այս բոլորը շատ ճիշտ կը լինի: Բայց այս բոլորը դեռ չէ նշանակում թէ Արծրունին Պիսարեվի ընդօրինակողն էր. նա բոլորովին անկախ, ինքնուրոյն մտածող էր:

Ոչինչ տպաւորութիւն չէր թողնի Արծրունին, եթէ Պիսարեվի թարգմանիչը հանդիսանար մեզանում, եթէ չունենար իր սեփական դատողութիւնը, վերլուծութիւնը, պաշարը: Ինչպէս տեսանք և դեռ կը տեսնենք, նա խոր տպաւորութիւն էր թողնում իր գրուածքներով և այդ՝ գլխաւորապէս մեր համալսարանական երիտասարդութեան վրա, որ, ի հարկէ, շատ լաւ ծանօթ էր և Պիսարեվի հետ, ուրեմն և կարող էր հեշտ նկատել թէ Արծրունին ուրիշ մտքերն է կրկնում, առանց սեփականն ունենալու:

Եւ մի՞թէ հնարաւոր է դառնալ մի օտարազգի հրապարակախօսի պատճէն: Ո՛չ, դա անհնարին է, որովհետև չէ կարող լինել այնպիսի հրապարակախօսութիւն, որ կապված չը լինի այն ազգի կեանքի հետ, ուր նա գործում է, որ չը կերակրվէ այն իրականութիւնից, որին նա նուիրվել է ուղում: Բաւական չէ որ մենք միմեանց կողքի դնենք ուսու Պիսարեվին և հայ Արծրունուն: Մենք պէտք



երկու ժողովուրդներն էլ դնենք իրար մօտ:

Եւ ինչ համեմատութիւն կարող է լինել ոռւս և հայ կեանքի մէջ: Ռուսները ունէին մեծ գրականութիւն՝ փառաւորված անուաների մի երկար շարքով, ունէին համալսարաններ, բարեկարգ դպրոցների մեծ թիւ, հարուստ մամուլ, աչքի ընկնող գրողների բազմութիւն, հասարակական և կուլտուրարական հարցեր, բանական, ուղղութիւններ: Իսկ մենք, ինչ ունէինք մենք: Մենք դեռ սխօլաստիկներ էինք, տիրացու աղգասէրներ և մեր անցեալում միայն մի «Հիւսիսսփայլ» ունէինք, այն էլ մեր անտարբերութեան, մեր թշնամութեան դոհված, կէս-կուշտ կէս-քաղցած «Հիւսիսսփայլ»: Գրականութիւն չունէինք, մեղանում 100—200 բաժանորդով էր լրագիր կամ ամսագիր ասլրում:

Այսքան տարբեր հասարակութիւնների մէջ հրապարակախօսութիւնը չէր կարող մի և նոյն նպատակներն ունենալ, մի և նոյն ճանապարհներն ընտրել: Պիտարեվը խիստ քննութեան էր ենթարկում ոռւսաց համալսարանական կրթութիւնը. Արծրունին չէր կարող նոյնը անել, քանի որ մի ոռւսի համար մեծ պակասութիւններ ունեցող համալսարանը հայի համար շատ լաւ էր: Եւ Արծրունին, պահանջելով որ նոր սերունդը ա-

զատված լինի ասիական բռնակալ ընտանիքի սպանող ազդեցութիւնից, չէր ուզում որ համալսարան հիմնվի մեր երկրում, որպէսզի երիտասարդութիւնը դիմէ օտար երկիրներ, Ռուսաստան և արտասահման, բացվելու, զարգանալու համար: Արծրունին տեսնում էր որ հայը կարող է մեծ դահլիճ վարձել, պահարաններ առնել, բայց չէ կարող դրանցից ժողովրդական զրադարան կազմել, քանի որ չը կայ ամենազլխաւորը—գիրքը: Պիտարեվին այսպիսի դժբախտ իրողութիւն չէր կարող տանջել: «Գրականութիւն չը կայ» յօդուածը Արծրունին կարող էր գրել և ոչ թէ Պիտարեվը, որովհետև միայն հայ հրապարակախօսի առջև էր արձանացած այն հրէշաւոր և բեռյթը, որ մայրենի լեզուն սովորվում է, գործ է ածվում իբրև ազգասիրութեան նըշան, որ ոչ ոք հարկաւոր չէ համարում այդ լեզուն գործ ածել թէ սեփական օգտի և թէ հասարակաց օգտի համար:

Եւ այսպէս մի շարք առանձնայատկութիւններ: Մեղանում ամեն ինչ դեռ պէտք էր սկսել այրուբենից, տարրականից: Պիտարեվը, անշուշտ, կը ծիծաղէր, եթէ նրան առաջարկէին գրել մի այնպիսի յօդուած, որի մէջ պէտք լինէր ասպացուցանել թէ երբ 500 հազարից բազկացած մի ժողովուրդ այնքան



բաժանորդ չէ տալիս իր միակ ամսագրին, որ նա կարողանայ մի քիչ շունչ քաշել, ընդարձակվել, դա նշանակում է որ այդ ազգը կարգալու պահանջ չունի: Ինչու կը ծիծաղէր Պիսարեվը:—Որովհետեւ այդ բանը չափազանց տարրական հասկացողութիւն կը համարէր իր ժողովրդի համար, չափազանց անտեղի ժամափաճառութիւն: Իսկ մեղանում դա շատ հարկաւոր էր. մեղանում այդ իրողութիւնը հաստատելու համար պէտք էր դիմել քաղաքական անտեսութեան էլ, բերել այնտեղից օրինակներ՝ փոխանակութեան էութիւնը հասկացնելու համար: Եւ մեղ համար դա շատ հետաքրքրական, շատ շահադրողոտ նորութիւն էր: Մեր գրողը ընթերցող չէր գտնում: Եւ եթէ նա այդ բանի վրա սկսէր դատողութիւններ անել, հասկանալի կը լինէր դա Պիսարեվի համար, այն Պիսարեվի, որ տեսնում էր իր առջև ոչ միայն սոսկ ընթերցողներ, այլ և ջերմ երկրպագուներ, որոնք ոչ միայն կարդում են, այլ և յափըտակվում են, միանում ձուլվում են գրողի հետ, ստեղծում են նրա համար հեղինակութիւն, տիրապետութիւն...

Ո՛չ, մենք ջոկ էինք և ջոկ պիտի լինէր մեր հրապարակախօսը: Մենք մեր առանձին խաւարն ունէինք, մեր առանձին ցաւերն ու

պակասութիւնները և մաքի արտայայտութիւնն էլ մեղանում պիտի յարմարվէր մեր դործերի ընթացքին, նրանց հետ քայլէր:

Այսպէս, ուրեմն, ընդհանուր սկզբունքների, ղեկավարող հիմնական դադափարների շրջանում է Արծրունին այնքան մօտենում Պիսարեվին, որ մեղ թւում է թէ նրա մաքերն է կրկնում: Եւ մենակ Պիսարեվին: Կարելի չէ ասել թէ Պիսարեվը ստեղծեց ժամանակը, այլ պէտք է ասել թէ ժամանակը ստեղծեց Պիսարեվին: Տաղանդաւոր ոռւս երիտասարդը ժողովրդականացնում էր արևմտեան դիտութիւնը, խօսում էր իր ժամանակի առաջաւոր մարդկանց խօսքերով: Ահա նա փառաբանում է աշխատանքը. բայց միթէ դա նրա սեփական գիւտն է. մի և նոյնը, և աւելի սիրուն ու ուժեղ կերպով անում է Ֆրանսիացի Էդմոնդ Աբուն, և Արծրունին սրան էլ է դիմում: Կանանց կրթութեան նուիրված յօդուածում մեղ զարմացնում է Արծրունու նմանութիւնը Պիսարեվին: Բայց մի քիչ ուշադրութեամբ նայեցէք, և դուք կը տեսնէք որ այդտեղ Արծրունին իր տեսութիւնները հիմնում է Կարլ Ծօխտի, Բօկլի և ուրիշ հեղինակութիւնների վրա, այսինքն այն ազբւրների վրա, որոնց դիմում էր և Պիսարեվը: Նշանաւոր է որ միայն մի տեղ



է Արծրունին վկայութիւն բերում Պիսարե-  
վից («Երկուսից ո՞րն է լաւը»), այն էլ նրան  
հերքելու համար: Ինչպէս գիտենք, Պիսարեվը  
պահանջում էր զէն գցել Պօլ դը-Կօկի և Դիւ-  
մաների վէպերը իբրև անբարոյականացնող  
գրքեր: Իսկ Արծրունին ասում էր, ո՛չ, չը  
պէտք է զէն գցել, արգելել: Թոյլ տուէք ա-  
զատ կարգալ՝ կեանքի բացասական կողմերի  
հետ ծանօթանալու համար. անբարոյակա-  
նութիւնը հեղինակները չեն ստեղծում, այլ  
կեանքը, իսկ մենք պարտաւոր ենք ճանաչել  
կեանքը:

Այստեղ մենք տեսնում ենք հայեացքների  
հիմնական տարբերութիւն, դեղարուեատի  
վերաբերմամբ: Մինչդեռ Պիսարեվը չափա-  
զանց բացասաբար էր վերաբերում վիպա-  
գրութեան և յայտնի երգիծարան Շչեգրինի  
մասին ասում էր թէ նա աւելի օգուտ կը  
տար իր ժողովրդին, եթէ թողնէր երգիծա-  
բանութիւնը և ժողովրդականացնէր գիտու-  
թիւնները, — Արծրունին ընդունում էր որ  
դեղարուեատը, ընդհակառակն, շատ հար-  
կաւոր է, քանի որ նա օգուտ է բերում, մի  
կողմից ցոյց տալով հասարակութեան այն,  
ինչ չը կայ, բայց ինչին պէտք է ձգտել հաս-  
նել, միւս կողմից նկարագրում է այն, ինչ

կայ, բայց չը պիտի լինի իբրև անբարոյա-  
կանութիւն, իբրև ապականութիւն: <sup>Բ</sup>

Այսպէս ուրեմն, կատարեալ ինքնուրոյ-  
նութիւնը Արծրունու մէջ անուրանալի է,  
թէև նրա մի քանի յօդուածների մէջ —  
կրկնում ենք մի քանիսի մէջ միայն — երևում  
է Պիսարեվի ազդեցութիւնը: Քանի որ Արծ-  
րունին ուսանող էր Ռուսաստանում, այդ  
ազդեցութիւնը և՛ հասկանալի էր, և՛ բնական,  
ինչպէս այն, որ Պիսարեվն էլ Չէրնիշևսկու  
և Դորբոյլիւբովի ազդեցութեան տակ էր զար-  
գացել: Բայց եւրօպա անցնելուց յետոյ, նը-  
րան կրթողը այլ ևս միայն ռուսաց գրակա-  
նութիւնը չէր, այլ եւրօպական միտքն ու  
գրականութիւնը: Տիրապետելով եւրօպական  
լեզուներին (ֆրանսերէն և գերմաներէն), լի-  
նելով զարմանալի աշխատասէր, արագ ըմ-  
բռնող, նա ձեռք է բերում բազմակողմա-  
նի զարգացում, մկրտվում է եւրօպականու-  
թեան աւազանի մէջ:

Ո՛չ, պատճէն չէր նա, ինքնուրոյնութիւ-  
նից, անկախութիւնից զուրկ մի պատճէն.  
օտար հողի բոյս չէր նա: Ծնված մեր իրա-  
կանութիւնից, նա համաշխարհային մտա-  
ւոր ծաղկանոցից հիւթեր հաւաքեց և ե-  
կաւ մեղ մօտ, մտաւ մեր կեանքի մէջ իբրև  
անձնուէր մշակ: Ի՞նչ կը դառնար նա, եթէ,



դիցուք, ռուս հասարակութեան նման մի միջավայրում աշխատելու լինէր,—չը գիտենք: Գիտենք այն, որ նա հայկական ցաւերի ու կարիքների համար էր պատրաստված: Նա տեսնում էր ոչ միայն Պիսարեվին, այլ և սրանից անհամեմատ աւելի բարձր մտաւոր գործիչներին և որքան շատ էր տեսնում այդպիսիներին, որքան գերմանական հոշակաւոր պրոֆէսորների դասախօսութիւնները լայնացնում էին հօրիզոնները նրա մտքի առաջ, այնքան աւելի խիստ էր նա զգում իր հայրենի երկրի, իր ազգի ամբողջ դժբախտութիւնը: Նրա աչքից հեռաւոր օտարութեան մէջ էլ չէր խուսափում մեր իրականութիւնը: Եւ ահա այդ իրականութեան ցաւերից մէկն է խօսում նրա «Շարունակներ թէ ոչ» յօդուածի մէջ, որ տպւեց 1868-ին «Մեղու» լրագրում (№ 35):

Այստեղ Արծրունին շարունակում է քննադատութիւն, հասարակական կարծիք որոնողը մնալ: Որոնում է նա, բայց միայն մըռայլ ու յուսահատ դատարկութիւն է զըտնում: Շարունակներ թէ ոչ, հարցնում նա: Ի՞նչը:—Գրելը: Ահա մի հարց, որ ճիշտ որ պիտի կանգնեցնէր հայ երիտասարդին: Գրել, բայց ինչո՞ւ, ո՞ւմ համար:

Ձորս տարի առաջ—ասում է նա—մենք ուսնողներս հաւարված էինք մի փոքր սենեակում. խօսակցութիւնը մեր հայկական օրագրութիւնների վերաէր:—Ո՛չ, պարոններ, ասաց ուսանողներից մինը, ես այժմ տեսնում եմ, որ մենք սխալվեցանք սկսելով յօդուածներ հրատարակել հայկական օրագրի մէջ. միայն այն մարդն ունի իրաւունք յօդուածներ գրելու, որը վստահ լինելով իր զարգացման վերա, կարող է ժողովրդի հասկացողութեան յօդուածներ առաջարկել:

Ինչքն ըստ ինքեան անսխալ չէ այս միտքը: Բայց ցաւն այն է, որ այդ խօսքերը շատ յաճախ վարագոյր են դառնում, որի ետեւում թագնւում է անկարողութիւնը, ծուլութիւնը. թագնւում է շատ յաճախ և այն մտաւոր տափակութիւնը, որ ինքը չէ անում և չէր ուզի որ ուրիշներն էլ անեն: Արծրունուն չէր կարող բաւարարութիւն տալ այդ չափը: Վստահ լինել իր զարգացման վրա: Բայց ո՞րն է այդ զարգացումը. ի՞նչպէս չափել նրան:

Ես—ասում է Արծրունին—չեմ ընդունում իմ համալսարանական ուսումի աւարտելը ինչպէս իմ զարգացման ապացոյց. ես չեմ կարծում նոյնպէս, որ ուսումնաւարտելով ես անպատճառ կհամոզվեմ, որ բաւական զարգացել եմ, որ հասել եմ վերջապէս այն րօպէին, երբ իրաւունք ունիմ գրականական գործունէութիւն սկսել... Մենք իրողութիւններ ենք տեսնում, որ հայրենիք վերադարձած ուսում-



նաւարտ երիտասարդներից շատերը, թէ բժիշկներ, թէ իրաւաբաններ, թէ բնագէտներ՝ այնքան թոյլ, երեխայական զարգացում ունին, որ ոչ թէ միայն զբել չեն կարող մի օրինաւոր յօգուած, այլ խօսակցութեան մէջ եւս չեն կարող որոշ մէկ միտք յայտնել: Կոչա սովորական խօսակցութեան պարունակութիւնը անվայելուչ բաներ են կամ հայտոյանք: Գուք ինքներդ շատ անգամ տեսած կլինէք, ինչպէս մեր Թիֆլիսի լուսաւորեալ մարդիկ, ուսում աւարտածներից կամ չաւարտածներից, երբ որ դուք նոցա հետ ծանր խօսակցութիւն էք սկսում, դարձնում են իրանց խօսքը թեթեւ եւ կեղտոտ բաների վերա:

**Այս տողերը շատ լաւ ցոյց են տալիս որ Արծրունին դեռ պատանեկութիւնից ճանաչել էր մեր ինտելիգենցիան, գիտէր թէ ինչ են ներկայացնում մեր ուսումնաւարտները, նոյն իսկ համալսարանականները: Եւ կարող ենք ասել թէ նա լաւ չէր ճանաչում, քանի որ նրա բերած դժերը իրողութիւն են ոչ միայն այն ժամանակի, այլ և ներկայի համար:**

Ուրեմն ինչ անենք,—շարունակում է նա:— ... Գրենք եւ թող զատէ հասարակութիւնը: Հասարակութիւն. ինչ հասարակութիւն. կոյ արդեօք հայկական հասարակութիւն: Հասարակութիւն, որ կազմված է ուսում չաւարտած ուսանողներից, նիւթապաշտ, տհաս, անհող մարդերից եւ անուս կնամարդերից, որոնք կարծել են թէ: Եւրօպական կրթված կին կոչվելու համար՝ բաւական է միայն եւրօպա-

կան զգեստներ հագնել: Ի՞նչ հասարակութիւն... Ե՞րբ ես տեսել, որ մի տպած յօդուածի վերա հայն իր միտքը յայտնէ, դատողութիւն անէ, մտքի մէջ պակասութիւններ եւ արժանաւորութիւններ տեսնէր: Փոխանակ կրիտիկայի նա կարող է հայտոյել—այդ նորա բանն է:

**Ուրեմն ի՞նչ է մնում անել մի այսպիսի ժողովրդի մէջ: Մի քանիսն ենք ասում ևն թէ իրաւունք չունինք գրելու, միւսները պնդում են թէ ունինք, թող ամեն մէկը գրէ, թող հասարակութիւնը դատէ:**

Ես համաձայն չեմ այն մտքի հետ—շարունակում է Արծրունին—թէ զրոյը պիտի քարոզիչ լինի: Ո՛չ, թէպէտ եւ զրոյը պիտի ունենայ մի հաստատ ուղղութիւն, պիտի ունենայ իւր սեպհական կարծիքը, պինդ պինդ պաշտպանէ իւր մտքերը,—բայց մի եւ նոյն ժամանակ նա պիտի հասարակութիւնից եւս սպասէ օգնութիւն, կրիտիկա պիտի սպասէ, որ հասարակութիւնը ուղղէ, զրստէ նորա յօդուածների պակասութիւնը:

**Հասարակական զիտակցութիւն, հասարակական կարծիք, հրատարակական կրիտիկա—ահա ինչ է ուզում Արծրունին հայ ժողովրդից: Նա չէ ուզում քարոզիչ լինել, այսինքն ամբիոնի վրա բարձրացած մի մարդ, որի խօսքերը լսում է բազմութիւնը առանց քննադատելու, լսկ իբրև ունկնդիր: Այդպիսի**



քարոզ և այդպիսի ունկնդիրներ լինում են միայն եկեղեցում, մինչդեռ հասարակական մամուլը այն ասպարէզն է, ուր պիտի կարծիքներ փոխանակէին, ուր մտքերի ընդհարում պիտի տեղի ունենայ:

Բայց չը կարծենք թէ Արծրունին, այսպիսի պահանջներ անելով, չէր ճանաչում հայ ժողովուրդը: Ահա նա վերլուծում է ժողովուրդ կազմող տարրերը և դասաւորում է նրանց այսպէս.

Կարգալ ու զրել չիմացողներ (ստորին ժողովուրդը և այլն):

Վաճառականներ և արհեստաւորներ:

Երկրորդական ուսումնարանների կամ գիմնազիօնների աշակերտներ:

Համալսարանների ուսանողներ, համալսարանների մէջ ուսում աւարտածներ և չաւարտածներ:

Անուս կնամարդիկ:

Եւ վերջապէս եկեղեցականներ:

Այնուհետև նա մի առ մի քննում է այդ տարրերը և հասնում է այսպիսի եզրակացութիւններին: Կարգալ-զրել չիմացողը, ի հարկէ, դատել չէ կարող: Վաճառականներն ու արհեստաւորները բացի օրացոյցից ու էֆէմէրտիից ոչինչ չեն կարգում: Մինչդեռ կարգացողը պիտի իմանար լեզուն, պիտի զար-

գացած լինի, որ կարողանայ վճուել թէ յարմար են արդեօք կամ ընդդէմ են հայոց ազգի ոգուն յօդուածի մէջ յայտնած մտքերը: Երկրորդական ուսումնարանների և գիմնազիօնների աշակերտներից շատերը «իւրանց լեզուն չգիտեն», աշակերտ են, դեռ իրանք պիտի սովորեն: Ուսանողները չեն կարող կարգացողներ լինել, որովհետև չէ կարելի ասել թէ մեր ուսանողները զարգացած մարդիկ լինէին: Ուսում աւարտածները, հայրենիք վերադառնալով, հազիւ գործ են գտնում: Եւ գործ տուողը հասարակութիւնը չէ, «հասարակութիւնը աշխատանք չէ տալիս ուսում առած մարդերին,— ուրեմն կարելի է, որ ուսում առած մարդիկը հասարակական հարցերով հետաքրքրվեն: Հասարակութեան համար օտար մնալով, իւրանց հասարակութիւնը եւ իւրանց համար օտար են համարում»:

Ո՞վ մնաց: Միայն եկեղեցականները: Դրանք ճիշտ որ չիվում են ժողովրդի հետ, ծանօթ են նրա պահանջներին և եթէ աւելի զարգացած, հիմնաւոր ուսում ստացած լինէին, «միակ դասն են հասարակութեան մէջ, որի անգամները վերա գրողը իրաւունք կունենար նայել, որպէս իր գրուածների ընական դատաւորների վերա»:



Զարգացած, հիմնաւոր ուսում ստացած: Ե՞րբ պիտի հայ հոգևորականը հասնէր այդ վիճակին: Եւ Արծրունին աւելացնում էր. «Բայց մինչև այն ժամանակ շարունակե՞նք թէ ոչ»:

Այս հարցին նա չէ պատասխանում: Բայց հարկաւոր է պատասխան, ինքն ըստ ինքեան չէ ստացվում արդեօք պատասխանը:

Արծրունու գծադրած պատկերը դարձեալ միննոյն հանդամանքներն է պարզում: Չը կայ պահանջների տէր, քննողի, դատողի գեր ստանձնելու արժանաւորութիւնն ունեցող հասարակութիւն. չը կայ զարգացած, ընդունակ, հասարակական շահերին նուիրված ինտելիգենցիա: Բո՞լոր հանդամանքները այն են ցոյց տալիս որ չը պէտք է գրել: Բայց հեշտ է մի այսպիսի վճիռ կայացնելը և մանաւանդ կատարելը: Ի՞նչ ասել ժամանակի այն պատգամի գիմաց, որ կարգադրում էր «կամ ոչնչանալ անշարժ մնալով, կամ առաջ դնալ և երջանկութիւն որոնել քաղաքակրթութեան մէջ»: Դրութիւնը ցոյց էր տալիս որ մեզ պէս մի ժողովրդի վերաբերմամբ դրած հարցին պէտք է պատասխանել. «Այո, շարունակե՞նք»: Շարունակե՞նք, որովհետև դարգացած, քննելու ընդունակ հասարակութիւն երկնքից չը պիտի ընկնէ, այլ պիտի ստեղծ-

վի կամաց-կամաց, աստիճանաբար: Հասարակական իդէալներ, ճիշտ է, չը կան, մենք օրացոյցի և էֆէմէրտի մարդիկ ենք: Բայց որտեղից պիտի գային այդ իդէալները, եթէ ոչ զրչից ու խօսքից: Շարունակե՞նք, այո:

1868 թւին տպված յօդուածներից վերջինը կրում է «Ինչի չենք հիմնում» վերնագիրը և ղետեղված է «Հայկական Աշխարհի» նոյեմբերի համարում: Հիմնելի բանը պիտի լինէր մի մեծ ընկերութիւն, որի հաշուվ բարձրագոյն ուսում կառնէին երիտասարդները: Միայքը նոր չէր. նոյնը վեց տարի առաջ, 1862-ին, առաջարկել էր Ստեփանոս Նազարեանցը «Հիւսիստփայլի» մէջ \*): Արծրունին նոյն իսկ ընկերութեան կազմակերպութեան գործում հեռու չէր գնացել Նազարեանցից. նա էլ կարծում էր թէ կարելի է հայերի մեծամասնութիւնը անդամ դարձնել այդ ընկերութեան: Նա հաշուում էր որ հազարներով կը լինեն այնպիսի մարդիկ, որոնք չեն կարողանում իրանց որդիներին բարձրագոյն ուսում տալ, բայց այնքան աղքատ չեն որ տարին 25 բուրլի չը կարողանան տալ ընկերութեան: Այդպիսով կազմվում է մի խոշոր գրամտղուխ, որի տոկոս-

\*) Տես իմ «Ստեփանոս Նազարեանց», II հ., կր. 171:



ներով տարին 166 ուսանող կարող են սովորել: Ուսանողներին օգնող ընկերութիւնը կարող է գրքեր էլ, մանաւանդ դասագրքեր, տպել:

Հետաքրքրականը այնքան այդ ընկերութիւնը չէ, որ չիրագործվեց և չէր էլ կարող իրագործվել, որքան այն պատճառաբանութիւնները, որոնք այսպիսի մի հիմնարկութեան անհրաժեշտութիւնն էին ցոյց տալիս:

Նազարեանցը իր առաջարկութիւնը բացատրում էր քաղաքակրթական և դաստիարակչական նպատակներով: Ընկերութիւնը նախ և առաջ կը մարմնացնէր ինքնօգնութեան գաղափարը, որից զուրկ են հայերը, և երկրորդ՝ օգտակար, պատրաստված գործիչներ կը տար մեզ: Արծրունին էլ նոյն օգուտներն էր նախատեսում ընկերութիւնից, բայց նա անհրաժեշտութիւնը հիմնում էր գլխաւորապէս անտեսական-արգիւնաբերական հողի վրա:

Նա սկսում էր իր յօդուածը այն անբնական և ոչ ցանկալի երևոյթից, որ հայերի մէջ ամեն բան թողնված է հարուստներին: Մի գործ սկսելու համար հայերը ստորագրութիւն են բաց անում: Եւ ո՞վ է ստորագրվողը: — Միշտ հարուստը: Ամեն զէպըում հարուս-

տը պիտի անէ, ամեն անգամ նրան են դիմում:

Այդ կերպով հասարակութիւնը սովորում է հարուստների վերա նայել, ինչպէս հասարակութեան ամենահարկաւոր անդամների վերա: Եւ աղքատ մարդիկներից շատերը, թէեւ ընդունակ, ուսումն առած լինելով, ազգային գործի մէջ հասարակութեան ակելորդ անդամներ են համարում իւրանց:

Եւ հասարակութիւնը միշտ հարուստներից է կախված: Հարուստը տալիս է փող, այդ փողը իսկոյն ծախսվում է և երբ հարկաւոր է մի նոր գործ, մի նոր ժողովարարութիւն, դարձեալ նրան են դիմում:

Հարուստները փրվում են, հասկանալով որ հասարակութիւնը ոչինչ չէ կարող, կամ ոչինչ չէ իմանում անել առանց նոցա օգնութեան, իսկ անհոգ հասարակութիւնը ոչինչ բանի տեղ չդնելով իւր սեփական հասկացողութիւն եւ զօրութիւնները, — նայում է հարուստների վերա ինչպէս իւր փրկիչների, իւր աստուածների վերա, նոցանից է սպասում ամէն կարելի եւ անկարելի գործեր:

Այդպիսի դրութեան մէջ երկար չէ կարող մնալ մի հասարակութիւն: «Այն հասարակութիւնը, որ միշտ բարերարութիւն է սպասում, նա իրաւունք չունի իւրան հասարակութիւն անուանել. բարերարութիւն



սպասելը նշանակում է մուրալ: Ուրեմն հասարակութիւնը պիտի գործէ ինքօզնութեան, հաւաքական գործունէութեան միջոցներով: Առանց այդպիսի ընկերական գործունէութեան մենք չենք կարող ապրել նոյն իսկ իրրև վաճառական, թէև մեր մասին կազմվել է այն համբաւը թէ վաճառական ազգ ենք: Ծիշտ չէ որ մենք վաճառական ազգ ենք:

Այն, մենք վաճառականութեամբ ենք պարապում, մենք առնում ենք եւ ծախում ենք, վաճառականութենից շահվում ենք,—բայց մի՞թէ այնպիսի ազգին, որ միայն առնում է եւ ծախում է, իսկ ինքն ոչինչ չէ արդիւնաբերում, կարելի է վաճառականական ազգ անուանել:

Նոր-Նախիջևանի օրինակը բերելով, Արծրունին ասում էր, որ հայերը շուտով կը զրկվեն և առևտրական միջնորդների գերից: Նոր-Նախիջևանցին Մօսկվայում ապրանք էր առնում և բերում իր քաղաքը, ծախում. այժմ Մօսկվայի արդիւնաբերող վաճառականը աւելի ձեռնառու է համարում բաց անել իր պահեստները Նոր-Նախիջևանում, ինքը ծախել իր ապրանքը: Միջնորդներ, ուրեմն, այլ ևս հարկաւոր չեն. հայը պէտք է հեռանայ ասպարէզից:

Նոյն իսկ կպատահէ եւ կովկասեան հայ վաճառականութեան հետ:

Կովկասի բոլոր հարստութիւններից մենք շատ քիչ օգուտ ենք քաղում: Եւ եթէ արդիւնքների մի քանիսներից օգուտ ենք քաղում, եթէ քանի մի արդիւնքները պատրաստում ենք,—դարձեալ այնքան օգուտ չենք իմանում քաղել, եւ այն կատարելութեանը չենք հասնիլ, որքան օգուտ են քաղում եւ որ աստիճանի կատարելագործութեանը օտարազգիներ են հասել, իւրանց արդիւնքներ պատրաստելու:

Այդ իրողութիւնը նա հաստատում է դերմանացի Պէտցօլցի մի հետազօտութեան մէջ լոյս հանած փաստերով, որոնք վերաբերվում էին տորոնի մշակութեան: Հէնց որ տորոնի գինը բարձրացաւ Ռուսաստանում, ամենքը թափվեցին այդ գործի վրա: «Զինւորականներ, զանազան աստիճանների պաշտօնեաներ, վաճառականներ, շինականներ, այլի կանայք, առանց կարողութեան մարդիկ,— ազարակ էին առնում վարձով, գործին հարկաւոր դումարը վաշխառութեամբ էին մեծացնում, որ կարողանան մասնակից լինել այն մեծ շահին, որ առաջարկում էր տորոնի գործը»: Հետևանքը այն եղաւ, որ արդիւնագործութիւնը չափից դուրս զարգացաւ, իսկ պահանջը պակասեց, գները ընկան և այն բոլոր գործողները, որոնք դրամատէրեր չէին, սնանկացան:

Ուրեմն—շարունակում է Արծրունին—մենք



տեսնում ենք որ ոչինչ բանից օգուտ չենք իմանում քաղել, ամէն գործի մէջ վնասվում ենք մեր տգիտութեան պատճառով:

Գլխաւոր պահանջումներ է մեզ համար ուրեմն տարածել գիտութիւն մեր մէջ, մեր գործնական աշխատանք օրինաւոր կերպով կատարելու համար: Եթէ ոչ, երբ կշինվեն մեր երկրում երկամուղիներ, երբ մեր երկիրը աւելի յայտնի կլինի եւրօպացիներին, նորա կզան մեր երկիրը, կհիւմենն գործարաններ, եւ գիտնական մարդիկ լինելով, իւրանց գումարներ մեզանից լաւ կառավարել գիտնալով, մեր բնական արդիւնքները կպատրաստեն առաւել մեծ քանակութեամբ, առաւել մարուք, առաւել առողջ, վաճառաշահութեան առաւել յարմար արդիւնքները: Այնպէս որ Հայերին խնդրակցութիւն (մրցակցութիւն?) կանեն, Հայերի ձեռից գումարները կխլեն: Հարկաւոր է ուրեմն աշխատել Հայերի մէջ գիտութիւն տարածելու, գործնական աշխատանքին ընդունակ մարդիկ պատրաստելու:

Ահա ինչու է հարկաւոր ուսանողներին օգնող ընկերութիւնը: «Այն երիտասարդները, որոնք ձեր ծախսով ուսում կառնեն, երբ յետ կդառնան, ձեր գործին օգուտ կբերեն, ձեր գործանոցները, կամ ձեր վաճառականական գործերը, կամ երկրագործութեան արվեստը օրինաւոր կերպով կառավարելով»:

Մեր մամուլի մէջ էլ մտնում էր գործնական կեանքը՝ իրական պահանջները, տրնատեսական շահերը զլուխ էին բարձրացնում

մեր առաջ, ուշադրութիւն էին դրաւում, իրանց ահագին կարեւորութիւնն էին ցոյց տալիս: Այդ նոր հոսանքը բերողը Գրիգոր Արծրունին էր: Նրանից առաջ հայ մամուլը եկեղեցու, դպրոցի, դաստիարակութեան շուրջն էր պտոյտներ անում: Բայց դա բաւական չէր. մեր քաղաքակրթական առաջադիմութիւնը ունէր ուրիշ շատ խոշոր, շատ առաջնակարգ հարցեր էլ: Հայ ազգի առջև միայն բարոյական վերածնութեան պահանջ չէր դնում փամանակը: Բարոյականի հետ գործնական տնտեսական կեանքն էլ պիտի առաջ գնար: Մեր աշխարհը փիլիսոփայ բարոյագէտների, բանաստեղծների հայրենիք չը պիտի դառնայ միայն, այլ և գիտութեամբ զինված աշխատանքի, շահագործող ոյժի, տրնատեսական մրցութեան ասպարէզ պիտի լինի: Եւ Արծրունին կանչում էր. պատրաստվեցէք, կազմակերպվեցէք, թէ չէ կը գայ օտարը, ձեզանից աւելի խելօք, աւելի գիտուն, — և կը խլէ ձեր ձեռքի հացը: Այսպէս ազդակում, նախազգուշացնում էր նա և յետոյ: Եւ այսօրվայ մեր տնտեսական կեանքը շատ լաւ ցոյց է տալիս թէ որքան խոր ճշմարտութիւն կար Արծրունու այդ նախազգուշացումների մէջ:

Օգտակարութիւն և աշխատանք քարոզող



րէալիստը հետզհետէ էր բաց անում այն, ինչ ունէր տալու իր ազգին: 1868 թւականին վերջերից նա իր գործունէութեան վրա աւելացնում է և մի նոր ձևով: Ամենայն ուշադրութեամբ և բարեխղճութեամբ նա հաւաքում էր եւրօպական գրականութիւնից և մամուլից հայերին վերաբերվող տեղեկութիւններ և ուղարկում էր «Հայկական Աշխարհին»: Սկսած այդ ժամանակից ամսագրի «Մեր Ներքին Գործեր» անունով մշտական բաժինը լցվում էր Գրիգոր Արծրունու հաղորդած հետաքրքրական տեղեկութիւններով: Մենք արդէն տեսանք թէ ինչպէս էր հասկանում Եւրօպայում գտնվող ուսանողի պարտականութիւնը: Այժմ պէտք է տեսնել թէ ինչ էին այդ տեղեկութիւնները հէնց իր, Արծրունու համար:

Տեղեկութիւնները շատ են, մանր-մունր և խօսել բոլորի մասին անհնարին է: Հաւաքելով, թարգմանելով տեղեկութիւնները, Արծրունին ոչ միայն հետաքրքրական նիւթ էր տալիս հայ ընթերցողին, այլ և, որ, մեր կարծիքով աւելի նշանաւոր է, ինքն էլ բազմակողմանի կերպով ծանօթանում էր իր ազգի հետ, այդ ազգի ոչ միայն ներկայի, այլ և անցեալի հետ: Դա մի անհրաժեշտ,

կարևոր պաշար էր, որ ստանում էր հայ հրատարակախօսը: Արծրունին իր բոլոր նախորդների համեմատութեամբ այն անբարեյաջող հանդամանքի մէջ էր գտնվում, որ կրթութիւն էր ստացել օտար դպրոցում, մէկն էր այն բազմաթիւ հայ երիտասարդներից, որոնք դպրոցական հասակում հաղիւ հազ մի երկու կտոր բան են սովորում հայերէնից՝ այն էլ խսկոյն մոռանալու համար: Արծրունին, սակայն, բացառութիւն կաղմեց, հետզհետէ վարժվելով հայերէնագիտութեան մէջ: Բայց դա բաւական չէր, պէտք էր ճանաչել ազգը, պէտք էր ծանօթանալ նրա անցեալի, նրա գրականութեան հետ: Արծրունին այդ պահանջը լրացնելու համար էլ միջոցներ գտաւ: Աշխատող մարդու համար, այն մարդու, որ հասկանում է իր կոչումն ու պարտաւորութիւնը, չեն կարող լինել անյաղթելի դժուարութիւններ:

Այսպէս, մենք նկատում ենք, որ Արծրունին առանձին հետաքրքրութեամբ հետևում էր հայագիտութեան գործին Եւրօպայում: Հին հայ հեղինակների հետ անմիջապէս ծանօթանալու հնարաւորութիւն չէր ունեցել նա, դրա համար պէտք էր գրաբար սովորել: Բայց ահա հայ մատենագիրները թարգմանվում են ֆրանսերէն, գերմաներէն լեզուներ:



րով, և Երօպայի հայազէտները հրատարակում են ուսումնասիրութիւններ հայոց պատմական կեանքի և դրականութեան մասին: Արծրունին հետևում է այդ բոլոր գործերին, և մեր Ազգայնագետները, Ջենտրները, Վարդան պատմիչները նրան անյայտ, անհասկանալի բառեր չեն մտում. նա ճանաչում է դրանց եթէ ոչ մանրամասնօրէն, գոնէ համառօտ կերպով, զլխաւոր կէտերի կողմից: Միևնոյն ժամանակ, մօտ լինելով Մխիթարեաններին, Արծրունին հետևում էր Վիեննայի և Վենետիկի վանքերի դրականութեան: Այդ հետաքրքրական բաժինը Արծրունին վարեց մինչև Երօպայից հեռանալը: Բայց նոյն իսկ Թիֆլիսում էլ նա չէր մոռանում հաղորդել «Հայկական Աշխարհի» ընթերցողներին թէ ինչեր են տպվում Երօպական թերթերում հայերի մասին:

## IV

Համակրական ցոյցեր:—Համալսարանական երիտասարդների ընթրիք Թիֆլիսում:—Կեցցեն Արծրունի եղբայրները:—Իրական հակառակորդների հարցը:—Բարոյականութիւնը ո՞ւմ արժանութիւնն է:—Օր. Չուշակիկի նամակը:—Ինչո՞ւ չը կայ հայկական բարձր:—Անհատների դերը:—Հեղիքեղը—Արեւիկ:—Փիլիսոփայութեան դոկտորը:—Արծրունիի Պարզում եւ Վիեննայում:—Հայերեկի դասեր:—Վիեննայի Մխիթարեան վանքը:—Փրանսիացու բնաւորութիւնը:—Հին եւ նոր սերունդը:—Վենեցիայում:—Ս. Ղազար:—Ծերացած ազգ:—Հ. Ալիշան:—Պարեյի՞ կ սիրելիս ժողովուրդը:—Մտեր յայտնելու իրաւունք:—Մեր երկրի հարստութիւնները:—Հասարակական կրթութեան գլխաւոր գործօնը:—Մանուկ պահապանութիւնները:—Քրիստոնեւորիւն եւ մահմեդականութիւնը:—Պուր շա բօն բուշօ:

Որքան էլ անմխիթար լինէր մեր իրականութիւնը, որքան էլ խլացած ու մեռած լինէին մեր հոգեւոր պահանջները և որքան էլ հայ գրողը յուսահատութեամբ նայէր իր չորս կողմը, չիմանալով թէ ո՞ւմ համար և ինչո՞ւ գրել, —կար և այն տխուր հանգաման-



քը, որ մարդիկ են պակասում մեզ, տաղանդով, եռանդով լցված մարդիկ: Կեանք չը կար, այն, բայց մեր միջավայրը Սահարայի անապատը չէր, որ ամեն մէկի համար պարզ լինէր թէ զուր է կեանք շարժելու որ և է փորձ անելը: Չէին սովորում մեղանում, բայց սովորեցնողները միթէ շատ էին: Ո՛չ, մեղանում էլ կար հետաքրքրութիւն, մեր մարդիկ էլ լսելու կարօտութիւն ունէին: Այդ մարդիկ, ճիշտ է, շատ չէին, բայց քաղց ու ծարաւ դռում էին, պատրաստ էին համակրութիւններ արտայայտել, ուրախանալ, հրճվել անգամ: Իսկ մի մեռած մարմին, մի սառն դիակ—եթէ հայ ժողովուրդը սառած դիակ լինէր,—չէ կարող այդպիսի յատկութիւններ ունենալ...

Թէ որքան մեծ էր կարօտութիւնը հայ փոքրաթիւ ընթերցող հասարակութեան մէջ, այդ ցոյց է տալիս «Հայկական Աշխարհը»: Մի շատ փոքրիկ, բովանդակութեամբ աղքատ ու միակողմանի, վերին աստիճանի անկանօն հրատարակվող ամսադէր էր դա: Բայց ինչպէս էին սպասում նրան, որքան մեծ հետաքրքրութեամբ էին ձևուր առնում այդ վրտիտ տետրակները: Մարդ այժմ էլ չէ կարողանում առանց յուզմունքի կարդալ Դերբենտից կամ Մօսկվայից ուղարկած այն տողե-

քը թէ «Հայկական Աշխարհի» ստացվելուն սպասում էին «անտանելի ակնկալութեամբ», թէ «ինչպէս սուրբ Սարգսի ողջ պատը ծոմապահութեամբ անցկացնողները հացի վերս կընկնեն, այնպէս ևս ևս ընկայ «Հայկական Աշխարհի» վրա»:—Խեղճ ընթերցողներ,—ականայ ասում էք դուք ձեր մտքում.—կը լինէիք դուք, շատ կը լինէիք, եթէ երկինքը մեզ չնորհած լինէր իր կրակով վառված շատ անհաաններ: Բայց երկինքը գթառատ չէր մեր վերաբերմամբ...

Մարդիկ, այն, կային: Եւ այդ ծարաւներն ու պապակողները չէին կարող ուշագրութիւն չը դարձնել Գրիգոր Արծրունու գրուածքների վրա: Ընդամենը մի տարի էր, ինչ երիտասարդ ուսանողը սկսել էր կանօնաւոր գրել, այնքան հեռաւորութիւնից քրքրել մեր պակասութիւններն ու կարիքները,—և անա պատրաստ է նրա համար ընթերցողների համակրութիւնը: «Հայկական Աշխարհի» 1869 թւի առաջին համարը Արծրունի եղբայրների հասցէին ուղղած մի շարք համակրական ցոյցեր է պարունակում իր մէջ:

Ահա Ադուլիսից Մեսրոպ քահանայ փափաղեանը գրում է թէ կարդալով «հայրենասէր պ. Արծրունու «Ինչի՛նչ կնք հիմնում» ի-



մաստալից յօդուածը», ինքը յղացել է մի առաջարկութիւն: Մի իսկացի առաջարկութիւն է դա—հիմնել «Շահարեր» անուանով մի ընկերութիւն, որի նպատակը պիտի լինէր զարգացնել գիւղատնտեսութիւնը, արգիւնաբերութիւնը և արհեստները Հայաստանում: Քահանայի յօդուածի վերնագիրն է «Եկէք հիմնենք»:

Մի ուրիշը, «Ռուսաստանում դաստիարակված հայ երիտասարդ» անուանով, նոյն Ազուլիսից ուղարկում է մի պատասխան Արծրունու «Գրականութիւն չը կայ» յօդուածի դէմ: Պատասխանը չէ տպագրվում «Հայկական Աշխարհի» մէջ \*), բայց խմբագրութեան ուղղած նամակից իմանում ենք որ «Հայ երիտասարդը» շատ դժգոհ է մնացել «Գրականութիւն չը կայ» յօդուածից, քանի որ, ասում է նա, «այսպիսի համոզմունքը տարածվելով կարող են վնաս պատճառել մեր ամեն տեսակ տարրերից դոյացած հասարակութիւններին, որոնց մեծ մասը գիտութիւնները միայն կ'ոպիտ նիւթ ապահանջի համար են սիրում»: Սակայն յետոյ, կարդալով Արծրունու «Ռդէպիստներ» յօդուածը, «Հայ երիտասարդը» փոխել է իր կարծիքը առաջին

\*) Խմբագրութիւնից անկախ պատճառներով:

յօդուածի մասին և աւելացնում էր իր նամակին հետեւեալ տողերը.

Այս նամակով ես չեմ կարող չուղարկել արտասանման իմ անկեղծ շնորհակալութիւնը պ. Գր. Արծրունուն, որ այսպիսի հետաքրքիր եւ կենդանի հարցեր է յարուցանում մեր աղքատիկ հասարակական կեանքին վերաբերված:

Երրորդ ցոյցը աւելի նշանաւոր է: 1869 թւի յունվարի 12-ին, երեկոյեան, Մօսկվայի համալսարանի նախկին ուսանողները Թիֆլիսում հաւաքվում են մի մասնաւոր տան մէջ՝ ընկերական ընթրիքով համալսարանի տարեդարձը յիշատակելու համար (Տատեհայի օրը): Դրանց միանում են և Պետերբուրգի համալսարանի մի քանի նախկին ուսանողներ. կազմվում է 20 մարդկանց մի ընկերակցութիւն:

Բազմած սեղանի չորս կողմը—գրում է մասնակցողներից մէկը,—ուրախ-ուրախ անց էին կացնում ժամանակը, գրուցում էին, վիճում էին եւ կենաց թասեր խմում... մի խօսքով քէֆ էին անում եւ սրտերը պարզացրած,—մի կողմը դնելով իւրաքանչիւրը իւր անձնական յատկութիւնները,—բարեկամաբար յայտնում էին իւրանց բարի ցանկութիւնները եւ ունեցած յոյսերը...

Այդ գաղափարական խօսակցութեան մէջ երիտասարդ համալսարանականները յիշում են բացակայ եղողներին: «Ուստի ներկայ



գտնվողներին մինը կենաց թասը առաջարկեց, և ամենքը սիրալիբ կերպով ընդունեցին եւ կեցցէներ գոչեցին: Այդ կենաց թասը առաջարկվեցաւ «Հայկական Աշխարհի» արդիւնաւոր աշխատակիցների Գ. և Ա. Արծրունիներին...

Այս կենաց թասի թէ առաջարկելն եւ թէ ամենքի կողմից սիրալիբ ընդունելու ճիշդ նման չէ այն կենաց թասին, որ առհասարակ մարդիկ առաջարկում են իւրանց ազգականների եւ մասնաւոր բարեկամների հեռանալու պատճառով: Ոչ, մասնաւոր բան չէ սա, այլ սակաւամիւ ամբողջի մի արտայայտված զգացմունք: Ես կամենում եմ ասել, թէ այս մի փոքր բանը ցոյց է տալի, որ մեր խեղճ զբաղմունքներն մէջ աշխատաւոր—ազնիւ երիտասարդների գործունէութեանը համակրող եւ պատվոյններն եւս պակաս չեն, թէպէտ այդ համակրողների թիւը քիչ է: Արդարեւ շատ ակտիւ էր խըմել այդ ազնիւ երիտասարդների կենաց լի թասը, նամանաւնդ որ նորա խոստանում են, ինչպէս կարողացինք օրագրում, շարունակել իւրանց աշխատակցութիւնը: Ուրեմն կարող ենք յուսալ, որ այս տարի եւս մտածել պատճառող յօղվածներ եւ շատ հետաքրքիր տեղեկութիւններ Նվթարայում մեզ վերաբերութեամբ աշխատողների մասին կլսենք անդադար:

Այս նամակին «Հայկական Աշխարհի» խմբագրութիւնը աւելացնում էր հետեւեալ ծանօթութիւնը.

Պ. պ. Արծրունիներից մինն միայն—պ. Գրիգորը—յօժարեց հրատարակել, որ նա կշարունակէ օրագրիս աշխատակցութիւնը, եւ միւսի—պ. Անդրէասի—մասին ուրախ ենք յայտնել օր մի առաջ, որ նա նոյնպէս շարունակելու է անդադար աշխատակցութիւն «Հայկական Աշխարհում», ահա այս առաջին № №-ից արդէն իսկ սկսելով իր գեղեցիկ յօղվածով \*): Այն, մեր օրագրականութեան մէջ (Ռուսիայում) նոր գործ է հետաւոր տեղերում մի եւ նոյն առարկայի մասին մտքեր զրգոել եւ մտածել տալ: Գոնէ Գր. Արծրունին իւր իմաստուն յօղվածներով կապում է մտածութեան կողմից, ինչպէս ընթերցողը կկարողայ այս № №-ումն եւս, Թիֆլիսի, Հէյդլբերգի, Ս. Վոլիսի, Պետերբուրգի մտածող Հայերին: Այն, կեցցեն ուրեմն Անդրէաս եւ Գրիգոր Արծրունիներն:

Նկատենք այստեղ, որ այն ժամանակվայ գրողներից ոչ մէկը այսպիսի ցոյցերի չէ արժանացել. տարիներ առաջ, երբ հրատարակում էր «Հիւսիսսփայլը», միայն Ստեփանոս Նազարեանցն էր ընթերցողների կողմից հրապարակով համակրանքի և հիացմունքի վրկայութիւններ ստանում: Այսպիսով ընթերցող փոքրամիւ հասարակութեան զգաց-

\*) Այդ գեղեցիկ յօղումն էր «Վան դաւառի նկարագրը», թարգմանութիւն Քրանսերէնից: Առհասարակ, Անդրէաս Արծրունին աշխատակցում էր «Հայկական Աշխարհին» թարգմանութիւններով:



մունքն ինքն էր, որ անսխալ կերպով ցոյց էր տալիս թէ մեր հրապարակախօսութեան մէջ Նազարեանցից յետոյ Գրիգոր Արծրունին է գալիս իբրև խոշոր, աչքի ընկնող ոյժ։ Եւ վերոյիշեալ ըստ որ վկայութիւնները ասում են մեզ որ ընթերցող հասարակութիւնը սկզբից եւթ ճանաչեց Արծրունու տաղանդի յատկութիւնները. այստեղ շեշտվում է ամենազլխաւորը—ամառել պատճառող՝ գրութիւն, «ամբեր գրգռել և մտածել տալ»։ Մենք դեռ էլ կը տեսնենք այսպիսի ցոյցեր։ Առայժմ շարունակենք հետեւել Արծրունու գրուածքներին։

Հետաքրքրական հանդամանք է որ 1869-ին Արծրունու գրուածքները «Հայկական Աշխարհում» շօշափում են գլխաւորապէս մի հարց միայն—կանանց հարցը։ Այսպէս են «Յիրբիխի Համալսարան», ուր խօսքը կին ուսանողուհիների մասին է, «Հայկական Գրնարի առիթով», «Կանանց աշխատանք Ֆրանսիայում» (ֆրանսիացի հեղինակների, գլխաւորապէս Ժիւլ-Սիմօն, Լը-Հարդի տեսութիւնները կանանց աշխատանքի մասին), «Բարոյական արտօնութիւն», «Սառն ու սուսնարանների խնդիր Հէյդըէրգում»։ Այդ գրուածքներից մի քանիսը թղթակցութեան կերպարանք ունեն կամ պարզապէս եւրօ-

պացի գրողների մտքերն են թարգմանում։ Մենք կարող ենք վերցնել միայն այնպիսի յօդուածները, ուր երևում է Արծրունու սեփական մտածութիւնը, ուր նա սկզբունքներ և գաղափարներ է պաշտպանում։

Միքայէլ Միանսարեանցը \*) 1868 թւին հրատարակեց իր «Քնար Հայկական» յայտնի, հարուստ երգարանը։ Այդ ժողովածուին նա կցել էր մի մեծ առաջարան՝ աղգային երգերի մասին և մի վերջարան, որի վերնագիրն է «Մտածութիւնք աղգային լուսաւորութեան մասին»։ Իբրև ժամանակի առաջագէտ ոգուն հետևող մի համակրելի մարդ, Միանսարեանը աղգային լուսաւորութեան գործի մէջ ահագին նշանակութիւն էր տալիս կնոջ կրթութեան և պահանջում էր որ այդ կրթութեան վրա մեղանում ամենամեծ ուշադրութիւնը դարձնվի։ Բայց Միանսարեանը իր աշխարհայեցողութիւններով հայրերի դատակարգին էր պատկանում և Արծրունին չէր կարող համակրել այն մտքերին, որ յայտնում էր նա կանանց կրթութեան մասին։ Ահա այդ պատճառով էլ նա հերքում է Միանսարեանի մի քանի հայեացքները, ա-

\*) Միանսարեանցի մասին տես իմ «Ստեփանոս Նազարեանց», հատ. II, կր. 225։



նուանելով նրանց հին սերունդի հայեացքներ:

Այս առիթով Արծրունին նորից պարզում էր թէ ինչպէս պէտք է վերաբերվել հակառակ կարծիքներին հրապարակական գործունէութեան շրջանում: Նորից նա կրկնում է այն, ինչ ասել է այդ մասին և այս անգամ աւելի ևս պարզ կերպով:

Վարդը անհատ է,—ասում է նա,—և գրողը մարդ լինելով պիտի իւր անհատական (ИНДИВИДУАЛЬНЫЙ) կարծիք եւ համոզմունք ունենայ: Ոչ միայն չպէտք է վսիւնանք բազմակերպ կարծիքներից եւ համոզմունքից,—այլ եւ պէտք է ցանկանանք, որ զանազան ուղղութիւնները բազմաձայն դրականութեան մէջ, որպէս եւ զանազան կուսակցութիւնները բաղաբաղական կեանքի մէջ:

Գրողը չպէտք է նայէ իւր հակառակորդի վերաինչպէս թշնամու վերա,—այլ որպէս մի եւ նոյն ասպարէզում գործող, թէեւ ուրիշ ուղղութեան հետեւող, ընկերի վերա:

Այսպէս դատում էր մտքերի փոխանակութեան, կարծիքների տարբերութեան մեծ նշանակութիւնը հասկացած երիտասարդը: Նա կարծիքների կատարեալ ազատութեան ջատագով էր, նա դանիում էր Եւրոպայում, ուր տեսնում էր թէ ինչպէս հակառակ համոզմունքները կուռում են դիտութեան և հասարակական հարցերի ասպարէզում, առաջացնելով կենդանութիւն, շարժում, նպա-

տակ ունենալով ծառայել ճշմարտութեանը: Ապագայում, երբ Արծրունին մտաւ մեր իրականութեան մէջ, երբ կատաղի կռիւ բուրեց իր շուրջը, նրա հակառակորդները ազադակում էին թէ նա անհամբերող է ուրիշներին ասածների վերաբերմամբ, չէ ուղում կարծիքների տարբերութիւն, կամենում է որ ամենքը իր նման մտածեն և հասկանան իրողութիւնները:

Բայց սա ճիշտ չէ, և «Մշակի» Արծրունուն մենք չենք կարող համարել «Հայկական Աշխարհի» Արծրունու գաւանանքները մոռացած մի կուռող: Կարծիքների տարբերութիւնը անհրաժեշտ համարելը չէ նշանակում իր սեփական կարծիքները թոյլ կերպով պաշտպանել, նրանց չը հաւատալ: Ազատ համարելով ամեն մէկին իր համոզմունքը արտայայտելու մէջ, Արծրունին իր սեփական օրինակով ցոյց էր տալիս որ ամեն մէկը իրաւունք ունի և պաշտպանել իր համոզմունքը, պաշտպանել սաստկութեամբ, կրքոտ կերպով, հրաշունչ եռանդով: Եթէ մէկը համոզված է որ իր կարծիքներից ու հայեացքներից դուրս փրկութիւն չը կայ, որ միայն իր ասածն է ճիշտ, որ միայն իր նման պէտք է հասկանալ երևոյթները, այդ դեռ չէ նշանակում թէ նա չէ ընդունում որ դիմացինը



կարող է բոլորովին հակառակ կարծիքներ ու հայեացքներ ունենալ: Ո՛չ, հակառակորդն էլ կայ և նա էլ իրաւունք ունի նոյն սաստիկութեամբ իր համոզմունքը պաշտպանել: Եւ այդ է պատճառը, որ Արծրունին միշտ բանակիւ էր մղում իր հակառակորդներին դէմ, մի հանգամանք, որ ակդի չէր ունենայ, եթէ նա հակառակորդներ չընդունէր: Ամբողջ թիւրիմացութիւնը առաջ էր դալիս նրանից, որ այդ հակառակորդներից ոչ մէկը չէր կարողանում այնպէս կուռել, ինչպէս կուռում էր Արծրունին. ջախջախվողները իրանց պարտութիւնը չէին տեսնում Արծրունու ահագին ոյժի մէջ, այլ համարում էին նրան հետևանք այն բանի, որ Արծրունին անհամբերող է, չէ ուզում որ տարբեր կարծիք ունեցող լինի: Միայն այն ժամանակ, երբ հակառակութիւնը դուրս եկաւ զրական վայելչութեան սահմաններից, երբ համոզմունքներն ու կարծիքները լաղնիւ, բարեխիղճ պայքարի շրջանից հեռանալով փոխվեցան ստոր, անձնական թշնամութեան և կեղտոտ փողոցային շահատակութիւնների,—միայն այդ ժամանակ Արծրունին սկսեց արհամարհել, անտես անել այդպիսի հակառակութիւնը: Իսկ սա զարձեալ չէ կարելի համարել ուրացումն այն սկզբունքների, որոնք յայտն-

ված են «Հայկական Աշխարհի» այս և ուրիշ յօդուածներում:

«Բարոյականութեան արտօնութիւն» յօդուածը նուիրված էր հայ կանանց: Արծրունին նորից և նորից կրկնում էր իր մտքերը կանանց կրթութեան մասին: Բայց չէ կարելի ասել թէ այդ կրկնութիւնների մէջ չը կային նոր, ինքնուրոյն մտքեր էլ:

«Քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է», ասում է Արծրունին: Քարոզելով ճշմարտութիւն, սէր և հաւասարութիւն, ոչ Քրիստոսը, ոչ էլ նրա աշակերտները տարբերութիւն չը դրին կանանց և տղամարդիկների մէջ: Կինն էլ հաւասար իրաւունք ունէր ճանաչել և իրագործել քրիստոնէական վարդապետութիւնը. եկեղեցական ոչ մի հանդէսին, ոչ մի քարոզին, ոչ մի ժամասացութեան երբէք արգելված չէր կանանց ներկայ լինել: Կինն էլ քրիստոնէութեան եռանդոտ կուսակից հանդիսացաւ: Քրիստոնէական ճշմարտութիւնը զօրեղ ու յաղթող հանդիսացաւ այն պատճառով, որ մարդկային երկու սեռերն էլ արհամարհված չէին նրանից, կատարեալ իրաւունքներ ունէին նրա առջև: Իսկ երբ ճըշմարտութիւնը երկու սեռերի հաւասարութեան վրա է յենված, նա ակդի հաստատ հիմք է ստանում մարդկութեան մէջ:



Եվրոպական գիտութիւնը քրիստոնէութեան պը-  
տուղն է, նորա ազդեցութեան տակ է ծնվել եւ զար-  
գացել: Նորա նպատակը արդարութիւնն է նմանա-  
պէս. նորա միջոցը աշխատանք է (մտաւոր եւ նիւ-  
թական): Այս աշխատանքը խօսքը նշանակում է  
սէր, հաւասարութիւն, ճշմարտութիւն եւ վերջապէս  
արդարութիւն: Ս էր, որովհետեւ աշխատելով՝ ամեն  
մի անհատը աշխատում է ոչ թէ միայն իւր համար,  
այլ եւ ուրիշների համար, հասարակութեան համար:  
Հաւասարութիւն, որովհետեւ աշխատելով՝ հա-  
րուստը եւ աղքատը հաւասարվում են. հարուստի  
աշխատանքը աղքատի աշխատանքից առաւել մեծ  
արժանաւորութիւն չունի հասարակութեան համար  
եւ տղիտութենից ազատվելու համար հարուստը  
միեւնոյն աշխատասիրութիւն պիտի զործ ղնէ ինչ-  
քան աղքատը: Ճշմարտութիւն, որովհետեւ ա-  
մեն մի անհատի որ եւ իցէ աշխատանքը օգտաւէտ  
է հասարակութեան համար: Վերջապէս Արդարու-  
թիւն, որովհետեւ աշխատելով մարդը բարվորում է  
կեանքը, ուրեմն միջոց է տալիս հասարակութեանը  
ձգտել ղէպի առաջադիմութիւնը, ղէպի կեանքի բար-  
վորումն, ուրեմն եւ ղէպի արդարութիւնը:

Բայց գիտութիւնը կամ աւելի լաւ ասած՝  
գիտութեան քահանաները, այսինքն գիտնա-  
կանները այնպէս չըհասկացան արդարութիւ-  
նը, ինչպէս հասկացել էր քրիստոնէութիւնը:  
«Փոխանակ մարդկութեան նախապաշար-  
մունքի դէմ բացարձակ կռելու, փոխանակ  
քրիստոնէութենից օրինակ առնելու, մարդ-  
կութեան երկու սեռերին եւ հաւասարեցնե-

լու, երկուսին եւ, քրիստոնէութեան օրի-  
նակով, ճշմարտութիւնը հաւասարապէս սո-  
վորեցնելով,—գիտութիւնը ազամարդիկնե-  
րին միայն իրաւունք էր տալիս լուսաւորու-  
թենից օգուտ քաղել: Մարդկութեան կէսը  
(կանայք) իրաւունք չունէին ճշմարտութեան  
լուսով լուսաւորվելը:

Հարկաւոր էր երկար ժամանակ որ գի-  
տութիւնը իր այդ անարդար վերաբերմուն-  
քի գոնէ մի մասից հրաժարվէր: Մի մասից,  
որովհետեւ թէև բացվել են սկզբնական և  
միջնակարգ դպրոցներ կանանց համար, բայց  
համալսարաններում կանանց ուսում առնելը  
գեո արգելված է:

Քրիստոնէութիւնը ճշմարտութիւն է,—եւ նա  
բացարձակ յայտնեց իւր ուսումը մարդին եւ կնոջ  
հաւասարապէս:

Գիտութիւնը ճշմարտութիւն է,—բայց նա աշ-  
խատեց զարգացնել միայն տղամարդին եւ արհա-  
մարհեց կնոջը:

Երբ մի ժողովուրդ գեո տգէտ է, երբ մի  
հասարակութիւն լուսաւորութեան մեծ աս-  
տիճանի չէ հասել,—նա չէ կարող հասկա-  
նալ ոչ իր կեանքի պահանջները, ոչ էլ իր  
օգուտները: Հասկանում է հայ հասարակու-  
թիւնը իր պահանջներն ու օգուտները: Եթէ



հասկանար, նա կունենար սրտրաստ դու-  
մարներ երիտասարդներին և օրիորդներին  
ուրիշ տեղեր ուղարկելու և բարձր ուսում  
տալու, ուսումնարաններ հիմնելու, գրակա-  
նութիւնը զարգացնելու համար:

Եւ եթէ մենք ինչ եւ իցէ հիմնարկութիւններ  
ունինք, միայն բարերարութիւններին ենք պարտա-  
կան, եւ ոչ թէ ժողովրդի ինքնաօգնութեանը  
հասարակական գործերում:

Երբ ժողովուրդը դեռ լուսաւորված չէ, ժամա-  
նակ առ ժամանակ դուրս են գալիս նորա մէջից  
մարդիկ, որոնք յաջողակ հանգամաների մէջ լինելով  
(եւ շատ անգամ աղքատութիւնն է յաջողակ հան-  
գամանքը, եթէ աղքատը կարողացաւ հասնել դիտու-  
թեանը), զգալով ժողովրդի թշուառութիւնը, տեսնե-  
լով նորա պահանջմունքը, — նորա կեանքի արտա-  
յայտութիւն են դառնում: Եւ այն զգացմունքը, կամ  
այն աշխատանքը, որ բաժանված պէտք է լինէր  
հազարների մէջ, նորա իւրանց վերա են առնում:  
Այս տեսակ մարդիկներին հանձարներ են անվանում:

Այսպիսով հանձարեղ անհատները մի ազ-  
գի մէջ այդ ազգի սոցիալութեան նշաններ են:  
Արծրունին դիմում է մի այսպիսի խիստ  
գարձուածքի. «Ամօթ է այն ժողովրդին,  
որ հանձարներ ունի»: Առաջին անգամից  
շատ տարօրինակ, անհանդուրժելի է երևում  
այս միտքը: Բայց Արծրունին հասարակական

զարգացման տեսակէտից է ամօթ համարում  
հանձարներ ունենալը:

Որովհետեւ — ասում է նա — նորա ապացոյց են  
ամբոխի անբնական դրութեան, ապացոյց են նորա  
սաստիկ տգիտութեան, ապացոյց են որ ժողովուրդը  
դեռ լուսաւորութեան չէ հասել, երբ բարոյական  
զգացմունքի եւ դիտութեան բնոր շարակված է մի  
անհատի ուսերի վերա: — Բայց զարձեալ հարկաւոր  
են հանձարներ ժողովրդի համար, երբ որ նա դեռ  
մտաւոր ստրկութեան, այսինքն տգիտութեան մէջ է:

Նոյնպիսի անբնական, հիւանդոտ երևոյթ  
է ներկայացնում մի ժողովուրդ, որ ինքնօգ-  
նութեան միտքը չէ հասկանում:

Ամօթ է այն ժողովրդին, որ հարուստների բա-  
րերարութիւններով է ապրում: — Բայց զարձեալ հար-  
կաւոր են հարուստների բարերարութիւնները, երբ  
ժողովուրդը դեռ չէ հասել իւր կեանքի պահանջ-  
մունքի եւ օգուտների հասկանալուն, երբ իւր հա-  
սարակական գործերում նա ինքնօգնութեանը դեռ  
չէ հասել:

Դիմելով կանանց հարցին, Արծրունին  
կանոց է առնում այն ընթացիկ հասկացողու-  
թեան առաջ, որ մարդիկ ունեն բարոյակա-  
նութեան մասին: Ի՞նչ է պահանջվում կնո-  
ջից: Որ նա բարոյական լինի: Եւ ահա այդ  
հասկացողութեան համեմատ վարվող կնոջ  
պատկերը:



Նա աղջիկ է, հարուստ ընտանիքի զաւակ: Թեթև հասկացողութիւն ունի ամեն բանի մասին, ոչինչ գործ կամ գիտութիւն հիմնաւոր կերպով չէ ուսումնասիրում, սովորում է զանազան լեզուներ, որոնց չէ գործադրում կեանքի մէջ և այնուհետև պսակվում է, առանց ճանաչելու իր ամուսնուն: Ճանաչել չէ էլ կարող, քանի որ տգէտ է, քանի որ մարդ ճանաչելու համար հարկաւոր է լինել զարգացած: Նրա կեանքի նպատակը պսակվելն է. ոչ պսակվելուց առաջ, ոչ յետոյ նա հարկաւոր էլ չէ համարում զարգացնել իր մտաւոր ընդունակութիւնները, ծանօթանալ գրական գիտութիւնների հետ: Մի գործ, մի սլարավմունք է միայն նա ճանաչում—լինել բարոյական: Լինել տգէտ, բայց բարոյական, որպէսզի իր սէրը և կուսութիւնը տայ անբարոյական մարդուն—սա հասարակութեան հասկացողութիւններին համապատասխանող գրութիւն է:

Իսկ աղքատ աղջիկը: Նա ստիպված է աշխատել, բայց չունի կրթութիւն, որ կարողանար նրան օգնել «ամենօրեայ հացը ազնիւ կերպով ճարելու»: Ի՞նչ անել: Նա նպատակ է դնում շուտով պսակվել մի այնպիսի մարդու հետ, որը քիչ թէ շատ կարողու-

թիւն ունի, որպէսզի կարողանայ առանց աշխատանքի ապրել:

Սա էլ բնական է համարվում: Բայց որքան բարոյական է:

Բարոյական է միթէ այն կինը, որը ինքն չգիտենալով իւր աշխատանքով բաւականութիւն տալ իւր ամենօրեայ պիտոյքին, շտապում է մարդի զընալ, որ կարողանայ առանց աշխատանքի ապրել: Բարոյական է միթէ այն կինը, որ տգէտ լինելով, չէ կարող ոչ իւր մարդի բարոյականութեան վերա ազդել, ոչ օրինաւոր կերպով դաստիարակել երեխաները:

Այսպէս ահա դուքս է գալիս որ բարոյական լինելու համար պէտք է հարուստ լինել, որ բարոյականութիւնը հարուստների արտօնութիւնն է: Իսկ աղքատ աղջիկը, նա, որ հարուստ կամ ունետոր մարդու դնալ չէ կարող, հետևաբար պէտք է միշտ իր աշխատանքով ապրէ, իրաւունք չունի բարոյական լինելու:

Հարուստ աղջիկները կարողութիւն եւ ունենալով ուսում առնել եւ կրթվել, իւրանց միակ պարտաւորութիւն են համարում բարոյական լինել, եւ չեն հասկանում մի ուրիշ հասարակական պարտաւորութիւն, այն է իւրանց ազատ ժամանակը եւ զըրբանական միջոցները գործ դնել օրինաւոր կերպով



գիտութիւններ ուսումնասիրելու, համալսարաններ եւ մանկավարժական ուսումնարաններ մտնելու, ժամանակով, ստացած գիտութիւնը ժողովրդի մէջ տարածելու համար, իւրանց աղքատ, անբարոյական եւ տգէտ հայրենակից քոյրերին օգնելու, մանկավարժական ուսումնարաններ հիմնելով, եւ այդ ուսումնարանները կառավարելով:

Նորա սարժենում են իւրանց բարոյականութեամբ...

**Այս յօդուածը Գրիգոր Արծրունին վերջացնում էր հետեւեալ դառն խօսքերով.**

Բայց աւելորդ է այսքան խօսել... Աւելորդ է աւելի բացատրել մտքերը,— որովհետեւ հայերէն զբրած յօդվածները բացի օրագրի խմբագրութենից ոչ որից չեն կարգվում:

Թէեւ հայկական կանանց են վերաբերում այս տողերը, ես հաւաստի եմ, որ ոչ մի հայ կինը երբէք չի կարդայ այս գրվածը... որովհետեւ հայկական կինը հայերէն չէ իմանում:

Ոչ մի... Հայկական կանանցից մէկը, Շուշանիկ անունով, դուրս եկաւ Գրիգոր Արծրունուն յայտնելու որ այդ խիստ զատապարտութիւնը արդարացի չէ: Հայ կիներ էլ սկսել էր ոչ միայն կարդալ, այլ նոյն իսկ և գրել. «Հայկական Աշխարհի» և «Մեղուի» մէջ երևում էին հայ կանանց ստորագրութիւններ: Ճիշտ է, նրանց գրական գործերը մի-

այն թարգմանութիւններ էին, բայց միթէ դա էլ նշան չէր, որ նրանց մէջ զարթնում է հետաքրքրութիւն դէպի մայրենի գրականութիւնը: Ահա Գրիգոր Արծրունին առիթ էր տալիս հայուհիներից մէկին նոյն իսկ ինքնուրոյն յօդուած գրել: Ի՞նչ էր ասում օր. Շուշանիկը.

Այս օրերումս ստացայ ես ձեր օրագրի 6, 7 և 8 № №-ներ, որոնց սպասում էի անհամբերութեամբ: Առաջին կարդացած տողերը կազմի վերա սորա էին. «Բարոյականութեան արտօնութիւն, Գր. Արծրունի»: Ես իսկոյն դարձրի երեսը եւ մեծ հետաքրքրութեամբ սկսեցի կարդալ պ. Արծրունու գրվածը:

Ես միշտ զուարճութեամբ ընթերցասիրած եմ այդ հեղինակի աշխատութիւններ. այս անգամ եւս չէի կասկածում ընտել, որ բաւականութեամբ կանցուցանէի այն ժամանակը, մինչեւ կտեւէր կարդալս:

Հասկանալի է, որ այդ յօդվածը գրուեց ինձ աւելի քան թէ պ. Արծրունու ուրիշ գրվածներ, դա արդէն հայկական կանանց է նուիրված: Այդ նուիրման համար բոլոր կանայք կարող են շնորհակալ լինել պ. Արծրունուն, որովհետեւ նորա շատ սակաւ արժանանում են այդպիսի ուշադրութեան:

Քանի շարունակում էի ընթերցանութիւնս, այնքան աւելանում էր ուշադրութիւնս. բայց անախորժիկ զգացմունք շարժեցին ինձ, երբ հասայ այս վերջին տողերին. «Թէեւ հայկական կանանց են վերաբերում այս տողերը, ես հաւաստի եմ, որ ոչ մի հայ կինը երբէք չի կարդայ այս գրվածը... որովհետեւ հայկական կինը հայերէն կարդալ չէ իմանում»:



Այո, պ. Արծրունին մեծ պատիւ արեց հայ կանանց՝ նոցա իւր աշխատութիւնը նուիրելով, բայց իւր յօղիվածի վերջին բառերով մեծ զին եւս վճարել տվեց նոցա այդ պատիւի համար: Չկարծեմ, որ կարելի լինէր վիրաւորել առաւել մարդ թէ կին, քան թէ այն ձեւով, որը ընտրել էր պ. Արծրունին:

Եթէ հայ կանայք չեն կարողում, այդ դեռ ապացոյց չէ, թէ նորա կարող չեն իմանում, այլ դորա պատճառը այն է, որ կարողաւ բան չեն գտնում հայերէն լեզուով: Զէ կարելի սպասել, որ ձեռին ընկած առաջին զիրքը վեր առնեն եւ կարդան առանց որոշելու թէ արժէ արդեօք ժամանակ գործ անել այդ կարողաւ: Ես փաստով ունիմ հաւատացնելու, որ կան շատ կանայք, որոնք ուրախ են հայերէն լեզուով բան ինչ ունենալ կարողաւ եւ եթէ գտնում են մի ընտիր եւ վայելուչ յօղիված, միշտ զուարճութեամբ առնում կարդում են նորան: Ի հարկէ քանի աւելի գրեն եւ տպեն գեղեցիկ յօղիվածներ, այնքան աւելի ընթերցողներ կլինեն թէ այր մարդիկնեւրի եւ թէ կանանց մէջ:

Այնուհետեւ օր. Շուշանիկը բերում էր փաստեր իր ասածը հաստատելու համար: Իր անձնական փորձը, իր ստացած նամակները, «Հայկական Աշխարհի» մէջ տպվող թարգմանութիւնները բերում են այն եզրակացութեան թէ «պ. Արծրունին սխալվում է ասելով թէ հայ կինը կարգաւ անգամ չէ իմանում. սակայն վերագառնալով իւր հայրենիքը, կտեսնէ որ չէ ճանաչել մինչև այժմ իւր

ազգի կանանց յառաջադիմութիւնը: Թէպէտ սա դեռ փոքր է, բայց կարելի է արդեօք սպասել սկզբից կատարելութեան»:

Ցոյց տալով որ կայ սկզբնաւորութիւն, հետեաբար պէտք է սպասել աւելի բեղմնաւոր ապագայի, օր. Շուշանիկը հետեւաւ տղերն էր ուղղում Արծրունուն, անշուշտ իբրև փոխադարձ հատուցում.

Շատ կարելի է պ. Արծրունին ուշք չկարծնէ այս զրկածիս, որովհետեւ նա հաւատացած է թէ հայ կանայք տգէտ կն, եւ ինչ հարկաւոր է ժամանակ կորցնել տգէտների յօղիվածներ կարողալով Բայց եթէ մի որ եւ իցէ պատահմամբ նորա հետաքրքրութիւնը զարթած լինի եւ նա կարգայ այս տողերս, անշուշտ կազատվէր իւր նախապաշարմունքից եւ չկարծեմ, որ պատճառ ունենար տխրելու իւր սրխալմունքի համար:

Արծրունին չը պատասխանեց հայ կնոջ այս բողոքին. նա կարող էր շատ բաւական մնալ և նրանով, որ հայուհիներէից զոնէ մէկը վիրաւորանք էր համարում, երբ ասում էին թէ հայ կինը հայերէն կարգաւ չը գիտէ: Եւ չէ էլ կարելի ենթադրել թէ Արծրունին տառացի իմաստով էր հասկանում իր այն խօսքերը թէ ոչ մի նը հայ կանանցից չի կարգայ իր յօդուածը: Անկարելի էր որ հայկական իրականութեան մէջ միայն փչեր ու



տատասկներ բուսած լինէին, որ չը պատահէին և հատ-հատ ծաղիկներ: Բանն այն էր միայն, որ մի հատ ծաղիկով դարուն չէ լինում, իսկ Արծրունին կատարեալ դարուն էր ուղում: Մեր առջև դրված է մի ուրիշ փաստ, որ ցոյց է տալիս Արծրունու այդ տեսակ վերաբերմունքը:

Հայերը ունէին թատրոնական ներկայացումներ: Իբրև սկզբնաւորութիւն, նրանք, օր. Շուշանիկի գատողութեան համաձայն, պէտք է ապացուցանէին որ հայերը թատրոն ունէին: Բայց ահա Ստեփանէն «Հայկական Սշխարհի» մէջ քննադատում է այդ ներկայացումները, դժգոհութիւն է յայտնում, պահանջներ է անում, բայց ոչինչ չէ դուրս գալիս: Եւ Ստեփանէն յուսահատված գրում է. «Ձէ կարելի հայկական թատրոն դնալ որպէս դիտող, քննող, գրող, որովհետև դրօշի անկեղծ խօսքերին ուշք չեն կամենում դարձնել... Հոգեմաշ եմ լինում ասելով որ Թիֆլիսում հայկական թատրոն չկա. տարին երկու երեք մասնաւոր ներկայացումներին չէ կարելի ազգային թատրոնի անուն տալ»: Եւ Ստեփանէն աւելացնում էր. «Գ. Արծրունուց կամ անաչառապէս մտածող Հայից կապաւսեմ—ինչ կասեն այս իմ խօսքիս մասին»:

Արծրունին անպատասխան չէ թողնում

իր խմբագրի այս հրապարակական դիմումը: Խմբագրութեան ուղղած նամակում նա առաջին մտքի, այսինքն թատրոն գնացող դրօշի դրութեան մասին ասում է.

Խմ միտքս այն է որ եթէ ուշք չեն դարձնում մեր խօսքերին, սա չէ նշանակում որ չպէտք է շարունակենք քննել, խօսել եւ գրել: Թող ուշք չդարձնեն, մենք դարձեալ կշարունակենք գրել, խօսել եւ քննադատել... ով գիտէ, կարելի է ժամանակով ուշք կդարձնեն:

Գալով այն բանին, որ Հայասէրը (Ստեփանէն) «հոգեմաշ» է լինում, տեսնելով որ Թիֆլիսում հայկական թատրոն չը կայ, Արծրունին ասում էր.

Չգիտեմ ինչի է չարչարվում այսպէս պ. Հայասէրը թատրոնի մասին.—կարծեմ որ ազգային թատրոնի անբնական դրութիւնը բացառութիւն չէ Հայերի ազգային հիմարկութիւնների թուում: Ազգային թատրոն չկայ... բայց կան միթէ ազգային ուսումնարաններ, կան ազգային գրականութիւն, կան ազգային օրագրներ:

Տարին երկու ներկայացումները ազգային թատրոն չէ կարելի անվանել—այս ճշմարիտ է: Բայց միթէ ազգի մէջ երկու երեք ուսումնարանը ազգային կրթութիւն են ներկայացնում: Միթէ օրագիրը որ երկու կամ երեք ամիսը մի անգամ է երեւում, կարելի է ազգային օրագրականութիւն անվանել: Միթէ ժողովրդի վերա մի որ եւ իցէ ազգեցութիւն կարելի է ունենալ օրագրի միջոցով, երբ որ օրագրի տես-



րակները կանօնաւոր կերպով ամսէ ամիս անդամ չեն կարող հրատարակվել:

Յաւալի է ասել, բայց այս ճշմարտութիւն է, որ ժողովուրդը միշտ եւ ամեն տեղ երեխայ է: Եթէ դուք նորան յաճախ չէք կրկնի մի եւ նոյն մտքերը, եթէ դուք նորան ամեն օր ազգային լեզուով գրած թերթը չէք առաջարկի—նա մտածել կողողարէ, նա կմոռանայ իւր ազգային լեզուն: Յաւալի է ասել, որ քնած մի ժողովրդի մէջ մասնաւոր մարդիկներին է կախված գրգռել եւ ծնել պահանջմունքը:

Ժողովուրդը այնքան տգէտ եւ մտաւորապէս ստրկացած է, որ ինքն չէ հասկանում իւր պահանջմունքը: Աղքատ թէեւ ուսեալ մարդիկներին դժվար է մի որ եւ իցէ գործ սկսել, որովհետեւ նոցա պակաս են դրամական միջոցները, իսկ ժողովուրդը նոցա գործունէութեանը չէ համակրում, եւ չէ կարող եւս օգնել, որովհետեւ պահանջմունք չունի ազատվել խաւարից, նախապաշարմունքից, տգիտութենից... Նա բաւական է իւր մտաւոր ստրկութեամբ, նա բաւական է իւր կեղտով եւ թերութեամբ, նա բաղդաւոր է իւր տղիտութեամբ... կամ աւելի լաւ ասեմ, նա անզգայ է:

Իսկ հարուստները...

Ուստի ոչ դերասանական խումբ պէտք է մեղադրենք, որ ազգային թատրոն չկայ, ոչ խմբագրութիւնը պէտք է մեղադրենք, որ օրագիր չկայ, ոչ ուսուցիչներ պէտք է մեղադրենք որ ազգային կրթութիւն չկայ, ոչ եւս ժողովուրդը պէտք է մեղադրենք որ եռանդ, հոգս չկայ:

Եթէ չը լինէին վերեւի այն տողերը թէ անհատներին է մնում գրգռել քնած ժողու-

վուրդը, պահանջներ ծնեցնել, Արծրունու այս վերջին պարբերութիւնից պէտք կը լինէր եզրակացնել թէ Արծրունին մէկն էր այն մարդկանցից, որոնք շատ լաւ հասկանում են ժողովրդի գրութիւնը, բայց շատ լաւ գիտեն եւ այն, որ այդ ժողովրդի համար ոչինչ չէ կարելի անել: Երկրորդ անգամն է, որ Արծրունու յայտնած մտքերը առաջին անգամից կարծես այս տեսակ տպաւորութիւն են թողնում: Բայց ամեն ինչ շատ պարզ է: Լուսաբանելով իրողութիւնները, Արծրունին, ինչպէս արդէն մի անգամ ասել էր, ամենին չէր մտածում մեղաւորներ գտնել, դատապարտել նրանց: Ասելով թէ հայ կինը հայերէն կարգալ չէ իմանում, նա չէր ուզում մեղադրել հայ կանանց, ինչպէս նաև հայկական թատրոնի թշուառ գրութեան համար չէր մեղադրում հայ դերասաններին: Ոչ, դժբախտութիւնը, պակասութիւնը չափազանց բնական է, հասկանալի. երբ չը կայ արթուն, առողջ հասարակութիւն, ինչ գործ կարող է բարգաւաճել: Եւ հասարակութիւնն էլ մեղաւոր չէ, որ այդպէս է: Հարկաւոր են գործող, գրգռող անհատներ: Յաւալի է սա, որովհետեւ զարգացած հասարակութիւնը ինքը պիտի հասկանայ իր պահանջները: Բայց ցաւելով բան չի դառնայ:



ուրեմն գործող, աշխատանք, եռանդ չը խը-  
նայող անհատներ են հարկաւոր հասարակ-  
ութեան բարիքի համար: Քնած է ժողո-  
վութեան, անզգայ է: Դա նշանակում է, որ  
աշխատաւոր անհատների մեծ կարիք կայ:

Այս գեղեցիկ նամակը, որ պարունակում  
էր իր մէջ մի ամբողջացրած աշխարհայեցու-  
ղութիւն, մի մեծ ու ընդարձակ ծրագիր,  
հիացական վկայութիւն առաջ բերեց «Հայ-  
կական Աշխարհի» մի պատահական ընթեր-  
ցողի կողմից: Դերբէնտից Գէորգ Շահնազար-  
եան դէ-Շափուր գրում էր հետեւեալը.

Վերջերումս շատ քիչ է պտտահել ինձ, որ մեր  
օրագրերը այնպէս գրաւեն իմ սիրտը եւ պահանջեն  
իրանց լիովին կարգալ, ինչպէս ձեր օրագրի յիշեալ  
թերթերը. մանաւանդ աղնւամիտ պ. Գրիգոր Արծ-  
րունու փափկաշունչ եւ նիւթաւոր յօդվածները: Գո-  
րա հեռաստանից հաղորդած ամէն մէկ տող գրվա-  
ծը ունեցան ինձ վերա մէկ առանձին կենսատու եւ  
սիրտիչ ազդեցութիւն: Զգիտեմ ինչ է պատճառը,  
բայց չէյլթէրդը ինձ Աթէնք թվեց: Մեծապատիւ  
օրիորդ Շուշանիկի բողոքը նմանապէս մէկ զարմա-  
նալի եւ հաղուագիւտ երեւոյթ է մեր գրականու-  
թեան: Կմաղթեմ երկնային Ստեղծօրից, որ նա պի՛նդ  
պահէ այդպիսիներ մեր ազգի համար:

Հէյլթէրդը—Աթէնք: Սիրուն նմանու-  
թիւն է սա. նամակագիրը ի նկատի ունէր

այն Աթէնքը, որ հինգերորդ դարում լու-  
սաւորութեան գեղեցիկ ճրագ վառեց Հայաս-  
տանի մէջ հայ երիտասարդների միջոցով:  
Բայց Հէյլթէրդում շատ չէին ուսում առ-  
նող հայ երիտասարդներ: Հին Աթէնքը յի-  
շեցնողը Գրիգոր Արծրունին էր: Եւ ահա  
«Հայկական Աշխարհի» 1869 թւի վերջին հա-  
մարում Ստեփանէն հաղորդում էր իր ըն-  
թերցողներին մի այսպիսի նորութիւն.

«Հայկական Աշխարհի» աշխատակից եւ մեր սի-  
րելի բարեկամ Գրիգոր Արծրունին հոկտեմբեր ամ-  
սին չէյլթէրդի համալսարանում ուսումնական քըն-  
նութենից եւ շարադրութիւն պաշտպանելուց յետ  
ստացաւ քաղաքական տնտեսութեան եւ իմաստա-  
սիրութեան դոկտորի բարձր աստիճան: Ամեն մտա-  
ծող Հայի աչքում սա մեծ նշանակութիւն ունի ի  
հարկէ: Գերմանիայում դոկտորի աստիճանին ար-  
ժանանալ—հեշտ գործ չէ այո: Եւ պ. Արծրունին  
առաջինն է, որ արժանացաւ այս աստիճանին: Ես  
որպէս Հայ պարծենում եմ սորանով:

Հէյլթէրդից փիլիսոփայութեան երիտա-  
սարդ դոկտորը հայրենիք չը վերադարձաւ:  
Նա գնաց Պարիզ, ուր համալսարանում լսում  
էր քաղաքական տնտեսութեան դասախո-  
սութիւններ: Բայց Յրանսիայի մայրաքաղա-  
քը երկար չը պահեց իր մէջ Արծրունուն.  
գերմանական ուսում ստացած երիտասարդը



չէր կարող շատ բաւական մնալ Փրանսիական ուսումից: Ինչպէս կը տեսնենք, նա չէր համակրում Փրանսիական ազգի յատկութիւններին, ուստի շտապեց դարձեալ գերմանական համալսարան գնալ և այդ պատճառով 1870-ի յունվտրին անցնում է Վիեննա: Բացի նրանից, որ այդտեղի համալսարանում Արծրունին լսում էր Լօրէնց Շտէյնի և Շէֆլէի քաղաքատնտեսական դասախօսութիւնները, Աւստրիայի մայրաքաղաքը տալիս էր մեր երիտասարդին և մի յարմարութիւն, որի մասին մի քիչ մանրամասն կը խօսենք:

Արծրունին բաւական չէր համարում այն հայերէնագիրութիւնը, որ ձեռք էր բերել սեփական աշխատանքով ուսանողական տարիներում: Մենք տեսանք թէ ինչպէս էր նա իւրացրել աշխարհաբար լեզուն: Եթէ հարցը միայն այդ լեզուով գրելը լինէր, Արծրունին գուցէ և բաւական համարէր իր ունեցած պաշարը: Բայց պատրաստուելով գործել հայոց գրականութեան մէջ, նա անհրաժեշտ համարեց աւելի փորձ ու հմտութիւն ձեռք բերել հայերէնագիրութեան մէջ: Հարկաւոր էր գիտնել ուսուցչի. Արծրունին ուզում էր աւելի լաւ ծանօթանալ գրաբար լեզուի և մեր հին գրականութեան հետ: Ա-

սում ենք աւելի լաւ, որովհետեւ արդէն գիտենք, որ նա առանձին ուշադրութիւն էր դարձնում եւրօպական լեզուներով հրատարակվող հայագիտական շարադրութիւնների վրա և դրանց միջոցով ուսումնասիրում էր մեր անցեալ կեանքն ու գրականութիւնը: Գրաբար լեզուին ծանօթանալու ձգտումը Արծրունին յայտնել է իր արտասահմանեան տեղեկութիւնների մէջ մի քանի անգամ: Այսպէս, «Հայկական Աշխարհի» 1869-ի վերջին տետրակում Արծրունին խօսում է այն հայերէն քերականութիւնների մասին, որ կաղմել են Պետերման, Վինգիլման, Բօպ, և ասում է թէ դրանց միջոցով դժուար է ուսումնասիրել հայերէնը: Այդպէս չէ այն քերականութիւնը, որ 1869-ին Վիեննայում հրատարակեց զօկտօր Լաուէր: Կարգալով այդ քերականութիւնը, Արծրունին ասում էր թէ «այս փոքր գրվածը (98 երեսներից բաղկացած) միջոց է ներկայացնում ընթերցողին հայ դասական լեզուի ձևերը թեթեւ, հասկանալի և կենդանի ոճով ուսումնասիրելու»:

Ահա այս բոլոր ջանքերը բաւարար չը համարելով, Արծրունին վճռում է վարժվել հայերէնագիրութեան մէջ՝ ուսուցչի ղեկավարութեամբ: Եւրօպայում կային հայերէնի



հմուտ, հեղինակաւոր ուսուցիչներ և գրանք Մխիթարեան վարդապետներն էին: Վիեննանայում Արծրունին դիմում է Մխիթարեանների վանքը: Նա ինքը պատմել է\*) իր հայերէնով պարապելու բոլոր հանգամանքները: Եւ մենք կօգտվենք նրա այդ յիշողութիւններից, բերելով հետաքրքրական կտորները, որոնք ներկայացնում են ինքնակենսագրական նիւթեր:

Նախապէս հարկաւոր ենք համարում յայտնել մեր ընթերցողին, որ Վիեննայի Մխիթարեան վանքը այն ժամանակներում անկման և յետմահացութեան շրջանում էր գտնվում: Դեռ չէին եկել Հ. Այտնեանի արքայութեան ժամանակները, երբ Վիեննայի միաբանութիւնը զարթնեց և սկսեց մի գեղեցիկ դիտնական-գրականական գործունէութիւն:

«Վիեննայի Մխիթարեաններին—ասում է Արծրունին— ես չը հաւանեցի: Նրանք սարսափելի նախադաշարված, հնապաշտ և տգէտ մարդիկ երևեցան ինձ և բոլորովին յիշեցրին ինձ մեր տգէտ հոգևորականներին: Երբ առաջին անգամ գնացի Mechitharisten-gasse փողոցում գտնվող նրանց հիմնարկութիւնը և մեծ մուրճով բաղխեցի ահագին դուռը

(զանգակ չը կար գրան մօտ), արևղաներից մէկը զգուշութեամբ բացեց դուռը և զարմացած ու կարծես վախեցած նայեց ինձ վրա... Ես անմիջապէս սկսեցի խօսել հայերէն և հարցրի թէ կարո՞ղ եմ արդեօք տեսնել արքահօրը...

—Ich verstehe nicht (չեմ հասկանում), եղաւ պատասխանը գերմաներէն լեզուով:

«Բանից երևաց որ արևղան գերմանացի էր... ճարահատված սկսեցի խօսել արևղայի հետ գերմաներէն լեզուով: Նա դուռը նորից փակելով և ինձ փողոցում մննակ թողնելով, գնաց օրապահ վարդապետին իմ գալու մասին խմաց տալու համար, սա էլ ուրիշին, երևի աւելի մեծին և այլն և այլն, մինչև որ յայտնեցին արքահօրը թէ մի օտարական ուղում է տեսնել գրան... Եւ ես այդ ամբողջ ժամանակ փակած գրան մօտ պէտք է կանդնէի ու սպասէի...

«Վերջապէս, բարեհաճեցին ինձ թոյլ տալ կաթօրիկների այդ միջնադարեան սրբավայրը մտնելու: Դուռը բացվեց և այս անգամ մի հայ արևղայ խնդրեց ինձ ներս մտնելու:

«Անվերջանալի կօրիորդներով անցնելով և ոչ ոքին չը հանդիպելով (երևի բոլորն էլ խուցերն էին մտել), վերջապէս ես իմ ուղեցոյցիս հետ մտանք արքահօր խուցը: Սա ըն-

\*) «Մշակ», 1890, № № 49 և 50:



դարձակ և բարձր սենեակ էր, պարզ և անշուք:

«Ես ուղղակի ասեցի թէ ինչ էր իմ նստատակս. ես ուզում էի հայերէն լեզուի դասեր անել և խնդրում էի որ արբահայրը վարդապետներից մինին նշանակէր ինձ ուսուցիչ:

«—Հրամանքդ ո՞վ էք, որտեղացի էք, հարցրեց ինձ ծերունի արբահայրը, Վարդան և պիսկոպոսը:

«Ես ասեցի: Մի տեսակ սարսափ նկատվեց թէ արբահօր և թէ երիտասարդ վարդապետի երեսին, երբ յայտնվեց որ ես կաթօլիկ չեմ, այլ լուսաւորչական եմ... Խեղճերը չը գիտէին ի՞նչ պատասխան տան... Հայլուսաւորչականին պէտք է ընդունեն աշակերտ կաթօլիկ վանքում...»

«Մի քանի րօպէսների լուսթիւնից յետոյ սրբազանը յայտնեց թէ կառաջարկի իմ խընդիրքը միաբանութեանը և խորհուրդ անելուց յետոյ «ինչ որ հարկն է» կը անօրինեն ու չորս օրից յետոյ ինձ կը տեղեկացնեն:

«Ապա փոխելով խօսակցութեան նիւթը, եպիսկոպոսը հարցրեց ինձ ո՞վ է հայրս: Ես անմիջապէս պատասխանեցի թէ Ժէնէր ալ է, մտածելով որ այդ տեսակ մարդկանց համար ոչինչ բան այնքան մեծ նշանակութիւն չունի, որքան բարձր պաշտօններ և տիրուպաներ: Ժէնէրալի որդի լինելու դուրսէ կօզնէր

ինձ վանքում աշակերտ ընդունված լինելու...»

«—Ո՞րտեղ էք ուսում անել, շարունակեց ծերունի եպիսկոպոսը:

«—Հէյդլէրգում, սրբազան, պատասխանեցի ես:

«—Հայտլպէրի, Հայտլպէրի... կրկնեց նա մի քանի անգամ:

«Ես կարծելով թէ նա չէ յիշում որտեղ է գտնվում Հէյդլէրգ քաղաքը, աւելացրի թէ Բազընի դքսութեան մէջ է:

«—Ի՞նչ առարկայ էք սովորել, դարձեալ շարունակում էր հարց ու փորձ անել ինձ եպիսկոպոսը:

«—Քաղաքական տնտեսութիւն, ասեցի ես:

«Ես դարմացած նայեց վրաս. պարզ էր որ ծերունին չը գիտէր թէ ինչ բան է քաղաքական տնտեսութիւնը: Կարծելով որ Վիէնայի պէս գերմանական քաղաքում ապրելով նա աւելի կը հասկանայ գիտութեան իմ ճիւղի եւրօպական անունը, ես անմիջապէս աւելացրի «National-Oeconomie» «Economie politique»...»

«Ծերունին շարունակում էր դարմացած նայել վրաս և վերջը մի հառաչանք արձակելով, աւելացրեց.

—Է՛հ, ի՞նչ ասես գիտութիւններ կան այժմս... Թիբլօմասի կըսեն, բօլիթիք կըսեն,



էգօծօմի կըսեն... ևս ինչ գիտեմ... Գիտութիւնները կաւելնան մարդկութեան մէջ, սակայն բարոյականութիւնը հետզհետէ կընկնի...

«... Չորս օրից յետոյ ինձ պատասխանեցին որ ընդունում են առաջարկութիւնս, կը նշանակեն ինձ մի վարժապետ՝ ուսումնական արեղաներից մէկին, կառնեն ինձանից իւրաքանչիւր դասից 2 գուլդէն և ևս կարող եմ սկսել դասերիս առնելը»:

«Եւ ահա ևս սկսեցի յաճախել վաճառ շարաթը չորս անգամ Իմ վարժապետս մի երիտասարդ լեհաստանցի (գալիցիացի) հայ էր, որի ազգանունը ևս այժմ չեմ յիշում»:

«Այդ ժամանակ եկաւ Վիէննա և Սեդրակ Մանգինեան: Նա որպէս Սանասարեանցի որդեգիր, եկել էր Սանասարեանցի և Եզովի յանձնարարականներով: Նրան էլ ընդունեցին Մխիթարեանները, միայն նրանից կարծեմ 1 գուլդէն կամ  $1\frac{1}{2}$  գուլդէն էին առնում դասից, որովհետև «նա բարերարի մը հաշտով կուսանէր», այն ինչ ևս «ժեներալի մը որդի էր»...

«Մանգինեանին էլ մի վարժապետ նշանակեցին: Մենք երկուսս շատ դժգոհ էինք մեր վարժապետներից: Միայն ևս յարմարվում էի, կամ աւելի լաւ է ասել ինքս աշխատում էի իմ դասերին ուղղութիւն սալ, բացա-

տրելով վարժապետիս թէ հասակ առած, համալսարանում աւարտած, 24 տարեկան մարդու հետ պէտք է բոլորովին ուրիշ կերպ պարապել, քան թէ մի մանուկի հետ»:

«Իսկ Մանգինեան այն աստիճան զայրացած էր՝ հասակ առած մարդկանց հետ պարապելու ուսումնական սուրբ հայրերի անընդունակութիւնից, որ շարաթ չէր անցնում որ նա չը գնար եպիսկոպոսի մօտ ու չը գանդատվէր իր վարժապետից, խնդրելով, որ մի ուրիշ վարժապետ նշանակեն, Այգալիսով նա մի ձմեռվայ ընթացքում մի քանի վարժապետներ փոխեց և դարձեալ դժգոհ էր»:

«Ես իմ լեհաստանցի երիտասարդին հաւատարիմ մնացի ամբողջ ձմեռը, Մանգինեանի պէս անդադար բողոքելը ասպարդիւն համարելով: Խեղճ մարդիկ իրանց ամբողջ հաստատութեամբ, իրանց աշխարհայեցողութեամբ, իրանց սահմանափակ մտաւոր շրջանով, — մեղաւոր չէին... Նրանք իրանց ամբողջ վանքով, ժամանակակից, քաղաքակիրթ, առաջադէմ և զուարճասէր Վիէննայի ամենագեղեցիկ արուարձաններից մինում, — մի տեսակ անախօսի դմ էին կազմում... Միջնադարեան մի ուրուական ժամանակակից քաղաքի Յերօսայի կենտրոններից մինում»...



Պարապմունքները— աւելորդ էլ է ասել— արգելք չը դառան որ Արծրունին շարունակէ կանօնաւոր կերպով իր աշխատակցութիւնը «Հայկական Աշխարհին»: Պարիզից նա երկու նամակ ուղարկեց, որոնցից առաջինում նկարագրում էր Փրանսիացուն, իսկ երկրորդի մէջ խօսում էր Բօշֆօրի ընտրութեան մասին: Հետաքրքրական է առաջին նամակում դուրս բերած գիծը, որ ընտրուած էր Փրանսիայում տեղի ունեցող յեղաշրջումը հասկացողութիւնների մէջ:

Փրանսիացին—ասում է Արծրունին—պաշտում էր ինքն իւրան, պաշտում էր իւր անցեալը եւ ներկան... Փրանսիացին դասեր էր տալիս ուրիշ ազգերին, իսկ ինքն տուածների փոխարէնը դաս չէր առնում:

Այս ուղղութիւնը հակառակ էր ժամանակակից ոգուն, հակառակ էր տնտեսական օրէնքին: Ինչպէս ազգերի նիւթական կեանքում, այնպէս եւ նոցա մրտաւոր, հոգեւոր կեանքում փոխարձակումը չէր պետք է լինի:

Այժմեան ժամանակում մի ազգ կամ պէտք է փոխադարձութեան սկիզբը ընդունէ, կամ պէտք է մեռնէ եւ չանվանէ իւրան ազգ:

Փրանսիական ազգն եւս չկարօղացաւ յետ մնալ առաջադիմութեան ընդհանուր ընթացքից. նա ըսկսում է ուսումնասիրել օտար ազգերի կեանքը եւ լեզու, սկսում է հաշտվել փոխադարձութեան տրնտեսական դադափարի հետ, սկսում է հասկանալ

իւր պակասութիւնները, քննել իւր անցեալը եւ ներկայ:

Պարիզից է գրված և «Նոր Տարի» յօդուածը, որ տպվեց «Հայկական Աշխարհի» 1870 թւի № 1-ի մէջ: Այստեղ Արծրունին պարզում է իր վերաբերմունքը դէպի հին սերունդը: Ահա մի քանի քաղուածքներ այդ յօդուածից.

Հանգիստ թողնենք հին սերունդը. որովհետեւ նա իւր պաշտօնը կատարելուց յետոյ, ինքն կարօտ է հանդստութեան:—Բայց մեզ ժառանգութիւն թողած նորա գործերը եւ սկիզբները խստութեամբ քննադատենք:

... Նոր տարի չպէտք է անիծէ հին տարի, այլ հանգիստ ոգով բողոքէ նորա վնասակար գործերի դէմ, նորա պակասութիւնների դէմ, եւ աշխատէ նորա արած փորձերից օգուտ քաղել:

... Հին մարդիկ բարի ծնօղներ եւս լինելով, կարծում էին թէ երեխաներ սիրել նշանակում է նոցա հետ բռնաւորութեամբ վարվել:—Մենք կարծում ենք թէ երեխաներ դաստիարակել նշանակում է զարգացնել նոցա մէջ անհատութիւնը: Հին սերունդը դէպի կին ունեցած սէրին միացնում էր նախանձը—մենք կարող ենք սիրել միայն այն կին, որը պատուում ենք: Հին սերունդը կարծում էր թէ կնոջը հարկաւոր չէ կրթված լինել, իր պարտաւորութիւն կատարելու համար.—մենք պահանջում ենք կնոջ համար այդ-մարդին հաւասար լուսաւորվելու իրաւունք: Հին սերունդը միացնում էր քրիստոնէութեան ուսումը մտաւոր եւ մարմնաւոր ստրկութեան



հետ, — նոր սերունդը քրիստոնէութեան զաղափարը չէ զանաղանում ազատութեան զաղափարից:

Հին սերունդի մարդիկ լաւ քրիստոնեաներ եւս լինելով, մարդիկներ զրատի պէս առնում եւ ծախում էին: Նոցա կարծիքով քրիստոնեայ լինել նշանակում էր անհամբեր լինել ղէպի ուրիշների հաւատը, արդար լինել նշանակում էր այրել այն ամեն մարդիկներ, որոնք նոցանից տարբեր կարծիքներ ունէին: Օգուտ բերել հասարակութեանը նշանակում էր ոչնչացնել անհատական կեանքի երեւոյթները, ինչքան կարելի էր անմշակ թողնել մարդկութեան մտաւոր հողը:

Բայց ոչ թէ միայն չպէտք է թշնամանանք հին սերունդի հետ, այլ եւ պէտք է նորան մեր շնորհակալութիւնը յայտնենք նորանից մեզ աւանդված գործերի եւ սկիզբների համար: — Բայց ինչ միջոցով: — Ահա ինչ միջոցով. խստութեամբ քննադատելով նորա գործերը եւ սկիզբները եւ ձգտելով հեռացնել նոցա մէջ գտնվող սխալներ եւ պակասութիւններ, աշխատելով բարւոյրել կեանքի ձեւը եւ ոգին, մաքրելով սկիզբների էութիւնը ճշմարտութեան եւ արդարութեան, այսինքն կրթութեան միջոցով:

... Ժամանակ կը լինի, երբ մենք եւս հին սերունդ կը կառնանք... ուստի քօպէ մի չկորցնելով աշխատենք անդադար բարւոյրել մեր կեանքը, որ ինչքան կարելի է մաքուր խղճմտանքով ներկայանանք ապագայ սերունդի հասարակական դատաստանին:

Այս է իմ շնորհաւորութիւնը ղեռահաս սերունդին նոր տարու պատճառով:

Խիստ քննադատութիւն իբրև շնորհակալութեան արտայայտութիւն ղէպի անցած-

գնացածը, կատարելագործութիւնը, առաջագիմութիւնը իբրև անցած սերունդին երախտապարտութիւն յայտնելու ամենագեղեցիկ միջոց: Տեսնում էք, ինչպէս էր հասկանում Արծրունին այն բաները, որոնք այնքան հարկաւոր էին հնութեան խնամակալութիւնից ազատվելու եւ միանգամայն վերանորոգվելու, նորից ծնվելու համար: Խիստ քննադատութիւնը, անխնայ վերաբերմունքը ղէպի հին սերունդի գործերը ոչ անէծք են, ոչ թշնամութիւն. զրանք սրբագործութիւններ են, գրանք նուիրական պաշտամունքներ են. վախել այդ բաներից — դաւաճանութիւն է, թոյլ ու տատանվող լինել — խղճութեան, կորածութեան նշաններ են: Զարմանանք որ այսպիսի պաշտամունքներով մինչև սրտի խորքը տողորված Արծրունին իր ամբողջ կեանքում քննադատութիւն էր, խիստ, անխնայ քննադատութիւն, որ չը գիտէ յոգնել, չը գիտէ կոտորվել...

Բայց շարունակենք մեր քաղուածքները Արծրունու յիշողութիւններից: Վիեննայում նա ամբողջ ձմեռը դասեր էր առնում Մխիթարեանների վանքում:

«Ձմեռվայ վերջը ես հիւանդացայ — շարունակում է նա: — Թիֆլիսեցի բժիշկ Մարկոզով այդ ժամանակ Վիեննայումն էր. նա



պարապում էր «Allgemeines Krankenhaus» նշանաւոր հիւանդանոցում: Նա քըննեց կուրծքս և ինքն տարաւ ինձ աշխարհահոչակ ծերունի Օպօլցէր բժշկապետի մօտ, որպէսզի սա էլ քննի կուրծքս: Օպօլցէր հրամայեց ինձ անմիջապէս թողնել Վիէննա և գնալ հարաւային երկիր:

«Ես վճռեցի ուղևորվել Վեննեցիա, որպէսզի մի կողմից կարողանամ կազդուրել առողջութիւնս, որը խախտված էր նախընթաց տարվայ համալսարանական պարապմունքներիցս, իսկ միւս կողմից կարողանամ շարունակել հայերէնով պարապել:

«Այսպիսով Վիէննա թողնելով ես տեղափոխվեցայ Վեննեցիա:

«Ես Վեննեցիա արդէն ճանաչում էի. մի երկու երեք տարի սրանից առաջ ես այցելել էի այդ քաղաքը, մնալով այդտեղ մի երկու ամիս:

«Անցել էր մի քանի օր իմ Վեննեցիա դալուց յետոյ. ես սենեակ էի վարձել Սան-Մարկօ հրապարակից ոչ հեռու և բուն վեննեցիացու պէս օրվայ մեծ մասը անց էի կացնում բաց օդում, Piazza san Marco հրապարակի կաֆէներից մէկի առջև նստած լրագիր կարդալով և ազահութեամբ ներշնչելով ծովային մեղմ և առողջարար օդը:

«Վերջապէս ժամանակն անցնում էր, պէտք է սկսէի պարապմունքներս: Եւ ահա մի գեղեցիկ առաւօտ վարձում եմ Piazzetta սոված ծովեզրեայ հրապարակից ոչ հեռու, ծովի ալիքների վրա ձօճվող նաւակներից մին և ճանապարհ եմ ընկնում դէպի San-Lazzaro կղզին, Մխիթարեանների միաբանութեան վանքը»:

Ս. Ղազարը արդէն Վիեննայի միջնագրեան վանքը չէր: Այդտեղ Արծրունին տեսնում է սիրալիր ընդունելութիւն, աշխատասիրութիւն, առաջադէմ գաղափարներ: Այս բոլորը այնքան գեղեցիկ սպաւորութիւն է թողնում Արծրունու վրա, որ նա մի առանձին յօդուածով («Մեծ Մխիթարի մահի տարեդարձը սուրբ Ղազարի վանքում») նկարագրում է «Հայկական Աշխարհի» մէջ իր տեսածն ու զգացածը:

Իւրաքանչիւր տարի ապրիլի 27-ին ս. Ղազարի վանքում տօնվում է Մխիթար Սեբաստացու մահվան տարեդարձը: Արծրունին տեսնում է այդ հանդէսը, տեսնում է վանքի դպրոցի աշակերտներին, լսում է ճառասացութիւնները և նկարագրում է այդ բոլորը: Նկատենք որ այս յօդուածի մէջ Արծրունին ցոյց է տալիս նոյն իսկ բանաստեղծական տրամադրութիւն, դա Մխիթարեանների կըղ-



**զու ազգեցութիւնն է, այն կզգու, որ Բայրօնին էր ոգևորել:**

Ի՞նչ իրաւունք ունի բանաստեղծ այս ինչ կամ այն ինչ տպաւորութեան տակ գրած բանաստեղծութիւնը ձեզ առաջարկել, ձեզ տխրացնել կամ ուրախացնել... Ի՞նչ իրաւունքով մի հեղինակ իւր աչքով է նայում այս կամ այն երեւոյթի վերա, իւր զըրվածը շնչաւորում է տխուր կամ ուրախ զգացմունքով... Ի՞նչ իրաւունք ունի նա ձեզ իւր ցաւերի ցաւակից անել եւ իւր ուրախութեան ուրախակից...:

Այն իրաւունքը, որ կայ անհատութիւնն, անձնական կազմիւնքի պայմաններով, անձնական զգացմունքով, սէրով, հասկացողութեամբ, ընդունակութիւններով, ձգտողութիւններով...:

Հեղինակը առաջարկում է ձեզ իւր կարծիքը իւր համոզմունքից եւ զգացմունքից բխած,—ձեզանից, ձեր բարի կամքից է կախված ընդունել այն կարծիքը կամ ոչ:

**Այս նախաբանից յետոյ Արծրունին նկարագրում է Մխիթարեանների ժամառացութիւնը.**

Հայի վերա, որը օտարութեան մէջ լինելով, վաղուց լսած չէր ազգային ժամասացութիւնը, մի առանձին սփովիչ տպաւորութիւն էին անում այս հեռու երկրում ճշտութեամբ պահված ազգային եկեղեցական ծէսեր եւ արարողութիւնները: Ի՞նչ վնաս եմէ այն հողեւորականները կաթօլիկներ էին... Երդեցողութիւնը, արարողութիւնները, բոլոր ժամասա-

ցութիւնը հին հայկական պատմական ճշտութեամբ էր կատարվում:

Հինգերորդ դարում Պարսիկների դէմ պատերազմում մեր ազգային մարտիրոսներից երգած սաղմոսները նոյն ճշտութեամբ եւ նահապետական ձեւով երգվում են եւ այժմ...:

Աղբիւսի ծովի մի փոքրիկ կղզու վերա, փոքրիկ մի եկեղեցում, որը նորա մէջ հաւաքված փոքր խմբի համեմատութեամբ չափազանց մեծ էր երեւում,—մի կողմ ձգելով ամեն տեսակ նախապաշարմունքը,—Հայն կարող էր իւրան այն օրը իւր հայրենիքի մէջ կարծել... Հեռու ծովի փոքրիկ մի կղզու մէջ այս խումբը ջերմեռանդ աղօթքով, իւր հնադարեան եկեղեցական երգերում յիշում էր, կարծես, իւր բազմափորձ պատմութեան ամենանշանաւոր երեւոյթները... Գրիգոր Լուսաւորիչ, Վարդան, կրօնի եւ ազգի համար նահատակված մարտիրոսները, այս բոլոր անունները յիշեցնում էին Հային անցած ժամանակները, յարուցանում էին նորա սըրտում իւր կորած կեանքի բարձր գաղափարները:

Պատարագից յետ Մխիթարեան հայրերը պատահեցին եւ ընդունեցին մեզ իւրանց սովորական, Ս. Ղազարի կղզում եղած օտարներին յայտնի, քաղաքավարութեամբ, քաղցրութեամբ եւ հիւրասիրութեամբ, որոնք յատուկ են նախապաշարմունք չունեցող, զարգացած եւ կրթված մարդիկներին:

**Մեծ դահլիճում սկսվում է ճառախօսութեան հանդէսը, որին ներկայ են միաբանութիւնը, հրաւիրվածները, Ռափայէլեան վարժարանի և վանական դպրոցի աշակերտ-**



**ներք: Երիտասարդ վարդապետներից մէկը  
դրաբար մի ճառ է կարդում Մխիթարի մասին:**

Երկար, երկար, մօտ մի ժամ տեւում էր այս ճառը... խրդին զբաբարով, բարձր ոճով էր զրված նա... բացի սորանից ամեն դասական լեզուներին յատուկ փառաւոր, անքնական արվեստական ձայնով էր կարդացված: Առաջին բոպէ մարդս աշխատում է հասկանալ, բայց տեսնելով թէ ի զուր է նորա բոլոր ջանքը,—նա հաշտվում է այն անքնական ձայնի եւ վաղուց անցած դարերի եւ հնչիւնների հետ... եւ շարունակում է լսել այն ճառը ոչ թէ մտքեր հասկանալու նպատակով,—այլ որպէս մի երաժշտութիւն:

Ես շատ քիչ հասկացայ... հասկացան արդեօք աշակերտները, սա ինձ անլուծելի հարց է մնացել: Ես ինձ Հայ զգալով նմանապէս ցանկանում էի ամբողջապէս հասկանալ Մխիթարի կեանքի եւ նորա հիմնարկութեան պատմութիւնը, ազգի համար այս կենսատու երեւոյթի պատմութիւնը... Ինչի մի կենդանարար երեւոյթը պատմվում է մեռած լեզուով:

Կարելի է Մխիթարեան հայրերը իւրանք չլիտեն մինչեւ ինչ աստիճանի նորա մեր ազգի հաւատարիմ պատկեր են,—կարելի է նորա իւրանք չեն հասկանում մինչեւ ինչ աստիճանի նորա մեր ազգային կեանքի ճիշդ արտայայտութիւն են:

Սրբ. Գէորդ արքեպիսկ. Հիւրմուզեան արքահայրը մի փոքրիկ եւ ազդու ճառով, աշխարհաբար լեզուով, պատասխանեց երիտասարդ վարդապետի ճառախօսութեանը: Այս փոքր ճառի մէջ արտայայտվեցաւ բոլոր միաբանութեան ոգի, բոլոր հիմնարկութեան ուղղութիւնը: Նշանաւոր էր մանաւանդ

նորա խօսքի յետագայ միտքը.—«Հիմնողից տուած էր այս միաբանութեանը աստուածային եւ կրօնական ուղղութիւնը. մենք կարող ենք ընդարձակել, զարգացնել նորանից մեր մէջ դրած ոգին, բայց պակասեցնել երբէք չենք կարող»:

Այս խօսքերը լսելով ինձ թւում էր թէ պատուական ծերունու քերանից ես լսում էի ոչ թէ միայն Մխիթարեան հիմնարկութեան, այլ եւ բոլոր ազգի ուղղութեան նկարագրութիւնը... աստուածային եւ կրօնական ոգի...

Այս օրվան բոլոր հանդէսը ընդունակ էր մի խորին եւ անջնջելի տպաւորութիւն թողնել մարդի սրտի վերա:

Այս հանդէսի մէջ կերպարանաւորվում էր բոլոր ազգի կեանքի ոգին:

Բոլոր շրջապատող երեւոյթները զարմանալի ներդաշնակութեան յարաբերութիւնների մէջ էին գտնվում: Դժուար կլինէր ինձ ասել որը այս բոլոր երեւոյթներից աւելի մեծ տպաւորութիւն ունեցաւ ինձ վերա:

Մեռած լեզուով նկարագրված մեր նոր պատմութեան միակ կենդանարար երեւոյթը, սրբ. արքատու ճառի ոգին, երեխաների ծանր երեսները, որոնց վերա ամենեւին չէին նշմարվում երեխայական ըզրացմունքը եւ կեանքը,—այս բոլորը վկայութիւն էր տալիս ծերացած մի ազգութեան իրողութեանը:

Մխիթարի չէր կարելի.—դուք ուշք դարձնելով այս բոլոր երեւոյթներին, կհանդուրձէիք որ ունիք ձեր առաջ ոչ թէ իւր մանկական հասակում գտնվող ազգը, այլ բազմափորձ, հնասէր, ծերացած ազգութեան ներկայացուցիչները... Ակամայ իմ աչքս ընկաւ դահլիճի մի անկիւնի վերա... այնտեղ, աշակերտների



մէջտեղը կանգնած էր եղիպտոսից բերած, եւ վանքին ընծայված, մի շատ հին եղիպտական զմռսված մարմինը...

Հազար եւ հազար տարիները այն մարմինը, կենդանի եւս չլինելով, չէ ոչնչանում, մինևնոյն դրութեան մէջ պահպանվում է...

Վանքից դուրս եկած, կրկին նստելով նաւակը, ես նայում էի կղզու ավերից կապոյտ ծովի հեռաւորութեան մէջ, ազահումեամք ծծելով իստակ օդը... Ծայրայեղ զգացումները կուտւմ էին իմ մէջ.—մի կողմից ես չէի կարող չզգալ ջերմ շնորհակալութեան զգացումները դէպի մեծ Մխիթարի յիշատակը եւ նորա հիմնարկութիւնը,—իսկ միւս կողմից՝ տխրութիւն...

Չգիտեմ ինչի ես յիշեցի երեւելի զերմանացի Գեօտէի օրհասական աղաղակը—լոյս, լոյս... Սյն րոպէում ես կամենում էի կանչել,—կեանք, կեանք...

Սյս հիանալի նկարագրութիւնը Գրիգոր Արծրունու անթիւ գրութիւնների մէջ մարգարիտի պէս պիտի փայլէ։ Ի՞նչն էր այդքան ոյժ, թարմութիւն, խոր զգացումներ հազորում այդ գրութեան։—Չը մոռանանք, որ դա առաջին գործն է, որ գրում էր Արծրունին մեր իրականութեան անմիջական ազդեցութեան տակ։ Թիֆլիսից նա հեռացել էր իբրև օտար կրթութեան մի հարազատ դաւակ։ Մօսկվայում և Պետերբուրգում շատ չը մնալով, անցել էր արտասահման, ուր տարիների ընթացքում կտրված էր հայութիւնից և միայն յիշողութիւններով, պատանեկական

ժամանակի տպաւորութիւններով էր պատկերացնում իր առջև մեր կեանքը և գրում նրա մասին։ Այժմ բոլորովին կազմակերպված ու ամբողջացած իբրև դարգացած մարդ և մտածող, նա մտնում է այն հոշակաւոր վանքը, ուր խտացած էր հայկական իրականութիւնը։ Հանդէսը, հայերէն խօսքը, շըրջապատը ազդում են երիտասարդի վրա. նա տեսնում է Մխիթարի հիմնարկութիւնը, հայոց նոր պատմութեան այդ ամենափայլուն երևոյթը, որ հայ մտքի առաջադիմութիւնն է ներկայացնում։ Նայում է նա այդ երևոյթի երեսին, երախտապիտութեամբ է լցվում, բայց միևնոյն ժամանակ տեսնում է և հայութեան ողին—հնութիւն և կրօն։ Ծերացած է այն ազգութիւնը, որ այդ վանքի միջոցով նայում է այդ 24-ամեայ երիտասարդին։ Եւ սա այդ ձերուհու երեսին կանչում է. «կեանք, կեանք»... Իրականութիւնը որքան ուժգին է խօսեցնում Արծրունուն։ Սյստեղ դեռ արտասահման է. դեռ շատ բան կոկված ու յղկված է, և նա դարձեալ այսպէս է խօսում։ Ի՞նչ պիտի լինի, երբ նա մտնէ հայրենի իրականութեան մէջ, այն կեանքի մէջ, որին չէ դիպել կրթութիւնը, զարգացումը, յարատև, բեղմնաւոր, սերունդից սերունդ անցած աշխատանքը...



«Խաղաղութիւն, տոկուն աշխատանք, անձնուէր սէր դէպի հայրենիքի յիշատակները և միևնոյն ժամանակ եւրօպական կիրթ վարժուէրն ու լայն ժամանակակից հայեացքներ ամեն հարցերի վրա,— ահա Վենեցիայի սուրբ հայրերի յատկանիշը»,—ասում է Արծրունին իր յիշողութիւնների մէջ:

«Կղզու վրա գտնվող վանական դպրոցը գործեց ինձ վրա, ինչպէս և նկարագրել էի «Հայկական Աշխարհում», անախորժ տալարութիւն. երեխաները հիւանդոտ, նիհար, դեղնած, ստրկացած, բթացրած դէմքերով... Ներկայ գտնվելով դպրոցի տարեկան հանդէսին, համողվեցայ թէ դպրոցում տիրում է մեռած գրարարականութիւնն ու հնացած սխօլաստիական մեռցնող ողին...»

«Բայց մի բան անուրանալի է, այդ այն է որ Վենեցիայի Մխիթարեանները սիրահարված են իրանց հայրենիքի յիշատակների վրա... Ուր և նայես, ուր և դնաս,—այդ փոքրիկ աշխարհը, Սուրբ Ղազարի կղզին յիշեցնում է քեզ հայրենիքը: Հայոց գրքեր, հայոց ձեռագիրներ, Հայաստանի տեսարանների պատկերներ, եկեղեցում հին հայկական պարզ ծիսակատարութիւն, այգու մէջտեղ մի մեծ սււաղան Վանի ծովակի ձևով շինված...»

«Արեղաները սիրով ընդունեցին ինձ... Որքան տարբերութիւն նրանց և Վիէնայի միջնագարեան ուրուականների մէջ...»

«Մրանց հետ խօսելով, մարդ մոռանում է թէ նրանք կաթօլիկ են, մոռանում է նոյն իսկ թէ արեղաներ են,—այն աստիճան լուսաւորված մարդիկ են նրանք: Մարդ նոյն իսկ առաջին բօպէից ստիպված է նայել նրանց վրա, որպէս լուսաւորված աշխարհականներից բազկացած համեստ մի ուսումնական ընկերակցութեան վրա... Միայն հարկաւոր չէ խօսել ու վիճել նրանց հետ կաթօլիկութեան մասին...»

«Ես յայտնեցի սուրբ հայրերին իմ նպատակս:

«Նրանք խորհուրդ տուեցին ինձ դիմել հ. Ղևոնդ Ալիշանին, որը այն ժամանակ Բաֆայէլեան դպրոցի տեսուչ էր և կենում էր քաղաքում գտնված դպրոցի շինութեան մէջ:

«Քանի մի օրից յետոյ ես վարձում էի Սան-Մարկո հրապարակում խտալացի մի ուղեցոյց, որը ոտով տարաւ ինձ նեղ և ոլոր մուր փողոցներով ու փոքրիկ կամուրջներով դէպի Բաֆայէլեան դպրոցը:

«Դպրոցը գետեղված է մի լայն կանալի վրա գտնվող շքեղ հոյակապ պալատում: Հայր տեսչի հետ տեսակցութեան իրաւունքը խըն-



գրած լինելով, ևս բարձրացայ մի քանի ընդարձակ, գեղեցիկ կորիդորներ և շուտով բաղխում էի արգէն հայր Ղևոնդի առանձնասենեակի դուռը:

«—Բնաց... լավեց սենեակից մի թոյլ և խուլ ձայն:

«Նս բաց արի դուռը և իմ աչքերիս ներկայացաւ հետեւեալ տեսարանը: Ահազին, լուսաւոր սենեակ, լի գրքերի պահարաններով, մէջտեղ գրած մի մեծ գրասեղանով, որը բեռնաւորված էր բազմաթիւ գրքերով և թղթերով, մի քանի գեղեցիկ, թէև հասարակ բաղկաթոռներ, և մի դիվան, լայն և բարձր պատուհանների վրա մոյզ գոյնի վարդոյրներ, — ահա Ալիշանի սենեակը:

«Առաջին րօպէին ևս մարդ չէի տեսնում սենեակում... Մի վայրկեան անշարժ կանգնեցի սենեակի շէմքի վրա... Ուղղելով հայեացքս դէպի ահազին գրասեղանը, այդ րօպէին միայն նկատեցի մի շատ նիհար դէմքով մարդկային գլուխ գրքերի ու թղթերի ահազին կոյտի մէջտեղ:

«Ինչպէս երևում է հայր Ղևոնդը խորասուզված էր ընթերցանութեան մէջ, երբ ևս ներս մտայ:

«Նս անմիջապէս տեղից բարձրացաւ, մօտեցաւ, մեկնեց ինձ իր ձեռքը և ձեռքիցս



Հ. Ղևոնդ Ալիշան



բռնած՝ տարաւ ինձ իր գրասեղանի մօտ,  
խնդրելով նստել:

«Ես ասեցի թէ ով եմ:

«Ընդունելութիւնը բոլորովին ուրիշ էր,  
քան թէ Վիէննայի վանքում:

«Ալիշան միջին հասակի, շատ նիհար, հիւ-  
ւանդոտ դէմքով, թոյլ կազմուածքով, մօտ  
50 տարեկան մարդ էր: Նա սկսեց խօսել-  
ձայնը թոյլ և խուլ, խօսակցութիւնը անդա-  
դար ընդմիջվում էր չոր, անախորժ հազով:  
Խօսելու և պատասխան ընդունելու ժամա-  
նակ նա անդադար կարճրում էր, ինչպէս  
մի օրիորդ, կամ ինչպէս մի գերմանացի հա-  
մեստ պրօֆէսոր...»

«Ես յայտնեցի որ կուղենայի նրանից հայե-  
րէն լեզուի դասեր առնել:

«—Կը ներէք, չեմ կրնար, կուրծքս թոյլ  
է, բժիշկները արգելած են ինձի շատ խօսել և  
բարձր խօսել, բայց կը յանձնեմ ձեզ մեր  
դպրոցի օգնականին, հայր Իգնատիոսին...»

«Ես շնորհակալութիւնս յայտնեցի: Նա  
կրկին կարմրեց:

«—Հրամանըդ ժամանակ առ ժամանակ  
կը զրէք Թիֆլիսի լրագիրներուն մէջ, շա-  
բուհակեց նա:

«Խօսակցութիւնն անցաւ մեր մամուլի,

մեր գրականութեան վրա, ապա կովկասեան  
հայերի վրա...»

«Ես ասեցի, որ պարապել եմ մի ձմեռ  
Վիէննայի հայրերի մօտ, և աւելացրի որ  
կուղենայի վճարել դասերիս համար:

«—Հարկ չը կայ, մենք ստակ չենք վերցնի  
ձեզմէ...»

«—Բայց, հայր սուրբ, ես կուղեմ վճարել,  
և կարող եմ վճարել...»

«—Հարկ չը կայ, կրկնեց նա:


«Ստիպված էի ընդունել և նորից շնորհա-  
կալութիւնս արտայայտել...»

«Սկսեցի շարաթը չորս անգամ դասեր առ-  
նել տեսչի օգնական հայր Իգնատիոս Կիւ-  
րեղեանի մօտ (այժմ արքահայր): Հայր սուր-  
բի խուցի մէջ նստած, Եղիշէ, Խորենացի,  
կամ մի այլ հայոց կլասիական գիրքը կար-  
դալով իմ դասերիցս իւրաքանչիւրը մի ժա-  
մի տեղ, շատ անգամ երկու, երեք ժամ էր  
տեղում: Գիրքը թողած՝ շատ անգամ սկսում  
էինք վիճել երիտասարդ վարժապետիս հետ:

«Վէճը մեծ մասամբ եկեղեցու, կրօնի մա-  
սին էր, լուսաւորչական, կաթօլիկ և բողո-  
քական եկեղեցու մասին...»

«—Հրամանըդ բողոքական երկրում ուսու-  
մըդ ստացած ըլլալով, կը նկատեմ որ աւելի  
համակիր էք բողոքականութեանը, ասում էր





Է. Իգնատիոս Կիրեոզեան

ինձ իր մեղմ և ներդաշնակ ձայնով համակրելի վարժապետս...

«—Ոչ, հայր սուրբ, ինձ համար մի և նոյն է, ինչ կրօնի էլ պատկանի հայր. ես ծնվել եմ լուսաւորչական ծնողներից և նրանցից եմ ստացել իմ առաջին բարոյական դաղափարներս. բարձրագոյն ուսումս և համոզմունքներս՝ բողոքական Գերմանիայից եմ ստացել, իսկ հայոց, մայրենի լեզուի հմտութիւններովս պարտական կը լինեմ ձեզ, կաթօլիկ հայերին... Գուցէ այդ պատճառով ես միակերպ եմ վերաբերվում դէպի բոլոր դաւանութիւնները, առանց որ և է մոլեռանդ զղացմունքի...»

«Վարժապետս ժպտում էր իր մեղմ ժպտով, ապա յանկարծ կտրում էր մեր վիճաբանութիւնը.

«—Սակայն ժամանակը կանցնէ, դառնանք մեր Սորենացուն:

«Ամբողջ վեց ամիս, շաբաթը չորս անգամ դասերս առնելով հայր Իգնատիոսի մօտ, ես դասերիցս յետոյ կամ պտտում էի դպրոցում, կամ մտնում էի հայր Ալիշանի սենեակը:

«Եւպրոսը ինձ հետաքրքրում էր: Դպրոցի ամբողջ կազմակերպութեան և ուղղութեան վրա տիրում էր հայր-տեսչի, Ալիշանի ողբին:



Գպրոցն ուսումնասիրած լինելով, կարելի էր գաղափար կազմել և նրա ղեկավարի ուղղութեան, բնաւորութեան ու լայն համամարդկային գաղափարների մասին: Ալիշանի անխարդախ, համակրելի, անկեղծ բնաւորութիւնը, նրա լայն մարդասիրական և հայրենասիրական անձնուէր հանճարը կերպարանաւորվում էր գպրոցի թէ ամբողջութեան և թէ նրա իւրաքանչիւր մանրամասնութեան մէջ:

«Բաֆայելեան գպրոցը նրա ձեռքի տակ այնպիսի բարձրութեանն էր հասել, որ համարվում էր ամբողջ Վենեցիայում ամենալաւ միջնակարգ գպրոց: Իմ ժամանակ կաթօլիկ աշակերտների մեծամասնութեան մէջ կային և լուսաւորչական մի քանի երիտասարդներ և նոյն իսկ մի հայ բողոքական աշակերտ: Անուբանալի է որ Վենեցիայի Մխիթարեանները թուեղ կաթօլիկներ են, բայց նրանք այն աստիճան լուսաւորված մարդիկ են, որ երբէք չեն փորձում որ և է ձնչում գործել իրանց գպրոցում ուսանող այլակրօն հայ երիտասարդների վրա և դարձնել նրանց կաթօլիկ: Եւ ես համոզված եմ որ այդ համբերութեան ողու գլխաւոր գրօշակակիրը միաբանութեան և գպրոցի մէջ ինքն հայր Անոնն էր:

«Երբ ես մանում էի գպրոցի այն մեծ դահլիճը, որտեղ աշակերտները դրադվում էին նկարչութեամբ՝ ես ապշած էի մնում: Հայր տեսուչը պատուիրել էր նկարչութեան ուսուցչին, որ աշակերտները մեծ մասամբ նրկարէին հայոց պատմութեան հետ սերտ կապ ունեցող և երեխաների վառ երեակայութեանը գլխաւորապէս հայրենիքը յիշեցնող դէմքեր և տեսարաններ... Մի տեղ տեսնում էիք Վարդան Մամիկոնեանի ընդօրինակած կենդանադիրը, մի ուրիշ տեղ Անիի աւերակների տեսարանը, և այլն և այլն...»

«Վեց ամիս շարունակ հայր Իգնատիոսից շարաթը չորս անգամ դասեր առնելուց յետոյ, երբ հասաւ Վենեցիա թողնելու օրը, ես կրկին դիմեցի հայր Անոնդ Ալիշանին, խնդրելով որ գպրոցի օգտին գտնէ ընդունէ ինձանից դասերիս վարձը: Բայց բոլոր թախանձանքներս զուր էին, — հայր Անոնդը ոչինչ կերպով չէր ուզում ինձանից փող ընդունել:

«Ճարահատված, քաղաքից իմ դուրս գալուց մի քանի օր առաջ, գնեցի գրավածառնոցում ֆրանսիական կլասիկների ժողովածուն և ընծայեցի Բաֆայելեան գպրոցի դրադարանին, որպէսզի գտնէ մի կերպ արտայայտեմ երախտագիտութիւնս սուրբ հայ-



ընդհանուր նրանց սիրալիր ընդունելութեան և վեց ամիս շարունակ ինձ տուած դասերի համար»:

Աւելորդ է ասել թէ վենետիկի այս ապաւորութիւնները որքան հարկաւոր էին Գրիգոր Արծրունուն, երբ նա, ուսումը Եւրոպայում վերջացրած, պատրաստվում էր վերադառնալ հայրենիք և այնտեղ գործել: Մըխիթարեանները, մանաւանդ Հ. Ալիշանը, որի հետ Արծրունին «բաւական մօտիկ ծանօթութիւն» էր կապել և որի հետ առիթ էր սեննում «մտերմաբար խօսել ընդհանրապէս մեզ հետաքրքրող հարցերի մասին», անկասկած ազդել են երիտասարդ դօկտօրի աշխարհայեցողութիւնների վրա իրանց վառ հայրենասիրութեամբ, լայն զարգացմամբ, իրանց ամբողջ վանքով, ուր այնքան հարուստ ու ճոխ կերպով ներկայացրած է հայ ազգի աճցեալը: Այնտեղ, այն կամարների տակ, ուր գործել են Միխիթար, Չամչեան, Աւգերեաններ, Բագրատունի, — Գրիգոր Արծրունին չէր կարող չը ներշնչել, չողկորվել: Եւ նշանաւոր Միխիթարեանների պատկերները, որոնք նրա ամբողջ կեանքում գտնվում էին նրա սեղանի վրա, մի մի վկաներ են, թէ ինչ խոր տպաւորութիւն էր ստացել նա ս. Ղազարի կղզում:

Մանաւանդ մեծ էր այն հիացմունքը, որ ազդել էր Արծրունուն Հ. Ալիշանը: Վեց ամիս մնալով վենետիկում, Արծրունին Միխիթարեանների ընդարձակ գրականութիւնից միայն Ալիշանի «Յուշիկը Հայրենեաց Հայոց» յայտնի աշխատութիւնը վերցրեց, խօսեց նրա մասին «Հայկական Աշխարհում»: Եւ ինչպէս լաւ էր նա դեռ այն ժամանակ ըմբռնել մեր հռչակաւոր Նահապետի ողին:

Հին հայկական գրողների, մանաւանդ հինգերորդ դարի երեւելի պատմիչների յատկանիշ նկարագիրը նոցա բանաստեղծական ուղղութիւնն է, որը հիմնվում է նոցա ազգասիրական վեմ ողու եւ քրիստոնէական խոր զգացմունքի վերա:

Հ. Ալիշանի զիրքը կարգալով մենք համոզվում ենք որ հեղինակը չափազանց հմուտ է մեր հին գրականութեանը, որովհետեւ բոլորովին սեփականացրել է իւրան մեր դասական հեղինակների նշանաւոր բանաստեղծական ողին, որ սկիզբ է առնում նորա մէջ եւս երկու (պողաբեր) աղբիւրներից. — ազգասիրական ողուց եւ քրիստոնէական բարձր գաղափարից:

Ես ասում եմ քրիստոնէութիւն եւ ոչ թէ աստուածաբանութիւն:

Քրիստոնէութիւնը վեր է քան աստուածաբանութիւնը:

Աստուածաբանութիւնը կարող է փոխվել, տարբերվել, մարդի կազմվածքի եւ հասկացողութեան կամ կլիմայի համեմատ: — Քրիստոնէութիւն եւս սկիզբները անխախտ են մնում:



Աստուածաբանութիւնները բազմաթիւ են:

Քրիստոնէութիւնը մի է:

Քրիստոնէութեան սկիզբները, այսինքն ազատութիւն, հաւասարութիւն, եղբայրասիրութիւն ամեն մարդի, ամեն կազմկածքի, ամեն կլիմայի, ամեն ազգի, ամեն ցեղի, ամեն ժամանակի համար ճշմարտութիւն են եւ կ'մնան...

Բերելով այնուհետև մի քանի կտորներ Հ. Ալիշանի գրքից, Արծրունին հարցնում է թէ ձրտեղից է սկիզբ առնում այդ գրուածքի մէջ Ալիշանի վառ հայրենասիրական զգացմունքը: Եւ պատասխանում է այսպէս.

Մեզ հեղինակը հեռու է ապրում մեր հայրենիքից...

Առնձում է նա արդեօք իր ազգասիրական զգացմունքը՝ դէպի կենդանի հայկական ժողովուրդ ունեցած սէրից... Կարելի է արդեօք սիրել մի տղէտ, անկիրթ, մոլեռանդ, ողորմելի, հայրենիք չունեցող, երկպառակութիւն սիրող, միութեան թշնամի մի ժողովուրդ—չեմ կարծում... Այդպիսի ժողովրդի վերա խղճով կարելի է,—բայց նորան սիրել... հազիւ թէ...

Կարելի է միթէ սիրել այն ինչ որ սիրելի չէ:

Առաւել հաւանական է ընդունել, որ հայ հեղինակի ազգասիրական խոր զգացմունքը ծագում է մեր հին կեանքի հասկանալուց եւ մեր պատմութեանը մօտ ծանօթ լինելուց, մեր անդարձ կորած ազգային կեանքի երեւոյթների նշանաւորութիւնը անկեղծ պաշտելուց:

Որ Հ. Ալիշանի հայրենասիրութիւնը գըլ-

խաւորապէս հին նիւթերից, պատմական անցեալի տուած նիւթերից էր իր կրակը ստանում—դա անհերքելի է: Բայց չէ կարող լինել այնպիսի սէր, որ միայն հին-հին դարերի սրտում ապրէ, այնտեղ թաղված մնայ: Իր հայրենիքի աւերակները, օղբ, ջուրը երգողը միայն անցեալի պատմիչ չէր. և եթէ նրա լեզուն կրակ էր կտրում այդ անցեալի յիշատակներից, կար նրա մէջ և այն շեշտը, որ ներկան էր գրկում, ներկայի հոգսերն էր շօշափում: Ներկայի ժողովուրդը ընկած էր, դժբախտ, սղորմելի: Արծրունին ասում էր թէ չէ կարելի սիրել մի այդպիսի ժողովուրդը, նրան կարելի է միայն խղճալ: Բայց սա մի բառախաղ է միայն: Խղճահարութիւնն էլ նոյն սիրոյ զգացմունքից չէ՞ դուրս գալիս: Կարելի է խղճալ, չունենալով սրտի մէջ սէր դէպի ընկածը, դէպի դժբախտը: Կայ, այո, այն սէրը, որ զարթեցնում է մեր մէջ կատարելութիւնը, գեղեցկութիւնը: Մենք նայում ենք նրան, սիրում ենք նրան մեր ամբողջ սրտով, հիանում, յաիշտակվում ենք: Բախտաւորութեան, կատարելութեան տիպար ներկայացնող առարկան բարձր ու վեհ է մեր աչքում. մենք նրա վերաբերմամբ մի ուրիշ զգացմունք չունենք, բացի պաշտողի, երկրպագողի զգացմունքից:



Բայց կայ և այն սէրը, որ յարուցանում է մեզանում թշուառութիւնը: Ընկած է այդ թշուառութիւնը, թաւալվում է կեղտերի և ցեխի մէջ, նրա մարմինը լափում են հազար ու մի անձոռնի, զգուելի որդներ: Սիրել նրան՝ այդպիսի դրութեան մէջ պահելու համար—անկարելի է: Բայց կեղտերից ու ցեխից հանելու, նրան մաքրելու, նրան բժշկելու, նրան կեանք և երջանկութիւն տալու համար—ահա այստեղ է իսկական, վեհ սէրը, նա, որ եսամոլութիւն չէ, նա, որ ամբողջովին անձնազոհութիւն է: Մարդը ընկած է ցեխերի և կեղտոտութիւնների մէջ: Անցնողներից մէկը կանգ առաւ, գնաց գէպի ընկածը: Ի՞նչ զգացմունք էր դա: Յեկն ու կեղտոտութիւնները զգուեցնում են նրան, բայց նա սիրում է այն գաղափարը, որ զրված է ընկած մարդու մէջ և շտապում է, զսպելով իր զգուանքը, ազատել գաղափարը այդ սոսկալի միջավայրից: Այլիշանք հայ ժողովրդի վատ, բացասական կողմերը չէր սիրում և բոլորովին այգտեղից չէր քաղում իր հայրենասիրական ոգեւորութիւնը, այլ սիրում էր այդ ընկած ժողովրդի գաղափարը, նրա բարձրանալու, նրա երջանկանալու միայրը:

Այդպէս էր և ինքը Արծրունին, իր ամբողջ կեանքում: «Սիրել ատելով»—այսպէս

էր ասում Նեկրասովը, նայելով իր ժողովրդի անթիւ ցաւերին: Այսպէս բացատրեց և Արծրունին իր սէրը գէպի իր ժողովուրդը: Նա անուանեց հայ ազգը մի պոռնիկ, որին պղծել ու ապականել էին դարերի ընթացքում անթիւ տարփածուններ. բայց նա սիրում էր այդ պոռնիկին, սիրում էր ատելով: Եւ հէնց այստեղ էլ, ս. Ղազարի կղզուց գրած այս տողերի մէջ էլ, չէ երևում նոյն սիրողը: Իր զղացմունքը գէպի ընկած ժողովուրդը նա արտայայտում էր «խղճալ» բառով: Բայց մեզ համար դա էլ նշանակում է սէր, անսահման, վառ սէր գէպի նոյն այդ ընկածը...

Վենետիկից Գրիգոր Արծրունին գնաց նորից Հէյդլբերգ, ուր գտնվում էր Անդրէասը: Երեւի նա ուղտւմ էր հայրենիք վերադառնալուց առաջ մի անգամ էլ տեսնել իր Alma mater-ը և սիրելի եղբօրը: Բայց մենք դեռ պիտի ծանօթանանք նրա մի քանի յօդուածների հետ:

«Մտքեր յայտնելու իրաւունք» յօդուածի մէջ Գրիգոր Արծրունին, ինչպէս և ուրիշ տեղերում, պաշտպանում է մտքի կատարեալ ազատութիւնը, ապացուցանելով որ այդ ազատութիւնը ոչինչ վտանգ չէ սպառնում հասարակութեան:



Մի նոր ուսում յայտնելով ես կարող եմ կամ ուղիղ կամ ծուռ, կամ օգտաւէտ կամ վնասակար գաղափարներ յայտնել:—Բայց եւ վնասակար, ծուռ մի ուսում յայտնելով, ես ոչ որից իրաւունք չեմ յափշտակում, իրապէս արդէլք չեմ դնում պաշտպանել հակառակ գաղափարները:

Կարելի է արդեօք յանցանք համարել այն, ինչ որ ուրիշից չէ խլում գործողութեան իրաւունք:

Մի հաստատված ուսման դէմ խօսելով, ես նմանապէս կարող եմ կամ ծուռ կամ ուղիղ մտքերը յայտնել, ես կարող եմ հին ուսման պակասութիւնները ցոյց տալ. կամ իմ սահմանափակված զարգացման պատճառով ծուռ կերպով հասկանալ մարդիկներից ընդունված մի պատուական ուսում, եւ ի զուր յարձակվել նորա դէմ:

Դարձեալ այս դէպքում կարելի է արդեօք իմ գործողութիւնը որ եւ իցէ յանցանքի հետ համեմատել:

Մի՞թէ տեսական կերպով յարձակելով մի հաստատված ուսման, մի ճշմարտութեան դէմ, ես ոչընչացնում եմ նորան, մի՞թէ այս իմ գործողութեամբ ես այն ճշմարտութեանից խլում եմ կենդանութեան իրաւունքը:

Եթէ նա ճշմարտութիւն է, թող ինքն իւրան պաշտպանէ:

Մի ճշմարտութեան դէմ յարձակողը պատժել, նշանակում է այն աստիճանին թոյլ համարել այն ճշմարտութիւնը, որ նա լոկ խօսքից անգամ, բանաւոր յարձակումից քանդվում է,—նշանակում է վիրաւորել այն ճշմարտութիւնը:

... Յայտնելով մի ծուռ գործնական միտք, ես ոչ որին չեմ ստիպում ընդունել նորան... Յայտնե-

լով մի նոր գործնական միտք ես հին մի հիմնարկութիւն չեմ ոչնչացնում իրապէս, թէեւ խօսքով առաջարկէի ոչնչացնել նորան:

Իսկ եթէ հասարակութիւնը մի հեղինակ է պատժում նորա խօսքի համար, մի գործնական յանցանքի հաւասար,—նա ստանով ապացուցանում է որ ինքն մեծ հաւատ չէ ընծայում իւր հիմնարկութիւնների հաստատութեանը:

Առհասարակ երբ մի հասարակութիւն կանչում է, վախենում է, ազդակում է, պատժում է մի նոր գաղափարի եւ սկզբի երեւելու ժամանակ,—նա ստանով ապացուցանում է որ կամ անընդունակ է հետեւաբար մտախորհութեամբ, ապացոյցներով եւ քննադատութեամբ հերքել վնասակար մի վարդապետութեան ուսումը,—կամ անզօր է վնասակար եւ ծուռ մի գաղափարին կատարեալ արհամարհանքով պատասխանել:

«Հասկանանք վերջնապէս» յօդուածը նոյն հարցերն է արծարծում, ինչ «Ինչի՞ չեւք հիմնում» յօդուածը: Արծարծելին նորից շեշտում է որ մենք մեր տնտեսական բարեկեցութիւնը պիտի հիմնենք մեր երկրի բնական հարստութիւնները կանօնաւոր եւ խելացի կերպով շահագործելու վրա: Կովկասում վերջացել են երկարատեւ պատերազմները, որոնք հարստացնում էին ծառայող եւ զանազան կապալներ վերցնող հայերին: Ռուսաց պետութիւնը հաստատել է մեր երկրում խաղաղութիւն. կը հասկանանք արդեօք որ այս



խաղաղութեան շրջանը բաց է անու՛մ մեր առջև անտեսական նոր պահանջներ և մենք կարող ենք ազնիւ ու հեշտ միջոցով հասնել հարստութեան: Դրա համար հարկաւոր է արդիւնազործութիւն սկսել, գործարաններ հիմնել, հում նիւթեր մշակել:

Հասկանանք վերջապէս, որ մեր գլխաւոր ծրագրութիւնը պէտք է լինի մեր երկրի կենդանիների, բոյսերի եւ մետաղների հարստութենից օգուտ քաղել: Այս նպատակով պատրաստել օտար երկիրներում մեր հայրենակիցներից զրական գիտութեան եւ գործնական աշխատանքից տեղեակ մարդիկներ, որոնք վերադառնալով հայրենիքը, կարող էին մեզ օգնել երկրագործութեան, զինեղործութեան, շերամապահութեան, անասնապահութեան գրութիւնը իւրանց բոլոր նիւթերով բարվոքել, եւ նոր, մեղ անյայտ, բայց Եվրոպայում վաղուց ընդունած միջոցները մշտնջնել: Աշխատել անտառաբանութեան գրութիւնը բարվոքել, եւ այլն:

Յօդուածի վերջում նա բերում էր Անդրէաս Արծրունու նամակը, որի մէջ տեղեկութիւններ կային թէ ինչ հանքերի մշակութիւն յարմար է Կովկասում: Անդրէասը յայտնում էր որ ինքը միանգամայն համաձայն է Գրիգորի յայտնած մաքերին մեր երկրի բնական հարստութիւնները շահագործելու վերաբերմամբ:

«Հասարակական կրթութիւն» յօդուածը խօսում է այն մասին թէ ինչ պէտք է տալ ժողովրդին՝ ներկայ ժամանակի պահանջները լրացնելու համար: Այժմ այլ եւս հին ժամանակները չեն, երբ ժողովուրդը բաժանված էր դասակարգերի, կաստաների: Այժմ ամբողջ, մի ազգի ընդհանրութիւնը զբաղւած է այնպիսի պայմանների մէջ, որոնք թոյլ են տալիս ամեն մէկին զարգացնել իր բնական ընդունակութիւնները, գրաւել հասարակութեան մէջ բարձր դիրք, պաշտօններ վարել: Կրթութիւնն է տալիս մի ժողովրդին զարգանալու, առաջ գնալու միջոց: Հարկաւոր է որ կրթութիւնը ամենքի սեփականութիւն լինի: Կրթութեան բարձր աստիճանին հասած երկրներում ամեն մարդ քաղաքացի է: Քաղաքացու ասպարհ ձգտումներին և ջանքերին նպաստելու համար մենք պահանջում ենք ազգի բոլոր մանուկների համար ձրի և պարտադիր ուսում:

Այդպիսով ժողովրդական սկզբնական կրթութիւնը հասարակական կրթութեան հիմքն է: Սկզբնական ուսում ստանալուց յետոյ մարդը ընտրում է իր համար մի կոչում և դրա համեմատ շարունակում է իր կրթութիւնը, մտնելով համալսարան, մասնագիտական բարձրագոյն դպրոց և այլն:



Բայց ամեն մարդ չէ կարող այդպէս անել և ժողովրդի մեծագոյն մասը, ամբողջ բաւականանում է սկզբնական դպրոցում ստացած իր կրթութեամբ: Նա, ժողովրդի այդ մեծամասնութիւնը, ղրադված է նիւթական աշխատանքով. և նրա ստացած սկզբնական կրթութիւնը բաւական չէ որ նա մասնակից դառնայ հասարակական կեանքին, քաղաքացի լինի:

Հասարակութեան մէջ անդադար ծնվում են նոր մտքեր, նոր գաղափարներ. հասարակական հարցերը հասկանալու համար, կամ իւր դասի եւ իւր անձի օգուտները պաշտպանելու համար բաւական չէ սկզբնական դաստիարակութիւնը:

Հարկաւոր է մի ընդհանուր կրթութիւն, որ տարածվէր բոլոր ժողովրդի վերա:

Հարկաւոր է գտնել ընդհանուր գիտութիւն տարածելու մի զօրեղ միջոց, որ մեկնէր, պարզէր ժողովրդին հասարակական եւ քաղաքական երեւոյթները.—մի միջոց որ ուղղութիւն տար հասարակական կարծիքին, որը նիւթական աշխատանքին նուիրված մարդին անդադար ուղղէր, թոյլ տար նորան դաստիարակվել՝ ուսումնարանն եւս թողնելուց յետոյ:

Ո՞րն է այդ միջոցը.—Արժրուներն պատասխանում է. «Գլխաւոր (չեմ ասում միակ) միջոցը—օրագրութիւնն է»: Օրագրութիւնը նա, ինչպէս և այն ժամանակ ամենքը, գործ էր անում «ժուրնալիզմ» բառի մարտի:

Հայերը ունէին ընդհանուր կրթութեան այս գլխաւոր միջոցը, ունէին պարբերական մամուլը: Յոյց տալով այդ մամուլի անազկին կրթական նշանակութիւնը, Արժրուներն բնականաբար պիտի յատկապէս հայ մամուլի մասին էլ խօսէր: Եւ նա դիմեց այս հարցին իր մի ուրիշ յօդուածում, որ գրված է Հէյ-զլբէրգից և ունի «Բաւական չէ» վերնագիրը:

Մեր մամուլը, ինչպէս տեսանք, մի շատ խղճուկ գոյութիւն էր պահպանում և շարունակ պահպատում էր որ ընթերցող չունի: Բայց պէտք էր մի քիչ էլ իր պակասութիւնների վրա ուշադրութիւն դարձնել: Ահա այդ բանը անող չը կար. և առաջին անգամ Արժրուներն է, որ դալիս է ցոյց տալու թէ ինչ է պակասում մեր մամուլին:

Սկսելով իր տեսութիւնը այն ժամանակից, երբ ուստահայերի մէջ գործածական դարձաւ աշխարհաբարը, Արժրուներն ասում է, որ այդ գործի մէջ առաջին և ամենածանրը փորձերից մէկը արել է «Հիւսիսափայլի» հրատարակողը: Այն ժամանակից շարժումը կանգ չառաւ և այժմ այլ ևս անհնարին է վերադառնալ գրաբարին: Սա, անկասկած, առաջագիմութիւն է. բայց զարգացման մի յայտնի աստիճանին հասնելուց յետոյ, անկարելի է կանգ առնել, անշարժանալ մի կէ-



տի վրա: Հայոց մամուլն ու գրականութիւնը կանգնած, անշարժացած են, նրանք չեն համապատասխանում ժամանակի սահանջներին:

Եւ Արծրունին մասնացոյց է անում այն ցաւը, որից իսկապէս հիւժժվում էր մեր գրականութիւնը: Դա ինքնուրոյնութեան համարեա կատարեալ բացակայութիւնն էր: Մեր մամուլն էլ, մեր գրականութիւնն էլ ապրում էր թարգմանութիւններով:

Գրականութիւնը—ասում է նա—պէտք է դատարակիչ ազդեցութիւն ունենայ ժողովրդի վրա:

Նա կարող է այս ազդեցութեանը հասնել կամ ընդհանուր մարդկային գիտութեան մտքերը, սկիզբները եւ զաղափարները ժողովրդի մէջ տարածելով, կամ ազգին իւր կեանքի երևոյթները վիպասանութեան ձևով ներկայացնելով:

Առաջին դէպքում նա դրսից պէտք է մտցնի,—որովհետեւ մենք, Հայերս, գիտութեան ինքնակալ մշակութեանը ղեռ չենք հասել, երկրորդ դէպքում մեզ մնում է ինքնուրոյն տաղանդների ծննդին սպասել...

Յանկալի է մեր գրականութեան առաջադիմութեան համար ինչպէս ինքնուրոյն տաղանդների ծրնունդ, այնպէս եւ գիտնական մշտարտութիւնների (գիտութեան ամեն միւղերի) խղճմտաբար մշակութիւնների երևումն:

Գիտութիւնը մի ազգի համար չէ, նա ամենքին է պատկանում: Մենք, ուրեմն, կա-

րող ենք վերցնել գիտութիւնը ուրիշ ազգերից, կարող ենք մեր լեզուով մատչելի դարձնել նրան մեր ժողովրդին: Բայց ի՞նչպէս, թարգմանելով:—Ոչ: Մեր հասարակութիւնը ընթերցանութեան չէ ընտելացել: Այդ պատճառով մեզ չէ կարելի մեր միամիտ, ծոյլ և տգէտ ընթերցողին գիտնական աշխատանքների թարգմանութիւնները (թէև ժողովրդական լեզուով գրված) գրքի ձևով առաջարկել: Հարկաւոր է գիտնական գրվածքներին մի կարճ, ամիսփոխած ձևը տալ. այսինքն գիտնական յօդվածն երբ առաջարկել և ոչ թէ գրքերը: Այս է պատճառը որ օրագրութիւնը մինչև այժմ միակ ձև է, որ ընդունելութիւն կարող է դանել մեր ժողովրդի մէջ:

Սակայն մեր օրագրութիւնը միայն թարգմանութիւններով է անվում: Թարգմանում է նա գիտութիւնը, թարգմանում է վիպասանութիւնները: Բնական է սա, կարճ է այսպիսի ուղղութիւնը համապատասխանել այն հասարակական սլաշտօնին, որ ունի օրագրութիւնը: Ո՞րն է այդ սլաշտօնը:

—Օրագրութիւնը պէտք է մի կողմից ժողովրդի կեանքի արտայայտութիւն դառնայ, իսկ ուրիշ կողմից պէտք է դատարարակիչ, կրթող ազդեցութիւն ունենայ ընթերցողի վրա:



Եթէ մենք—շարունակում է Արծրունին—միշտ կրաւականանանք օտար ազգերի կեանքից առած վիպասանութիւնների կամ դիտնական յօղվածների թարգմանութեամբ, —մեր օրագրութիւնը կհասնէ, կարելի է, դաստիարակիչ ուղղութեանը, բայց նա ժողովրդի կեանքի արտայայտութիւնը չի կարողանայ լինել:

Մեր օրագիրների եւ լրագիրների խմբագրողները կարծում էին թէ իւրանց պարտաւորութիւնը կատարեցին, երբ մի թերթ կամ տետրակ առաջին երեսից սկսած մինչեւ վերջինը թարգմանութիւններով լցրած՝ ընթերցողին առաջարկել են...

Մեր երիտասարդները եւ օրիորդները կարծում են թէ մեծ օգուտ են բերում ազգին, երբ որ տարին երկու երեք անգամ մի որ եւ է օտար կեանքից առած, մեր պահանջմունքին անհամապատասխան, ձեռին ընկած առաջին վիպասանութեան թարգմանութիւնը օրագրի թերթերի մէջ հրատարակեցին:

Եւ այս անվանվում է ազգային օրագրութիւն:

Ողորմելի է օրագրութեան դրութիւնը: Պատճառները: Առաջին և գլխաւոր պատճառը Արծրունին տեսնում է մեր ժողովրդական կեանքին յատուկ պակասութեան մէջ: Դա այն է, որ հասարակական բոլոր գործերը բարերարութեան սկզբունքի վրա են հիմնված, և ոչ թէ ժողովրդի ինքնօգնութեան վրա: Ժողովուրդը կարգալու պահանջ չունի, բայց նրան պէտք է սովո-

րեցնել: Ո՞վ պիտի ժամանակ կորցնէ, այսպիսի պաշտօն յանձն առնելով:

Աղքատ մարդը, լինի նա նոյն իսկ լաւ կրթված, դարգացած, ընդունակ, չէ կարող օրագրութիւնը իր կեանքի միակ պարագմունքը ընտրել, որովհետեւ հասարակութիւնը չէ վարձատրում այդպիսի աշխատանքը: Ո՞վ է մընում:—Նա, ով աւելորդ ժամանակ ունի, այսինքն հարուստը: Եւ Արծրունին բացականչում է.

«Բնական է միթէ որ օրագրութեան մէջ ձայն ունեցող եւ հասարակական կարծիքին ուղղութիւն տվող մարդիկը,—միայն հարուստներ են: Իսկ այն մարդի ձայնը, որը ինքն աղքատ լինելով, ժողովրդական կեանքի թշվառութիւնները անձնական փորձից ճանաչում է, որը ստիպված է իւր հացը իւր ամենօրեայ աշխատանքով ճարել,—այն մարդի ձայնը, ասում եմ, կորչում է հասարակութեան համար:

Անբնական է, ի հարկէ, հասարակաց պաշտօնավարութիւնը կապված չը պիտի լինի այս կամ այն մարդու հարստութեան կամ աղքատութեան հետ: Հարուստը ժամավաճառութեան համար կարող է գրականութեան, մամուլի մէջ գործել: Բայց կարող են ասել ինքը, Արծրունին էլ հարուստ էր, և սակայն նա դարձաւ խմբագիր, հասարակական կարծիքին ուղղութիւն տուող: Մենք կասենք.



նախ և առաջ, մենք դեռ կը տեսնենք թէ որքան հարուստ էր Գրիգոր Արծրունին: Երկրորդ, հարուստ դասակարգից լինելով, նա այդ դասակարգի անհաշտ թշնամին էր և աղքատ ու աշխատաւոր դասակարգի անկեղծ բարեկամը, և երրորդ, նա ինքն էր աղքատ, սննապահով դասակարգից հանուամբ ընդունակ մարդիկ, որոնք պաշտպանում էին իրանց դասակարգի դատը և արշաւում էին հարուստ ու հարստահարող դասակարգի դէմ:

Այս է պատճառը — շարունակում է Արծրունին — որ մեր օրագրութիւնը այսքան թոյլ, անհամ, աննպատակ և բոլորովին միակողմանի երեւոյթ է:

Բարերարութեան սկզբին հաւատարիմ մեր հեղինակները, հիմնովելով երեւի ռուսական առածի վերա, կարծում են թէ «ընծայած ձիու ատամներին չեն նայում»: Այսպիսի առածին հետեւելով, կարելի է ի հարկէ ժողովրդին ամեն տեսակ անմարսելի զբրվածներ առաջարկել, և հեղինակ կամ թարգմանիչ դառնալ ոչ թէ միայն մասնաւոր մի գիտութեան հետ ծանօթ չլինելով, (որ անշուշտ հարկաւոր է օրագրութեանը իւրան նվիրող անձին), — բայց և ընդհանրաւոր կրթութեան սկիզբները անգամ չունենալով: Այնպէս որ մեր զրականութեան ասպարէզում զործող մարդիկը, ոչ թէ միայն չպատրաստված, այլ և չպատրաստվող զրոգներ են:

Իսկ պատրաստութիւն հարկաւոր է. և օրինաւոր օրագրութիւն այն ժամանակ կը հիմնովի, երբ

խմբագրութեան մէջ աշխատողներին ամեն մէկը գիտութեան մի որ և է ձեռքին մասնաւորապէս տեղեակ կը լինի:

Այժմ — այսպէս էր վերջացնում Արծրունին իր յօդուածը — դառնալով դէպի այն մեր հասարակական երեւոյթը, որը իւրան ազգային օրագրութեան փառաւոր անունը սեփականացրել է, ևս ստում եմ.

Բաւական չէ անդադար թարգմանութիւնները առաջարկել ազգային օրագրութիւնը հիմնելու համար: Բաւական չէ օրագրութեան մէջ ժողովրդի միայն հարուստ դասի ձայնը լսել տալ, ազգային կիանքի արտայայտութեան նշանակութեանը հասնելու համար:

Եւ դառնալով դէպի մեր զրոգները (օրիորդները և երիտասարդները), ևս ստում եմ.

Բաւական չէ առերես կրթութիւն ստանալուց յետոյ, ոչ մի գիտութեանը մասնաւորապէս տեղեակ չլինելով, քանի մի սովորած օտար լեզուները զործ դնել ժողովրդին անհասկանալի և մեր կեանքին օտար զրվածները թարգմանել, — հեղինակի պաշտօնը կատարելու համար:

Վերջապէս դառնալով դէպի ազգը, ևս ստում եմ.

Բաւական չէ դեռ ևս չհասած հասարակութեան նշանակութեանը, չհասկանալով փոխադարձութեան զազափարը, չբռնելով մտաւոր աշխատանքի օգուտը և ընթերցման պահանջմունքը, — բաւական չէ, ստում եմ, ողելորովի դատարկ ազգասիրական զրացմունքով, նվիրել այս կամ այն հեղինակին անհամ զովասանքները, — ազգային օրագրութիւնը հիմնելու և նպաստելու համար:



Ինչքը, Արծրունին էլ, մէկն էր այն հեղինակներէից, որոնց հայ ընթերցողները գովասանքներ էին նուիրում: Մենք տեսանք այդ գովասանքները: Դրանց Արծրունին անուանում էր «անհամ»: Երիտասարդ գրողը, ինչպէս երևում է այս վերաբերմունքից, գովասանք, գրական փառք, հեղինակութիւն չէր որոնում իր ժողովրդի մէջ: Փոխանակ «անհամ» գովասանքների, նա կը կամենար զբոսնել այդ ժողովրդի մէջ գիտակցութիւն, ընթերցասիրութիւն, առաջադիմութիւն, հասարակական պարտաճանաչութիւն: Նա աշխատանքի, անընդհատ աշխատանքի, օգտակարութեան մարդ էր, բէալիստ, անողոք պահանջող, ամեն բանի մէջ քննադատութիւն, վերլուծութիւն որոնող: Ի՞նչ օգուտ գովասանքներից: Արդեօք գովասանքները կարճէն փոխել իրողութիւնները:

19 դարի տրամաբանական (լօժիք) մտախորհումեան ամենայարմար ճանապարհը ոչ թէ վերացական ճարտարմտութիւններն են, այլ իրողութիւնների վերա հիմնված մտախորհումիւնը.— մի խօսքով ոչ թէ իրողութիւնը որպէս մտախորհումեան հետեւանք,— այլ ընդհակառակն՝ մտախորհումիւնը որպէս փաստի, իրողութեան հետեւանքը:

Այսպէս էր զրական մարդու դաւանանքը: Արծրունու այս խօսքերը մենք կարգում ենք

նրա մի ուրիշ յօդուածի մէջ, որի վերնագիրն է «Կ. Պօլսի երեկոններ»: Այս իսկ վերնագրով մի ոմն Միսմէր ֆրանսերէն լեզուով մի գիրք էր հրատարակել, որի մէջ ուղղում էր ապացուցանել թէ մահմեդականութիւնը քրիստոնէութիւնից ստոր աստիճանի վրա չէ կանգնած իբրև հասարակական ուսում: Եւ Արծրունին հեղքում էր այդ բանը, առաջնորդ ունենալով այն սկզբունքը թէ ամեն ինչ պէտք է հիմնված լինի իրական փաստերի և ոչ թէ վերացական դատողութիւնների վրա: Առաջին անգամն էր Արծրունին խօսում մահմեդականութեան մասին: Եւ նրան ղեկավարողը դատողութիւնները, վերակացան փաստաբանութիւնները չէն: Կայ մի անհերքելի իրողութիւն, ասում է նա. «այն է որ մինչև այժմ ոչ մի պետութիւն, նորա եվրոպական բառի նշանակութեամբ, չէ հիմնվել մահմեդականութիւն դաւանող ցեղերի մէջ: Մահմեդականութեան հետ միասին մենք միշտ անբաժանելի ենք գտնում օրէնքի բացակայութիւնը, կամապաշտութիւն, բռնաւորութիւն, տգիտութիւն, դերդաստանի և սեփականութեան բացակայութիւն և այլն»:

Իսկ ուրիշ կողմի իրողութիւններից տեսնում ենք որ պետութեան զարգացման մեծ աստիճանին հա-



սել են միայն քրիստոնէութիւնն զաւանդ ազգերը, մանաւանդ այն քրիստոնէական ազգերը, որոնք քրիստոնէութիւնն բառով հասկանում են եւ ընդունում են զկաւորապէս Քրիստոսի բուն, ճշմարիտ, վեհ ուսումը եւ նորա բուն խօսքերը, — այսինքն Աւետարանը:

Եւ չէ կարելի որ ուրիշ կերպով լինէր: Քրիստոնէութիւնը, կամ աւելի լաւ ասեմ Աւետարանը բովանդակում է իւր մէջ երեք մեծ գաղափարներ. ս է ր, հ ա լ ա ս ա ր ո լ թ ի լ ն եւ ա զ ա տ ո լ թ ի լ ն, որոնք ազգերի հասարակական կեանքում ծնել են ա շ խ ա տ ա ն ք, օ ր է ն ք եւ ա ն հ ա տ ո լ թ ի լ ն:

Բացի դաւանութեան անշարժութիւնից՝ մահմեդական ազգերի քաղաքական զարգացումը ուրիշ արգելքների էլ է հանդիպում: Եւ այդ արգելքների թւում Արծրունին զընում է ի միջի այլոց և այն, որ բոլոր մահմեդական ազգերը զործ են ածում արարական տեսերը, որոնք այնքան շատ անյարմարութիւններ ունեն:

Տրանսխայի հեղինակի տգիտութիւնը ցոյց տալու համար Արծրունին բերում է նրա այն անհեթեթ խօսքերը թէ «քսան տարի առաջ հայերը թիւբբեր էին թէ վարքով և թէ լեզուով. այժմ իրանց մէջ մտոյրած ազգային մի այբբուէնի շնորհով, նոքա ևս մշակում են իրանց լեզուն, նոքա ևս յոյների նման ձգտում են դէպի մեծ դ ա ղ ա փ ա ր ք»:

Մայրայեղութիւն էր, ի հարկէ, ասելը թէ հայկական այբուբենը նոր հնարած մի բան է: Բայց Արծրունին էլ ծայրայեղութեան մէջ էր ընկնում, ասելով զրա դէմ. «Ուրեմն հեղինակը չգիտէ, թէ մեր այժմեան օրագիրներում զործ ածված գրերը նոյն են, որոնք IV դարում մեր Գրիգոր Լուսաւորիչն էր զործածում իր աստուածաբանական գրվածներում»:

Այս յօդուածը տպվեց «Հայկական Աշխարհի» 1870 թ. Յուլիս-Օգոստոս միացած համարներում: Նոյն այդ համարների «Մեր Ներքին Գործեր» տեսութիւնը Ստ. Ստեփանէն վերջացնում է հետեւեալ տողերով.

Պուր լա բօն բուշ (քիմքերը բազրացնելու համար) հազորդում եմ անհ ընծերցօղիս, որ այս օրերըս եկաւ Թիֆլիս «Հայկական Աշխարհի» արդիւնաւոր աշխատակից եւ իմ յարգելի եւ սիրելի բարեկամ մեծ. զօկտօր Գր. Արծրունին եւ իւր հայրենիքում զործելու է այսուհետեւ մեր ճշմարտաւէր երիտասարդ գիտնականը:

Մենք էլ թողնենք առ ժամանակ Արծրունու գրուածքները և հետեւեալ այս իրողութեան, այսինքն հայրենիք վերադառնալու:



## V

Արծրունին Թիֆլիսում:—Տպաւորութիւններ:—Գործունեութիւն:—Յօդուածներ «Հայկական Աշխարհում»:—Արծրունու գերմանախորհրդներ:—Նապօլեոնի Փրանսիան եւ հանրապետական Փրանսիան:—Աշխարհաքարի նորածեղութիւնների հասարակական նշանակութիւն:—Սառնութիւն Սելտիանեի եւ Արծրունու մեջ:—Արծրունի՞ «Մեղուի» աշխատակից:—Հինգ յօդուած:—«Գիտնական անսխալականութիւն»:—«Ընթերցողը եւ գրողը»—միմեանց ըն մեղադրե՛նք:—Սունդուկեանցի «Պեպօն»:—Հայի յսկանիշներ:—Առաջին քննաժողովն Արծրունու դեմ:—Եզրակացութիւններ Արծրունու գրական գործունեութեան առաջին շրջանի մասին:



Ուղիղ եօթը տարի Գրիգոր Արծրունին բացակայ էր իր հայրենիքից: 1863 թւին Թիֆլիսից Մօսկվա դիմողը մի պատանի դիմնազիստ էր, օտար կրթութեան պտուղ, լըցւած մի արհամարհական հեղնանքով դէպի իր մայրենի գրականութիւնը: Եօթը տարի շարունակից այդ պատանու ուսանողական կեանքը: Այժմ, 1870-ի սեպտեմբերին, Թիֆլիս վերադարձողը Եւրօպայում պտտած, զա-

նազան համալսարաններում դիտութեան զանազան ճիւղերից դասախօսութիւններ լսած, գերմանական համալսարանը փիլիսոփայութեան դոկտորի աստիճանով վերջացրած 25-ամեայ երիտասարդ էր նա, բոլորովին կերպարանափոխված, իր աղղի մտաւոր շահերը իր համար նպատակ դարձրած, նրա առաջադիմութեան և վերածնութեան նուիրված: Այժմ նա մի անյայտ անճանաւորութիւն չէր այժմ նա անուն ունէր հայ ընթերցողների սահմանափակ շրջանում իբրև մտքեր յուղող, մտածել տուող հրապարակախօս: Նա, այն, արդէն հրապարակախօս էր որոշ ուղղութեամբ, աշխարհայեցողութիւններով, ամուր դաւանանքներով:

Մենք տեսանք որ օտար աշխարհի մէջ կազմակերպվեց, հասունացաւ այդ գրական ոյժը: Արծրունին հայրենիքից իր հետ տարած պատանեկական տպաւորութիւններն ու յիշողութիւններն ունէր իր առջև, երբ Եւրօպայի զանազան կողմերում նստած՝ քննադատում էր մեր կեանքի երևոյթները, մեր հասարակական պայմանները: Այժմ նա զալիս էր մեր ժողովրդի մէջ, այժմ նա ընկնում էր մեր իրականութեան անմիջական, զօրեղ աղղեցողութեան տակ: Եւ առաջին հարցը, որ ծագում է մեր մէջ այս բօլէին, այն



է թէ ինչ տպաւորութիւն գործեց երիտա-  
սարգ գրողի վրա մեր կեանքը, ինչ զգաց  
նա, անմիջապէս շփվելով մեր իրականու-  
թեան հետ: Վերադառնալով Թիֆլիս, նոր  
հէնց առաջին շաբաթներում, քննելով իր  
չըջապատը, իր տեսածներն ու լսածները,  
անշուշտ զբաղված պիտի լինէր մի շատ հե-  
տաքրքրական գործողութեամբ: Դա վերա-  
ստուգութիւնն էր: Արծրունին քննում ստու-  
գում էր թէ սրբան ինքը հեռուից ճիշտ է  
ըմբռնել մեր կարիքներն ու պակասութիւն-  
ները, սրբան ճիշտ կերպով է որոշել հասա-  
րակական ցաւերի դիպմանը:— Ի՞նչ էր ա-  
սում նրա այդ վերաստուգութիւնը:

Բարեբախտաբար, Արծրունին թողել է  
մեզ այս հարցերի պատասխանը, գրելով իր  
առաջին տպաւորութիւնները Թիֆլիս հաս-  
նելուց յետոյ: Այդ տպաւորութիւնները նա  
հրատարակեց «Հայկական Աշխարհի» խմբա-  
գրին ուղղած իր նամակի մէջ և նրանք այն-  
քան հետաքրքրական են, այնքան շատ բան  
են ասում մեր հրապարակախօսի առաջին  
քայլերի մասին, որ մենք կարևոր ենք հա-  
մարում բերել այստեղ ամբողջ նամակը:

Ան հասայ ես Թիֆլիս: Թոյլ տուեցէք ինձ,  
պ. խմբագրող, փոքրիկ եւ անկարգ այս նամակում

ներկայացնել Ձեզ առաջին օրերի տպաւորութիւն-  
ներս...

Մեծ ճանապարհորդութիւնից յետոյ, երբ մարդս  
ոչ իր պարսպմունքը դեռ օրինաւոր կերպով կար-  
գեց, ոչ ընտելացաւ կլիմային, եւ առհասարակ բոլոր  
նրա կեանքը դեռ եւս իր սովորական շաւղին չէ  
հետեւում,— նա առաջին օրերը, կամ դուցէ շաբաթ-  
ները (կարելի է եւ ամիսները) անգործութեան մէջ  
ստիպված է անցնել:

Պատելով թէ փողոցներում, տեսնելով այն, ինչ  
որ արժանի էր տեսնել քաղաքում, եւ թէ հին ծա-  
նօծներիս պատահեցի, թէ վերջապէս եւ նորերի հետ  
ծանօծացայ, թէ մեր նոր ծխական ուսումնարան-  
ներին այցելութիւն արեցի: Ի՞նչ փոփոխութիւններ  
կան մեր հայրենակիցների մտաւոր կեանքում. դէպի  
լա՞ւր կամ դէպի վատ են այդ փոփոխութիւնները...  
զժուար կը լինէր ինձ պատասխանել այս հար-  
ցերին:

Ինչից է բաղկացած մեր սուղ մտաւոր շրջանը:

— Հայկական թատրոն չկայ, հասարակական դա-  
սեր մեզանում դեռ եւս երբէք չեն եղել, կան եր-  
կու երեք օրագիրներ, կան ծխական ուսումնարան-  
ներ, Ներսիսեան դպրոց...

Ես թերթեցի «Արարատ», «Հայկական Աշխարհ»  
եւ «Մեղու Հ-ի», եւ այցելութիւն արեցի օրիոր-  
դական ծխական ուսումնարաններին, եւ խօսեցի  
Ներսիսեան դպրոցի քանի մի վարժապետների հետ:

.....

Եօսելով քանի մի անձների հետ եւ հարցրեցի,  
ինչի աղջիկների եւ տղաների ծխական ուսումնա-  
րանները բաժանված են միմեանցից, եւ սկսեցի  
ապացուցանել խառն դասատվութեան օգուտը:— Ինձ



պատասխանեցին թէ խառն դասատվութեան օգուտը ամենքը պարզ հասկանում են, բայց ոչ որ յանձն չէ առնում իրազործել խառն ուսումնարան մի, որովհետեւ այս տեսակ դասատվութիւնը համապատասխան չէ հասարակութեան մէջ ընդունված սովորութիւններին \*):

Պատելով փողոցներում, պատահում եմ հին ծանօթներից մինին, որը խօսակցութեան մէջ հարցնում է ինձ թէ ինչի գրում եմ ես... «մեզ, համալսարանում ուսում առածներին ձեր գրվածները ոչինչ նոր գաղափար չեն կարող ներկայացնել, իսկ ժողովուրդը հայերէն կարդալ չգիտէ»: Ես դժուարացայ որ եւ է պատասխան տալ այսպիսի հարցին, քաջ զգալով, որ ինձ ինքնիս բաւական պարզ չէ իմ պարապմունքիս նպատակը: Ես սկսեցի զննել շրջապատող հասարակական երեւոյթները եւ համեմատելով նոցա ինձ հետ,—համոզվեցայ թէ նորա եւս (թէ մարդիկ, թէ հիմնարկութիւնները) ինձ նման անորոշ դրութեան մէջ են...

Հեռու երկրից (Գերմանիայից) մեր երկրի վերաբերութեամբ յօդվածները տպելով, ես կարող էի

\*) Խառն ուսումնարան հիմնելու փորձը արեց արդէն պ. Մտեփանէն մի տարի առաջ Երկրորդ Մարիամեան Ուսումնարանում (Հավաքարում): Ուսումնարանի տեսչութիւնը մինչև այսօր ևս հրաւիրում է ծնօղներին, որ յանձնեն իւրանց տղաներն օբլիորդները հետ ուսում առնելու:

Ծան. Խմբ.

սկսել եւ թերի հայեացքներ ունենալ մեր ժողովրդի կեանքի, մեր հասարակական երեւոյթների մասին... Միավեցայ ես արդեօր կրկնելով թէ մեր հասարակական բոլոր յարաբերութիւնները կայացած են քերարութեան սկզբի եւ ոչ ինքնաօգնութեան զօրութեան վերա.—սխալվեցայ ես արդեօք յայտնելով թէ այն ժողովուրդը հասարակութեան անունին արժանի չէ, որը փոխադարձութեան տնտեսական դադափարի ըմբռնելուն դեռ եւս չէ հասել...

Եւ այս բոլոր ասածս կարող է արդեօք վերաբերել մեր հասարակութեանը, ունին արդեօք իմ մտքերս վերաբերութիւն մեր իրական կեանքին...

Գարձէք, խնդրեմ, մեր օրագիրների եւ լրագիրների խմբագրութիւնները եւ դուք այնտեղ կը տեղականաք, որ տպած նիւթերի մեծ մասը անվարձ են հրատարակվում, ուրեմն գրողները աւելորդ ժամանակ ունեցող մարդիկ են, ուրեմն կարողութիւն ունեցող, ունեւոր դասի ձայն է լսվում միայն օրագրութեան մէջ... ուստի մեր օրագրութիւնը ժողովրդի արտայայտութիւնը չլինելով, նորա կեանքը արվեստական է: Կարելի է արդեօք այսպիսի պարբերական հրատարակութիւններին երկար կեանք խոստանալ, կարելի է վերջապէս նորանից պահանջել գործի հասկացողութիւնը եւ ուրեմն հասարակութեան համար օգուտ սպասել:

Գնացէք ծխական ուսումնարանները, եւ դուք այնտեղ եւս մի եւ նոյն երեւոյթը կտեսնէք. պաշտօնները անվարձ են, վարժապետները կամ ծրի կամ այնպիսի չնչին ռոճկով դասեր են տալիս, որ երբէք չէք կարող յուսալ որ նորա այս պարապմունքով ասրիկ կարող են, ուրեմն զանց պէտք է առնէք հասարակութեան մէջ ծխական (քաղա-



բային եւ գիւղական) ուսումնարաններ լիարժեք ապետներ կազմվող դասը տեսնելու:

Այս հանգամանքները աչքի առաջ ունենալով, եզրափակում եմ որ օրագրութեան նման եւ ծխական ուսումնարանների զոյուծիւնն եւս արվեստական է եւ կլինի (ուրեմն եւ երկարատեւ չի լինի), մինչեւ որ փոխադարձութեան զաղափարը մեր ամեն հասարակական յարաբերութիւններում չիրագործվի:

Ինձ թւում է թէ ուսումնարանների կառավարութիւնները իրանց կրթողական ներգործութեանը մեծ հաւատ չեն ընծայում, — բայց կրկին շարունակում են իրանց գործունէութիւնը:

Ամեն տեսակ վարժապետների հետ խօսելով, ինձ երեւեց իբր թէ նորա հերքում են իրանց պարասպետների օգտաւէտ ազդեցութեան կարելութիւնը, — բայց կրկին շարունակում են դասատուութիւն անել...

Թերթելով մեր օրագիրները եւ զննելով նոցա ուղղութիւնը կամ խօսելով խմբագրողների հետ ես համոզվեցայ որ մեր պարբերական հրատարակութիւնների խմբագրութիւնները քիչ թէ շատ թերահաւատ են դէպի իրանց գրականական գործունէութեան պտղատու լինելը, — բայց կրկին շարունակում են խմբագրել...

Մեր օրագրութեան մէջ հրատարակվող նիւթերի ընթերցանութիւնը ինձ վերա այն տպաւորութիւնը թողեց իբր թէ հեղինակները (կամ աւելի լաւ ասեմ թարգմանիչները) իրանց մտաւոր ծննդի վերա իրանք կասկածով եւ երկբայութեամբ են նայում:

Արդեօք սոքա առանձնացած երեւոյթներ են, կամ մի խոր, հաստատ եւ քնական արմատ ունեն հասարակութեան մէջ... սոքա անցակոր դէպքեր են արդեօք, կամ մեր հասարակութեան ընդհանուր օ-

րէնք լինելով, կարող են հայ հասարակութեան յատկանիշ արտայայտութիւնը կոչվել...

Այսպէս ահա, տպաւորութիւնները վկայում էին որ նա չէր սխալվել, թէն շատ հետուից էր նայում մեր իրականութեան: Վերաստուգումը ապացուցեց որ նա ունի նուրբ հոտառութիւն, որ նա օղի մէջ է ըմբռնում հարցերն ու կարիքները:

Նա դեռ Գերմանիայում գիտէր որ մեզանում, իսկապէս, ոչինչ չը կայ, որ մեր հիմնարկութիւնները անբնական, խախտող գորութեան մէջ են, որ մեզ պակասում է հաւատ դէպի գործը, պակասում են հասարակական գիտակցութիւն, համբերաշխութիւն, աշխատանքի վարձատրութիւն: Թիֆլիսի իրականութիւնը, որ ի հարկէ, ամբողջ հայութեան մի հարազատ կտորն էր ներկայացնում, ցոյց էր տալիս որ նա շատ լաւ էր տեսնում արտասահմանից կեանքի անմիջական զննութիւնը երեսան է հանում մի մամուլ, որ ժողովրդի արտայայտութիւն չէ, թէն աշխատում է, բայց ինքն էլ չէ հաւատում իր կոչման, չը գիտէ թէ մի բան արդեօք կարողանում է անել, երեսան է հանում դպրոցներ ձրի ուսուցիչներով, թատրօնի մի այնպիսի գոյութիւն, որ աւելի շուտ ոչնչու-



Թիւն, չգոյութիւն է: Կան, այո՛, հիմնարկութիւններ, բայց չեղածի նման են, որովհետեւ չունեն մի առողջ, կենսունակ օրգանի անհրաժեշտ հանդամանքները: Ամեն ինչ ստուերային, ամեն ինչ բարերարութիւն, ազգասիրութիւն. չը կայ իրական օգտի, կեանքի անխուսափելի պահանջներին էապէս լրացում տալու գիտակցութիւնը: Մենք դեռ հասարակութիւն չենք՝ այս բառի ճիշտ իմաստով:

Այս միջավայրում, այսպիսի շրջապատի, «հասարակութեան» մէջ Արծրունին առաջին անգամ ենթարկվում է թեթեւ տատանումների. և երբ նրան հարցնում են թէ ինչո՞ւ և ո՞ւմ համար է նա դրում, չէ կարողանում չը դալ որ իր համար էլ բոլորովին պարզ չէ իր պարսպմունքի, այսինքն գրելու նպատակը: Այս հարցը կար նրա առջև և Գերմանիայում. բայց այնտեղ նա գիտէր, որ պէտք է գրել, պէտք է միշտ և անդադար կրկնել մտքերը, մինչև որ կըմբռնեն, որովհետև մեր ժողովուրդը իր արտութեան պատճառով դեռ երեխայ է: Թիֆլիսում, առաջին րօպէներում, նա մոռանում է այդ բանը, այնքան ցուրտ ու անհրապոյր էր մեր իրականութիւնը, այնքան նա դէն էր հրում ամեն մի գործունէութեան միտքը: Բայց դա նոր մարդու, միջավայրին անսովոր մարդու,

տատանումն է: Անցնում են խրանեցնող աղբեցութեան րօպէները և նա շարունակում է աշխատել:

Ուսում առած, իր յօդուածներով արդէն յայտնի դարձած երիտասարդի առջև բացվում է գործունէութեան ասպարէզ. նա մըտնում է դպրոցական աշխարհը, ստանձնում է Գայիանեան և Մարիամեան օրիորդաց դըպրոցների տեսչի պաշտօնակատարի պաշտօն: Բայց այդտեղ շատ քիչ է մնում. մանկավարժութիւնը նրան չէ հրապուրում. բայց դրա փոխարէն գրականութիւնը շարունակ գրաւած է նրան և նա Թիֆլիսում էլ սկսում է աշխատակցել «Հայկական Աշխարհին», տալով թէ յօդուածներ և թէ զանազան տեղեկութիւններ, գլխաւորապէս նոր գրքերի մասին, «Մեր Ներքին Գործեր» բաժնի համար: Յիշենք այստեղ և այն, որ Արծրունին միաժամանակ յօդուածներ ուղարկում էր և Կ. Պօլսի «Մասիս» լրագրին, ինչպէս և «Петербургскія Вѣдомости» լրագրին, ուր գործ էր անում «է Շատ-Իրաւացի» կեղծ անունը (Э Шатъ-Иравацц):

Հետեւեք «Հայկական Աշխարհում» տըպւիւմ յօդուածներին:

Նախ քան Թիֆլիս գալը Արծրունին ուղարկել էր Ստեփանէին «Ֆրանսիա և Գեր-



մանիա» յօգուածը, որի շարունակութիւնը տարկեց արդէն այն ժամանակ, երբ նա Թիֆլիսումն էր: Ֆրանս-պրուսական պատերազմի ժամանակն էր և համեմատութիւնը այդ երկու երկիրների մէջ անհրաժեշտութիւն էին դարձնում ահաւոր դէպքերը: Արծրունին համեմատում էր և, իբրև գերմանական ուսում ստացած մարդ, համակրութիւն էր յայտնում յաղթական Գերմանիային, որ այդ ժամանակ միացրեց իր անջատված մասերը, կազմեց մի մեծ պետութիւն: Պէտք է սակայն նկատել որ համակրութիւնը դէպի Գերմանիան հիմնված էր այն ատելութեան վրա, որ տածում էր Արծրունին դէպի Նապոլէօն երրորդի բռնակալութիւնը, այնպէս որ նրա համար անհամակրելի էր ոչ թէ ֆրանսիական ազգը, այլ կառավարութիւնը:

Այժմեան Ֆրանսիայի դրօշակը չէ նշանակում ինչպէս առաջ ազատութիւն, այլ նշանակում է բռնաւորութիւն, ասում է Արծրունին:— Սա այն դրօշակ է, որի օգնութեամբ Ֆրանսիա Մէքսիկայի հասարակապետութիւնը, ընդդէմ ժողովրդի կամքի, զօրով կայսրութեան ձեւին դարձրեց, և պատասխանատու դարձաւ Մէքսիկայի կայսրի դժբախտ մահին,—այն դրօշակը, որի հովանաւորութեան տակ այս օրերս Հռօմի ժողովը յանդիմեց աբեղային Աստուծու յատկութիւնը շնոր-

հել, Հռօմի պապի անսխալականութիւնը յայտնելով:

Եւ ահա այդ Ֆրանսիան կամենում էր արգելք դնել գերմանական տարրի քաղաքական ազատ զարգացման: Պատերազմը բաց արեց մի սեսարան, որի վրա զարմացած է ամբողջ աշխարհը, զարմացած է ինքը, Գերմանիան էլ. առաջնակարգ, զինուորական պետութիւնը յաղթվում է մի նորահաս, մինչև այդ թոյլ համարվող տարրից:

Մարդկութիւնը դեռ եւս այնքան տգէտ ու անզարգացած է, որ հարկաւոր էին այսպիսի յաղթութիւնները, այսպիսի ակներեւ ապացոյցները, որ ազգութիւնների մեծ մասը ծանաչեն գերմանական տարրի առաւելութիւնները:

Տգէտ ազգերի աչքում, որոնց կարգում պատիւ ունինք եւ մենք եւ զանազան ուրիշ ցեղերն եւս գտնվելու (մանաւանդ Թիւրքիայի վայրենի բռնաւորութեան տակ գտնվող օղորմելի ազգերը), տգէտ ազգերի աչքում, ասում եմ, միշտ առանձին նշանակութիւն է ստանում այն ազգը, որը պատերազմում յաղթող է եղել...

Եւ ինչ որ ոչ որ չէր սպասում, կատարվում է, գերմանացիները, բանաստեղծների, գիտնականների, մտածողների ազգը յաղթում է դօրեղ, երեւելի զինվորական ազգ մի:

Ֆրանսիայի համար այս օգտաւէտ է...

Բայց ով կարող էր իրան երեւակայել, որ Ֆրանսիան մինչեւ այս աստիճան փտել է Նապոլէօնի



անբարոյական, ամեն ազատութիւն, անհատութիւն ոչնչացնող կառավարութեան տակ: Յրանսիան այն աստիճանին ընկել է այս անընդունակ եւ անբարոյական կառավարութեան տակ, որ այժմ Գերմանիայի պատերազմը Յրանսիայի դէմ կարելի է անվանել ազատութեան պատերազմ ստրկութեան դէմ:

Ստեփանէն, տպագրելով այդ յօդուածները, յայտնեց որ ինքը համաձայն չէ Արծրունու մտքերի հետ: Եւ մի քանի խօսքով յայտնեց թէ ինչու չէ համաձայն: Սա առաջին և միակ դէպքն է, երբ «Հայկական Աշխարհի» խմբագիրը պատճառաբանում էր իր անհամաձայնութիւնը: Եւ այդ պատճառաբանութիւնը, պէտք է խոստովանել, բաւական թոյլ և անհամոզեցուցիչ էր: Ստեփանէն ասում էր թէ Յրանսիան եղել է ազատութեան և հաւասարութեան սկզբունքի քարոզիչը, բայց այդ բանը չէր ուրանում Արծրունին: Յրանսիայի այդ ժամանակվայ դրութիւնը Ստեփանէն համարում էր մի ժամանակաւոր խաւար, բայց հէնց Արծրունին էլ վերցնում էր նապօլէօնեան խաւար րէժիմի տակ փտած Յրանսիան. Արծրունու առաջ կանգնածը Ֆրանսիական ազգը չէր այնքան, որքան կառավարութիւնը:

Սակայն, մենք չենք ուզում ասել թէ

Արծրունին միանգամայն ճիշտ էր դատում: Հայրենասիրական բուն զգացմունքներով հրդեհված Գերմանիայում ապրող, գերմանական կրթութեամբ յափշտակված մի երիտասարդի համար ներելի էր վարակվել գերմանացիների հիացմունքով: Անուանել գերմանացիներին ազատութեան կռիւ մզող սարկութեան դէմ կարող էր, այն, Հոենոսի փերում, պատերազմական բեմից ոչ հեռու գտնվող գերմանական ուսանողը: Բայց դա դուրսէ ճիշտ էլ լինէր այն ժամանակ, երբ Նապօլէօնն էր Յրանսիայի տէրը: Նայում ենք այդ տողերի տակ դրած ամսաթիւն և արդարացնում ենք Արծրունուն, որովհետև նա դրել է այդ բանը օգոստոսի վերջերում, երբ դեռ Սեզան չը կար, երբ դեռ Նապօլէօնը պրուսացիների գերին չէր:

Բայց ահա կատարվում է անեղ դէպքը: Կայսրութիւնը ընկնում է Յրանսիայում, ժողովուրդը դիմում է հանրապետական կառավարութեան ձեին և զէնք է վերցնում իր հողը, իր տունը պաշտպանելու համար: Գերմանիան, սակայն, զէնքը ցած չէ դնում, թէև յայտարարել էր որ պատերազմում է Նապօլէօնի դէմ և ոչ թէ Ֆրանսիական ազգի դէմ: Եւ այնուհետև մենք տեսնում ենք համաշխարհային պատմութեան մէջ նմանը



չունեցող մի անուելի դրամա: Յաղթութիւններից յզլիացած Գերմանիան առաջ է տանում իր յաղթական արշաւանքը, սպանդանոց է դարձնում դժբախտ Փրանսիան, չքաշվելով նոյն իսկ այն հանդամանքից, որ իր կանօնաւոր, պողպատեայ պատեր ներկայացնող զօրքերի առջև կանգնած է ոչ թէ Ֆրանսիական զօրքը, այլ շտապով զինված ժողովուրդը... Այստեղ այլևս երկաթի և արեան կոյր պաշտամունքն է, այստեղ այլևս բխամարկեան հողին է, գլխելու, ստորացնելու, ոչնչացնելու այն հողին, որ գոռոզութեամբ մերժում էր հաշտութիւն կնքելու առաջարկութիւնները և կրակում էր Ֆրանսիական զիւղերը...

Ահա պատերազմի այս շրջանում էլ Գրիգոր Արծրունին, իբրև գերմանական ուսանող, շարունակում էր համակրել Գերմանիային: Հոկտեմբերին դրած իր վերջին յօդուածում նա քննադատում էր Ֆրանսիական հանրապետութիւնը և ասում էր որ այժմ էլ, երբ Փրանսիան հանրապետութիւն է, համակրել նրան նշանակում է հանրապետութիւն բառով յափշտակվել «առանց իրան բաւական աշխատանք տալու այս բառի ճիշտ նշանակութիւնը, նրա հասարակական պաշտօնը, մի ժողովրդի մէջ նորա իրադրման

հնարաւորութիւնը, մի խօսքով առանց դրական կերպով հասարակապետութեան... մի ժողովրդի մէջ դորձադրութեան բոլոր պայմանները քննելու...»:

Փրանսիական հանրապետութիւնն էլ, Արծրունու կարծիքով, մի անհամակրելի բան է:

Կարելի է արդեօր—հարցնում է նա—համակրել այն ազգին, որի բերանից մենք այս սկզբի թէև անդադար ներբողներ ենք լսում, որը իր պատմական ընթացքում քանի մի անգամ արդէն փորձել է յարմարեցնել այս զաղափարը իր քաղաքական կեանքին,—բայց որի երեւակայական փորձերի հետեւանքը եղել է միշտ առաւել խիստ եւ անտանելի բռնաւորութեան հպատակումն...

Մենք յետագայ ճշմարտութիւնը երբէք չպէտք է զաղարենք հասարակութեանը կրկնելու: Ինչքան ընդարձակ վիճում են, բազմամտում են մեր իրաւունքները, այնքան աւելանում են մեր պարտաւորութիւնները:

Նոր շնորհված... իրաւունքների իրան արժանի ցոյց տալը նշանակում է այն իրաւունքներին համապատասխան պարտաւորութիւնները կատարել կարողանալ:

Իսկ քաղաքական պարտաւորութիւնները ճշտութեամբ կատարել հեշտ բան չէ: Պէտք է պատրաստված լինել այս կամ այն պարտաւորութիւն կատարելու համար:

Ի՞նչ են Ֆրանսիայի հիմնարկութիւնները:



Եւ Արծրունին մի առ մի թւում է պակասութիւնները: Ֆրանսիան ընդհանուր ձայնատուութեան իրաւունք ունի, բայց քուէարկողները անդրադէտ են: Ազատ սահմանադրութիւն ունի նա, բայց բիւրօկրատիայի հայրենիք է և նրա պաշտօնականները տիրում են հասարակութեան, քաղաքացիների վրա: Գաւառները խեղդված են, ինքնուրոյնութիւնից զրկված, տիրում է կենտրօնը, Պարիզը կենտրօնացրել է ամեն ինչ իր մէջ: Ֆրանսիան ճհասարակապետութիւն լինելով, անհատութեան սկիզբ պէտք է պաշտպանէ, բայց միշտ տարել է կաթօլիկ մոլեռանդ հոգևորականութեան անսահման ազդեցութիւնը հասարակական կրթութեան վերա, այն հոգևորականութեան, որի նպատակն է անհատութիւնը սպանել:

Այս բոլորը ճիշտ է: Բայց միթէ հարցը այն մասին է թէ ինչ պակասութիւններ ունի մի վարչական սիստեմ: Եւ միթէ այդ կողմից Բիսմարկի Գերմանիան բոլորովին անբիծ էր: Միթէ Բիսմարկը պրուսական զինուորների հետ հաստատվել էր Վերսայլում այն նպատակով, որ վերացնէ անարդարութիւնները Ֆրանսիական վարչական կարգերի մէջ: Դէպքերը դեռ նոր էին խոշոր դրութիւններ ստեղծում: Դեռ յայտնի չէր թէ

ինչ պատիժ պիտի դառնայ միացած Գերմանիան քաղաքակիրթ աշխարհի համար, պաշտամունք դարձնելով զինուորական ոյժը՝ ստեղծելով ահռելի միլիտարիզմը: Գրիգոր Արծրունուն 1870-ին ներելի էր սխալվել: Եւ ժամանակի ընթացքում, երբ հետզհետէ լոյս աշխարհ եկան յաղթական Գերմանիայի յատկութիւնները, նա փոխեց իր հայեացքը: Նա տեսաւ որ Ֆրանսիական հանրապետութիւնը, որքան էլ պակասութիւն ունենար, ամենայարմար վարչական ձևն է, որ հնարաւորութիւն է տալիս ժողովրդին կռելի հասարակական ցաւերի դէմ, պաշտպանել ազատութիւնը և փտանդի ժամանակ արտայայտել հերոսական զաղափարականութիւն: Որքան էլ պակասաւոր, որքան էլ հիւանդոտ, բայց հանրապետութիւնը ժողովուրդն էր ներկայացնում և եթէ յանցանքները այնքան բարձրաձայն, հրապարակական դատապարտութեան էին ենթարկվում, պատժվում էին, պատճառն այն էր, որ կառավարչական ձևը հանրապետութիւն էր:

Այս բոլորը արձանագրեց Արծրունին յետոյ, իր հրապարակախօսական դործունէութեան ընթացքում: Բայց այստեղ չը մոռանանք բերել մի կտոր նրա «Ֆրանսիա և Գերմանիա» յօդուածներից: Այդ կտորը շօշափում է ֆը-



բանսխական և գերմանական կրթութեան արժանաւորութիւնները հարցը:

Բաղդի բերմամբ—ասում է Արծրունին—մեզ, Ռուսաստանի Հայերիս համար, որոնք աւելի առիթ ունինք հիմնաւոր դաստիարակվելու, քան թէ Թիւրքիայի մեր ողորմելի եղբայրները, պարզ էին միշտ, եւ պատերազմից առաջ եւս, Գերմանիայի արժանաւորութիւնները: «Ապացոյց, որ դուք, Ռուսաստանի Հայերը, աւելի զարգացած էք, քան թէ Թիւրքիայի մեր եղբայրները,—ասում էր ինձ անցեալ տարի Փարիզում Մխիթարեան Հայերից մինը,—որ դուք ձեր ուսման ասպարէզը Գերմանիա էք ընտրել, եւ մեծ մասամբ այնտեղ են գնում ձեր երիտասարդները ուսում առնելու,—իսկ Թիւրքիայի հպատակները միայն Փարիզ են գալիս, Ֆրանսիայի թեթեւ առերես կրթութիւնը նախապատելով»:

«Հայկական Աշխարհի» խմբագիրը հակառակ էր և այս մտքին. նա, ընդհակառակն, շատ լաւ էր համարում Ֆրանսիական կրթութիւնը: Եւ սակայն գերմանական կրթութեան գերազանցութիւնը ընդունվեց ամբողջ աշխարհի կողմից, որ վկայեց թէ պատերազմի մէջ Ֆրանսիային յաղթողը գերմանական ժողովրդական ուսուցիչն էր: Նըկատենք որ Ստեփանէն, ինչպէս կը տեսնենք, Արծրունուն հակառակվելու համար էր ոչինչ համարում գերմանական կրթութիւնը...

1871 թւականին Արծրունին «Հայկական Աշխարհում» տպագրեց երկու նոր յօդուած: Դրանցից առաջինը կոչվում է «Աշխարհաբարի նորաձեւութիւնների հասարակական նշանակութիւն»:

Վերնագիրը պարզ է և թիւրիմացութիւնների տեղիք չէ տալիս: Արծրունին այդ յօդուածում լեզուական-քերականական հարցեր չէր ձեռնում: Իր տեղում մենք տեսանք որ Արծրունին լեզուն նպատակ չէր համարում, այլ միջոց. նա ասում էր թէ ո՞ճը իր համար նշանակութիւն չունի, բաւական է որ ժողովուրդը կարգայ իր գրուածքը և հասկանայ: Այժմ էլ նա, թէև արդէն վարժվել էր հայերէնապիտութեան մէջ, չէր դալիս այս կամ այն կանօնները թելադրելու, այլ մեր լեզուի մէջ տեղի ունեցող նորաձեւութիւնների հասարակական նշանակութիւնն էր բացատրում: Լեզուն ժողովրդի արտայայտութիւնն է, և եթէ նա մտում է շարունակ անշարժ, խակ, անմշակ ու աղքատ, այդ արդէն նշան է որ հասարակութիւնը չէ զարգանում, որ նրա մէջ նորանոր պահանջներ չեն ծագում, որ նա էլ անշարժացած է:

Հայոց լեզուն այդպիսի անշարժութեան նշաններ չէ ցոյց տալիս: Եւ դրա ապացոյցը Արծրունու համար այն նորաձեւութիւններն



են, որ մտցրել է «Հայկական Աշխարհը»: Մենք խօսել ենք Ստեփանէի նորաձեռութիւնների մասին մանրամասն կերպով, գիտենք թէ որտեղից էին գալիս այդ նոր ձեերը: Արծրունին գործ չունի այդ հանգամանքի հետ. նա նոյն իսկ չէ էլ ուզում հաստատել որքան նպատակաշարմար, որքան կենսունակ ու հիմնաւոր են Ստեփանէի նորմութիւնները: Կան դրանք: Նշանակում է որ աշխարհաբար լեզուն ուզում է ժողովրդի և ժամանակի պահանջներին յարմարվել, ուզում է կենդանի ու ճկուն ձեեր իւրացնել: Եւ դա անհրաժեշտ է, դա խրախուսանքի և համակրութեան արժանի երևոյթ է:

Լեզուն պէտք է յղկել, մշակել: Բայց ում վրա է դրված այդ պարտքը: Ստեփանէն մի անհատ է, իսկ անհատը չէ կարող այդպիսի հարցերը լուծել: Գուցէ Ստեփանէն սխալվում է, գուցէ նրա նորաձեռութիւնները քրմածին են, չեն ընդունվի, կը կորչեն շուտով: Բայց այդ նորաձեռութիւնների ողին, ձգտումները հասարակական ուշադրաւ երեւոյթ են կազմում և նրանց պէտք է բաւարարութիւն տալ: Ուստի Արծրունին առաջարկում է ընտրել ձեռնհաս անձինքներից մի մնայուն մարմին, որ կը վճռէ լեզուական

հարցերը, ձեեր և կանօններ կը մշակէ մեր աշխարհաբարի համար:

Մենք հաղորդեցինք յօդուածի կմախքը, հիմնական միտքը: Բայց սա բաւական չէ: Պէտք է ծանօթանալ Արծրունու դատողութիւնների հետ, լօղիկայի ոյժի հետ: Այս յօդուածը նրա լաւագոյն գրուածքներից մէկն է, ուստի և մենք կը դիմենք Արծրունու սեփական խօսքերին.

Յիշում էք ինչպէս Թիֆլիսի Հայերը ման են գալիս փողոցներում... Ահա երկու վաճառական մայթով (տրօտուար) են անցնում իրանց առևտրական գործերի վերա խօսելով... Տեսէք ինչպէս նորա ծանրաբայլ կերպով են գնում, ինչպէս բարձրաձայն կանչում են խօսելու ժամանակ, ինչ շարժումներ են անում ձեռներով, ոտներով, երեսով... եւ ամէն մի բոլորակ քղանցքից քաշելով միմեանց կանգնեցնում են, մի որ եւ իցէ ամենահասարակ միտք մեկնելու համար: Յիշում եմ նմանապէս ինչպէս մեր ուսուցիչները չեն շտապում դաս տալու, ինչպէս գործ ունեցող մարդիկ չեն շտապում իրանց գործերը կատարելու, իսկ օրէջօր ձգում են նոցա:

Յիշում եմ ինչքան ժամանակ հարկաւոր է Հային մի ամենահասարակ միտք մեկնելու համար. ինչքան դատարկախօսութիւն, աւելորդաբանութիւն հարկաւոր է նորան, օրինակ, իր ծառային մի որ եւ է ամենահասարակ հրաման տալու համար...

Այս բոլոր երեւոյթների պատճառը ինչ է:

Մի կողմից ժողովրդի բնաւորութեան այսպիսի



արտայայտութիւնը յատուկ է ամեն հարաւային ազգերին, իսկ միւս կողմից այսպիսի երեւոյթը մեկնվում է մեր հասարակական դրոժեամբ:

Երկիրը երկար ժամանակ պատերազմական դրոժեան մէջ էր գտնվում. նորա հասարակական կեանքը չզարգացվեցաւ: Կովկասի բնակիչները այժմ միայն սկսում են շունչ քաշել, աշխատել, զարգանալ: Դեռ եւս ճանապարհներ եւ երկաթուղիներ չկան, արվեստագործութիւնը զարգացած չէ երկրում, վաճառականութիւնը աննշան աստիճանին հասաւ, ուսումնարանները բազմամիւլ չեն, ուսումնական կեանքը չկայ:

Այս պատճառով Կովկասի բնակիչները քիչ պահանջմունք ունին... Կովկասի բնակիչը աւելորդ ժամանակ ունի, կամ աւելի լաւ ասեմ նա չէ գնահատում ժամանակը:

Նա չէ շտապում գործել, գնալ, դալ, խօսել... Նա խօսում է գրեթէ երգելով...

Հին հայկական լեզու արտայայտութիւն է հին հայկական կրթութեան: Ինչպէս եւ բարձր վիճէր այն կրթութիւնը, նա դարձեալ միակողմանի էր, այն դարերի սուղ պահանջմունքին համապատասխան լինելով: Վերացական զաղափարները տիրապետում էին այն ժամանակի կեանքին եւ սորա հետեւանք է, որ մեր հին լեզուն չափազանց հարուստ է փոխաբերական ոճերով եւ խրթնութիւններով:

Իսկ դրական գիտութիւնները դեռ զարգացած չլինելով, մեր դրաքարի մէջ պակաս են բնական, հասարակական, քաղաքական եւ բազմաբովետեան գիտութիւններին վերաբերեալ ասացվածները:

Հին ազգերի կրթութիւնը զուրկ էր այն գիտու-

թիւններից, որոնք արդեան հասարակական կեանքում ամենանշանաւոր դեր են խաղում:

Լեզուն արտայայտութիւն է հասարակական կեանքի:

... Մեր աղքատ, անտաշ աշխարհաբարը նմանապէս արդիւնք է մեր աղքատ հասարակական կեանքի:

Մի ազգի հասարակական կեանքի զարգացման ժամանակ, զարգանում է եւ նորա լեզուն:

Երբ ազգի մտաւոր եւ գիտնական կեանքը դեռ զարգացած չէ, նորան պակաս են ճիշդ ասացվածները: Երբ ոչ գիտնական, ոչ արվեստագործական, ոչ առեւտրական, ոչ ընկերական եւ հասարակական կեանքը ազգի մէջ զարգացման բարձր աստիճանին չեն հասել, — մարդիկ աւելորդ ժամանակ ունին, չեն գնահատում ժամանակը, չեն շտապում ապրել, գործել, խօսել, կենսական յարաբերութիւններ կատարել, — եւ լեզուն եւս անշարժութեան այս դրոժեանը ենթարկվելով, ոչ թէ միայն ասացվածների եւ ոճերի պակասութիւն ունի, բայց եւ չափազանց ծանր է, անընդունակ է հասարակական զաղափարներ յայտնելու, պարբերութիւնների դասաւորութիւնը չափազանց նահապետական է, լեզւի կազմութեան մէջ հնչիւնների աւելորդութիւն կայ, բառերը երկար են, այբուբէնի մէջ նման տառերի առատութիւն կայ...

Մենք տեսնում ենք, որ մի ազգի հասարակական զարգացման ժամանակ փոխվում են եւ այն ազգի բարք ու վարքը... Եւ այս երեւոյթը ազդեցութիւն ունի եւ լեզւի զարգացման վերա... մարդիկը աւելի գործունեայ են դառնում, առաւել գնահատում են ժամանակը, աւելի կարճ, պարզ եւ ճիշդ պարբերութիւնների կազմութեանը ընտելանում են,



սակաւ են խօսում ժամանակի պակասութեան պատճառով կամ բառերը արագ արտաբերելու պատճառով հնչւնների մի քանիսները կամ ամենեւին կորչում են, կամ երկու երեք նոյնանման հնչւնները մի հնչւնին միանում են: Ուղղագրութիւնը փոփոխում է, ինչպէս, օրինակ, ֆրանսիական լեզվի մէջ շարունակ էր փոխվում, կարծանում, հեշտանում, — կամ եթէ միեւնոյն է մնում ժամանակով տառերի մի մասը բառերի մէջ չէ արտասանվում...

Հերբել չէ կարելի, որ մեր ազգը քանի մի ժամանակից սկսած հասարակապէս զարգանում է, մանաւանդ Ռուսա-Հայաստանի եւ Վրաստանի մէջ, որտեղ ուսական տարրը եվրոպական կրթութեան միջնորդ է դարձել:

Հերբել չէ կարելի նմանապէս, որ արդէն «Հիւսիսափայլի» գործունէութիւնը մեր լեզվին մեծ առաջադիմութիւն անել տուեց մշակելով աշխարհաբարի ձեւերը եւ մտցնելով բազմաթիւ ասացվածները:

Եւ եթէ նա մի քանի բաների մէջ, օրինակ երկար, չափազանց բաղադրեալ բառերը մտցնելով, որոնց գործածութեան դէմ իրաւունքով յարձակում է Հ. Գարբիէլ Այվազեանը («Կանգարմունք Հայկաբանութեան»), կարելի է անհետեւաբար էր վարվում, — «Հիւսիսափայլը» այս դէպքում ընդհանուր մարդկային յատկութեանը ենթարկվեցաւ:

... Նպատակ չունենալով մի լեզուագիտական քննութիւն առաջարկել, այլ հասարակական կողմից միայն նայելով խնդրի վերա, — ես չեմ կարող պ. Ստեփանէի նորածեւութիւնների արժանաւորութիւնները կամ պակասութիւնները մի առ մի քննել:

Երկուսից մէկը, կամ հայկական լեզուն անքնդունակ է զարգանալ հասարակական պահանջումներ

համեմատ, եւ ուրեմն ժամանակով բոլորովին չի գործածվի երկրի մէջ, — կամ եթէ կշարունակէ գործածվել Հայերի հասարակական յարաբերութիւններում, նա պարտաւորված կլինի մեծ փոփոխութիւններին ենթարկվել...

Մի լեզվի գոյութիւնը եւ կռիւի համար հարկաւոր են աջողակ հանգամանքը եւ պայմանները...

Մեր լեզու հասարակացնելու առաջին պայմաններից մէկը պէտք է լինի գիտնական ասացվածներով հարստացնելը: Բայց պակաս նշանակութիւն չպէտք է ունենան նոր գործածութիւնը հեշտացնելու, փորձերը: Այս կողմից նշանաւոր են պ. Ստեփանէի ջանքերը:

Պ. Ստեփանէն, զուցէ եւ անհետեւաբար վարվելով, առաջինն է եղել, որը ըմբռնեց (կարելի է եւ ներքին զգացմունքով, բնական ազդմամբ, ինստինկտ) ժողովրդական, աշխարհաբար լեզվի պահանջումները ազատվել ամեն տեսակ աւելորդութիւններից, հասարակ, ամենօրեայ, հասարակական գործածութեանը հասանելի դառնալու համար, — աշխատեց դարման տալ այս պահանջումներին:

Նորա ջանքը եւ ձգտումը մի խօսքով կարող են սահմանվել, — հ ա մ ա ո ս տ ե լ...

Այս է պատճառը որ պ. Ստեփանէն ուղղագրութիւնը փոխել փորձեց, դուրս ձգելով այն տառերը, որոնք բառերի վերջերում չեն արտասանվում, — աշխատեց պակասեցնել տառերի թիւը, որոնք մի եւ նոյն կամ նոյնանման կերպով հնչվում են...

Կարելի է պ. Ստեփանէն անհետեւաբար էր վարվում, կարելի է նա շատ բաներում սխալվեցաւ, — կարելի է նորանից առաջարկված լեզվի փոփոխութիւններից շատ փոքր թիւը կընդունվի, կարելի է



երբէք չի ընդունվի ոչ մէկը,—բայց այնու ամենայնիւ նորանից առաջարկված նորածեւութիւնները ժամանակի նշան են, ժողովրդի կենսական պահանջմունքի արտայայտութիւն են:

Հասարակական կեանքի այդքան առաջադիմութիւնը կանչում է դէպի մի հնացած ազգը եւ դէպի նորա դասական, փառաւոր, բայց այժմեան կեանքի պահանջմունքին անհամապատասխան լեզու աւերակները. «Կամ պէտք է անհետանանք, կամ հիմքից պէտք է փոխվենք...»:

Բայց ո՞րքան եւ ի՞նչ պէտք...

Ահա մի խնդիր, որը անզօր է լուծել մի մարդի ամբողջ կեանքը, մի անձի աշխատանքը...

Այս խնդիրը պէտք է լուծէ ժամանակը եւ ժողովրդի գործնական անդադար լեզու մշակութիւնը:

Բայց եւ առանձին, մասնաւոր անձի այսպիսի նորածեւութիւնները չպէտք է արհամարհենք: Նորածէն անզործադրելի լինէին, դարձեալ մեծ նշանակութիւն ունին որպէս առաջադիմութեան եւ վերանորոգման համար խթան, որպէս բողոք անշարժութեան դէմ...

Վերջացնում եմ մի առաջարկութեամբ.

Աշխարհաբարը կարօտ է վերանորոգմանը. այսպիսի աշխատանքը վեր է մի անձի զօրութիւններից: Հասարակութենից ենք սպասում որ նա, հասկանալով այս ճշմարտութիւնը, աշխատէ հայկական լեզուագիտական պարբերական ժողովները հիմնել, որոնց միջոցով կարողանան մշակվել նոր լեզուի ձեւերը:

Ժողովին կմասնակցեն հայկական գիտնականները, աշխարհաբար կամ գրաբար լեզուով դիրք հրատարա-

կողները, հայկական օրագիրների եւ լրագիրների ներկայացուցիչները,—Վէնէցիայից սկսած մինչեւ Թիֆլիս,—ուսուցիչները եւ այլն:

Հասարակութենից ենք սպասում, որ նորա մէջից չորս, հինգ անդամներից մի մշտակայ մասնագործ (կօմիտէ) կազմվէր, որի պաշտօն կլինի տարին կամ երկու տարին մի անգամ (ինչպէս որ յարմար կլինի եւ վճռած կլինի առաջին ժողովից) հրաւիրել հայ գիտնականները եւ զբաղէտները մօտ ու հեռու երկիրներից, նշանակված ժամանակին զալ, մասնակցել ժողովին, որի նիստերը միանգամ Թիֆլիս, միանգամ Կ. Պօլիս, միանգամ Երեւան եւ այլն կարող են լինել:

Մասնաժողովի նպատակը եւ պաշտօնը ժողովի նիստերի բացակայութեան ժամանակ, կարող են սահմանվիլ եւ հաստատվիլ ժողովրդի վճռով:

Այս յօդուածն էլ Գրիգոր Արծրունու արտասահմանեան զբուսածըներից էր և նրա տակ գրված է՝ «Հէյդիբէրգ, 1870»: Մենք ուզում ենք մատնանիշ անել և այն հանգամանքը, որ Արծրունին անդադար ուսումնասիրում էր մեր գրականութիւնը. այս յօդուածի մէջ նա վկայութիւն է բերում Հ. Այտնեանի «Քննական Գերականութիւնից», իսկ յօդուածի ճակատին գրել է Ստեփանոս Նազարեանցի «Փորձական Հոգեբանութեան» առաջարանից հետեւալ տողերը. «Դիւրին ևս է յարուցանել զմեռեալս ի գերեզմանաց. քան



թէ միջնորդութեամբ հնոյն լեզուի զնորն լուսաւորել զժողովուրդ»:

1871 թուականն է, «Հայկական Աշխարհի» վերջին տարին: Ամիսներ է անցկացրել Արծրունին իր հայրենիքում, բայց ընթացիկ հարցերի մասին ոչինչ չէ գրում, եթէ չը յիշենք մատենագրական մի քանի տեղեկութիւնները «Մեր ներքին Գործերի» մէջ: Նրա վերջին յօդուածը, որ տպուեց Ստեփանէի ամսագրում, «Աշխատանքի Բաժանութիւն» վերնագիրն է կրում: Դրա մասին մեր ասելիքը շատ քիչ կը լինի, որովհետեւ դա պարզապէս մի դաս է քաղաքատնտեսութիւնից և չէ պարունակում իր մէջ հայկական կեանքի երևոյթների քննութիւն: Զարգացնելով այն միտքը թէ աշխատանքի բաժանութիւնը անհրաժեշտութիւն է դառնում այնտեղ, ուր հասարակութիւնը զարգանում է, բարդ պահանջների տէր է դառնում, Արծրունին ասում է որ մասնագէտները հարկաւոր են առաջադիմութեան համար, բայց ոչ չոր ուցամար, իրանց գործի մէջ միայն հատուցութիւններ ձեռք բերած մասնագէտներ, այլ ընդհանրապէս լաւ զարգացած, բազմակողմանի կրթութիւն ստացած մասնագէտներ:

Հարկաւոր ենք համարում ծանօթացնել այդ յօդուածի մի ուրիշ մտքի հետ էլ: Դաս-

տիարակութեան հարցերի մէջ, ինչպէս տեսանք Արծրունու առաջին գրութիւններից, կարևորութիւն էր տրվում երեխայի անհատական յատկութիւններին. Արծրունին պահանջում էր որ կրթութիւնը յարմարեցնվի երեխայի անհատական յատկութիւններին, որ նա զարգացնէ աշակերտի ընդունակութիւնները: Նոյն սկզբունքը նա այստեղ գործադրում է և ազգերի վերաբերմամբ, որովհետեւ ազգերն էլ անհատներ են մարդկութեան մէջ: Նա ասում է.

Ինչպէս մանկավարժութեան խնդիրը պէտք է լինի գտնել, յարուցանել եւ զարգացնել երեխայի մէջ անհատական հակմունքը եւ ընդունակութիւնները, այնպէս եւ, աչքի առաջ ունենալով մարդկութեան մէջ աշխատանքի բաժանութեան օգուտը, քաղաքականութեան խնդիրը պէտք է լինի գտնել, յարուցանել եւ զարգացնել մի ազգի մէջ եւս նորան յատուկ այնպիսի կողմը, որ նորա հոգեւոր եւ տնտեսական կեանքում արդիւնաւոր գործիչ կարողանար դառնալ:

Վերջինն է այս յօդուածը, բայց վերջին «Հայկական Աշխարհի» մէջ: Ասացինք որ Արծրունին «Հայկական Աշխարհում» չէր արձարժում մեր ընթացիկ կեանքի հարցերը: Բայց սա չէ նշանակում թէ նա միանշա՛մայն անտարբեր հանդիսատես էր թիֆլիսի



մէջ: 1871 թւականի առաջին կիսամեակում նա, համարեա դադարեցնելով իր աշխատակցութիւնը «Հայկական Աշխարհին», սկսում է գրել «Մեղուի» մէջ: Այս շարաթաթերթում Արծրունին ոչինչ չէր գրել երկու տարի (1869 և 1870 թւականներին), այժմ նա յանկարծ սկսեց աշխատակցել «Մեղուին» և մի շարք յօդուածներ տուեց: Ի՞նչ էր պատահել:

Դժբախտաբար, չը գիտենք: Մի բան միայն նկատում ենք—սառնութիւն Արծրունու և Ստեփանէի մէջ: Ուշադրութեան արժանի հանդամանք է, որ Արծրունին, Թիֆլիս գալուց յետոյ, ոչինչ ուշադրութիւն չը դարձրեց այն մշտական բանակուի վրա, որ տեղի ունէր «Հայկական Աշխարհի» և «Մեղուի» մէջ: Ստեփանէն համարեա ամեն ամիս յարձակվում էր «Մեղուի» վրա, բանակուի էր մըղում խիստ լեղուով, կրքոտ էր, անխնայ: «Մեղուն» էլ իր կողմից յետ չէր մնում. նա լցնում էր իր էջերը Ստեփանէի անձնաւորութեան և մտքերի դէմ ուղղած յօդուածներով, նա համարեա միայն «Հայկական Աշխարհով» էր ասլրուած: Մեր աղքատիկ մամուլը միայն այդ երկու ներկայացուցիչներն ունէր Թիֆլիսում և գրանց անվերջ կռիւնները չէին կարող աչքի ընկնող երևոյթ չը կաղ-

մել: Արծրունին, որ ստեղծված էր կուլի համար, բողբոջին հետու պահվեց, ոչ մի խօսք չասաց: Ինչո՞ւ: Արդեօք այն պատճառով, որ բանակուիւր Ստեփանէի և Սիմէօնեանցի մէջ գլխաւորապէս մանր-մունր, անձնական հարցերի շուրջն էր պտտում, չէր շօշափում սկզբունքների, հիմնական աշխարհայեցողութիւնների հարցեր: Ըստ երևոյթին, Արծրունին պիտի Ստեփանէի կողմնակիցը լինէր, որովհետև «Հայկական Աշխարհը», յամենայն դէպս, «Մեղու» չէր: Բայց իրողութիւնն այն է, որ բանակուի ամենակատաղի ժամանակը, երբ «Հայկական Աշխարհը» միւս կողմից օր օրի վրա նիհարանում, մաշվում էր և ստիպված էր իր էջերը կրօնի դասերով լրցնել, Արծրունին սկսում է գրել «Մեղուի» մէջ, այսինքն աւելի Սիմէօնեանցի կողմը ուժեղացնել:

Չենք կարողանում ճշտութեամբ որոշել այս իրողութեան պատճառը: Սկզբունքների, ուղղութեան ոչինչ հարց չէ կարող լինել, որովհետև Արծրունին «Մեղուի» մէջն էլ նոյնն էր, ինչ «Հայկական Աշխարհի» մէջ և Պետրոս Սիմէօնեանցի հիւրասիրութիւնն ընդունել Արծրունու համար չէր նշանակում մազի չափ շեղվել իր դաւանանքներից: Մենք տրամադիր ենք բացատրել այս երևոյթը ա-



ւելի անձնական յարաբերութիւններով: Գուցէ շատ բան հասկանալի կը դառնայ, եթէ ի նկատի առնենք հետեւեալ հանգամանքը:

Ստեփանէն հիմնեց Թիֆլիսում Մարիամեան օրիորդական դպրոցը և իր ամբողջ ոյժերը նուիրեց նրան: «Հայկական Աշխարհը» այդ դպրոցի օրգանն էր, նրան փառաբանողը, նրա կեանքի իւրաքանչիւր, նոյն իսկ ամենահասարակ զէպքերը նկարագրողը: Բանը այն տեղին էր հասնում, որ 1869 թւի վերջում Ստեփանէն յայտարարում էր թէ «Հայկական Աշխարհի» բաժանորդագրութիւնը այնքան լաւ է, որ նա եկող տարին նոյն իսկ արդիւնք էլ է սպասում, բայց այդ եկամուտը իր գրպանում չը պիտի դնէ, այլ պիտի յատկացնէ Մարիամեան դպրոցին:

Իր ձեռքի գործը այդպիսի եռանդով, ինքնահաւանութեամբ պաշտպանող Ստեփանէն 1869 թւականին տեսնում է, որ մի քանի մարդիկ, որոնց մէջ էր և Սիմէօնեանցը, հիմնում են մինոր օրիորդական դպրոց, Գայրանեան անունով: Նախանձոտ ծնողի անհամբերողութեամբ Ստեփանէն յարձակվում է այդ նոր հիմնարկութեան վրա, անուանում է նրան «Չգրաչէն», այսինքն իր ջգրու շինած: Բանակաւիւր այս առիթով սաստկանում է: Գրիգոր Արծրունին, արտասահմանից վերա-

դառնալուց յետոյ, ընդունում է այդ «Չգրաչէն» դպրոցի տեսչութեան պաշտօնը: Բաւական չէր այս հանգամանքը, որ սառնութիւն մանէր Ստեփանէի և Արծրունու յարաբերութիւնների մէջ:

Ենթադրութիւնների մէջ աւելի առաջ դրնալու նիւթեր չունենք: Բաւականանաք այսքանով և դիմենք Արծրունու յօդուածներին «Մեղուի» մէջ:

Դրանք թւով հինգ հատ են և ամենքի տակ գրված է Արծրունու կեղծ անունը — Ե ի ո Ր է: Երեքը գրված են թատրօնական ներկայացումների առիթով, իսկ երկուսը հասարակական-գրական ընդհանուր հարցեր են շօշափում: Բնոր այդ գրուածքների մէջ աւելի ու աւելի խիստ է նկատվում Արծրունու քննադատական-յարձակողական վերաբերմունքը դէպի հասարակութիւնը, մանաւնաւնդ դէպի վաճառական և ինտելիգենտ դասակարգը: Այսպէս, «Երկու ներկայացում» յօդուածը, տպված «Մեղուի» № 7-ի մէջ, նա սկսում է այսպիսի խօսքերով.

Պ. Ամերիկեանի \*) առաջին խօսքերը ծափա-

\*) Տաղանդաւոր դերասան, որ յետոյ «Մշակի» առաջին աշխատակիցներից մէկը և անդրանիկ ֆելիէտօնիստը դարձաւ:



հարուժիւնների արձագանք յարուցին... այդ ինչ է... մեր հասարակութիւնը իրան անպատվում է: Ի՞նչ— մենք այնքան թանկ վճարում ենք դերասանի նուազ ծառայութեանը,— նորա անշահասիրութիւնը, եռանդը, ճշմարիտ տաղանդը մենք ծափահարութիւններով ենք վարձատրում... այդ շատ շատ է:

Ո՞վ է եղել այն սուտ ասողը որ թատրոնը, որ բեմը ազդում է ժողովրդի վերայ... այդ սուտ է: Գերասանը ինքն իր ուրախութեան համար է ներկայացնում: Գերասանը անգործ մարդ է եւ հեղինակն եւս, որի սրտաշարժ գրուածը նա աշխատում է մեզ իր խաղով մեկնել, նմանապէս անգործ մարդ է: Վարձատրել դերասանները, ինչ հարկաւոր է,— նոցա համար վարձատրութիւն է եթէ հասարակութեան քանի մի անդամներս բարեհաճում ենք նոցա ներկայացմանը ներկայ գտնվելու...

Հայերը, որոնք մեծ մասով առեւտուրով են պարապում,— դրական ժողովուրդ են: Գործ, գործ, փող, առուտուր... Մենք հերքում ենք արհեստը, հերքում ենք որ նա մարդի բարոյական եւ մտաւոր զարգացման վերայ ազդեցութիւն ունի, մենք արհամարում ենք հեղինակը, որը երկար, թրտինքում աշխատում է տարիներով միտք մշակել, ձգտում է արդարութեանը, մենք ծիծաղում ենք դերասանի վերայ, որը կամենում է (այն եւս անվարձ) թարգման դառնալ հեղինակից մշակված մտքերի...

Բայց հայկական պակասութիւնների աւելի խիստ քննադատութիւն մենք գտնում ենք «Գիտնական անսխալականութիւն» յօդուածի մէջ, որի հետ պէտք է արդէն աւելի մանրամասն կերպով ծանօթանալ:

Երբ անցեալ տարի,— ասում է Արծրունին— կաթովիկ սուրբ հայրերը, զուամրվելով Հոռոմի մէջ, յայտնեցին իրանց ժողովի բերանով եւ հաստատեցին Պապի անսխալականութեան վարդապետութիւնը, ամբողջ Եւրոպան ծիծաղով պատասխանեց այդ անճոռնի վարդապետութեան յայտնութեանը:

Ինչո՞ւ է ծիծաղելի այդ վարդապետութիւնը: Երկար է բացատրում այդ բանը Արծրունին, բայց հետեւեալ կտորները այդ բացատրութեան էական կէտերն են.

Ոչ օրգանական եւ ոչ անօրգանական բնութեան մէջ չկայ անշարժութիւն:

Որտեղ որ նայենք, մենք ոչ մի տեղ ոչ բնութեան, ոչ մարդկային պատմութեան երեւոյթների, ոչ կենդանիների կազմակերպութեան, ոչ եւս անօրգանական (անշունչ) բնութեան, ոչ մարդի հոգեւոր կեանքի մէջ չենք պատահիլ կատարելատիպերի (կատարելագործութեան), բայց ամեն տեղ կնկատենք մշտնջենաւոր ձգտումն դէպի կատարելագործութիւնը:

Գիտութիւնը, երբէք կատարեալ չլինելով, միշտ ձգտում է դէպի կատարելագործութիւնը: Անսխալ կարող են լինել միայն կատարեալ գաղափարները, երեւոյթները: Բայց որովհետեւ կատարեալ բան չկայ ոչ մարդկութեան, ոչ բնութեան մէջ,— անսխալ իրանց յայտնող սկիզբները իրանք իրանց դատապարտում են անշարժութեան:

Կարծելով ինձ անսխալ, ես հերքում եմ իմ անծի համար լուսաւորվելու, առաջադիմութիւններ աւնելու, բարւոքելու ձգտելու պահանջմունքը եւ հար-



կաւորութիւնը, — ուրեմն ես հասած աստիճանի վերայ անշարժ եմ մնում:

Ճիշտ գիտութիւնը անդադար շարժումի մէջ է գտնվում:

Ճիշտ գիտութիւնը սովորեցնում է մեզ անխոնջ ինքնաքննութիւն:

Այս ընդունված միտք է, որ Հայերը երկպառակութիւն սիրող ժողովուրդ են, որ նորա զրկված են ընկերանալու ընդունակութիւնից, որ Հայերի այս յատկութիւնը մի քանիսների (պատմաբանների) կարծիքով նոցա պատմական ընթացքի ազդեցութեան հետեւանք է, կամ ուրիշների (աստուածաբանների) կարծիքով, երկնային անէծք է...

Եւրոպական կրթութեան մեծ արժանաւորութիւններից մէկը նորա ձգտումն է ամեն բանին, ամեն մի պակասութեանը դեղը (կամ միջոց) պոռելու...

Ցանկալի է որ, օրինակ առնելով եւրոպական ինքնաքննութեան ոգուց, մենք եւս մտածէինք հայկական տարրի մէջ այդ պակասութեան զոյւթեան պատմական պատճառների եւ նորան մեր մէջից վերցնելու հնարաւորութեան մասին:

... Մեր երիտասարդների մեծ մասի վարմունքի եւ զործուէութեան առաջնորդող սկիզբը անսխալականութիւնն է:

Ի՞նչ է սորա պատճառը:

Մեր երիտասարդները այնպիսի շրջաններում են մեծանում, դաստիարակվում եւ կրթվում, որտեղ անխոնջ աշխատանքի զաղափարը դեռ եւս չէ իրազործվել, որտեղ ճիշտ գիտութիւնները, որոնք միշտ խժան են անընդհատ աշխատանքի համար, դեռ եւս մտցրած չեն եւ որտեղ ուրեմն անյայտ է անդադար ձգտումն դէպի ինքնաքննութիւնը:

Ուշադրութիւն դարձրէք մեր հասարակական գործերի ընթացքի եւ նոցա մէջ մասնակցող անձերի վերայ (չեմ էլ խօսում ծերերի մասին), — եւ զուրկնկատէք, որ զործող անձերից ոչ մէկը չէ կամեում երբէք միւսին հասկանալ, չէ կարող երբէք միւսին զիջումներ անել:

Պատճառը շատ պարզ է:

Մեզանից ամեն մէկը անշարժ է, եւ եթէ կամենար եւս, չէ կարող փոխել իր կարծիքը, իր համոզմունքը, ուրիշ ուղղութիւն տալ իր մտախորհութեան ընթացքին:

Մեր սկզբնական դաստիարակութեան եւ բարձր կրթութեան մէջ սակաս է ճիշտ տարրը գիտութիւնների...

Թէեւ մենք տեսաբար հասկանայինք թէ հասարակութիւնը օրգանական կազմվածք է, որի գործիչներից ամեն մէկը նշանակված է մի առանձին դեր խաղալ, մի որոշ պաշտօն կատարել ընկերական եւ հասարակական կեանքում, — թէեւ տեսաբար համոզված եւս լինէինք, որ արձակ (absolu, абсолютизм) ճշմարտութիւն չկայ, եւ ճշմարտութիւնը վերաբերական լինելով պիտի կազմվի տարբեր, ծայրայեղ կարծիքներից, որոնք մէկը մէկին օգնելով, մէկը մէկին քննելով եւ հաւասարակշռելով, ծնում են մի միջակ երեւոյթ, որ կարող է (հասարակութեան կարծիք լինելով) միջակ ճշմարտութիւն կոչվել...

Մենք պէտք է համենք այն մտքին, որ մարդկային ոչ մի անհատը արհամարհելի չէ (եթէ նա անբնական չէ) ընդհանուր օգտի համար, երբ նա որ եւ իցէ աշխատանքի զօրութիւնն է ներկայեւ աշխարհակրթեան օրգանական ամբողջի



ամեն մի կազմող մասը անհրաժեշտ է... միայն թէ հասարակութեան գործիչներին ամեն մէկը չպիտի սխալվի իր պաշտօնի վերաբերութեամբ, եւ իր վերայ պիտի նայէ որպէս հասարակական ամբողջ մարմնի կազմակերպութեան մի փոքրիկ մասի վերայ:

Իսկ զարգացման այդպիսի աստիճանին հասնելու համար, մեզանից ամեն մէկին հարկաւոր է հասարակապէս զարգացած լինել:

Ինքնաքննութեանը հասնելու համար հարկաւոր է անհատին երբէք անշարժ չլինել:

Անդադար չաշխատելով, կամ զարգացման եւ մըտաւոր պարապմունքի մի նշանակված կէտին հասնելուց յետոյ անշարժ մնալով,—ուրեմն միջոց եւս չունենալով իր անձը անդադար քննութեան ենթարկելու,—մարդը բաւականանում է իր մտաւոր զարգացման աստիճանով, ուրեմն ինքնահաւան է դառնում: Վայ այն հիմնարկութիւններին եւ անհատներին, որոնք ինքնահաւանութեան եւ անսխալականութեան համարմունքին են հասնում...

Թող պապութեան ինքնահաւանութիւնը եւ ինքնապաշտութիւնը ծնի անսխալականութեան վարդապետութեան հրէշաւոր երեւոյթը,—բայց գիտութեան անկեղծ կուսակիցների համար անյարմար, հերքելի եւ դատապարտելի է թուում անսխալականութեան սկիզբը:

Թող մեր ծերերը եւ նոցա հետ եւս մեր նոր սերունդի երիտասարդների մեծ մասը բոլորովին անընդունակ լինելով անընդհատ աշխատանքի, անցնեն իրանց կեանքի մնացած տարիները անշարժութեան, անձնապաշտութեան, ինքնահաւանութեան ապարդիւն զպայմունքների մէջ, թող անսխալականութեան կուսակիցները դառնան... Մենք նոցա համա-

րում ենք հասարակութեան համար կորած մթերք...

Բայց աշխատենք ճիշտ գիտութիւնները եւ նոցանից մշակված մտախորհութեան եղանակը զոնէ ապաղայ սերունդի մէջ մտցնել:

Հետեւեալ յօդուածը, «Մէկ մէկին մեղադրում ենք» վերնագրով, մեր խղճուկ գրակա-նութեան ցաւերին է նուիրված գլխաւորապէս: Գրող ու ընթերցող փոխադարձաբար դժգոհ են իրարից, մեղանում գրական և կըրթական դործ է առաջանում, բայց դրա փոխարէն տեսնում ենք դանդաժներ, անվերջ դանդաժներ. միմեանց մեղադրում են,—և բանը դրանով էլ վերջանում է: Արժբանու աշխոյժ, համարեա վիպական պատմուածքի մէջ մեր կեանքի այդ ամենատխուր երևոյթներին մէկը, որ այսօր էլ կայ և ապահովապէս վաղն էլ կը շարունակվի, այսպէս է պատկերացած.

—Մի՞թէ դու «Մեղու», «Հայկական Աշխ.» կամ «Արարատը» չես կարդում, մի՞թէ հայերէն ոչ մի գիրք անգամ չես կարդում,—հարցրեցի ես մէկից...

—Է՛հ... բան չունես, պատասխանեց նա:

—Ի՞նչ է պատճառը որ չես հետաքրքրվում մեր գրականութեամբ:

—Գժուելի ես... գրականութեամբ հետաքրքրվիլը ինձ է... Արդեօք հայերէն կարդալու բան կ'սնյ, որ ինձ կարդալ ես առաջարկում... Լաւ չէ որ ազատ



ժամանակիցս օգուտ քաղեմ օտար մի լեզվով զբարած բան, օրագիր կամ գիրք կարգալու, քան թէ ձեր հայերէնը կարգամ... Բան չունես...

Ես լռեցի:

Նորերումս պատահում եմ մի պարոնին, որը անդովելի սովորութիւն ունի ժամանակ առ ժամանակ հայկական օրագրներում յօդվածներ տպելու:

— Պարոն, ասում եմ ես նորան, դուք հայերէն չգիտէք. կամ եթէ գիտէք եւս, ձեր ստեղծած հայերէնը, ինչքան որ կանոնաւոր ու ընտիր լինէր, ժողովրդի գիտեցած հայերէնը չէ, դուք ժողովրդի համար անմատչելի, անհասկանալի, շինծու ոճով էք գրում... Բացի սորանից դուք այնպիսի փիլիսոփայական, վերացական նիւթեր էք ընտրում, այնպիսի բարձր գաղափարներ էք յայտնում, որոնք ժողովուրդը մարտել չէ կարող: Ես գուցէ սխալվում եմ, բայց իմ կարծիքս է որ մեր գրողները եւ խմբագրողները չեն իմանում իրանց գրուածքներում ժողովրդի հասկացողութեան յարմարվիլ: Եւ այդ է պատճառը, որ մեր գրուածքը չեն կարդում:

— Ո՛չ, պատասխանեց ինքնակոչ հեղինակը, մեր գրականութեան թշուառ գրութեան պատճառը ժողովրդի սառնութիւնն է դէպի մեր աշխատանքը: Միջոց չունենալով լիապէս գրականութեանը նուիրվելու, ես ինչպէս կարող եմ յուսալ. որ երեւելի գրող դառնամ... Ես գրում եմ երբ աւելորդ ժամանակ եմ գտնում... Թող ժողովուրդը ծանաչէ մեր վաստակի գինը, թող վճարէ, վարձատրէ հեղինակի եւ խմբագրի աշխատանքը, — եւ այն ժամանակ մենք օրինաւոր յօդուածներ կառաջարկենք ընթերցողին... Ժողովուրդն է մեզաւոր որ մենք օրինաւոր լրագիր չունինք:

Ես կրկին լռեցի:

Այդ ինչ պատիժ է... Ժողովուրդը մեղադրում է հեղինակին, իսկ հեղինակը մեղադրում է ժողովրդին: Ո՞վ է արդար, ո՞վ է մեղաւոր:

Արժրուներն չէ լուծում այս հարցը: Եւ կարելի է լուծել նրան գրականապէս: Նա առաջ է դնում և բերում է մի այլ օրինակ: Աղքատը լաց է լինում թէ իր որդին անուսում է մնում, որովհետեւ հարուստը չէ կատարում իր պարտքը, դպրոցներ չէ բաց անում, աղքատների ուսման վարձը չէ տալիս: Դիմում էք հարուստին, և ահա նա էլ ասում է թէ ինքը շատ է տալիս, միայն ժողովուրդը ծոյլ է, անշնորհակալ է:

Հիմա ինչ անենք, — հարցնում է Արժրուներն:

Սպասենք որ ժողովուրդը հասկանալով ընթերցանութեան օգուտը վարձատրի հեղինակին եւ խմբագրին, կամ սպասենք որ անշահաւէր հեղինակը ու խմբագիրը վարձատրված չլինելով այնչափ զարգանան, որ հետաքրքրական, յարմար եւ օգտաւէտ գրուածքներ առաջարկեն ընթերցողներին:

Սպասենք որ ժողովուրդը ինքնաօգնութեան ըսկիզբը ըմբռնի, կամ սպասենք որ հարուստ դասը իրան նուիրէ ժողովրդական լուսաւորութեան հոգալու...

Ի՞նչ անենք:

Բաւական է մէկ մէկին մեղադրել:

Մի՞թէ չկայ մեր մէջ եռանդի, ազնուութեան,



դէպի առաջադիմութիւն սիրոյ, դէպի լոյս ձգտման նշոյլն էլ, որ բոլոր ազգի մէջ չի գտնուիլ զործունեայ մարդիկներ ընդ խումբ, որը յանձն առնէր կազմել մի գումար, եւ նորան շահեցնելով, կարողանար նպաստել գրականութեան զարգանալուն:

Միթէ չի գտնուիլ աշխատողներ մի խումբ, որը օգուտ քաղելով այն գումարից, հրատարակէր ինքնուրոյն ու թարգմանական գրուածքներ, կամ հիմնէր կամ օրինաւոր օրացիւր, որի աշխատակիցները վարձատրած լինելով, իրանց մտաւոր ոյժը լիապէս նուիրէին մեր նորահաս գրականութեան մշակելուն...

Հարցեր էին սրանք: Հարցեր, որոնք կեանքի իրականութեան չափ խոշոր էին. նրանք իրանց պատասխանին էին սպասում: Բայց ինչ պատասխան. մարդիկ չը կային, պակասութիւնը չէր ցաւեցնում, եռանդ չէր բորբոքում: Մեր մէջ եղած մարդկանց նկարագիրը ունինք նախընթաց յօդուածում. ինքնահաւան, անսխալական իրանց համարող մարդիկ, անշարժացած, առաջ դնալու, աշխատելու, կատարելագործվելու ոչինչ պահանջ չը դպացող: Ժամանակը չը կար դրանց համար. և սակայն նա ասում էր թէ չը կայ մի օրինաւոր օրագիր կամ լրագիր, խմբագիրը, գրողը չը գիտէ խօսել ժողովրդի հետ, նրան չեն հասկանում, նրանից խրանում են: Մնում էր որ կամ միանգամայն խլանայ ժամանակի ձայնը կամ դուրս դայ մի անհատ,

որ իր բարոյական ոյժով, իր անշէջ եռանդով և վառվառն տաղանդով կարողանայ իրագործել այն, ինչ սպասվում էր աշխատողների մի խմբից:

Աշխատող խումբը, որ նախաձեռնող հանդիսանար, որ գումար հաւաքէր՝ գրականութեան նուիրվելու համար, չը կար, դուրս չեկաւ մեր իրականութիւնից: Բայց կար անհատ և դա—ինքը, Արծրունին էր: Վերս բերած յօդուածի մեծագոյն մասը կարելի է համարել «Մշակի» կարասկետ, «Մշակի» նախնական յայտարարութիւն: Այդ խօսքերը ասել էր տալիս ինքը, կեանքը...

Կեանքի ուժեղ ազդեցութեան տակ է գրված և Արծրունու վերջին յօդուածը «Մեղուի» մէջ: Մեր խղճալի, արհամարհված գրականութեան համար ինչ սիրուն տօն էր 1870 թւականի ապրիլի 30-ը, երբ Թիֆլիսում առաջին անգամ հայկական բնով վրա ներկայացվեց Գաբրիէլ Սունդուկեանի «Պէպօն»: Այդ օրը երևան էր դալիս մի բոլորովին նոր երեոյթ, հայկական գեղարուեստը ցոյց էր տալիս թէ ինքը կայ, պիտի լինի, թէ հայ ժողովրդի համար լուսանում են նոր օրեր, երբ այդ ժողովուրդը կը սկսի յուզիլ լեզուով պատմել իր ցաւերն ու ուրախութիւնները, բայց անել իր հողեկան կարողու-



Թիւնները, իր սիրտը: Պէպօն, ժողովրդի ստեղծած հերոսը, իր վիթխարի հասակով, իր մաքուր, անբիծ սրտով, ժողովրդական գաղափարի հրաշալի տօնն էր այդ օրը դրել բեմի վրա: Եւ ահա ինչ տողեր է նա բեմից թելադրում մեր Նիորէին.

Հասարակութիւնը օրգանական մարմին է, որը կազմված է զանազան, մէկ մէկից տարբեր գործիչներէ (факторы): Մենք մինչեւ այժմ նայում էինք հասարակութեան վերայ, որպէս մի միակերպ մարմնի վերայ... Թէ հայը թէ օտարազգին հայի անունը տալով ներկայացնում էր իրան կամ մի հաստատոր հարուստ վաճառական, կամ մի ողորմելի մանրավաճառ: Ամբողջ ազգը կազմված էր վաճառականներից: Ժողովրդի մնացած գործիչները եւ տարրերը մենք չէինք արժանացնում մեր քննութեանը:

Հայը մի տգէտ եւ անկիրթ էակ է, որ թէեւ չափազանց շատ բնական խելք ունի, բայց որի համար նիւթական անկախութեանը հասնելու ոչ մի միջոց արհամարհելի չէ... Հայի ընտանեկան կեանքը խիստ է, բայց ոչ թէ գերմանական ընտանեկան կեանքի պէս խիստ, որտեղ թէ հայրը թէ մայրը եւ թէ երեխաները ծանաջում են իրանց իրաւունքները ու պարտաւորութիւնները, — ոչ — հայի ընտանեկան կեանքի խստութիւնը ծագում է միապետական մի սկիզբից: Հայը չզիտէ սէրը ինչ է նշանակում, նա պատկվում է առանց սիրելու: Ամուսին զառնալով նա կնոջ վերայ նայում է որպէս իր սեփականութեան վրայ, հայր դառնալով նա իր սեփականութիւն է համարում իր երեխաները: Մի կամք է

իշխում միայն ընտանիքի մէջ, — հօր կամքը, — մի համոզմունք ունի ընտանիքը, — հօր համոզմունքը, — մի խելք, — հօր խելքը:

Հայը հասարակական էակ չէ: Նորա համար հասարակութիւն չկայ, նա հայ է կանչում իրան միայն այն պատճառով որ նա հայ դաւանութեան է պատկանում: Նորա ամբողջ կեանքի եւ գործունէութեան առաջնորդող զգացմունքը ես ս կ ա ն ու թ իւ ն ն է:

Նա հասարակութեան համար չէ հողում, նա չզիտէ նուիրել հասարակութեանը իր բարոյական աշխատանքը: Նա հողում է իր անծի մասին, նա պարում է իր համար:

Ինչպէս հոգեւոր հանգստութեանը, կեանքի բաւականութեանը հասնելու համար նա իր ընտանիքի մէջ սպանում է կեանքը, ոչնչացնելով կնոջ եւ երեխաների անհատութիւնը, — այնպէս եւ նիւթական անկախութեանը հասնելու համար նա չէ վախենում իր նմանների իրաւունքները ոտնակոխ անելուց:

Այդ իմ նկարած տարրին պատկանում է Սունդուկեանցի Ա. ր ու թ իւ ն ը: Ուրեմն նա մեզ հին ծանօթ է, նա հայ է բուն բառի նշանակութեամբ:

Բայց ինչ ասեմ Պ է պ օ ի տիպի մասին: Ես միայն այսբան գիտեմ, որ նա մեր բեմի վերայ նոր երեւոյթ է...

Այդ նոր երեւոյթի յատկութիւնները Արծրունին մի առ մի պարզում է, համեմատելով Պէպօնին Արութիւնի հետ, վերլուծելով նրանց գաղափարները, ձգտումները, աշխարհայեցողութիւնները: Սակայն անպայման ազ-



նիւ Պէպօից աւելի Արծրունին լաւ տիպ է համարում Կակուլիին: Պէպօն այն պակասութիւնն ունի, որ իր քրոջ պատուի համար կրօնի մղելով հզօր Զիմզիմօյի դէմ, նա չէ տեսնում որ քոյրը այդ կուրից բախտաւոր լինել չէ կարող, քանի որ նա նշանված է մի երիտասարդի հետ, որ նրան չէ սիրում և պատրաստ է դէն գցել նրան, եթէ փող չը ստանայ: Սակայն Արծրունին իսկոյն աւելացնում է որ Պէպօն ժողովրդի որդի է և զործ չունի ժողովրդական հասկացողութիւնների լաւութիւնն ու վատութիւնը երևան հանելու հետ: Նա միայն պատուի և ազնուութեան ասպետ է:

Իր յօդուածը Արծրունին վերջացնում էր հետևեալ նկատողութեամբ.

Ներկայացումից յետոյ ես առիթ ունեցայ խօսակցութիւններ լսելու: Արուծիւնը Կիրակոսին նման է, ասում էր մէկը. ոչ, նա Վարկոսին նման է, պատասխանում էր միւսը եւ այլն:

Մի կողմից սա բնական է, որ ժողովրդական կեանքից առնված գրվածի մէջ ներկայացրած տպերը նմանութիւն ունին ծանօթ կենդանի անձների հետ. եթէ ոչ, պիէսան էլ կեանքանի ժողովրդական երեւոյթ մեզ չէր ներկայացնիր, — իսկ միւս կողմից ես ցաւելով մտածում եմ այս բանի վերայ թէ որքան... եւ անզարգացած է մեր հասարակութիւնը (մինչև անդամ հասարակութեան բարձր դասը) որ

նորան այնքան չէ հետաքրքրում գրուածի գաղափարը, ինչքան այս ինչ մարդի անձնականութիւնը...:

Ափսոս որ հասարակութիւնը փոխանակ հեղինակի գաղափարը քննելու եւ ըմբռնելու, նայում է նորա ստեղծուածին, որպէս մի որ եւ է անձնաւորութիւնը ներկայացնելու միջոցի վերայ:

«Պէպօն», անկասկած, մի գրական երևոյթ էր: Բայց ինչ աւելացրեց այդ երեւոյթը մեր գրականութեան մէջ: Բացի Արծրունու այս յօդուածից մենք չենք գտնում մի այլ գրքուածք, որ նուիրված լինէր նրան: Տաղանդը արծարծում էր կենսական կարևոր հարցեր: Եւ եթէ մեզանում լինէին աշխոյժ, տպաւորվող, հասկացող մարդիկ, «Պէպօն» հէնց իր առաջին ներկայացման օրից կը դառնար մի ամբողջ շարժման գրգիռ: Բայց լուռ ու մեռած էր հայկական միաբը: Եւ միայն Արծրունին ցոյց տուեց թէ որքան զգայուն է, որքան ուշադիր դէպի հասարակական հարցերը: Տաղանդաւոր գրուածքը ուժգին թափ հաղորդեց նրա գրչին և նա գրեց մէկը իր այն խիստ յօդուածներից, որոնց տեղը ապագայում «Մշակը» պիտի լինէր: Այդ զուտ մշակական գրուածքի տեղը այժմ «Մեղուն» էր, այն «Մեղուն», որ յետոյ ահագին վայնասուններ էր բարձրացնում Արծրունու



այսպիսի իսկ խիստ ու անողորմ մտրակումների համար:

Նշանները արդէն երևում էին. գալիս էր խիստ քննադատող խօսքը, անխնայ մերկացումը: Փոխվում էր սերունդը: Ո՛րպիսի տարբերութիւն եղած գործիչների և այս նոր մարդու մէջ: Ստեփանէն շարունակ կրկնում էր. «ազնիւ հայեր, խնկելի հայեր, տօնելի հայեր»։ Իսկ Արծրունին մերկացնում էր հայի անասնական եասկանութիւնը, ասում էր թէ հայը միայն անձնական բարեկեցութեան գործում աշխատող է, եռանդ է, իսկ հասարակական հոգսերի համար միանգամայն մեռած է: Ո՞վ էր աւելի խոր նայում կեանքի մէջ: Այն ժամանակ, երբ հայոց բեմը ներկայացնում էր Զիմզիմովին, Ստեփանէն զբաղված էր իր դպրոցական հաշիւներով և մի խօսք անդամ չասաց «Պէչպօի» մասին: Մայիս ամիսն էր, Ստեփանէն վերջ էր տալիս «Հայկական Աշխարհի» հրատարակութեան: Նախ քան խնկելի աղբին» իր վերջնական հրատարականը տալը, նա առանց պատճառի, մոռանալով առաջներում գրած իր տողերը և փառաբանութիւնները, տպագրեց մի այսպիսի բան.

Միւս կողմից ես շատ ցաւում եմ, որ ուսաստանցի հայկական երիտասարդների համար ընտրը-

վում է Գերմանիա որպէս ուսման եւ կրթութեան տեղ: Եթէ «Հայկական Աշխարհի» խմբագրողը, յարգելով Գերմանիայի մէջ ուսած իւր աշխատակցի կարծիքը, հրատարակում էր նորա յօդուածներ, որտեղ Գերմանիային առաւելութիւն էր տված, «ողորմելի» ածականը նուիրելով մինչեւ անգամ մեր թիւրքիաբնակ իմաստուն Հայերին, որոնք Ֆրանսիայի մէջ են սովորում, ես ընդհակառակն բաղաւոր եմ համարում նոցա, որոնք Ֆրանսիա են ընտրում իւրանց կրթութեան տեղ: Պրուսական կրթութեան մեծ պակասութիւններ չեն միթէ անմերձենալի լինել, մեծամտութիւն (որ կարճամտութեան նշան եւս է), միայն անձնական օգուտներ պտուել, զօրութիւն ստացածին պէս հարստահարել ստորադրվածներին եւ այլն: Իսկ ֆրանսիական կրթութիւնը մանկութենից կրկնում է աշակերտին թէ նա ծնվել է իւր ազգին եւ մարդկութեանը ազնւաբար ծառայելու, ընկերը սիրելու, արդարութեան եւ... իրաւունքներ պաշտպանելու եւ այլն:

Խորհուրդ տալով հայերին Ֆրանսիա կամ Շվեյցարիա գնալ ուսում առնելու, ինչպէս նաև բաւական բարձր համարելով և Ռուսաստանի կրթութիւնը, Ստեփանէն իր ակնարկները աւելի ևս հասկանալի դարձնելու համար ասում էր.

20—25 տարի աշխատում է մարդը Ռուսիայում չէ կարողանում դոկտօրի աստիճան ստանալ: Այն ինչ Գերմանիայում բաւական է 2—4 տարի



այս կամ այն պրօֆէսորի դասերին գրվել, մի օր բանախօսութիւն անել պրօֆէսորների հետ, եւ դօկտօրի աստիճանը պատրաստ է պտօռոյին առանց որ եւ իցէ ուրիշ աստիճաններ ստանալու (Բոլորովին տարբեր քննութիւն է լինում, երբ գիտնական աստիճան պտօռը տէրութենական ծառայութեան է պատրաստվում): Բայց եւ այնպէս առաջին կերպով վաստակած գիտնականութիւնը չէ կարօղ իհարկէ հիմնաւոր եւ պտղաւէտ լինել: ։

Ի՞նչպէս էր որ գերմանական կրթութեան մասին մի այսպիսի յայտնութիւն յանկարծակի իջաւ Ստեփանէի վրա, — բացատրելու հնարաւորութիւն չունինք: Բայց որ այս տողերի մէջ «Հայկական Աշխարհի» խմբագիրը ի նկատի ունէր Արծրունի եղբայրներին — այս աւելի քան անկասկած է: Ահա այս է այն սառնութեան արտայայտութիւնը, որի մասին խօսեցինք քիչ վերտում: Պատճառ, ի հարկէ, կար, գուցէ և մի քանի հատ պատճառներ. բայց եթէ սա վրիժառութիւն է, դուք տեսնում էք որ նրա ձեռքերէն չէ կարելի դնել քաջութիւնների շարքում: Մանր, խղճուկ, ծածկված վրէժխնդրութիւն. դա է այն առաջին թշնամութիւնը, որ յայտնվեց մամուլի մէջ Գրիգոր Արծրունու դէմ:

Սկզբից եւթ շատ բնորոշ է այդ թշնամութիւնը: Եթէ պէտք էր հերքել Արծրունու որ և է դրուածքը, կամ առհասարակ ցոյց

տալ նրա անընդունակութիւնը, ինչ հարկ կար այնքան անարգելու գերմանական կրթութութիւնը, ընդհանրապէս անուանարկելու նրան: Ի՞նչ մեղք ունէր Գերմանիան, եթէ Արծրունին իսկապէս մեծամիտ էր, ոչ բազմակողմանի զարգացած և այլն: Բանը, ի հարկէ, կրթութեան, դպրոցի, աշխարհագրական անուան մէջ չէր. դրանք թափանցիկ պատրուակներ էին կամ աւելի լաւ ասած՝ բամբասանքներ էին, որոնց միջոցով կարելի էր եթէ ոչ հերքել, ապացուցանել մի բան, գոնէ կծել, անուանարկել: Բայց դա այրական միջոց չէր, դա զրական կոխ չէր, այլ պառակական մի բամբասանք: Արծրունին կարող էր դօկտօրութեան աստիճան ստացած էլ չը լինել. նա դօկտօր չէր, ուսանող էր այն ժամանակ, երբ նոյն այդ Ստեփանէն նրա կարծիքներն էր հարցնում, երբ գոյում փառաբանում էր նրան: Այժմ ինչ միտք ունէր ասել թէ Գերմանիայում շատ հեշտ է դօկտօրի աստիճան ստանալը: Բնորոշ անուանեցինք այս թշնամութիւնը այն պատճառով, որ Արծրունին իր կեանքում մեծ մասամբ այնպիսի հակառակորդների դէմ էր կանդնած, որոնք փոխանակ փաստերի, փոխանակ հերքումների ծամածռութիւններ էին անում: Ստեփանէի վերաբերմամբ մեղ չէ զար-



մայնում այսպիսի հակասական հանդամանքը այդ եռանդոտ, տաք մարդու կեանքում ծայրայեղութիւնները քիչ տեղ չէին բռնում: Ահա նա դադարեցնում է «Հայկական Աշխարհը», որպէսզի վարդապետ ձեռնադրվի: Մի քանի տարիներից յետոյ նա պիտի վերսկսէ իր ամսագրի հրատարակութիւնը, բայց այնպէս փոխված, որ «խասսուուն» յօդուածներ պիտի գտնէ «Մեղուի» մէջ, այն «Մեղուի», որի գրական և հրատարակաստական ոչնչութիւնը, բթամտութիւնը այնքան լրբաւացի կերպով մերկացնում էր տարիների ընթացքում, աշխարհական ժամանակը...

Արծրունին ոչինչ չը գրեց այդ քողարկված ակնարկութիւնների դէմ, որոնք խկապէս պատասխանի էլ չէին արժանի, այլ միայն խղճահարութեան: Կասե՛նք աւելին. նա համարեա միշտ կարողացաւ յարգել այդ արժանաւոր հոգևորականին և կրակոտ գործիչին:



«Սունդուկեանցի Պէսօ» յօդուածով Արծրունին վերջ գրեց իր գրական գործունէութեան առաջին շրջանին: Դա այսպէս ասած, նախապատրաստական շրջանն էր:

Մենք քայլ առ քայլ հետեցինք երիտասարդ գրողին այդ սկզբնական շրջանում: Տեսանք թէ ինչպէս նրա մէջ յանկարծակի խօսեց հրատարակաստի կոչումը, ինչպէս նա գնաց այդ կոչման ետեից և ինչեր ասաց մի կարճ միջոցում:

Վերցնում ենք այն ժամանակների մեր պարբերական մամուլը, մի առ մի ծանօթանում ենք գրողների հետ և նկատում ենք միայն Արծրունուն: Միայն խմբագիրներն են մամուլի գործերով զբաղված, աշխատակիցները պատահական մարդիկ են, մէկ զբրում են, հինգ լուռ. շատերը մի անգամ են միայն երևում, շատերը գրում են, երկար լուռ, նորից երևան զայլս և անյայտանում: Արծրունին է միայն, որ աշխատում է կանոնաւոր, անընդհատ. գրելը նրա համար պահանջ է: Եւ մեր մամուլի մոխրագոյն, անպաճոյճ էջերում սրպիսի գեղեցիկ երևոյթ են կազմում Արծրունու յօդուածները: Ոչ ոք այն ժամանակները չէր կարողանում գրել այնպէս. նա բարձր էր նոյն իսկ մեր խմբագիրներից: Նա ստեղծեց հրատարակաստական լեզու. նա մտքրեց ամբողջ ոճեր, ձևեր, յատկանիշ բառեր: Մեր հրատարակաստութեան լեզուն մինչև այժմ էլ չէ կարողացել Արծրունու լեզուից առաջ անցնել: Ասում



էին թէ նա հայերէն լաւ չը գիտէ: Մենք ամենին չենք ասում թէ այդպէս չէր: Բայց նայում ենք «Մեղուին», «Հայկական Աշխարհին», քրքրում ենք զանազան մարդկանց գրուածքները և կարող ենք հանդիստ կերպով վկայել, որ ոչ ոք այն ժամանակները Արծրունուց լաւ չէր գրում: Եթէ իսկական գրողը պիտի ունենայ իր առանձնայատուկ ոճը, մենք կասենք որ միայն Արծրունին ունէր ոճ և նրա իւրաքանչիւր տողը այժմ էլ կարելի է ճանաչել և զանազանել:

Բնութիւնը տուել էր նրան աշխոյժ, տըպաւորւող ընաւորութիւն. նրա սուր հայեացքից չէին խուսափում հասարակական հարցերը: Կրթութիւնը դարձրեց նրան առաջադէմ, համարձակ, յեղափոխիչ դադափարների համոզված զինուոր: Եւ նա դուրս եկաւ մեր մէջ: Ոչինչ չը կարողացաւ արգելք դառնալ նրա առջև. ոչ մանկութիւնից ըստացած օտար կրթութիւնը, ոչ մայրենի լեզուին խորթ լինելը, ոչ փակված կեանքը հայրենի տան մէջ և ապա երկար բացակայութիւնը հայրենիքից:

Նա պատրաստվեց, կազմակերպվեց ընթերցող հասարակութեան աչքի առջև: Սկսեց կրթութեան և դաստիարակութեան հարցերով, ուր երկչոտութեամբ, անվարժ երիտա-


սարդի անվճռողականութեամբ էր դատապարտում հայրենի նախապաշարմունքները և քայլ առ քայլ առաջանալով, աստիճանաբար ամրանալով, եկաւ հասաւ «Սուղուղեանցի Պէպօ» յօդուածին, ուր արդէն որոտում է նա հայի եսամոլութեան, արատնելի դէմ...

Այժմ նա բոլորովին պատրաստ էր: Այժմ սեփական գործ էր ստեղծում իր համար: Այն ժամանակ, երբ նա գրում էր վերջին յօդուածը «Մեղուի» մէջ, պատրաստ ու վերջացրած էր սեփական լրագրի ծրագիրը: «Մշակ» հրատարակելու թոյլուութեանն էր նա սպասում այդ ժամանակ: Հիմա դալիս է «Մշակի» Գրիգոր Արծրունին...


ՎԵՐՋ ԱՌԱՅԻՆ ՀԱՏՈՐԻ
















« Ազգային գրադարան



NL0385360



69.137